

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

* * * — Երիտասարդությունը ժամանակակից ներուժն է մեր եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին	831
---	-----

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ

ԽՄԲ. — Վեհափառ Հայրապետին ցարդ հրապարակած Կոնդակներուն եւ Օրհնութեան Գիրերուն հաւաքածոն	835
--	-----

ՔԱՐՈՉԱԽՕՍԱԿԱՆ

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵԿՍԵՉԵԱՆ — Ս. Ստեփանոս թշնամիին յաղթած Տիրոջ մարտիկը	843
--	-----

ՀԱՅՐԱՔԱՆԱԿԱՆ

ԹԱՄԱՐ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ — Հայ Սուրբեր մինչեւ ԺԵ. դար (վաւերագիրներ)	848
---	-----

ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ

ՉԱՐԵՅ ԱՐՔ. ԱՉՆԱԲՐԵԱՆ — Սերտողութիւն Մատթեոսի Աւետարանին	854
ՎԱԴԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Հայաստանը Աստուածաշունչին մէջ	861
ՄԱԿԱՐ ՎՐԴ. ԱՇԳԱՐԵԱՆ — Հին մարդն ու նոր մարդը	865

ՊԱՏՄԱ-ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵԿՍԵՉԵԱՆ — Եկեղեցւոյ պատմութիւն (Թրգմ.)	868
--	-----

ՀՈԳԵՌՈՐ ԳԵՂԱՐՈՒԵՍ

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ — Զառուղի	874
---------------------------------	-----

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

ՏՈՔԹՈՐ ՃԷՅՄՍ ԶԷՆԵՏԻ — Ինչո՞ւ Աստուծոյ կը հաւատամ	877
--	-----

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	886
-----------------------------	-----

ՀԱՅ ԴԱՏ	889
---------------	-----

ՏՕՆԱԿԱՆ	896
---------------	-----

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	898
-------------------	-----

ԼՈՒՐԵՐ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ	904
-------------------------	-----

ՀԵՅՈՍ	907
-------------	-----

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	909
----------------------	-----

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ	917
------------------------------	-----

ՆՈՒԵՐՆԵՐ ԿԻԼԻԿԻԱ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ	928
-----------------------------------	-----

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ	929
--	-----

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՎՐԴ. ՓԱՇԱՅԵԱՆ — Մատենագիտութիւն Հասկ Ամսագրի (ՀԹ. Տարի - 2010)	930
--	-----

Մատենագիտութիւն Հասկ Ամսագրի (Ձ. Տարի - 2011)	947
---	-----

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

**ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՆԵՐՈՒԺՆ Է ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ,
ԱԶԳԻՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ**

Ժամանակին հետ քայլ պահելու եւ ժամանակակից հարցերը իրենց այժմէական ու ցիշդ լուծումներուն հանգրուանելու միջոցներէն գլխաւորը, երիտասարդութեան ներուժին ցիշդ օգտագործումն է:

Յարատելօրէն նորութիւններու դէմ յանդիման գտնուելով, նաեւ յաճախ մարտահրաւերներ կը դիմագրաւէ աշխարհը, որոնք ամէնէն աւելի երիտասարդութեան կեանքին վրայ ազդեցութիւն կ'ունենան: Նորութեան հետամուտ երիտասարդութիւնն է, որ յաճախ թիրախ կը դառնայ նոր մարտահրաւերներուն, որոնք ուղղակի ազդեցութեամբ իրենց դրական կամ ժխտական անդրադարձը կ'ունենան անոր կեանքին վրայ:

Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս յաճախ իր Հայրապետական պատգամներուն ընթացքին մեր երիտասարդութեան մասին արտայայտուելով, գայն կը ներկայացնէ իբրեւ մեր ազգի ու եկեղեցւոյ գոյապայքարի ներկային մաս կազմող ներուժ: *«Մեր երիտասարդութիւնը միայն մեր ապագան չէ՛, այլ մեր ներկան», «մեր երիտասարդութիւնը ո՛չ թէ միայն լսելիք ունի, այլ՝ նաեւ ըսելիք», «մեր երիտասարդութեան տեղը, ներկայ հաւաքական մեր կեանքի լուսանցքին վրայ չէ՛, այլ՝ մայր էջին»:* Ահաւասիկ մի քանի մտածումներ վեհափառ Հայրապետին զանազան

առիթմերով ունեցած արտայայտութիւններէն, որոնք հայրական սիրոյ ու խանդաղատանքի սովորական խօսքեր ըլլալէ աւելի, հոգեւոր ու ազգային բարձրագոյն պատասխանատուի կոչն են, ուղղուած թէ՛ երիտասարդութեան՝ որպէսզի յառաջ գայ ու մասնակից դառնայ մեր կեանքին, եւ թէ՛ ալ ազգային ղեկավարութեան՝ որպէսզի կարելի բոլոր միջոցները ընծայէ մեր երիտասարդութեան, իր ներդրումը ունենալու հաւաքական մեր կեանքի ծրագրաւորման ու յառաջդիմութեան:

Նոր սերունդին կարելորութեան, դերակատարութեան ու մեր կեանքին գործօն մասնակցութեան համար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ջանքերը երկար տարիներու վրայ արդիւնաւորուած են արդէն իսկ, եւ կը շարունակուին վերանորոգ թափով ու կազմակերպուածութեամբ:

Անթիլիասի մէջ հաստատուած Դպրեվանքը, որուն ծրագիրին մաս կը կազմէ ոչ միայն հոգեւորականներու պատրաստութիւնը, այլ մտաւորականներու, ուսուցիչներու, ազգային գործիչներու կազմաւորումը, անցնող աւելի քան 80 տարիներուն Սփիւռքի գաղթօճախները օժտած է ներուժով, որ այսօր մեծ բաց կը լրացնէ, քաղաքական, կրթական ու մշակութային գործունէութիւն ծաւալելու հնարաւորութիւն ընձեռնելով:

Դարձեա՛լ Անթիլիասի մէջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետներու կանխատեսութեան իբրեւ արդիւնք, հայ մանուկն ու հայ պատանին դէպի մեր եկեղեցին ու ազգային կառոյցները առաջնորդելու իմաստուն որոշումով, աւելի քան 80 տարիներ առաջ հաստատուած են Կիրակնօրեայ Դպրոցները: Կառոյց՝ որ այսօր մեր բոլոր թեմերուն մէջ բազմաճիւղաւորում ունենալով, կրօնական ու հայեցի կրթութեամբ հագարաւոր մեր հայ մանուկները կը հաւաքէ մեր եկեղեցւոյ ու ազգի հովանիին ներքոյ, իբրեւ ապագայ երիտասարդութեան ներուժ:

Դարձեա՛լ Անթիլիասի մէջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութեամբ, հայ համալսարանական ուսանողներու ներուժը համախմբելու հեռատես քաղաքականութեամբ, 1963 թուականին հիմնուած է Հայ Համալսարանական Ուսանողներու Միութիւնը (ՀԵՀՈՄ), որուն բուրայէն անցած բազմաճիւղաւոր ուսանողներ ու ուսանողուհիներ անցնող շուրջ 50 տարիներու ընթացքին, իրենց մասնագիտութեանց ցամաքով, ներուժը կը կազմեն մեր երիտասարդութեան, համախմբուած մեր եկեղեցւոյ ու ազգին շուրջ:

Դարձեա՛լ Անթիլիասի մէջ, Վեհափառ Հայրապետին ջանքերով, 2003 թուականին հիմնուած երիտասարդական Բաժանմունքը, եկաւ հասարակաց այն գետինը դառնալու, ուր աշխարհի զանազան երկիրներու մէջ երիտասարդական խմբաւորումներու գործունէութիւնը պիտի շողկապուէր ու համադրուէր: Ծրագիրներ, որոնք յատկապէս ներկայ արհեստագիտու-

թեան փամբով այնքան դիրացուցին ոչ միայն փոխադարձ ծանօթացումը, այլ ոյժի մէկտեղումը, իբրեւ մեր եկեղեցւոյ ու ազգի սփիւոքեան գոյապայքարին իր կարեւոր նպաստը բերող ներուժ:

Գարձեա՛լ Վեհափառ Հայրապետին նախածնունդեամբ, Միացեալ Նահանգներ իր վերջին Հովուապետական այցելութեան ընթացքին, Նորին Սրբութիւնը իւրապատուկ հանդիպում ունեցաւ տարբեր մասնագիտութեանց տիրացած հայ երիտասարդութեան, անոր մէջ տեսնելով այն ներուժը, որ ներկայ աշխարհի յարափոփոխ իրականութեան դիմաց, ապահով գետին կրնայ կազմել, մեր եկեղեցւոյ ու ազգին կեանքը աւելի ապահով հիմքերու վրայ դնող: Վեհափառ Հայրապետին իմաստուն քաղաքականութեան մաս կը կազմէ, մեր ժողովուրդի բոլոր գաւակներուն կարողականութիւնը ծառայեցնել մեր հաւաքական շահերուն, ի խնդիր համագգային արժէքներու կենսագործման:

Գարձեա՛լ Անթիլիասի մէջ, այս անգամ յետադարձ ակնարկով եւ ոյժերու մէկտեղման հեռանկարով, Վեհափառ Հայրապետին նախածնունդեամբ երկու տարիներ առաջ կեանքի կոչուեցաւ Հայ Համալսարանականներու Միութեան Շրջանաւարտից Միութիւնը: Իրենց տարիքին մէջ հասուն, եւ մասնագիտութեան տիրապետած այս սերունդը, դարձեալ իբրեւ ներուժ, նոր կազմակերպութեամբ վերախմբուեցաւ մեր եկեղեցւոյ ու ազգի կեանքին շուրջ: Գիտական, ուսումնական ու արհեստագիտական մեծ ուսումներով յառաջացող աշխարհին դիմաց, նուազագոյն դանդաղութիւնը աղէտ համարող համալսարանական երիտասարդութիւնը, վստահաբար իր փորձառութիւնը ի սպաս պիտի դնէ, հայապահպանումէ անդին անցնելու եւ նոր իրագործումներով մեր հաւաքական կեանքը ծաղկեցնելու իմաստով:


Նոյն այս խումբին՝ երիտասարդութեան սեռուցքին ուղղելով իր խօսքը, Նորին Սուրբ Օծութիւնը յառաջատեսիլ հայեացքով, ու ապագայի մասին խոր վերլուծումով ըսաւ. «Յարատեւ ու արմատական փոփոխութեան մէջ եղող ներկայ աշխարհին մաս կը կազմէ նաեւ մեր ազգը: Հետեւաբար, մենք չենք կրնար անտարբեր մնալ այն շարժումներուն, փոփոխութիւններուն ու մարտահրաւերներուն նկատմամբ, որոնք կը շրջապատեն մեզ ամէն տեղ ու մեր կեանքի բոլոր մարզերէն ներս: Կոյր կերպով հետեւիլ անոնց, վնասաբեր է. իսկ անտարբեր մնալը՝ նոյնքան վնասաբեր: Պէտք է գիտնանք ի՛նչը առնել եւ ինչ ձեւով օգտակար դարձնել մեր կառոյցներուն թէ ընդհանրապէս մեր հաւաքական կեանքին, եւ ի՛նչը մերժել: Հո՛ս կը կայանայ մեր հիմնական դերը եւ այս ուղղութեամբ երիտասարդութիւնը կոչուած է յոյժ կարեւոր դերակատարութեան»:

Նիւթապաշտական ներկայ աշխարհի մօտեցումներուն դիմաց դնել

մարդոժի կարելությունը, վեհափառ Հայրապետը ըսաւ. «Կառոյցներ, պետութիւններ, ազգեր, կրօնքներ կամ մշակոյթներ մարդո՛վ կը ծաղկին, կը հօրանան, կը յառաջդիմեն: Կրնա՞ք երեւակայել, որ Աստուած մարդո՛ւն վստահեցաւ իր գործը շարունակելու ու տիեզերքը ծաղկեցնելու պատասխանատուութիւնը: Որքան ալ մենք շրջապատուած ըլլանք նիւթական լայն կարելիութիւններով, մա՛րդն է, որ այդ կարելիութիւնները պիտի հունաւորէ ճիշդ կերպով ու իր ընկերութեան որակ ու տեսիլք պիտի տայ: Այսօր մեր ազգը պէտք ունի այնպիսի մարդոց, որոնք ո՛չ միայն մասնագիտութեամբ զինուած ըլլան, այլ նաեւ ծառայական ոգիով եւ ունենան հաւատք, կամք ու տեսիլք, մեր կառոյցները, մեր համայնքները, մեր ազգն ու հայրենիքը վերանորոգելու եւ վերակազմակերպելու ներկայ աշխարհի հրամայականներուն ու մարտահրաւերներուն դիմաց: Ա՛յս պէտք է ըլլայ կոչումը մեր երիտասարդութեան»:

Վեհափառ Հայրապետին պատգամը հրահանգ է մեզի համար: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ա՛յս ոգիով գործած է, ու իր յաջողութիւններն իսկ միշտ ծառայեցուցած համայն մեր ազգի փառքին ու պատիւին:

Նոյն յառաջահայեաց մօտեցումով, բարձրագոյն աստիճանի նախանձանիւնդրութեամբ, եւ մարդոժի համախմբման հեռանկարով պիտի քայլենք յառաջ, միշտ հաւատալով, որ երիտասարդութիւնը ժամանակակից ներուժն է մեր եկեղեցւոյ, ազգին ու հայրենիքին:



ԿՈՆԴԱԿՆԵՐ



**ՎԵՐԱՓՈՒ ՅԱՅՐԱՊԵՏԻՆ ՑԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱԲԱՔԱԾՈՆ***

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Թորոնթոյի Մարգա-մշակութային եւ Կրթական Կեդրոնի Վարչութեան)

Ուրախութեամբ իմացանք Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեանէն, որ յառաջիկայ Կիրակի 4 Ապրիլին, տեղի պիտի ունենայ պաշտօնական բացումը Թորոնթոյի Մարգա-մշակութային եւ Կրթական Կեդրոնին:

Արդարեւ, կարեւոր իրագործում կը նկատենք այս շինութիւնը, որ վստահաբար ամբողջացուցիչ մասը պիտի կազմէ հայ համայնքի կեդրոնին բազմերես ու բամա-ծաւալ գործունէութեան: Նման կառոյցներու շինութիւնը որեւէ գաղութի կեանքէն ներս Մենք կը նկատենք հրամայական: Մակայն, որեւէ կառոյց կամ կեդրոն ինք-զինք լիովին կ'իրագործէ երբ կը վերածուի ծառայութեան, գործունէութեան ու առաքելութեան: Գանատայի մեր ժողովուրդի կեանքէն ներս որեւէ ժամանակէ աւելի այ-սօր մենք կարիքը ունինք այնպիսի կառոյցներու, որոնք ժողովրդանուէր ծառայու-թեամբ ու կազմակերպ գործունէութեամբ կարենան իրենց գոյութեան պատճառը արժեւորել ու իրենց նուիրական նպատակը կենսագործել: Գանատայի մեր գաղու-թը անցեալին իր բոլոր կառոյցներով ու մարմիններով փաստը տուած է իր կենսու-նակ ու կազմակերպ կեանքին: Թորոնթոյի Մարգա-մշակութային եւ Կրթական Կեդ-րոնը եւս, Ս. Աստուածածին եկեղեցոյ հովանիին ներքեւ, վստահաբար պիտի գայ նոր փայլք ու ուժականութիւն տալու մեր Թեմի տակաւ ծաւալող գործունէութեան ու ծաղկող կեանքին:

Հայրապետական սոյն Կոնդակով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն Մեր օրհնութիւնը կ'առաքենք ձեզի եւ հայրական ջերմ սիրով կ'ողջունենք Գանատայի Թեմի մեր ժողովուրդի սիրելի գաւակները:

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարու-նակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: ԽՄԲ.

Կը գնահատենք սոյն Կեդրոնի ծրագրումին ու իրականացման իրենց բաժինը բերած մեր Թեմի սիրելի զաւակները՝ բարերար թէ ժողովական, հոգեւորական թէ աշխարհական: Մեր սպասումն է, որ այս Կեդրոնը մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն ու յատկապէս երիտասարդ սերունդին հետեւողական ու գործօն մասնակցութեամբ դառնայ հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներով ճառագայթող՝ հայկական դիմագիծով եռուն վայր:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Իր երկնային շնորհներով ծաղկազարդէ Գանատայի Հայոց Թեմի մեր ժողովուրդի սիրելի զաւակներուն կեանքը:

Հայրապետական օրհնութեամբ եւ սիրոյ ջերմ ողջունիւ.

Աղօթարար՝

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տոաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 1-ն Ապրիլի, 2004 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԾԳ.*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

(Վերապատուելի Եսայի Սարմազեանի բազմամեայ ծառայութեան առթիւ)

Հայրապետական օրհնութեամբ ու քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք Ձեզ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն: Կ'իմանանք, որ մօտ ապագային հանգստեան պիտի կոչուիք որպէս Հովի Հայ Աւետարանական եկեղեցւոյ: Վստահ ենք, որ այս առիթով յատուկ ձեռնարկներու ճամբով Ձեր հոգեւոր խնամքին յանձնուած ժողովուրդը իր արժանի յարգանքը պիտի արտայայտէ երկար տարիներու Ձեր հոգեւոր ծառայութեան, ւստարանչական աշխատանքին ու դաստիարակչական գործին համար: Այս առիթով, սիրելի՛ Վերապատուելի, ուզեցինք նաեւ Մեր անձնական վկայութիւնը տալ. վկայութիւն, որ հիմնուած է Աստուածաբանական համալսարանէն սկիզբ առած երկար տարիներու Մեր բարեկամութեան ու գործակցութեան վրայ:

Արդարեւ, Մենք Ձեր մէջ առաջին հերթին տեսած ենք քրիստոնէայ մարդը՝ ո՛չ սովորական հասկացողութեամբ, այլ Քրիստոսի Աւետարանին ջերմ հաւատացողը ու զայն կեանքին մէջ ապրողը: Այդպէ՛ս եղաք դուք դպրոցական գրասեղաններէն սկսեալ մինչեւ եկեղեցւոյ ամպիոնը:

Մենք Ձեր մէջ տեսած ենք նաեւ ճշմարիտ հայը՝ քրիստոնէական արժէքները ազգային արժէքներուն ու ձգտումներուն հետ շաղախած հայը: Այս ծիրէն ներս Մենք կը յիշենք Ձեր քաջարի կեցուածքները Լիբանանեան պատերազմի տխուր օրերուն, ի խնդիր Լիբանանի հայութեան իրաւունքներու պաշտպանութեան:

Մենք Ձեր մէջ տեսած ենք ճշմարտութեան ու արդարութեան անվեհեր քարոզիչը թէ՛ եկեղեցոյ ամպիոնէն, թէ՛ դասախօսական գրասեղաններէն եւ թէ ժողովներու ընթացքին: Դուք Ձեր գրիչով ու գործով եղաք պաշտպանը ու քարոզիչը ճշմարտութեան. եղաք քաջ պայքարողը՝ ի խնդիր արդարութեան:

Մենք Ձեր մէջ տակաւին տեսած ենք հայ ժողովուրդի պահանջատիրութեան յանձնառու զինուորագրեալը: Միթէ տարբեր բան կրնա՞յ ըլլալ Քրիստոսի հետեւող անձ մը՝ մարդկային իրաւունքներու բռնաբարման ու ցեղասպանութեան նկատմամբ:

Մենք Ձեր մէջ նաեւ տեսած ենք ազգային միասնականութեան ջերմ ջատագովը: Միասնականութիւն՝ գործակցութեան ճամբով արտայայտուող. միասնականութիւն՝ թէ՛ կրօնական եւ թէ՛ ազգային բնագաւառներէն ներս:

Վերջապէս, սիրելի՛ Վերապատուելի, Մենք Ձեր մէջ տեսած ենք Հայաստան-Սփիւռք գործակցութեան եւ մեր ազգային վեհ իտելալներու ի խնդիր համազգային աշխատանքի ու պայքարի յանձնառու մարդը:

Դուք այսպէ՛ս եղաք Ձեր ողջ կեանքին ու ծառայութեան ընթացքին՝ Քէսապէն մինչեւ Լիբանան ու Գանատա: Ձեր կեանքի ու ծառայութեան ճամբուն վրայ դուք ունեցաք Ձեզի հաւատարիմ կողակից ու սերտ գործակից՝ յանձինն Սեզա Բրուտեան-Սարմազեանին, որ նաեւ իր գործօն մասնակցութիւնը ու կարեւոր ներդրումը բերաւ Ձեր ծառայական կեանքին:

Մենք վստահ ենք, որ երկինքէն մեզ դիտող ու մեր իւրաքանչիւր քայլին հետեւող մեր Երկնաւոր Հայրը՝ Աստուած Ինք վարձահատոյց պիտի ըլլայ Իր թագաւորութեան հաստատման սրբազան առաքելութեան Ձեր բերած նուիրեալ մասնակցութեան համար:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեր եւ Ձեր ընտանիքին կեանքը պայծառակերպէ Իր երկնային շնորհքներով:

Ողջ լերուք ի Տէր, գօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 17-ն Օգոստոսի, 2004 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԾԳ.*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

(Կրանիթ Սիթիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ 50-ամեակին առիթով)

Ուրախութեամբ իմացանք Ամերիկահայոց Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Օշական Արք. Չօլոյեանին Մեզի ուղղած նամակէն, որ յառաջիկայ Դեկտեմբեր 5-ին պիտի նշէք Կրանիթ Սիթիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հիմնադրութեան 50-ամեակը:

Եկեղեցւոյ 50-ամեակը տօնակատարել կը նշանակէ Աստուծոյ այս տան մէջ համախմբուած ու եկեղեցի դարձած ժողովուրդին յիսուն տարիներու հաւատքի կեանքին ու առաքելութեան 50-ամեակը նշել: Դուք այս քարաշէն եկեղեցին կառուցիք, որպէսզի դառնաք հոգեղէն եկեղեցի՝ մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի խօսքին համաձայն, որ կ'ըսէ՝ «ուր երկու կամ երեք հոգի հաւաքուած ըլլան իմ անունովս, հոն եմ ես անոնց մէջ» (Մտ 18.20): Դուք, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հաւատացեալներդ Քրիստոսի անունով քով-քովի եկաք այս եկեղեցւոյ կամարներուն ներքեւ, շէնցուցիք զայն ձեր հաւատքով, ձեր աղօթքով ու ձեր ծառայութեամբ եւ ահաւասիկ յիսուն տարիներէ ի վեր զայն վերածած էք ձեր հոգեւոր տան: Հոս դուք Աստուծոյ ներկայութեամբ ապրեցաք ու գործեցիք, եւ Աստուծոյ այս տունէն աստուածային օրհնութիւնը տարիք ձեր սեփական ընտանիքներուն: Վստահ ենք, որ եկեղեցւոյ 50-ամեակի նշումը այդ հաւատքն ու երկիրաձուլութիւնը առաւել եւս պիտի արմատացնէ ձեր բոլորին հոգիներուն մէջ ու դուք այդ հաւատքին ջանք պիտի փոխանցէք զայիք սերունդներուն:

Եկեղեցւոյ 50-ամեակը տօնակատարել կը նշանակէ ձեր հաւատքը վերանորոգել, որովհետեւ հաւատքը կեանքի աղբիւր է, փրկութիւն է (Բկ 4.50): Դուք այս գիտակցութեամբ ապրեցաք ձեր հաւատքը ու պահեցիք ձեր այս հոգեւոր տունը: Գալիք նոր յիսնամեակի սեմին, Մեր սպասումն է որ վերանորոգ հաւատքով շարունակէք ապրիլ ձեր կեանքը այս եկեղեցւոյ հովանիին ներքեւ: Այս եկեղեցիէն հեռու մնալ կը նշանակէ Աստուծմէ հեռու ըլլալ. մինչ եկեղեցի յաճախել կը նշանակէ Աստուծոյ մօտ ըլլալ ու Անոր օրհնութիւնը վայելել:

Թող Աստուած շէն ու պայծառ պահէ Կրանիթ Սիթիի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին եւ Իր օրհնութիւնը շնորհէ անոր սպասաւորներուն ու բոլոր հաւատացեալներուն:

Ողջ լերութ ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տոաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 10-ն Սեպտեմբերի 2004 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԾԳ.*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Թեհրանի Հայ Կանանց Բարեգործական Ընկերության Վարչության հիմնադրության 100-ամեակին առիթով)

Ուրախությամբ իմացանք Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանի Մեզի ուղղած նամակէն, որ յառաջիկայ տարի, 2005-ին, Թեհրանի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութիւնը պիտի նշէ իր հիմնադրութեան 100-ամեակը: Հայրապետական օրհնութեամբ եւ քրիստոնէական ջերմ սիրով կ'ողջունենք այս գեղեցիկ առիթը ձեր Ընկերութեան կեանքին մէջ:

Արդարեւ, անցնող հարիւր տարիներու ընթացքին Թեհրանի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութիւնը շարունակաբար ծրագրեց, գործեց ու ծառայեց: Ծառայեց Թեհրանի մեր ժողովուրդի զաւակներուն առանց խտրութեան. ծառայեց կարիքաւոր ընտանիքներուն. ծառայեց հայ մշակոյթին ու դպրոցին: Հայ Կանանց Բարեգործական Ընկերութեան ծառայութիւնը միայն նիւթական միջոցներու հայթայթում չեղաւ: Ան կրթական, մշակութային ու ընկերային մարզերէն ներս եւս իր կարեւոր ներդրումը կատարեց՝ ի խնդիր Թեհրանի հայութեան համայնքային կեանքի առաւել կազմակերպման ու ծաղկման:

Հետեւաբար, երբ յետադարձ ակնարկ նետենք Թեհրանի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութեան հարիւր տարիներու պատմութեան վրայ, զայն կրնանք բնորոշել միայն մէկ բառով՝ ծառայութիւն, հաւատքով զսպանակուած ու նուիրումով շաղախուած ծառայութիւն: Կա՞յ արդեօք մարդկային կեանքին մէջ աւելի նուիրական արարք քան ծառայութիւն՝ մեր նմանին, մեր եկեղեցոյ ու մեր ազգին: Ծառայութիւնը աստուածահաճոյ արարք է: Ծառայել մեր նմանին կը նշանակէ ծառայել Աստուծոյ: Ծառայութեան մեծագոյն օրինակը տուաւ մեզի մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս: Պէտք է հետեւինք Քրիստոսի օրինակին ու պատուիրին:

Բարձրօրէն կը գնահատենք Թեհրանի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութեան նուիրեալ ծառայութիւնը: Կ'օրհնենք այն բոլոր տիկիները, որոնք անցնող տարիներու ընթացքին այս Ընկերութեան ճամբով, Աւետարանի բացատրութեամբ իրենց ծառայութեան համեստ լուման դրին Թեհրանի հայութեան ծառայութեան գանձանակին մէջ: Մեր սպասումն է, որ Հայ Կանանց Բարեգործական Ընկերութեան 100-ամեակը ուրախութեան ու հպարտութեան առիթ ըլլալով հանդերձ նաեւ Ընկերութեան բոլոր անդամուհիներուն համար դառնայ ծառայական յանձնառութեան վերանորոգման սքանչելի առիթ: Բազմազան ու այլազան են մեր ազգի կարիքները: Հետեւաբար, մենք այնպիսի ծառայողներու կարիքը ունինք, որոնք կարեւոր նուիրումի ու զոհողութեան ճամբով իրենց գործօն մասնակցութիւնը բերել մեր եկեղեցոյ պայծառութեան, մեր մշակոյթի ծաղկման ու մեր կրթական կեանքի վերելքին:

Թեհրանի Հայ Կանանց Բարեգործական Ընկերութիւնը ա՛յս գիտակցութեամբ ծառայեց: Վստահ ենք որ վերանորոգ նախանձախնդրութեամբ ու նուիրումով ան պիտի շարունակէ իր ծառայութիւնը Թեհրանի հայ համայնքին:

Ողջ լերուք ի Տէր, գօրացեալ շնորհօք Ս. Հոգոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տոաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս. Լիբանան
Ի 15-ն Մեպրեմբերի 2004 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԾԳ.*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Լաւալի Ս. Գէորգ Եկեղեցոյ հիմնադրութեան 10-ամեակին առիթով)

Ուրախութեամբ իմացանք Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեանին Մեզի ուղղած նամակէն, որ Լաւալի Սուրբ Գէորգ Եկեղեցին պիտի նշէ իր հիմնադրութեան 10-ամեակը:

Եկեղեցին Քրիստոսով շողկապուած քրիստոնեաներու համախումբ կեանքն է. այլ խօսքով՝ քրիստոսակեղրոն համայնք է եկեղեցին: Այսպէ՛ս հաստատեց Քրիստոս իր եկեղեցին որպէս իր խորհրդական մարմինը, երբ ըսաւ թէ՛ անոնք որոնք իմ անունով քով-քովի եկած են, ես հոն եմ: Արդ՝ եկեղեցին իր հաստատութեանական, վարչական ու կառուցային արտայայտութիւններէն ու դրութիւններէն անդին՝ ժողովուրդին համայնական կեանքն է, գՔրիստոս ունենալով այդ կեանքին աղբիւրը ու առանցքը, եւ Քրիստոսի պատուէրը ունենալով այդ կեանքին առջեւ բացուած հաւատքի առաքելութիւնը:

Այս գիտակցութեամբ եկեղեցին պէտք է ինքզինք ըլլայ ու ինքզինք իրագործէ որպէս Քրիստոսահիմն կեանք ու քրիստոսակեղրոն առաքելութիւն:

Հայ եկեղեցին հին դարերէն սկսեալ ա՛յս գիտակցութեամբ իր կոչումը իրագործեց մեր ժողովուրդի հաւաքական կեանքէն ներս: Ան գործնապէս ապրեցաւ գՔրիստոս ու միաժամանակ կեանքի վերածեց Քրիստոսով աշխարհին յայտնուած արժէքներն ու սկզբունքները, անոնց միախառնելով մեր ազգային արժէքները, աւանդութիւններն ու ձգտումները: Մեր եկեղեցին դարեր շարունակ դարձաւ մշտահոս աղբիւր ծառայութեան եւ այդ պատճառով ալ կեղրոնական ու տիրական ներկայութիւն՝ մեր ազգի կեանքէն ներս: Մեր ժողովուրդի ու յատկապէս Սփիւքի ներկայ պայմաններուն մէջ, նո՛յն տեսիլքով ու նախանձախնդրութեամբ մեր եկեղեցին պէտք է շարունակէ իր ծառայութիւնը:

Արդարեւ, տասը տարիներու ձեր ապրած հաւաքական կեանքը Ս. Գէորգ եկեղեցոյ շուրջ եւ այդ կեանքէն բխող հարուստ փորձառութիւնը պէտք է մղիչ ոյժը դառնան առաւել կազմակերպուածութեամբ ու յառաջատեսիլ մօտեցումով ձեր համայնական կեանքը վերակենսաւորելու եւ հոգեւոր ու ազգային արժէքներով լիցքաւորելու: Մեր սպասումն է ու թելադրութիւնը միաժամանակ, որ ա՛յս հաւատքով ու նուիրումով պէտք է նշէք այս կարեւոր թուականը ձեր եկեղեցոյ կեանքին մէջ:

Այս առիթով կը գնահատենք բոլոր այն նուիրեալ ազգայինները, որոնք իրենց ժամանակն ու վաստակը ի սպաս դրին Լաւալի Ս. Գէորգ եկեղեցոյ հիմնադրութեան ու պայծառացման: Կը գնահատենք նաեւ եկեղեցոյ ներկայ Հոգեւոր Հովին ու Հոգաբարձութիւնը, որոնք Առաջնորդ Սրբազանին գլխաւորութեամբ յառաջ կը տանին այս հոգեւոր տան ծառայական գործը:

Կ'աղօթենք առ Աստուած, որ անասան պահէ Լաւալի Ս. Գէորգ եկեղեցին ու պայծառակերպէ կեանքը անոր սպասաւորներուն ու հաւատացեալ հօտին:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգոյն եւ յաւէտ օրհնեալ ի Սէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 10-ն Հոկտեմբերի, 2004 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԾԳ.*

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Հրանդ Սիմոնեանի ծննդեան 80-ամեակին առիթով)

Հայրապետական սիրով կ'ողջունենք Ձեզ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն:

Ուրախութեամբ իմացանք, որ այս տարի պիտի նշէք Ձեր ծննդեան 80-ամեակը: Կը հայցենք Ամենաբարին Աստուծմէ, որ երկար եւ քաջառողջ կեանք պարգեւէ Ձեզի: Արդարեւ, Ձեր երիտասարդ տարիքին դուք ուզեցիք Ձեր անհատական կեանքը հարստացնել մեր ժողովուրդի հաւաքական կեանքէն ներս՝ գործնապէս մասնակից դառնալով մեր ժողովուրդի ազգային-ընկերային կեանքին: Հազիւ 20-ամեայ երիտասարդ համոզուած էիք արդէն, որ իւրաքանչիւր հայ, իր անհատական-ընտանեկան կեանքի կողքին ազգային պարտաւորութիւնն ունի իր աստուածատուր կարողութիւններն ու կարելիութիւնները ի սպաս դնելու իր ժողովուրդի հաւաքական կեանքին: Այս համոզումով, դուք վաթսուն տարիներ շարունակ, Լիբանանէն մինչեւ Սիւրբեալ Նահանգներ, Ձեր գործօն մասնակցութիւնը բերիք մեր ազգային-հասարակական կեանքին՝ ի խնդիր մեր կառոյցներու առաւել ծաղկման ու բարգաւաճման, եւ յատկապէս մեր ժողովուրդի արդար իրաւունքներու հետապնդման ու ձեռքբերման:

Այս առիթով Մենք կը գնահատենք նաեւ մեր պապերէն մեզի ժառանգուած գանձերուն նկատմամբ Ձեր ցուցաբերած նախանձախնդրութիւնը: Այդ նախանձախնդրութենէն մղուած՝ Ձեզի կտակուած 18-րդ դարու Ձէյթունի մէջ գրչագրուած


թանկարժեք ձեռագիրը նուիրեցիք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» Թանգարանին, ուր ի շարս այլ գանձերու, ան վկան պիտի հանդիսանայ մեր ժողովուրդի փառապանծ պատմութեան, ապրած արհաւիրքին ու վերածնունդին: Վստահ ենք, որ պիտի շարունակէք օգտակար հանդիսանալ «Կիլիկիա» Թանգարանին ու անոր գործունէութեան:

Կ'աղօթենք որ Ամենաբարին Աստուած երկար օրեր պարգեւէ Ձեզի եւ Ձեր ազնիւ Տիկնոջ՝ Մանուշին, որ ահաասիկ յիսուն տարիներէ ի վեր մնաց միշտ Ձեր կողքին՝ քաջալեր հանդիսանալով Ձեր ազգանուէր ծառայութիւններուն: Թող Աստուած առողջութիւն, յաջողութիւն ու երջանկութիւն պարգեւէ նաեւ Ձեր զաւակներուն ու թոռներուն, եւ Իր օրհնութեան ներքեւ պահէ համայն Սիմոնեան ընտանիքը:

Ողջ լերուք ի Տէր, գորացեալ շնորհօք Ս. Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ Օրհնութեան Գիրս այս
Ի Կաթողիկոսարանիս Մեծի Տանն Կիլիկիոյ
Որ յԱնթիլիսս, Լիբանան
Ի 11-ն Հոկտեմբերի, 2004 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԾԳ.*



ՔԱՐՈՋԱԽՕՍԱԿԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՈՍ ԹՇՆԱՄԻԻՆ ՅԱՂԹԱԾ ՏԻՐՈՋ ՄԱՐՏԻԿԸ*

«Տէ՛ր, փրկութեան սաղաարտ դիր գլխուս, որպէսզի կարենամ Թշնամիին գորութեան դէմ պատերազմիլ» (Պատարագամատոյց):

Իւրաքանչիւր պատարագիչ քահանայ, երբ զգեստաւորուածով Սուրբ եւ մեծ խորհուրդին մատակարարման կը պատրաստուի, սաղաարտը գլուխը դրած առնէ այս աղօթքը կ'արտասանէ, որ այսօր որպէս Ս. Ստեփանոս նախասարկաւագի եւ առաջին մարտիրոսի տօնին առթիւ մատուցուող Սուրբ Պատարագի քարոզին բնաբան կ'ընտրենք՝ ի տես Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին 18 սարկաւագներուն եւ կիսասարկաւագներուն սաղաարտով պսակեալ անձնդիր ներկայութեան, այս Սուրբ խորանին վրայ:

Վանական աւանդութեան համաձայն, Ս. Ստեփանոսի տօնը նաեւ տօնն է Հայ եկեղեցւոյ սարկաւագներուն, որոնց ներշնչումի տիպարն է մեծ նահատակը՝ իր կեանքով, վարքով եւ մարտիրոսական վախճանով:

Գործք Առաքելոցի 6.1-8.1-էն, որպէս սարկաւագութեան կարիքի ու ըմբռնողութեան եւ Ս. Ստեփանոսի առաջին եւ մայր աղբիւրի, կ'իմանանք հետեւեալ բանայի տեղեկութիւնները:-

«Երբ Յիսուսի հետեւորդները շատցան, յունաստան Հրեաները սկսան տրտնջալ եբրայախօս Հրեաներուն դէմ, որովհետեւ ամէնօրեայ նպաստի բաշխումին մէջ իրենց այրիները կ'անտեսուէին» (Գրծ 6.1): *Հաւատացեալներու թուական աճին հետ եկեղեցւոյ առաքելութեան պարտաւորութիւնները եւս աճեցան եւ ընկերային ծառայութեան՝ սարկաւագութեան երեսին հոգածութիւնը հրամայական դարձաւ:*

«Այն առնէ, տասներկու առաքելները կանչեցին բոլոր հաւատացեալները եւ ըսին. մենք չենք ուզեր Աստուծոյ խօսքին քարոզութիւնը ձգել եւ ուտելիք մատակարարելով զբաղիլ: Հետեւաբար ձեր կողմէ վկայուած եօթը հոգի ընտրեցէ՛ք, որոնք Սուրբ Հոգիով եւ իմաստութեամբ լեցուն ըլլան: Զանոնք այս անհրաժեշտ գործին համար կարգենք, իսկ մենք աղօթքի եւ Աստուծոյ խօսքին մատակարարման նուիրուինք» (Գրծ 6.2-4): *Եկեղեցին իր կեանքին առաջին օրերէն իսկ համայնական բնոյթ ունեցաւ եւ համախոհութեան սկզբունքով կառավարուեցաւ՝ տասներկու առաքելներուն եւ ապա անոնց յաջորդած եպիսկոպոսներուն գլխաւորութեամբ: Հոս*

* Քարոզ՝ խօսուած Ս. Ստեփանոսի տօնին առթիւ մատուցուած Սուրբ Պատարագին, Անթիլիաս, Կիրակի 25 Դեկտեմբեր 2011:

կը տեսնենք եկեղեցւոյ կեանքին երեք բանայի բնագաւառներուն ընդգծումը՝ աղօթք, Աստուծոյ խօսքի քարոզութիւն եւ ընկերային ծառայութիւն՝ սարկաւագութիւն:

Հաւատացեալներ պատրաստակամ ընդառաջեցին այս օգտաշատ առաջարկին եւ եօթը տղամարդիկ ընտրելէ ետք՝ գանոնք առաքեալներուն առջեւ բերին, «որոնք աղօթեցին եւ իրենց ձեռքերը դրին անոնց վրայ» (Գրծ 6.6): **Եկեղեցւոյ կատարած ձեռնադրութեամբ՝ եօթը սարկաւագները Ս. Հոգիին շնորհներն ու առաքեալներուն օրհնութիւնը ստացան եւ Աստուծոյ ժողովուրդին ծառայելու կոչուեցան:**

Այս եօթը սարկաւագներուն մէջէն գատորոշուեցաւ Ս. Ստեփանոս, որուն մասին կը կարդանք. «Հաւատքով եւ Սուրբ Հոգիով լեցուն մարդ մըն էր» (Գրծ 6.5), «շնորհով եւ գորութեամբ լեցուն մարդ մըն էր» (Գրծ 6.8) եւ «անոր դէմքը հրեշտակի դէմքի կը նմանէր»¹ (Գրծ 6.15): **Բնական է, որ եօթը սարկաւագներն այլ «Սուրբ Հոգիով եւ իմաստութեամբ լեցուն» էին, ինչպէս մէջբերեցինք վերը (Գրծ 6.3), սակայն որեւէ ընկերային**

կառույցի նման՝ եկեղեցւոյ մէջ եւս խումբէն, այս պարագային եօթնեակէն, մէկ անձ փայեցաւ իր առանձնայատկութեամբ եւ իր յետագայ նահատակութեամբ: Այն աստիճան, որ մինչեւ իսկ ընդհանրապէս միւս վեց սարկաւագներուն անուններն անգամ կը զրանանք յիշել -Փիլիպպոս, Պրոքորոն, Նիկանոր, Տիմոն, Պարմենաս եւ Նիկողայոս- եւ տօնակարգին մէջ այլ չենք անցուցած: **Վստահաբար անոնք եւս երախտարժան ծառայութիւն մատուցած են նորաած եկեղեցւոյ մէջ:**

Ստեփանոս Հրեաներու կողմէ անարդարօրէն ձերբակալուեցաւ ու ատեան բերուեցաւ՝ երբ ան «ժողովուրդին մէջ մեծամեծ հրաշքներ եւ նշաններ կը կատարէր» (Գրծ 6.8), եւ զինք դատապարտողները կաշառքի եւ սուտ վկայութեան դիմեցին, որովհետեւ «չէին կրնար դէմ դնել անոր իմաստուն եւ Սուրբ Հոգիէն ներշնչուած խօսքերուն» (Գրծ 6.10): **Զրպարտութեան եւ անարդար դատաստանի այլքը յորդեցաւ եկեղեցւոյ դէմ՝ քրիստոնէութեան ծննդոցէն իսկ, որովհետեւ միայն ա՛յդ էր թուլասիրտին գէնքը ամէնագօր Աստուծոյ ասպարով պաշտպանուածներուն դէմ:**

Ստեփանոս «հրաշալի աստուածաբանութեամբ» (Հարց շարական, գ. տուն) հրէական պատմութեան մէջ աստուածային ներգործութեան յստակ ուրուագծումը բացայայտող ճառ խօսեցաւ ատեանին առջեւ: **Ան պատմեց Արարահամի, Իսահակի, Յակոբի, Յովսէփի, Մովսէսի, բոլոր մարգարէներուն եւ անոնց ժամանակակիցներուն կեանքին մէջ Աստուծոյ վճռորոշ միջամտութեան մանրամասնութիւնները ու իր խօսքը եզրափակեց, ըսելով. «Յղա՞ւ մարգարէ մը, որ ձեր հայրերը չհալածեցին: Անոնք սպաննեցին բոլոր այն մարգարէները, որոնք կանուխէն պատմեցին Արդարին գալուն մասին. այն Արդարին, որ դուք ձեր ձեռքով մահուան դատապարտեցիք եւ**

¹ Հայ եկեղեցւոյ հոգեթով շարականները քննարկելու համար այս հրեշտակական լուսաբանութեամբ հետեւեալ նախադասութիւններով կը բանան. «(Որովհետեւ) անհատապէս լուսաւորուեցար, այսօր հրեշտակներու խումբերը մեծապայծառ նգնութեամբ կ'ուրախանան» (Օրհնութիւն շարական, բ. տուն), «հրեշտակակերպ տեսնով քաջաբար պատերազմեցար» (Հարց շարական, բ. տուն), «երջանիկ ցառագայթ (եւ դուն)» (Տէր յերկնից շարական, ա. տուն), «(դուն) երկնանեմ առագաստին մէջ պայծառացած բերկրեցար» (Մանկունք շարական, ա. տուն) եւ «(դուն) լուսագարդ ցանապարհներու առաջնորդը եղար» (Ճաշու շարական, բ. տուն), իսկ ժամամուտը կը յաւելու. «(Ստեփանոս) հրեշտակակերպ տեսիլով կը տեսնէ Հայրը» եւ տաղը կ'ամբողջացնէ. «Թէպէտ մարմնեղէն էիր, սակայն որպէս հրեշտակ՝ Բրիստոսէ պսակ առիր»:

սպաննեցիք: Կը պարծենաք, որ հրեշտակներու ձեռքով ստացաք Օրէնքը, եւ սակայն բնաւ չկատարեցիք գայն» (Գրծ 7.52-53): **Եթէ պատմութեան հորովոյթին վերջուշը Ս. Ստեփանոսի պայծառամտութեամբ տպաւորեց ատեանը, անոր անհպելի Օրէնքին եւ անընդունելի Արդարին՝ Քրիստոսի կատարած ակնարկութիւնը՝ նախագահող քահանայապետին եւ անոր գործակիցներուն փտած հոգիներուն վրայ իր մահակնիքին դրոշմը դրաւ, երբ «նեքկաները նեքմնապես գայրացան եւ սկսան իրենց ակոսները կրնտել անոր դէմ» (Գրծ 7.54) եւ անոնց բարկութեան բաժակը յորդեցաւ մահական շարաւով:**

Երբ հրեայ ժողովուրդի մեծամեծները մահուան դաժան դաւը կը հիւսէին Արդարին ուղիղ ճանապարհէն ընթացող Ստեփանոսին դէմ, ան այլեւս իր հրեշտակական թուիչքով յաւիտենականին ճամբորդն էր, եւ «Սուրբ Հոգիով լեցւած, աչքերը երկինք բարձրացուց եւ տեսաւ գլխուտուած իր ամբողջ փառքով, ինչպէս նաեւ Յիսուսը՝ Աստուծոյ աջին կանգնած, եւ ըսաւ. ահա բացուած է երկինքը, եւ կը տեսնեմ Մարդու Որդին, որ Աստուծոյ աջին կանգնած է» (Գրծ 7.55-56): Ս. Ստեփանոսի այս կենսափորձը հաստատեց, թէ երբ մարդ բռնուի երկնաւորէն, այլեւս երկրաւորներուն սպառնալիքները երանութիւն կը թուին իրեն եւ մահն անգամ չի՛ կրնար գինք խորտակել: Բաց երկինքը մեծագոյն գրաւականն է Ս. Երրորդութեան կողմէ մարդուն շնորհուած երկնաւոր կեանքի անկորնչելի պարգեւին եւ անսպառ փառքին:

Հասաւ անխուսափելի պահը. խելայեղ ամբոխին կողմէ քարկոծուելով՝ Ս. Ստեփանոս կնքեց իր մահականացուն: «Ատեան գտնուողները մեծ աղաղակ բարձրացուցին, գոցեցին իրենց ականջները եւ բոլոր միասին անոր վրայ յարձակեցան: Յետոյ գայն քաղաքէն դուրս հանելով սկսան քարկոծել» (Գրծ 7.57-58):

Այս խժողով արարքը հանդիսացաւ Ս. Ստեփանոսի փառապատկումը, ինչպէս իր Պսակ անունն իսկ կը յուշէր...: Բառերը քարերուն չափ ծանր կը կշռեն նկարագրելու համար Ս. Ստեփանոսի վիճակուած Ֆիզիքական տառապանքը, որ երանական կեանքին դիմաց խոնարհութեան, համբերութեան եւ ներողամտութեան բալասան էր, երբ ան քարերու տարափին տակ աղօթեց. «Տէ՛ր Յիսուս, ընդունէ՛ հոգիս» եւ «Տէ՛ր, նեք՛ իրենց այս մեղքը» (Գրծ 7.59-60), ու մահուամբ փակեց աչքերը:

«Վկաները իրենց թիկնոցները կը յանձնէին երիտասարդի մը, որ Սօղոս կը կոչուէր» (Գրծ 7.58). «Ստեփանոսի քարկոծումը պահանջողներէն մէկն ալ Սօղոսն էր» (Գրծ 8.1): **Մահեր կան, որոնք ուրիշներուն համար կեանքի նոր հորիզոններ կը բանան. անոնցմով ոմանց կեանքը գերակայ որակ եւ իմաստ կը գգենու:** Այդպէս եղաւ Պօղոս առաքեալին համար, որ «քրիստոնեաներու հալածիչ» ի մկրտութիւնը ստացաւ Ս. Ստեփանոսի քարկոծման իր գործօն մասնակցութեամբ եւ երբ քիչ ետք դարձի եկաւ Յիսուսը գտնելով՝ վստահաբար վերջիչեց, թէ ուրիշ անձ մը նոյն Յիսուսը բերած էր իրեն եւ այն ատեն ինք չէր կրցած գայն ճանչնալ եւ ընդունիլ՝ զՅիսուս հալածելու մտրուցքէն տարուած:

Ահաւաստիկ հոս կ'աւարտի Ս. Ստեփանոսի մարդկային տուածը եւ մեր դիմաց կը բացուի անոր կերպարէն եկող պատգամը, որ նախասարկաւագութեան եւ նախավկայութեան կարմիր թելերով կը հիւսուի, եւ իրեն նուիրուած Հայ եկեղեցոյ շարականներով կը հանդիսադրուի:

Վաւերական քրիստոնեան սուրբերուն վարքին հաղորդակից դառնալով՝ իր կեանքը սրբութեամբ ապրելու կը հրաւիրուի: Ս. Ստեփանոս աստուածային սրբութեան ցօղը կը հեղու մեր վրայ՝ իր կեանքէն արտաբխող չորս իրողութիւններ ընդգծելով.՝

Առաջին, Ս. Ստեփանոս համարձակութեամբ փարոզեց զԱստուած եւ պատրաստակամութեամբ սպասաւորեց անոր: *Ընկերաբաններ կ'ըսեն, թէ ամէն մարդ երկու տիրական վախեր ունի՝ հրապարակաւ ելոյթ ունենալ եւ մահանալ: Ս. Ստեփանոս երկուքն ալ յաղթահարած էր, որովհետեւ իր համարձակախօսութեան եւ ծառայութեան ասպարէզը երկիրը ըլլալով հանդերձ՝ ան իր աչքերը յառած էր երկինքի եւ երկիրի արարիչին, որմէ կ'ըմպէր իր քաջութիւնը թէ՛ կեանքի մէջ եւ թէ՛ ալ մահուան դիմաց, եւ իր օրինակով այսօր որպէս «առաքելական քարոզութեան արժանաւոր կոչեցեալ» (Օրհնութիւն շարական, դ. տուն) եւ «լուսագարդ մանապարհին ժողովուրդ» (Ճաշու շարական, բ. տուն), «մեզի կը սորվեցնէ Ս. Երրորդութիւնը փառաւորել» (Տէր յերկնից շարական, բ. տուն):*

Երկրորդ, Ս. Ստեփանոս կենդանի եւ արեան մահատակութեամբ անվրէպ հետեւեցաւ Քրիստոսի: *Քրիստոնէութեան մէջ կեանքի վկայութիւնը իր անուրանալի տեղը ունենալով հանդերձ, քրիստոնեաներ մեծ սքանչացումով կը տօնեն արիւն թափած սուրբերուն տօնը: Կեանքի մէջ ամէնէն թանկագինը, նոյնինքն կեանքը, զոհելու ընդառաջումը յատուկ գրաւչութեամբ կը լեցնէ մեր հոգիները, որուն դիմաց ամէնէն անտարբեր մարդըն իսկ հիացումի պահ կ'ապրի եւ զգաստութիւն կը ցուցաբերէ: Ս. Ստեփանոս իր կենդանի նահատակութեամբ «անպարագրելի աստուածութիւնը տեսաւ» (Հարց շարական, գ. տուն) եւ «երկնային դռնէն ներս մտաւ ու անհատելի խորհուրդին թափանցեց» (Ողորմեա շարական, բ. տուն), իսկ իր արեան վկայութեամբ աւելի գեղեցկացաւ եւ դարձաւ «մահատակ բարի Քրիստոսի» (Օրհնութիւն շարական, ա. տուն), «իր սուրբ արեամբ մկրտեալ առաջին վկայ» (Օրհնութիւն շարական,*

բ. տուն) եւ «մարտիրոսական պսակը առնող նախավկայ» (Օրհնութիւն շարական, գ. տուն), որ «իր արեամբ արժանութիւնը գնեց» (Օրհնութիւն շարական, գ. տուն):

Երրորդ, Ս. Ստեփանոս իր կեանքով եւ մահով իր Պսակ անունը արդարացուց: *Երբ որեւէ անուն պատշաճի ոեւէ անձի, իրաւամբ կ'ըսենք: «Այս մարդը իր անուն տէրն է»: Այս է պարագան Ս. Ստեփանոսի, որ «Թագաւորէն (Քրիստոսէ) անթառամ պսակով պսակուեցաւ» (Օրհնութիւն շարական, բ. տուն), «Քրիստոսէ մարտիրոսական պսակը առաւ» (Օրհնութիւն շարական, գ. տուն) եւ «բարի հատուցումը ստանալով բոլորին բարի արարիչէն» «մարտիրոսական պսակը առնող նախավկան եղաւ» (Տէր յերկնից շարական, գ. տուն):*

Չորրորդ, Ս. Ստեփանոս իր քրիստոսակեղծոն կեանքով, սարկաւագութեամբ, քարոզութեամբ եւ արեան մահատակութեամբ եկեղեցին պայծառացուց ու այսօր Աստուծոյ մօտ բարեխօս է մեզի համար: *Սուրբերուն կեանքը ինքնանպատակ չէ՝ անոնցմէ իւրաքանչիւրը բոլորին հասարակաց գիծերով եւ իրեն յատուկ արժանիքներով եկեղեցոյ, հաւատացեալներու, վկայական կեանքը կը բարեգարդէ: Ս. Ստեփանոս «կ'աղաչէ Աստուծոյ, որ մեզի անվախճան կեանք շնորհէ» (Օրհնութիւն շարական, է. տուն) եւ մեզ կը հրաւիրէ «մեր հայրերուն Տէր Աստուածը բարեբանելու» (Հարց շարական, ա. տուն), «Քրիստոս Աստուածը խոստովանելու» (Հարց շարական, բ. տուն) ու «գՔրիստոս գովելու» (Հարց շարական, գ. տուն): առաւել, ան «կը հայցէ Քրիստոսէ, որ Սուրբ եկեղեցին հաստատուն պահէ» (Տէր յերկնից շարական, ա. տուն): ուրեմն, մեզի կը մնայ դիմել Ս. Ստեփանոսի, որ «այժմ մեզի՝ ուխտաւորներու համար բարեխօսէ, որպէսզի Հօր աջ կողմը նրա-*

տիմֆ» (Օրհնութիւն շարական, Ե. տուն):

Սիրելի սարկաւազներ եւ կիսասարկաւազներ,

Այսօր, ձեր տօնին առթիւ, երբ այս մտածումները կը յաճախեն մեզ, կը հրաւիրեմ ձեզ անդրադառնալու, որ ձեր գլխուն վրայ դրուած սաղաւարտը միայն տօնական զարդարանք եւ պատիւ չէ, այլ՝ Ս. Ստեփանոսի նման աստուածային պսակին արժանանալու խորհրդանշանն է, որուն համապարփակ ըմբռնողութիւնը կը բացայայտուի պատարագամտոյցին խնդրողական աղօթքով. «Տէ՛ր, փրկութեան սաղաւարտ դիր գլխուս, որպէսզի կարենամ Թշնամիին զօրութեան դէմ պատերազմիլ», որուն արձագանքը կը գտնենք Սօղոսէն Քրիստոսով նոր մարդ դարձած Պօղոս առաքեալի Թեսաղոնիկեցիներուն գրած առաջին նամակին մէջ, երբ ան կը յորդորէ. «Պատրաստ ըլլանք, հաւատքի եւ սիրոյ գրահը հագած, եւ փրկութեան յոյսի սաղաւարտը դրած մեր գլխուն» (Ա.Թս 5.8), «իրարու հաւատքը ամրապնդելու» (Հմմտ Ա.Թս 5.11): Երբ աշխարհ փշեպսակ կը դնէ մեր գլխուն, ինչպէս ըրաւ մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի, Աստուած զայն որպէս անանց վարձատրութիւն դափնեպսակի կը փոխէ: Այս է յոյսի սաղաւարտը, որ

Թշնամիին եւ անոր արբանեակներուն դէմ պատերազմելու տարագումով կը գրահանդերձուի:

Կ'աղօթեմ, որ Աստուած Ս. Ստեփանոս սարկաւագապետի «աղօթանուէր մաղթանքով» (Օրհնութիւն շարական, Ժա. տուն) ձեր մէջ առկայձէ այն գիտակցութիւնը, որ նախասարկաւագին եւ նախավկային ճամբով Քրիստոսի հետեւիլը Աստուծոյ կամքը կատարել եւ փառաւորիչ Ս. Հոգիին շնորհներուն ընդունման պարունակ դառնալը նշանաւորէ եւ ձեր ձեռնադրութեան օրհնելով պահը միշտ ձեր հոգիի աչքերուն դիմաց բաց պահէ, որպէսզի «անփոյթ չգտնուիք այն շնորհքին նկատմամբ, որ մարգարէական հոգիով ձեզի տրուեցաւ, երբ երէցները ձեռք դրին ձեր վրայ» (Հմմտ Ա.Տմ 4.14): Այդ շնորհքին աղբերացումով պիտի աճիք Դպրեվանքին մէջ, ձեր ստեփանոսեան բոսոր երազով պիտի կլանուիք եւ երջանիկ օր մը Հայ եկեղեցւոյ ճամբուն ուխտանուիրումով պիտի ծառայէք Աստուծոյ՝ բաւարարելու համար մեր ժողովուրդի գաւազներուն հոգեւոր ու ազգային կարիքները եւ եկեղեցիացած հաւատացեալներով փառաւորէք Ս. Երրորդութիւնը՝ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԷՋԵԱՆ



ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ

**ՀԱՅ ՍՈՒՐԲԵՐ
ՄԻՆչԷԼ ԺԵ. ԴԱՐ (ՎԱԼԵՐԱԳԻՐՆԵՐ)**

18. ԴԱԻԻԹ ԽԱՐԲԵՐԴՅԻ

† 16 Յունուար 1474
Քաղոց 1= Դեկտեմբեր 9

**18.1 Յ. ՄԱՆԱՆԴԵԱՆ - Հ. ԱՃԱՌԵԱՆ, Հայոց նոր վկաները,
էջ 306-308:**

Դաւիթ Խարբերդցի († ՋԻԳ = 1474 յունվ. 16 կիր.)

Սա էր յերկրէն Խարբերդու՝ որդի քահանայի Գրիգոր կոչեցելոյ. եւ էր սորա քեռայրն տաճկացեալ: Եւ յաւուր միում հանդիպեցաւ սմա երթալ յայլ գեղ ի հարսանիս: Եւ տեսեալ գփեսայն իւր անդ՝ դարձոյց գերեսն իւր ի նմանէ, անհաւատ եւ ուրացող ասելով նմա: Ձոր եկեալ պիղծն այն ի քաղաքն առ դատաւորն եւ ասէ թէ «Դաւիթ որդին աներոյ իմոյ անարգեաց զիս եւ զբերանս իմ եւ զհաւատս եւ զառաջնորդն մեր»:

Եւ առաքեալ դատաւորն տարաւ զԴաւիթ եւ կապեալ էարկ ի բանտ աւուրս Ի: Եւ յամենայն օր երբեմն ողորանօք եւ երբեմն սպառնալեօք կամէին թուլացուցանել զնա ի հաւատոցս Քրիստոսի եւ ոչ կարացին խախտել: Եւ յետ քսան աւուրն վճիռ հատին նմա՝ զի հրով այրեսցի:

Եւ հանեալ ի բանտէն՝ սկսան չարչարել զնա ամենայն բազմութիւն քաղաքին. սրով խոցոտեցին եւ փայտիւ ձաղեցին, ապտակեցին զերեսս նորա եւ թքին եւ անողորմ վիրաւորեցին:

Եւ հայրն Դաւիթի՝ Գրիգոր քահանայն լայով յորդորէր զմանուկն. «Որդեա՛կ, որդեա՛կ հօրս ցանկալի եւ փափագելի, մի՛ երկնչիր ի յայս չարչարանացս, որ զմարմինդ միայն ապականէ եւ զհոգիդ ո՛չ: Այլ ուրախացիր որ յաւիտենից եւ անմահ կենացն ես ժառանգորդ եւ անպատում ուրախութեանն»: Եւ Դաւիթ ցնծալի հոգևով ասէր. «Մի՛ մնար ինձ փրկութեան, հայր իմ, զի այսօր ինձ օր փեսայութեան է եւ օր ուրախութեան. եւ ակն ունիմ առնուլ հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան եւ փոխանակ չարչարանացս՝ ակն ունիմ առնուլ զհանգիստն յաւիտենից»:

Եւ յորժամ լուան գայս բան ի բերանոյ Դաւիթի ազգն անօրէն՝ բորբոքեցին հուր եւ առեալ զԴաւիթ՝ տարան յայրել. եւ փայլեցին երեսք նորա՝ որպէս զՍտեփանոսին, եւ ընկեցին զԴաւիթ ի մէջ հրոյն՝ եւ ոչ այրեցաւ սուրբն առժամայն. այլ հուրն ի լոյս դարձաւ եւ ծիրանագոյն եղեւ: Եւ անօրէնքն հանեալ

զԴաւիթ ի հրոյն եւ սրախողխող կարեւրէր խոցոտեցին զբոլոր մարմինն, մինչեւ ի սպառել շնչոյն. եւ ապա կրկին արկին ի հուրն:

Եւ եղեւ նշան սքանչելի, զի սիրտն եւ գլուխն ոչ այրեցաւ. եւ զայլ մասունք մարմնոյն այնչափ այրեցին, որ փոշի եղեն եւ զփոշին հողմով հոսեցին եւ արարին կոխան: Եւ զսիրտն տարեալ ընկեցին ի հրայրս բաղանեացն եւ բորբոքեցին հրով. եւ ոչ այրեցաւ ամենեւին իբրեւ զպողոզն երկաթ: Եւ բաղանիքն եւ պղինձ բաղանեացն հերձան յերկուս. որ եւ յահէն սասանեցան անօրէնքն եւ երկեան երկիւղ մեծ:

Եւ մինչդեռ քրիստոնեայքն ի սուգէին եւ յերկիւղի կային, եւ հայրն Դաւիթի մորմոքայր կսկծագին՝ յանկարծակի ճառագայթեցաւ լոյս պայծառ ակներեւ ամենեցուն ի վերայ նշխարաց սրբոյն Դաւիթի խաչանման զաւուրս հնգետա-

սան յամենայն զիշերի: Եւ ուր տարեալ եղեւ նշխար սրբոյն Դաւիթի՝ ի տուն եւ յեկեղեցի՝ փայլէր եւ շողայր լուսով: Եւ ի լրման աւուրն երեսնի՝ կրկին ճառագայթեաց լոյս ի վերայ տեղեաց նահատակութեան սրբոյն Դաւիթի, եւ աղաւնիք լուսափայլք երամօք տեսեալ հաւատացելոցն՝ որք խաղային ի վերայ նահատակութեան տեղեացն եւ երամօք թրուչէին ընդ արեւելս. որ եւ ի սքանչելի հրաշիցն հիացեալ քրիստոնէիցն՝ զոհուիլն մատուցանէին Աստուծոյ: Եւ հայր եւ մայր մանկանն եւ ամենայն ազգայինքն սփոփեալ մխիթարեցան ի մեծ սգոյն եւ ուրախութեամբ գոհանային զԱստուած:

Կատարեցաւ երանելի վկայն Քրիստոսի Դաւիթ ի թուականիս Հայոց ԹՃԻԳ ամին, յունվար ամսոյ ԺՁ, յաւուր կիրակէի, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

19. ԵՂԻՇԷ, ՄՈՎՍԷՍ ՔԵՐԹՈՂ, ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹ Ե դար Մեհեկան 21 = Փետրուար 27

19.1 Մ. ԱԻԳԵՐԵԱՆ, Լիակատար վարք..., Հ. 5, 1813, էջ 309-320:

ՎԱՐՔ ՍՐՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ ՄԵՐՈՑ

Եղիշէի, Մովսեսի քերթողի, եւ Դաւթի անյաղք փիլիսոփայի:
Հ. փետր. 27. եւ սեպտ. 17: Տօնապատմաւք, յիշատակարանք, եւ պատմագիրք հայոց:

Գեղեցիկ խորհրդով ընդ մեծի բաբունապետի տանս թորգոմեան սրբոյն մեսրոպայ տօնախմբի եւ յիշատակ երից բաբունեացս գլխաւոր աշակերտաց նորին, որք փայլեցին առաքինի սրբութեամբ եւ աստուածիմաստ գիտութեամբ, եւ եղեն լուսաւոր վարդապետք եկեղեցւոյ հայաստանեայց: Ձի թէպէտեւ բազում եղեն աշակերտք սրբոց

թարգմանչաց սահակայ եւ մեսրոպայ, եւ ինքեանք իսկ թարգմանիչք անուանեցան իբրեւ գործակիցք վարդապետաց իւրեանց, այլ երեքին սոքա նշանաւորք եղեն առաւել զրով եւ բանիւ եւ օրինակաւ, եւ անմահ յիշատակ թողին յաշխարհի, սնեալք՝ ի տղայ տիոց առ ոտս հոգեկիրթ վարժողաց՝ ի վարս կատարեալ առաքինութեան, եւ լցեալք հոգւով

իմաստութեան եւ հանճարոյ, կատարեալ յարտաքին եւ յաստուածային զբաղութիւնս, եւ ՚ի հմտութիւնս արեւելեան եւ արեւմտեան լեզուաց, եւ ՚ի հրահանգս աստուածաբանական իմաստից. լցին զպակասութիւն հարց իւրեանց, եւ յաւելին թարգմանութիւնս յորովս ՚ի բանից նախնի վարդապետաց եւ մեծանուն իմաստասիրաց. եւ ինքեանք եւս յաճախութեամբ յօրինեցին ճառս եւ մեկնութիւնս, եւ ազգի ազգի մատեանս եւ պիտառնութիւնս բանասիրականս, քերթողականս, վիպասանականս, խրատականս եւ կանոնականս: Լիակատար պատմութեան վարուց երիցս երանելեացս առաւել փափաքող գտանիմք՝ քան ստացօղ. այլ որ ինչ առանձինն տեղեկութիւնք կայցեն զմիոյ միոյ, տեսցուք փոքր ՚ի շատէ:

Սուրբ հայրն մեր եւ վարդապետն եղիչէ՝ որ եւ եղիչա ճգնաւորն, ասի լինել զպարպետ սրբոյն վարդանայ հայոց սպարապետի. եւ որպէս կարծի՝ մերձաւոր իսկ նորա ըստ մարմնոյ ՚ի տանէ մամիկոնեանց. որ եւ անձամբ առաջիկայ գտեալ անցից անցելոց ընդ աշխարհն հայոց առժամանակօք նահատակութեան սրբոց վարդանանց զօրավարաց եւ սրբոց ղեւոնդեանց քահանայից, գեղեցիկ արձանագրեաց զլիակատար պատմութիւն նոցա, ՚ի խնդրոյ պատուական երիցու դաւթի մամիկոնենի, այն՝ որ գտաւ ՚ի ժողովն արտաշատու. եւ հաւանական իսկ է՝ թէ եւ նա ինքն սուրբն եղիչէ է այն, զոր ՚ի նմին ժողովի յիշատակէ ինքնին երանելին ընդ անուամբս՝ եղիչա եպիսկոպոս ամատունեաց. որպէս եւ այլք յընտրելոց աշակերտաց բազում մասամբ եղեն եպիսկոպոսունք եւ կաթողիկոսունք ժամանակին:

Զեպիսկոպոսական աշտիճան սրբոյն եղիչի յայտ առնեն եւ կանոնագրութիւնք նորա խրատականք, որք գտանին ՚ի կանոնագիրս. ըստ որում եւ յայժմաւուրք երկրորդեն զնմանէ, թէ

արար գիրս կանոնականս համեղ եւ ախորժ բանիւք: Արար երանելիս եւ զմեկնութիւն արարածոցն զրոց լուսաւոր եւ պարզ բանիւք. որպէս եւ զգրոցն յետուայ եւ զդատաւորաց, գուցէ եւ զայլոց. նոյնպէս եւ զմեկնութիւն հայրմերին հոգելից իմաստիւք, եւ ճառս ընտիրս վասն ողորմութեան, եւ վասն չարչարանաց քրիստոսի եւ թաղման եւ յարութեան. եւ սքանչելի խրատ միանձանց: Յորս զոյգ ընդ հոգեկիր հանճարոյ եւ ճարտար կարգարանութեան փայլէ եւ հարազատ հայկարանութիւն անխառն ՚ի հելլենախօսութենէ:

Իսկ ըստ գեղեցիկ քաղաքավարութեան էր իբրեւ գուարթուն ՚ի մարմնի, մեռեալ աշխարհի եւ որոց յաշխարհի: Առժամանակ մի կրօնաւորեալ բնակեցաւ սուրբն եղիչէ յառանձնութեան մեծաւ ճգնութեամբ ՚ի վանս եւ յանապատս. եւ առ ժամանակ մի հարկեալ ՚ի սիրոյ՝ օգնական եղեւ ժողովրդեանն աստուծոյ այցելութեամբ եւ վարդապետական քարոզութեամբ: Եւ ապա միւսանգամ գամայութիւն խնդրեաց՝ բնակեալ ՚ի լերինս եւ ՚ի յայրս. եւ անտես ՚ի մարդկանէ լեալ՝ խոտաճարակ լինէր ՚ի լերինս մոկաց, եւ վայրի բանջարօք շատանայր. մինչեւ յետ ժամանակաց գտեալ զնա հովուաց ոմանց յայրի միում նքողեալ եւ ճնշեալ ՚ի խստակրօն վարուցն՝ համբաւեցին գերանելին եւ գտեղի ճգնութեան նորա:

Իսկ սուրբն եղիչէ խոյս տուեալ անտի՝ եկն նստաւ ՚ի հանդարտութեան ՚ի գաւառն ուշտունեաց նովին անձաւամուտ եւ միակեցական վարուք առանձնութեան ՚ի փապարս լերանց. ուր եւ աստուածամերձ ընտանութեամբ վախճանեալ փոխի ՚ի քրիստոս: Եւ յետ բազում աւուրց եկեալ ոմանց ՚ի տեղին՝ գտին անապական գմարմին սրբոյն որպէս ՚ի քուն, եւ զարմացան. եւ հարցափորձիւ ՚ի վերայ հասեալ տեղեկացան եւ ծանեան զնա, որ սուրբն եղիչէ ճգնագրեացն է՝ գտեալն երբեմն ՚ի հովուաց ՚ի

գաւառն մոկաց. եւ շինեցին յանուն նորա եկեղեցի, եւ փոխեցին անդ գտուրբն 'ի հանգիստ: Իսկ իշխանն մոկաց եկն յետոյ, եւ հառ զգլուխ սրբոյն եւ զաջն. եւ տարեալ եղ յառաջին խուղն, շինեալ 'ի վերայ նորա վայելուչ եկեղեցի. եւ այնպէս յերկոսին ճգնարանս, ուր երանելին փառաւորեաց զաստուած 'ի միայնութեան, փառաւորեաց եւ զնա աստուած բազում նշանօք՝ զոր առնէր 'ի ձեռն պատուական նշխարաց նորա:

Առաւել պայծառ ցուցաւ 'ի նմին ժամանակի հանդիսիւ քաջափայլ առաքինութեան եւ կատարեալ իմաստութեան այրն աստուծոյ սուրբն մովսէս խորենացի, մականուանեալն քերթող կամ քերթողահայր, այս է բանահիւս եւ գլուխ բանաստեղծից. զի 'ի գրաւորական մասին գկնի վարդապետաց իւրոց սահակայ եւ մեսրոպայ մի միայն գտաւ սա, թէպէտեւ հելլենարանութեամբ ուրեք ուրեք մթնացեալ, այլ եւ 'ի հայկաբանութենէն ոչ վերջացեալ. նոյնպէս եւ սուրբ քաղաքավարութեամբ եւ հոգեւոր վարդապետութեամբ սքանչելի:

Եւ էր ինքն հայրենեօք 'ի խորնի աւանէ տարոնոյ, վասն որոյ եւ մովսէս տարոնեցի եւ խորենացի կոչի անխտիր, գաւառակից եւ տոհմակից գլխովին համարեալ սրբոյն մեսրոպայ, եւ առաւել ընտանի ձեռնաստուն 'ի մէջ աշակերտաց գկնի գիւտոյ հայերէն գրոց, եւ մի 'ի գլխաւորաց առաքելոց յաթենական ուսմունս: Որ եւ շրջեալ ընդ աշխարհն յունաց եւ հռովմայեցոց մինչեւ 'ի մեծն հռովմ, որպէս եւ 'ի բիւզանդիա, 'ի պաղեստին եւ յասորիս դեգերեալ, զամենայն հմտութիւն յանձին ժողովեաց, եւ ամենայն հնութեանց եղեւ քաջ խելամուտ. գորաւոր գրչաւ եւ հգօր բանիւ. եւ սրբակրօն վարուք փայլեալ՝ յոքունց գերագանց: Ջորոյ գարժանաւոր գովութիւն սուղ բանիւ տիրապէս նշանակեաց սահակ արծրունի երեւելի իշխան հայոց 'ի վասպուրական, կոչելով զնա 'ի թղթի իւրում՝ որ առ նա. Հրեշտակ եւ սպա-

սաւոր մեծութեանցն քրիստոսի՝ յերկրի երկնայինդ ցուցեալ այր երկնակենցաղ, եւ լուսաւորիչ խաւարելոցս..... որ տուարդ մեզ երկրորդ սահակ եւ մեսրոպ յետ զնալոյ նոցա առ աստուած, այլովքն հանդերձ:

Եւ զի այսպիսի ոք էր ծանուցեալ առ ամենեսին, եւ անմարթ՝ էր թաքչել տան՝ որ 'ի վերայ լերանց հայոց, կամ դնիլ ճրագի ընդ գրուանաւ, եղաւ 'ի վերայ աշտանակի եկեղեցոյ 'ի լուսատու լինել զիտապետութեամբ. քանզի յետ վախճանի երջանիկ աշակերտակցին իւրոյ եզնրկայ կողբացոյ՝ որ մին էր յառաջին թարգմանչացն, կարգեցաւ յաթոռ նորա յեպիսկոպոսութիւն բազրեւանդայ եւ արշարունեաց, այն է երկիրն կամարականաց. եւ հովուեաց հօտի իւրում ամէն արթնութեամբ եւ իմաստութեամբ ընդ ժամանակս երկայնս, անխոնջ վաստակեալ 'ի հոգեւոր երկասիրութիւն բանիւ եւ գրով մինչեւ ցխորին ծերութիւն եւ ցալիս հնութեան. որ եւ բազմօք յառաջ քան զվախճան իւր՝ ասէ գանձնէ լինել այր ծեր եւ պարապեալ 'ի թարգմանութիւնս. իսկ ըստ վկայելոյ թովմայի արծրունոյ՝ ասի կեցեալ գամբս հարիւր եւ քսան, իբրեւ ըստ չափու հասակի վարդապետին իւրոյ սրբոյն սահակայ պարթեւի:

Արդ 'ի բիւրապատիկ գրաւոր վաստակոց երանելոյն մնացին մինչեւ ցարդ քանի մի յիշատակք նորա. այս ինքն Պատմագրութիւն հայկազեան տոհմիս 'ի սկզբանէ մինչեւ ցաւուրս իւր, 'ի խնդրոյ երանելոյն սահակայ ասպետի բագրատունոյ, այն՝ որ յաւուրս մեծին վահանայ եղբորորդոյ սրբոյն վարդանայ եհեղ զարիւն իւր 'ի պատերազմի ընդդէմ կրակապաշտ պարսից: Աշխարհագրութիւն ճիշդ եւ կարեւոր: Հոետորական գիրք պիտոյից 'ի խնդրոյ թէոդորի ուրումն աշակերտի: Քերականական եւ քերթողական հատուածք պէսպէս: Ճառներբողական 'ի սուրբ կոյսն հովիսիմէ. եւ պատմութիւն ճանապարհորդութեան

հուփսիմեանց 'ի հռովմայ մինչեւ 'ի հայս' յայլ առանձին ճառ: Շարականք հրաշալի յօրինուածով. թո՛ղ զթարգմանութիւնս յորովս. որպէս եւ զվերջին լրումն թարգմանութեան աստուածաշնչի սմին ընծայել չէ՛ ինչ տարադէպ:

Այլ առանձին յիշատակաց է արժանի նամակն երանելոցս գրեալ 'ի պատասխանի թղթոյն սահակայ արծրունւոյ. ուր առաջի դնէ ըզպատմութիւն սքանչելագործ պատկերի սուրբ աստուածածնին, որ կայր 'ի հոգւոց վանս՝ բերեալ 'ի սրբոյն բարթողիմեայ առաքելոյն, հանդերձ ստորագրութեամբ ազգատոհմի տիրամօր կուսին, եւ վերափոխման նորա: Արդ 'ի գրի անդ փայլէ ոչ միայն կատարեալ խոնարհութիւն առն աստուծոյ եւ աշխարհուրացութիւն նորա՝ 'ի հրաժարելն 'ի գովութենէ ընծայելոյ նմա եւ 'ի հրաւիրանաց պատուոյ, այլեւ առաքելաշնորհ մեծանձնութիւն, եւ մարգարէական հոգետեսութիւն, յասել անդ իւրում. «Քե՛զ ասեմ իշխանդ արծրունեաց. եցոյց ինձ տէր, զի յորդւոց քոց երեք եղբարք վասն քրիստոսի 'ի մահ մատնեալք՝ երկուքն արեամբ վրկայք լինին քրիստոսի, եւ մինն վրիպեալ 'ի նոցանէ՝ եւ ո՛չ յայսմ վայելէ: Վասն նոցա աստուած զթագն թագաւորին սենեքերիմայ յորդիս քո դարձուցեալ՝ յերկարածգէ յերկրի: Եւ բազրատունւոյդ ասեմ, յիշէ տէր գրանն իւր առ արբահամ, եթէ թագաւորք 'ի քէն՝ եյցեն. եւ թագաւորէք 'ի դուին: Եւ այլ ինչ ունիմ ասել ձեզ, յորժամ տացէ տէր տեսանել:

Եւ կատարեցաւ ամենայն ըստ բանի սրբոյն. զի յարծրունեաց անտի էին փառաւոր նահատակքն քրիստոսի երկուքին ընտրեալ հարազատք, սուրբն սահակ եւ համագասպ իշխանք հայոց. որոց եղբայրն երրորդ՝ մերոլթան անուն՝ անկեալ 'ի հաւատոյ՝ փութով սպանաւ 'ի դաւթէ մամիկոնեանց. եւ արծրունեաց թագաւորութիւն կանգնեցաւ յետ ժամանակաց 'ի վասպուրական աշխարհի, որպէս եւ բազրատունեացն 'ի դուին: Եւ այն զի՝ այս գործք գործեցան բազում

դարուք զկնի յաւուրց անտի խորենացւոյն. մինչեւ չմնալոյ երկբայութեան 'ի վերայ աստուածազդեցիկ մարգարէութեան սրբոյն: Իսկ ինքն երանելին լցեալ գաւուրս իւր երկայնս՝ լի արդեամբք եւ գովութեամբ ըստ աստուծոյ, հանգեաւ խաղաղութեամբ 'ի քրիստոս:

Իսկ երանելին Դաւիթ՝ անյաղթ փիլիսոփայ կոչեցեալ յարդեանց, ասի լինել քեռորդի սրբոյն մովսեսի խորենացւոյն, ծննդեամբ 'ի հարք գաւառէ եւ 'ի ներգին աւանէ՝ որ առ սահմանօք տարոնոյ. վասն որոյ եւ կոչի ներգինացի, համարեալ 'ի վերջին դասուց թարգմանչաց, եւ հելլենական ուսմամբ գերագանցեալ գամենեքումբք. վասն որոյ եւ ոճ նորա առաւել յունական: Սա անխտիր փայլեաց 'ի մէջ հայոց եւ հելլենացւոց՝ իմաստասիրութեամբ եւ աստուածսիրութեամբ. ոյր վասն եւ 'ի յունարէն օրինակս փիլիսոփայական գրուածոց նորա տեսանեմք գնա պատուեալ աստուածասէր անուամբ, կամ ըստ յունականին գերադրական կոչմամբ՝ դաւիթ թէոֆիլէսդադօս, այս է ամէնաստուածասէր: Ոյր վասն ասէ առաքել վարդապետ սիւնեցի, թէ յոյնք հնարին գերանելիս ըզդաւիթ յիւրեանս ձգել 'ի պարծանս ազգի իւրեանց. յա՛յտ է թէ վասն գտանելոյ գրուածոց նորա եւ 'ի նոցին բարբառգի միօրինակ աջողակ էր յերկոսին դպրութիւնս, եւ անխտիր կարօղ էր գրել հայերէն եւ յունարէն՝ որչափ ինչ գտանեմք յիմաստասիրական բանից նորա. զի բաց 'ի քերականութենէ՝ գրրեաց զգիրս սահմանաց եւ էակաց, եւ զվերլուծութիւնս ներածութեանցն պորփիւրի, եւ ստորոգութեանցն արիստոտէլի. գորոց եւ զգիրս վերածեաց 'ի հայ բարբառ:

Շարադրեաց եւ այլ բազմապատիկ ճառս վսեմ ոճով. յորս յանուանէ յիշատակին ներբողեան 'ի ծնունդ տեսուն, եւ բարձրացուցէ՛քն 'ի սուրբ խաչն աստուածընկալ. որ եւ կայ մինչեւ ցայսօր հանդիսացեալ առ ամենեսին, առաւել յետ գրելոյ սրբոյն ներսեսի շնորհալուոյ ըզպատճառս եւ զմեկնութիւն նորա. որ

եւ երկրան իմն կարծիս յիշատակէ, ասել ոմանց՝ թէ առաջի յունաց իցէ խօսեցեալ գայն, եւ այլոց՝ եթէ առաջի հայոց. եւ գերկրորդս գայս աւանդութիւն հաստատէ ոչ միայն այն, զի զճառ խաչին չգտանեմք յունարէն, այլ միայն հայերէն, այլեւ ո՛րպիսի եւ իցէ յիշատակարանն պատմական գտեալ՝ ի տօնապատճառս հայոց. զոր երկրորդեմք աստանօր՝ առ չունելոյ գայլ ստուգագոյն տեղեկութիւն զվարուց եւ զգործոց դաւթի անյաղթի. ընդ որ ողբայ իրաւամբք ամենայն իմաստուն: Արդ յայս բանք են տօնապատճառին. Յաւուրս վերադիտողութեան հայոց տեառն գիւտայ եկին արք ոմանք՝ ի նահանգէն անտիոքայ (ասորոց), ՚ի գեղջէն՝ որ կոչի օղին (կամ աւլին). որոց անուանքն կոստանդին եւ պետրոս եւ թէոդորէ, խարագնագգեստըք, բոկագնացք, պահօղք եւ կեղծաւորք..... ՚ի ցոյց մարդկան. որք ասէին ո՛չ գոլ զմարիամ աստուածածին, եւ ոչ զխաչն՝ աստուածընկալ, այլ՝ գողոց պատժարան: Իբրեւ լուաւ գիւտ զգայն դաւթի (եւ զընկերացն), բերկրեցաւ եւ մխիթարեցաւ յոգի. եւ գրեաց առ դաւիթ (նամակ, որ ունէր օրինակ գայս):

«Երկնաւորին ցանկացեալ մեծութեան գտող գանձի, եւ աստուածային լրութեան յուսոյն. որ ձգեալ հասեր ՚ի տիրապէս տենչումն, ՚ի գերակայ եւ ՚ի պատարուն պայման գտեալ եւ ծածկեալ, բացայայտեալ բոց բարեաց բարետրապէս բարուց քոց. զոր ՚ի վարժ վաճառի քում խնդրելի մեզ վարդապետութիւն խուզողացս խօսել խորհրդով ՚ի խաչն քրիստոսի. զնորին երախտեացն հատուցանել որ առ ՚ի մէնջ գոհութիւն փրկելոցս՝ փրկաւէտ փայտին փառաց փեսային: Զի պաշտելի է եւ պատուելի մեզ, եւ պանծալի ըստ պօղոսի պարծել ՚ի պատուական պսակն քրիստոսի, եւ ՚ի թագ նորոյս սիովնի. զի բարձցի սերմ հերձուածոյ հերեսիտացն հայհոյչաց, եւ իլեցի յազարակաց փուշք փաստբանք, եւ որումն սատանայական սերմանն, որք ՚ի մարդ յուսան, եւ ոչ յաս-

տուած: Գիւտ՝ գագաչեալ գարշապար գերեզմանի՝ մահու մերձաւոր, դրուատ հայցեմ, հայոց հովուապետ եւ վերագիտօղ տանս արշարունի (կամ արշակունեաց). ընկա՛լ զթուղթդ թախանձանաց դաւիթ»:

Եւ նա առնէ անդրէն պանդուխտի անդրադարձութեամբ. «Զառ ՚ի յաստուածուստ պատուեալ գերիցս երջանիկ եւ զմեծի հայրապետի եւ զաթոռակալի սրբոյն գրիգորի, հայոց մեծաց վերագիտողի, գաստուածահրաման խնդիր հարկապահանջութեան եկեղեցական գործառնութեան, զոր հրամայեցեր մերումս կրտսերութեան՝ գրով դրոշմել ՚ի քարտիսի մատենագրութեան, (ընկալայ). զի կացցէ մնասցէ ՚ի յարձանի՝ անջրելի եւ անջնջելի յիշատակ գկնի՝ ազգաց եկելոց. զոր ոչ այլաբար ինչ թուի (ասել), քան թէ իշխանութեանդ քում ըստ գերագանցութեան պատուոյ՝ զհարկեցուցիչ եւ գանհնարին հրամանաց ծանրութեան: Սակս որոյ սարսեալ սարսափեմ, եւ երկեղ ոչ դուզնաքեայ յիս բերի. զի գտանի քան զկար մեր զերագանց խնդիրդ. եւ զի հարկ ՚ի վերայ կայ աւետարանել հնազանդութեամբ, զի մի՛ վա՛յն վիճակեսցի: Սակայն սատարեսցէ սրբամատոյց աղօթք ձեր սարտուցելոցս. զի բանն աստուած տացէ բան բանի մերոյ մասին, եւ հանճար հմտութեան հոգին սուրբ՝ խորհել խորհրդով եւ խօսել:

Արդ եթէ հարագատ իցեն յայս նամակագրութիւնք, եթէ յայոց ոմանց իմաստակաց պաճոյճ բառիւք յարմարեալ՝ մանաւանդ նոյնատառիւք ՚ի դէմս գիւտայ, ես ոչ գիտեմ. այլ գայս գիտեմ, զի ճառ խաչին է գերապանծ եւ վսեմ յօրինուած՝ աթենական ողուոյ ցուցակ. յորմէ իմանամք, թէ՛ եւ այլ բազմադիմի գործք երանելւոյն դաւթի եւ ընկերաց նորա պարտին լինել, որք այժմ չերեւին ՚ի միջի:

ԹՒԱՄԱՐ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ

(Շար. 43)

ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ

**Ս Ե Ր Տ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն
Մ Ա Տ Թ Է Ո Ս Ի Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ի Ն**

ԺԸ. Գլուխ

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՄԵՂԱՆՁՈՂ ԵՂԲՕՐ (15-18)

- Եթե եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, գնա յանդիմանէ զայն, երբ որ երկուքդ առանձինն է՛ք: Եթէ մտիկ ընէ քեզի՝ եղբայրդ շահած կ'ըլլաս: Իսկ եթէ մտիկ չընէ քեզի՝ հետդ մէկ կամ երկու հոգի եւս առ, որպէսզի «երկու կամ երեք վկաներու բերնով հաստատուի ամէն ամբաստանութիւն»: Իսկ եթէ անոնց ալ մտիկ չընէ՝ բոլոր հաւատացեալներուն ներկայութեան ըսէ, եւ եթէ անոնց ալ մտիկ չընէ՝ զինքն նկատէ հեթանոս մը եւ կամ մաքսաւոր մը:

Վստահ գիտցէ՛ք, թէ ինչ որ կայէ՛ք երկրի վրայ՝ կայուած պիտի ըլլայ երկինքի մէջ, եւ ինչ որ արձակէ՛ք երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ:

Երբ մէկը մեղանչէ՝ մենք ի՞նչ կեցւածք պէտք է ունենանք անոր հանդէպ:

Հեթանոսական վարուելակերպը՝ ժխտական արարքին ժխտական արարքով փոխադարձելու սկզբունքը ունի: Եթէ մէկը ինծի դէմ չարիք գործեց, ես ալ իրեն չարիքով պէտք է պատասխանեմ: Ասիկա քրիստոնէական բարոյականին հակառակ է: Քրիստոնէան չի կրնար այսպէս վարուիլ: Ան ինքզինք

պէտք է վարժեցնէ չմտածել այն վիրաւորանքին կամ յանցանքին մասին, որ իրեն հասցուած է: Քանի որ կատարուած վիրաւորանքին կամ յանցանքին հակազդելու միտքը՝ եսասիրական է:

Հաւատքի դաստիարակութիւնը կամաց-կամաց մեզ կը վարժեցնէ անտեսել մեզի հասցուած վիրաւորանքը կամ յանցանքը, եւ մեր նայուածքը ուղղել մեզի դէմ մեղանչող եղբոր՝ զայն սրբազրուած տեսնելու դիտումով: Եթէ մէկը ինծի դէմ յանցանք գործած է՝ կրնայ պատճառ ունենալ: Հետեւաբար, անհրաժեշտ է զայն հասկնալ, եւ աշխատիլ որ ան ինքզինք սրբազրէ: Ասիկա սիրոյ վերաբերում է: Եւ քրիստոնէան իր նմանը սիրելու կոչուած է:

Այս հատուածին մէջ, յանցապարտ եղբոր ինքնասրբազրութեան համար չորս քայլեր ցոյց տրուած են: Առաջինը՝ առանձնաբար կատարելի է: Երկրորդը՝ մէկ եւ կամ երկու հոգիի ներկայութեան կատարելի: Երրորդը՝ բոլոր հաւատացեալներու ներկայութեան: Չորրորդը՝ հեռացման արարք:

Առաջին հերթին. մենք գիտենք որ մեզի դէմ յանցանքները՝ անպայմանօրէն գէշ դիտումով կրնան չըլլալ: Մենք ալ ուրիշներուն դէմ յանցանքներ կը գործենք, սակայն առանց գէշ դիտում

ունենալու: Յանցանքները կը գործուին երբեմն գիտակցաբար եւ երբեմն ալ անգիտակցաբար: Երբեմն յանցանք գործողը պատրաստ կ'ըլլայ իր յանցանքը ընդունելու: Բայց մարդկային արժանապատուութեան սխալ հասկացողութիւն ալ կայ, որ կը կաշկանդէ ենթական, եւ չի ձգեր, որ ան իր յանցանքը ընդունի եւ ինքզինք սրբագրէ: Նման պարագայի, յանցանք գործողին օձիկը բռնել եւ հրապարակաւ յայտարարել անոր գործածը՝ չ'օգներ անոր ինքնասրբագրութեան, այլ պատճառ կ'ըլլայ որ ան խրտչի: Անոր ամօթի զգացումը՝ ուրիշներու ներկայութեան աւելի կը գրգռուի, եւ պատճառ կ'ըլլայ որ ան ընդվզի ու իր սիրտը կարծրացնէ: Անոր սիրտին կարծրացումով՝ մենք փոխանակ գայն շահելու՝ կը կորսնցնենք: Այս գիտակցութեամբ ալ, ուրեմն, ճիշդ պէտք է ընել յանցաւորը առանձնաբար ինքնասրբագրութեան հրաւիրելու:

Երկրորդ. կրնայ պատահիլ որ յանցաւորը առանձնաբար կատարուած ճիշդ մերժէ: Այդ պարագային գայն ինքնասրբագրութեան հրաւիրելու է մէկ կամ երկու հոգիներու ներկայութեան:

Անկասկած, Յիսուս մէկ կամ երկու հոգիի մասին ակնարկելով, պատահական մարդիկ չէ որ նկատի ունէր, այլ մարդիկ՝ որոնք հոգեւոր կեանքին մէջ յորդորելու, ուղղելու, դաստիարակելու փորձառութիւնը ունին:

Հին Կտակարանին մէջ, մեզի տրուած է օրինական սկզբունք, թէ որեւէ յանցանքի դատապարտութիւնը մէկ հոգիի վկայութեամբ չի կրնար ըլլալ: Պէտք է այդ յանցանքին վկաներ ըլլան նաեւ ուրիշներ: Այլապէս յանցանքին դատաստանը կրնայ անճիշդ ըլլալ: Հոգեւոր յորդորի, ուղղութեան եւ դաստիարակութեան տէր վկաններուն մասնակցութիւնը՝ կը նպաստէ դատաստանի արդար ելքին, կամ կրնայ նպաստել

յանցաւորի ինքնասրբագրութեան:

Երրորդ. երկրորդ ճիշդ անյաջողութեան պարագային՝ պէտք է դիմել յաջող քայլին, որ ժողովեալ հաւատացեալներուն դիմաց յանցանքին ներկայացումն է՝ ի խնդիր եղբօր դարձին: Հրապարակային կամ հաւատացեալներու ներկայութեամբ եւ միջնորդութեամբ ճիշդին անյաջողութենէն ետքը՝ կը մնայ միայն չորրորդ քայլը, որ գայն հեթանոս կամ մաքսաւոր համարելն է:

Գիտէք, որեւէ հրեայ աշխարհի բոլոր ժողովուրդները «հեթանոս» կը կոչէր: Ան ինքզինք կը ճանչնար անդամ Աստուծոյ ժողովուրդին, իսկ միւսները՝ անոր մէջ չէր տեսներ: Յիսուս երբայական մտածելու ձեւը կը գործածէ՝ ըսելու համար, թէ իր յանցանքին մէջ մինչեւ վերջ յամառողը՝ Աստուծոյ ժողովուրդին մաս չի կրնար կազմել: Անշուշտ Յիսուս «Աստուծոյ ժողովուրդ» եզրով կը հասկնար ոչ թէ հրեաները, այլ այն ժողովուրդը, որ Աստուած իրեն պիտի տար, այսինքն՝ եկեղեցին:

Հրեաները իրենց կրօնական աւանդութենէն հեռացած կը համարէին մաքսաւորները, եւ անոնցմէ հեռու կը պահէին իրենք զիրենք: Յիսուս երբայական մտածելու այս ձեւն ալ նոյն միտքով կը գործածէ, պարզապէս ըսելու համար, թէ իր յանցանքին մէջ յամառողը՝ ինքզինք կը հեռացնէ Աստուծոյ ժողովուրդէն: Գիտէք ան երբեք մաքսաւորները չանտեսեց, այլ գանոնք ալ իր փրկութեան արժանի տեսաւ:

Առաջին երեք քայլերը դրական են: Անոնք մեր կողմէ ճիշդ կը պահանջեն, որ յանցաւորը գիտակցի իր յանցանքին, եւ զղջալով կորուստէ փրկուի ու մնայ անդամ Աստուծոյ ժողովուրդին:

Իսկ վերջին քայլը՝ «ժխտական» է: Չակերտաւոր է որակումս, քանի որ Յիսուսի յորդորները բոլոր մարդոց փրկութեան համար էին:

Յիսուս ըսել կ'ուզէր, որ յետ մեղանչող եղբոր դարձը ապահովելու երեք ճիգերու անյաջողութեան, հաւատացեալին կը մնայ համաձայն եկեղեցական որոշումին՝ «հեթանոս» կամ «մաքսաւոր» համարել իր մեղանչումին մէջ յամառողը:

Եկեղեցին է վերջին իրաւարարը: Անիկա յետ ճիգերու սպառման՝ կը հարկադրուի խիստ որոշում առնելու: Այն որոշումը կրնայ ժխտական թուիլ, բայց նպատակը ժխտական չէ, որովհետեւ կը շարունակէ յուսալ, թէ մեղանչողը պիտի ուղղուի: Խիստ որոշումը վերջնական դատապարտումի չի ձգտիր, այլ դաստիարակութեան: Մեղանչողին առջեւ վերջնականորէն չի փակուիր եկեղեցւոյ դուռը: Անոր հեռացումը եկեղեցիէն՝ պարզապէս նախապատկերացումն է վախճանական դատապարտութեան: Ուստի, ենթական պէտք է ինքզինք սրբազրէ, որպէսզի դարձեալ արժանի ըլլայ եկեղեցւոյ անդամակցութեան:

Այս առնչութեամբ, Պօղոս առաքեալէն հետեւեալ լուսարանութիւնը կրընանք քաղել:

Ան Տիմոթէոսի ուղղած իր առաջին նամակին սկիզբը գրած է. «Շատեր իրենց խղիւղ չանսալով՝ իրենց հաւատքը կործանեցին: Անոնցմէ են Հիմենէոսն ու Ալեքսանդրոսը, որոնք Սատանային կամփին ձգեցին, որպէսզի իրենց պատիժը կրելով՝ սորվին Աստուծոյ շնորհոյն» (Ա.Տմ 1.20): Ուրեմն, յիշեալները հեռացած են եկեղեցիէն, որպէսզի ուղղուին, իրենք զիրենք սրբազրեն: Այլապէս անոնք պիտի կորստեան մատնուին:

«Վստահ գիտցե՛ք, թէ ինչ որ կապէ՛ք երկրի վրայ՝ կապուած պիտի ըլլայ երկինքի մէջ, եւ ինչ որ արձակե՛ք երկրի վրայ՝ արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ»: Այս նոյն խօսքը Յիսուս Պետրոս առաքեալին ըսած էր 16-րդ գլխուն մէջ

(Հմմտ Մտ 16.19): Այստեղ ուղղուած է բոլոր առաքեալներուն: Այս խօսքին հասցէ կարելի է տեսնել նաեւ թէ՛ եկեղեցականները եւ թէ՛ ամբողջութիւնը հաւատացեալներուն: Ըսել ուղուածը այն է, թէ եկեղեցիէն հեռացուածը եթէ յամառի իր ընթացքին մէջ, ապա եկեղեցւոյ վճիռը թէ՛ երկրի վրայ եւ թէ՛ երկինքի մէջ վախճանական պիտի ըլլայ: Նոյնպէս՝ պիտի ըլլայ երբ ան զղջալով դարձի գայ: Մեղքին մէջ յամառողը՝ յաւիտենապէս պիտի դատապարտուի, իսկ զղջացողը՝ յաւիտենական կեանք պիտի ունենայ:

ՔՐԻՍՏՈՍԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ
ԱՂՕԹՈՂՆԵՐՈՒՆ ՄԷՋ (19-20)

Եւ կ'ըսեմ՝ ձեզի, որ եթէ ձեզմէ երկու հոգի երկրի վրայ միաբանին որեւէ խնդրանքի համար, ի՛նչ որ այ խնդրեն՝ երկնաւոր Հայրս պիտի կատարէ ատիկա: Որովհետեւ ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուին իմ անունովս, ես հոն եմ՝ անոնց միջեւ:

Յիսուս ասկէ առաջ ուսուցած էր, որ երբ կ'աղօթենք Աստուծոյ՝ աւելորդ խնդրանքներ չներկայացնենք: Մանաւանդ նիւթական խնդրանքներ չներկայացնենք Անոր, որովհետեւ Աստուած մեր նիւթական կարիքները գիտէ: Յիսուս պատուիրած էր, որ մեր հիմնական աղօթքը ըլլայ Իր արքայութեան գալուստը խնդրել: Անկասկած, Յիսուս ըսել չէր ուզեր որ ամէն անգամ «Երկինքի արքայութիւն» բառը պիտի հոլովենք, այլ մեր աղօթքը պէտք է վերաբերի ամէն ինչի որ այն արքայութեան գալուստին եւ մարդոց սիրտերուն մէջ հաստատման կը նպաստէ: Ու այն ատեն է, որ Աստուած ամէն ինչ առատօրէն պիտի պարգեւէ մեզի:

«...Եթէ ձեզմէ երկու հոգի երկրի

վրայ միաբանին որեւէ խնդրանքի համար...»։ Աստուծոյ խնդրանք ներկայացնելու ուսուցումին վրայ՝ յաւելում է ասիկա։ Կը շեշտուի Աստուծոյ խնդրանք ներկայացնելու կարեւոր պայման, որ այսօր շատ կը պակսի։ Մեր եսապաշտութիւնը խորապէս վիրաւորած է մեր մտածելակերպը, եւ այդ պատճառով ալ մենք մեզ ուրիշներուն կը հակադրենք՝ փոխանակ միաբանելու։ Աւելի կը փորձենք ուրիշներուն հետ մեր տարբերութիւնները ցոյց տալ քան թէ անոնց հետ մեր հասարակաց դրական յատկանիշները վեր բարձրացնել։

Աստուած կ'ուզէ, որ իր ժողովուրդը ոչ թէ անհատներու գումար ըլլայ, այլ մէկ ընտանիք ըլլայ։

Մարդուն, յատկապէս հաւատացեալին գիտակցական ճիգը պէտք է ըլլայ ուրիշներուն հետ միութեան եզրերը փնտել եւ գտնել ու միաբանիլ անոնց հետ։ Այդ միաբանութեան մէջ է, որ առ Աստուած աղօթքին խնդրանքը կը կատարուի։

Այս պատուէրին համաձայն, եկեղեցին սկիզբէն յատուկ շեշտ դրաւ հաւաքաբար մատուցուած աղօթքին վրայ։ Կարդացէք Առաքեալներուն Գործերը գիրքը եւ պիտի տեսնէք որ անիկա կը շեշտէ հաւաքական աղօթքին մեծ կարեւորութիւնը։ Միաբանութեամբ կատարուած աղօթքներուն պատճառով է, որ Աստուած այնքան շնորհներ բաշխեց նորահաստատ եկեղեցիին, եւ Քրիստոսի փոքրիկ հօտը մեծցաւ ու ընդլայնեցաւ։

Այլ ուշագրաւ կէտ է այն, թէ ինչ որ ալ միաբանողները խնդրեն՝ Աստուած պիտի կատարէ խնդրուածը։ Յիսուս կ'ուզէ յստակ դարձնել, որ ճշմարիտ հաւատքին առջեւ ոչինչ անկարելի է։

Անհատական հաւատքը կենսական է, բայց անոր վաւերականութիւնը կը յայտնուի հաւաքական հաւատքի փոր-

ձառութեան մէջ։ Ծշմարիտ հաւատքը միաբանութեան մէջ կը գտնենք։

Յիսուս իր ներկայութիւնը կը խոստանայ միաբանեալ աղօթողներուն։ Իր այս խոստումը Յիսուս պիտի կրկնէ նախքան իր համբարձումը եւս։

Եկեղեցին իր կեանքին մէջ այս խոստումին իրականացումը տեսաւ եւ վաշիւց անոր բարիքները։ Անիկա թէ՛ իր ծիսական առօրեային, թէ՛ իր ժողովներուն ընթացքին եւ թէ իր ընկերային ծառայութեանց մէջ տեսաւ ու կը տեսնէ Քրիստոսի ներկայութիւնը։

Միաբանեալ հաւատացեալները իրարու թերութիւններուն չեն նայիր, որովհետեւ Քրիստոսի ներկայութեան գիտակցումը՝ գանոնք կը վերածէ նոյն եւ մի մարմինի անդամներուն։ Եւ եկեղեցւոյ անդամները գիրար կ'ամբողջացնեն։

ԱՆՆԵՐՈՂ ԾԱՌԱՅԻՆ ԱՌԱԿԸ
(21-35)

Այն ատեն Պետրոս մօտեցաւ Յիսուսի եւ հարցուց․

– Տէր, քանի՞ անգամ եթէ եղբայրս մեղանչէ ինձի դէմ՝ պէտք է ներեմ իրեն․ մինչեւ եօթը անգամ։

Յիսուս պատասխանեց․

– Ոչ թէ եօթը անգամ, այլ եօթանասուն անգամ եօթը։ Որովհետեւ երկինքի արքայութիւնը կը նմանի հետեւեալին․–

Թագաւոր մը կար, որ ուզեց իր ծանանքուն հաշիւները ղննել։ Եւ երբ հաշուեմնութեան սկսաւ, իրեն բերին պարտապան մը, որ միլիոնաւոր ոսկի պարտք ունէր։ Եւ քանի վեարելու կարողութիւն չունէր, տէրը հրամայեց որ գայն իր կնոջ եւ գաւակներուն հետ որպէս ստրուկ ծախեն, ինչպէս նաեւ ունեցածը վաճառեն եւ պարտքը վեարեն։ Ծառան թագաւորին ոտներուն ինկաւ եւ աղաչեց՝ ըսելով․ «Համբերէ եւ ժամանակ տուր ինձի եւ ես

բոլորը կը վնարեմ՝ քեզի»։ Ծառային տերը գթաց եւ պարտքը շնորհելով՝ դրկեց զինք։

Հագիւ ծառան դուրս ելաւ, գտաւ իր ծառայակիցներէն մէկը, որ չնչին գումար մը պարտական էր իրեն։ Անոր կոկորդէն բռնելով կը խեղդէր գայն ու կ'ըսէր. «Պարտք վնարէ ինձի»։ Ծառայակիցը ռոտֆերուն ինկաւ եւ աղաչեց՝ ըսելով. «Համբերէ եւ ժամանակ տուր ինձի եւ ես պարտքս կը վնարեմ»։ Բայց անիկա չուզեց լսել։ Ընդհակառակը, գնաց եւ բանտ նետել տուաւ գայն՝ միևնչեւ որ պարտքը վնարէ։

Երբ միւս ծառաները պատահածը տեսան, շատ նեղուեցան եւ եկան ու իրենց տիրոջ պատմեցին ինչ որ պատահեցաւ։ Այն ատեն տէրը կանչեց այդ ծառան եւ ըսաւ. «Ձա՛ր ծառայ, ամբողջ պարտքերդ շնորհեցի քեզի, որովհետեւ աղաչեցիր ինձի։ Պէտք չէ՞ր որ դուն ալ ողորմէիր ընկերոջդ, ինչպէս որ ես քեզի ողորմեցայ»։ Եւ տէրը բարկանալով՝ դահիւններուն յանձնեց գայն, որպէսզի պատժեն, միևնչեւ որ վնարէ իր բոլոր պարտքերը։

Ապա Յիսուս աւելցուց.

Ահա նոյն ձեւով իմ երկնաւոր Հայրս պիտի վարուի ձեզի հետ, եթէ ձեզմէ իւրաքանչիւրը սրտանց չներէ իր եղբոր՝ անոր յանցանքները։

Այստեղ մեզի ներկայացուած է առակ, որ 18-րդ դարէն կ'ամբողջացնէ։ Նախորդ բոլոր հատուածները ուսուցումներ էին նոր մտածելակերպին, որ քրիստոնեայ անհատը պէտք է ունենայ։ Այս հատուածը կը վերաբերի անսահման ներողամտութեան։

Յիսուս նոր խօսած էր մեղանշող եղբոր մասին, ապա անոր առնչաբար աւելցուցած թէ՛ միաբանեալ հոգիով որեւէ խնդրանք Աստուած պիտի կատարէ։ Եւ ահա Պետրոս անմիջապէս հարց կու տար. «Տէ՛ր, քանի՞ անգամ եթէ եղբայրս մեղանչէ ինձի դէմ՝ պէտք է ներեմ

իրեն. միևնչեւ եօ՞թը անգամ»։

Յիսուսի ժամանակակից ռաբբիական գրականութեան մէջ ալ նոյն հարցումը եւ անոր տրուած պատասխանները սրտանց են։ Ըստ որոնց, եթէ մէկը իր եղբոր դէմ մեղանչէ՝ կարելի է անոր ներել. եթէ երկու անգամ մեղանչէ՝ դարձեալ կարելի է ներել. բայց եթէ մէկը երեք կամ աւելի անգամներ մեղանչէ՝ արտօնուած է չներել։

Այդ հասկացողութեամբ է, որ Պետրոս իր հարցումը ուղղած է։

Յիսուսի պատասխանը յստակօրէն անդին կ'անցնի քան որեւէ սահման։ Ան կը շեշտէ բացարձակ ներողամտութեան անհրաժեշտութիւնը։ Եւ շուտով որպէս օրինակ՝ Աններող ծառային առակը կը պատմէ։

Քրիստոնեան կոչուած է Երկնաւոր Հօր պատկերը ունենալու, որ անսահման սիրոյ եւ ներողամտութեան պատկերն է։ Ան անսահմանօրէն կը սիրէ եւ անսահմանօրէն ներողամիտ է։ Ուստի, քրիստոնեան ալ կոչուած է նոյնպէս սիրելու եւ նոյնպէս ներելու։

Յիսուս բազմաթիւ առակներ խօսեցաւ։ Անոնցմէ ոմանք իրական պատմութիւններ կը թուին ըլլալ։ Բայց այդպէս չեն։ Բոլոր առակներն ալ կեանքէն պատմութիւններ են, սակայն երեւակայական են, եւ կը միտին դաս փոխանցելու։

Երկրորդ հերթին, առակին սկիզբը կը կարդանք «ծառաներ» անունը։ Սակայն այս «ծառաներ»ով ազնուականները հասկցուած են։ Ուրեմն, թագաւորը իր մօտ կը կանչէ իր ազնուականները, որպէսզի անոնց հաշիւները քննէ։

Այն ազնուականներուն մէջ կար պարտապանին մէկը, որ կա՛մ գումար առած էր թագաւորէն, եւ զայն չէր վերադարձուցած, կամ ալ պարտականութիւնը ունէր գումար հաւաքելու, եւ չէր հաւաքած։ Ուստի, թագաւորը խստու-

Թեամբ կը հրամայէր, որ գայն՝ իր կնոջ եւ զաւակներուն հետ որպէս ստրուկ ծախեն, ունեցածը վաճառեն եւ անոր պարտքը վճարեն:

Իբր ստրուկ ծախելու սովորութիւնը մեզի համար կրնայ խորթ թուիլ, բայց հին ժամանակներուն ընդհանրացած էր: Օրինակ այս սովորութեան վերաբերող օրէնքի կը հանդիպինք Ելք գիրքին մէջ: Այնտեղ 22-րդ գլուխին մէջ, գրուած է թէ երբ մէկը արջառ կամ ոչխար գողնայ ու մորթէ եւ ծախէ գայն, մէկ արջառին տեղ հինգ արջառ ու մէկ ոչխարին տեղ չորս ոչխար պիտի հատուցանէ: Եթէ չկարենայ՝ այն ատեն իր գողցածին համար պէտք է զինք ծախել եւ հատուցանել (Ելք 22-1, 3):

Ազնուականը թագաւորին ոտքերուն իյնալով կ'աղաչէ, որ ան ժամանակ տայ իրեն, որպէսզի կարենայ իր պարտքը վճարել: Թագաւորը կը գթայ, եւ նոյնիսկ անոր պարտքը կը շնորհէ:

Այս անսպասելի զթառառութեան դիմաց սակայն, ազնուականը հազիւ դուրս ելած թագաւորին քովէն, իր դասակարգէն մէկը կը գտնէ, որ իրեն չնչին գումար պարտական էր, եւ անոր կողորդէն բռնած խեղդելով՝ պարտքը կ'ոռգէ: Պարտապանը իր ոտքերուն կ'իյնայ եւ կ'աղաչէ, որ ժամանակ տրուի իրեն՝ պարտքը վճարելու: Պարտատէրը անդրդուելի՝ գայն բանտ նետել կու տայ, մինչեւ որ պարտքը վճարէ:

Պարտատէրը ոչ թէ միայն անագնիւ է, այլ նաեւ ծիծաղելի: Իր մեծ պարտքին շնորհման հակառակ ընթացք է ունեցածը:

Այս անագնուութեան վրայ, ուրիշներ նեղուած՝ կու գան եւ թագաւորին կը պատմեն պատահածը: Թագաւորը գայրացած իր մօտ կը կանչէ նախկին պարտապանը եւ գայն չար կոչելով՝ կը յիշեցնէ իրեն շնորհուածը, եւ կ'ըսէ. «Պէտք է չէ՞ր որ դուն ալ ողորմէիր ընկե-

րոջդ, ինչպէս որ ես քեզի ողորմեցայ»: Ապա բարկութեամբ կը հրամայէ՝ գայն դահիճներուն յանձնել, որպէսզի պատժեն, մինչեւ որ վճարէ իր բոլոր պարտքերը:

Եթէ պարտքին մեծութիւնը նկատի ունենանք, կրնանք հասկնալ որ անոր համար սահմանուած պատիժը ցիւանս կ'ըլլայ:

Առակը սկսելէ առաջ, Յիսուս ըսած է. «Երկինքի արքայութիւնը կը նմանի հետեւեալին», ու անմիջապէս պատմած առակը: Հարցը որ կը ծագի մեր միտքին մէջ, սա է. «հետեւեալ»ով ի՞նչ հասկցած է Յիսուս:

Ըստ իս, թագաւորը իր վարմունքով: Կը տեսնենք որ այդ վարմունքը աշխարհիկ ոեւէ թագաւորի վարմունք չէ. անիկա անանձնական է: Թագաւորին մէջ կրնանք տեսնել զԱստուած եւ կամ զՔրիստոս: Աստուած անսահման սէր կը տածէ մարդկութեան հանդէպ, ինչպէս նաեւ իւրաքանչիւր անհատի: Նոյնպէս՝ Քրիստոս: Հետեւաբար, ան որ Աստուծոյ կամքին հաւատարիմ է, եւ կամ ան որ Քրիստոսի կը հետեւի՝ կոչուած է նմանելու Երկնաւոր Հօր կամ Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուս Քրիստոսի:

Երկինքի արքայութիւնը՝ Աստուծոյ կամքին տիրապետութիւնն է մարդկային կեանքին մէջ: Երբ Աստուծոյ կամքն է մեզի համար գերագոյն առաջնորդը՝ մենք աշխարհիկ մարդոց վարմունքը չենք որդեգրեր, այլ կ'ունենանք այնպիսի ընթացք՝ որ պատրաստ է ներելու ոչ միայն ծանօթին, այլ նաեւ անծանօթին. ոչ միայն բարեկամին, այլ նաեւ թշնամիին: Այս վարմունքը անկարելի է մտածել աշխարհիկ հոգեբանութեան մէջ:

Առակի եզրակացութեան մէջ, Յիսուս կ'ըսէ. «Ահա նոյն ձեռով իմ երկնաւոր Հայրս պիտի վարուի ձեզի հետ,

եթէ ձեզմէ իւրաքանչիւրը սրտանց չներէ իր եղբօր՝ անոր յանցանքները»։ Այս համարը մէկ կողմէ յորդոր է, միւս կողմէ՝ ազդարարութիւն։

Անիկա կ'ուզէ մեզ մղել Երկնաւոր Հօր նմանելու, ի մտի ունենալով միշտ՝ որ վախճանական դատաստանի օրը Աստուած մեր հետ պիտի վարուի այնպէս՝ ինչպէս մենք կը վարուինք մեր նմաններուն հետ։ Ով որ սէր եւ գթութիւն կը ցուցաբերէ՝ Աստուծոյ սիրոյն եւ գթութեան արժանի պիտի ըլլայ։ ով որ անսիրտ եւ անողորմ կեցուածք կը ցուցաբերէ՝ նոյն անսիրտ եւ անողորմ կեցուածքին արժանի կ'ըլլայ։

Արդ, Յիսուս այստեղ կ'արտայայտէ ճիշդ այն միտքը որ արտայայտած է յորդորով, որ կ'ըսէ. «Ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, նոյնը ըրէք դուք անոնց» (Մտ 7.12)։ Ժողովրդային ասացուածքը նոյն բանը կ'ըսէ. «Ինչ որ ցանես՝ այն կը հնձես»։ Սէր եւ գթութիւն կը ցանես՝ սէր եւ գթութիւն կը հնձես. անսրտութիւն եւ անողորմութիւն կը

ցանես՝ անսրտութիւն եւ անողորմութիւն կը հնձես։


Այս առակով Յիսուս մեզ կը հրաւիրէ սրտանց եւ անսահմանօրէն ներելու մեր եղբայրներն ու քոյրերը։ Եւ միայն այն ատեն է, որ երանելի կ'ըլլանք։

Անշուշտ որպէսզի սրտանց ներելը կատարելապէս արդիւնաւէտ ըլլայ՝ իր յանցանքին համար զղջացողը՝ ներողութիւն պէտք է խնդրէ։ Կրնամ ես իմ սիրտիս մէջ ներել իրեն, ինքն ալ կրնայ իր սիրտին մէջ զղջացած ըլլալ, բայց որպէսզի յանցանքին մեր միջեւ ստեղծած հեռաւորութիւնը վերանայ՝ պարտապանը պէտք է հատուցանէ, եւ այդ հատուցումը գլխաւորաբար ներողութիւն խնդրելով կ'ըլլայ։

Խմբագրեց՝

Գառնիկ Քինյ. Գոյունեան
ԶԱՐԵՀ ԱՌԲ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ

(Շար- 29)



ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ՄԷՋ

Աստուածաշունչին մէջ Հայաստանի վերաբերեալ բազմաթիւ ակնարկութիւններ ունինք:-

1.- Առաջին ակնարկութիւնը կը գտնենք Ծննդոց գիրքին 2-րդ գլուխին մէջ: Ո՞ւր կը գտնուէր Եղեմի պարտէզը, այլ խօսքով՝ դրախտը: Աստուածաշունչը կը հաստատէ թէ Աստուած այս պարտէզը, այլ խօսքով՝ դրախտը «Արեւելեան կողմը՝ Եղեմի մէջ... տնկեց ու իր շինած մարդը հոն դրաւ» (Ծն 2:8): Այստեղ «արեւելք» ըսելով բնագիրը կ'ակնարկէ Հայաստան աշխարհին: Ուրկէ՞ գիտենք: Ասիակ նոյնինքն բնագիրը ցոյց կու տայ մեզի: Բնագիրին մէջ կը կարդանք թէ «Պարտէզը ջրելու համար Եղեմէն գետ մը կ'ելլէր ու անկէ չորս ցիւղի կը բաժնուէր: Մէկուն անունը Փիստն է...: Երկրորդ գետին անունը Գեհոն է...: Երրորդ գետին անունը Տիգրիս է...: Եւ չորրորդ գետին անունը Եփրատ է» (Ծն 2:10-15): Արդ, ո՞ւր կը գտնուի բխման ակը այս չորս գետերուն: Մենք գիտենք որ Հայկական բարձրավանդակէն չորս գետեր կը բխին եւ կ'երթան զանազան շրջաններ, եւ այդ չորս գետերը նոյնինքն բնագիրին մէջ յիշուած չորս գետերն են. Տիգրիսն ու Եփրատը մեզի ծանօթ են արդէն, իսկ մնացեալ երկու գետերը՝ Փիստնն ու Գեհոնը՝ Կուռ եւ Արաքս գետերն են: Սա կը պարզէ որ Եղեմի պարտէզը, այսինքն՝ դրախտը, կը գտնուէր Հայաստան աշխարհի մէջ:

2.- Զրհեղեղէն ետք կը տեսնենք որ Նոյեան տապանը «Արարատ լեռներուն վրայ նստաւ» (Ծն 8:4): «Լեռներ» բացատրութիւնը յոգնակի ձեւով գործած-

ւած է, որովհետեւ ամբողջ շրջանը կը կոչուէր «Արարատ» կամ «Արարատի երկիր», եւ «Արարատ» կամ «Արարատի երկիր» ըսելով կը հասկնանք Հայաստանը: Աստուածաշունչը ինք եւս ցոյց կու տայ թէ ամբողջ Հայաստան աշխարհը կը կոչուէր՝ «Արարատ» կամ՝ «Արարատի երկիր»: Օրինակ, Չորրորդ Թագաւորութեանց գիրքին մէջ կը կարդանք թէ ինչպէս Աղբամեղէք եւ Սարասար սպաննելէ ետք իրենց հայրը՝ Սենեքերիմ, «Արարատի երկիրը փախան» (Դ.Թգ 19:35-37): Քիչ ետք մանրամասնօրէն պիտի անդրադառնամ այս կէտին: Եթէ «Արարատ»ը Հայաստան աշխարհն է, յստակ է ուրեմն որ «Արարատ լեռներ» բացատրութիւնը ակնարկութիւն է Արարատ լեռան, ուր փորձած էր բարձրանալ Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրապետ Նոյեան տապանէն մէկ մասնիկ վար բերելու համար:

3.- Ծննդոցի 10-րդ գլուխը կը ներկայացնէ Նոյի որդիներուն՝ Սէմի, Քամի եւ Յաբեթի սերունդները: Հայերս Յաբեթի ժառանգորդներէն կը համարուինք: Յաբեթ ունէր եօթը որդիներ, որոնցմէ պէտք է առանձնացնել՝ Գոմբըրը: Ծն 10:3-ին մէջ կը կարդանք. «Դոմբրին որդիները՝ Ասքանագ, Բիփաթ եւ Թորգոմա էին» (տե՛ս նաեւ Ա.Մն 1:6): Պահ մը մէկ կողմ դնենք Բիփաթ անունը, որովհետեւ պատմութեան մէջ Բիփաթ անունին եւ Հայ ազգին միջեւ գոյութիւն ունեցող կապի մասին չենք կարդար: Նոյնը չէ պարագան «Ասքանագ» եւ «Թորգոմա» անուններուն: Աստուածաշունչի մասնագէտ ուսուցիչս՝ Զարեհ Արք. Ազնաւորեան կ'ըսէ.

«Հին ժամանակ Հայաստանի հիւսիսային կողմը սերունդ մը կար, որ Ասֆանագ կը կոչուէր: Այս սերունդը հայ եւ վրացի ժողովուրդներու խառնուրդ մը կը համարուէր, եւ միշդ անոր համար ալ, թէ՛ հայերը եւ թէ՛ վրացիները իրենց գիրենց կը նկատեն սերած Ասֆանագէն»:

Կորիւնի «Վարք Մաշտոց»ի գործին սկիզբը մենք կը հանդիպինք «գԱսֆանագեան» բառին¹, որ գործածուած է Հայերուն համար. սա ինքնին կը բացայայտէ թէ՛ մեր հայրերուն համոզումը եղած է այն՝ որ մեր ազգը սերած է Ասֆանագէն:

Գարով Թորգոմա անունին, անհկա յիշուած է նաեւ Թոկարմա ձեւով: Անցեալին Բարձր Հայքի արեւմուտքը ազրոյ Հայ ցեղ մը կար որ կը կոչուէր՝ Թորգոմա, եւ անոր համար ալ երբեմն Հայաստանը կոչուած է՝ «Թորգոմա երկիր», եւ Հայ ժողովուրդը՝ «Թորգոմա ազգ», կամ՝ «Թորգոմա ցեղ», կամ՝ «Թորգոմա տուն»: Նման բացատրութիւններու մեր Շարակնոցին մէջ կը հանդիպինք բազմաթիւ անգամներ: Յիշեմ մէկ-երկու օրինակներ: Թարգոմանչաց տօսին առիթով երգուած շարականին մէջ կը կարդանք. «Որ երկո՞քումք սուրբ Լուսաւորչօք տանըս Թորգոմայ, հաստատեցեք գեկեղեցիս Հայաստանեայց...», կամ՝ Թարգոմանչաց նուիրուած «Մանկունք»ի շարականին մէջ. «Որով լուսաւորեցան ազգ որդւոց Թորգոմայ...»²:

Վերեւ հաստատեցինք թէ՛ Հայերս Յարեթի ժառանգորդներէն կը համարուինք: Մովսէս Խորենացիի կազմած ազգացանկին համաձայն, Թորգոմը կը սերի Յարեթէն (Յարեթ-Գամեր-Թիրաս-Թորգոմ), իսկ Թորգոմէն կը սերի՝ Հայ-

կը³: Յիշենք որ Մովսէս Խորենացին գործածելով զանազան աղբիւրներ ցոյց կու տայ մեզի Արամի եւ Արա Գեղեցիկի սերիլը Յարեթի սերունդէն:

4.- Յետուի օրով երբ Աստուծոյ Տապանակին գորութեամբ ու հրաշքով Երիթովի պարիսպները կը կործանին, Քանանացիներ կը յանձնուին Յետուի եւ հարկատու կ'ըլլան անոր (Յես 17.13): Ըստ մեզի փոխանցուած պատմութեան, Իսրայէլացիներու եւ Քանանացիներու պատերազմի օրերուն, Քանանացիներէն ոմանք, մեր Սուր Նահապետին օրով կ'ապաստանին Հայաստան առաջնորդութեամբը Քանանիդասի, որմէ յառաջ եկած է Հայոց Քանանիդեանց կամ Գնդունեանց նախարարութիւնը (Մովսէս Խորենացի Ա. 19, Պտմ. եւ Ստա. Ա. 5)⁴:

5.- Երբ Նաբուգոդոնոսոր Երուսաղէմ արշաւեց, իբրեւ նիզակակից եւ ուղեկից իրեն հետ ունէր մեր հայրերէն՝ Հայկակ Բ.ը, որ վերադարձին Շամբատ անուն երեւելի գերի մը հետը Հայաստան բերաւ: Վաղարշակի օրով, Շամբատէն սերեցաւ Բագարատ իշխանը, որ պիտի ըլլար հիմնադիրը Բագրատունեաց նախարարութեան, եւ թագադիրը՝ Հայ Արշակունի թագաւորներուն (Մովսէս Խորենացի Ա. ԻԲ):

6.- Երբ Ասորեստանի Սենեքերիմ թագաւորը որոշեց Եգիպտոսի վրայ յարձակիլ, նախ ուզեց ճամբու ընթացքին Երուսաղէմը գրաւել: Բանակ զրաւ Լաբիսի մէջ եւ խիստ ու արհամարհական ոճով նամակ զրկեց Յուդայի Եզեկ-

¹ Կորիւն, «Վարք Մաշտոցի», [Թրգ.՝ Մանուկ Աբեղեանի], Երեւան, 1962, էջ 87:

² «Ձեռագ Շարակնոց», Անթիլիաս, 1997, էջ 693-694 եւ 697:

³ Մովսէս Խորենացի, «Հայոց պատմութիւն», [Խմբագիր՝ Գագիկ Սարգսեան], Երեւան, 1990, էջ 15:

⁴ Մեսրոպ Նպիսկոպոս Նշանեան, «Պատմութիւն Երուսաղէմի», Ա. հատոր, Երուսաղէմ, 1931, էջ 10:

իա թագաւորին: Թագաւորը եւ իրեն հետ Եսայի մարգարէն աղօթքի դիմեցին եւ Տիրոջ հրեշտակը 185.000 մարդ կոտորեց Սենեքերիմի բանակին մէջ: Սենեքերիմ թագաւորը ամօթահար՝ Նինւէ փախաւ, ուր սպաննուեցաւ իր երկու որդիներուն՝ Աղրամելէքին եւ Սարասարին կողմէ: Այս երկու եղբայրները «Արարատի երկիրը փախան» (Դ.Թգ 19.35-37) Պարոյր թագաւորին ժամանակ: Նոյն այս գրուագը կը կրկնուի Եսայիի գիրքին մէջ նաեւ (տե՛ս 37.38): «Արարատի երկիր» ըսելով յատակ է որ կ'ակնարկուի Հայաստանին: Գրաբարը բացորոշ կը դարձնէ ասիկա երբ «Արարատի երկիր» բառերուն փոխարէն կը գործածէ «Ի Հայս» բառը. «Աղրամելէք եւ Սարասար որդիք մորա սպանին գնա սրով, եւ իմեանմ գնացին փախստական ի Հայս»⁵ (Ես 37.38):

Աղրամելէք եւ Սարասար ժամա-

⁵ Կարելոր է նկատի առնել հետեւեալը.– Թէ՛ Դ.Թգ 19.37-ին եւ թէ՛ Ես 37.38-ին մէջ Երայքերէնը ունի «Յերկիրն Արարադայ» (ԿՂՃ ՍՂՂՃ Artz arrt) բացատրութիւնը: Գալով Յունարէնի Եօթանասնից թարգմանութեան, որ կատարուեցաւ Երայքերէն բնագիրէ Բ.Ա. շուրջ 250 թուին, հոն Ես 37.38-ին մէջ կը կարդանք. «Փախստական ի Հայս» (Յուն.՝ δισεσθησαν εις αρμενιαν), իսկ Դ.Թգ 19.37-ին մէջ կը կարդանք. «Ջերձան յերկիրն Արարադայ» (Յուն.՝ εσεσθησαν εις Υην αραρατ): Ուշագրաւ է որ Եօթանասնիցի թարգմանութիւնը կատարողները Դ.Թգ 19.37-ին եւ Ես 37.38-ին մէջ արձանագրուած ԿՂՃ ՍՂՂՃ նոյն բառերը երկու տարբեր ձեւերով թարգմանած են, եւ այս իրողութիւնը ուրիշ բան ցոյց չի տար եթէ ոչ այն՝ որ թարգմանիչներուն միտքին մէջ շատ յատակ էր որ «Արարատ» բացատրութեամբ կ'ակնարկուէր միայն ու միայն Հայաստան աշխարհին: Նկատուելի է նաեւ որ երբ մեր հայրերը 5-րդ դարուն Յունարէնի Եօթանասնից թարգմանութեան վրայով կատարեցին մեր ներկայ Գրաբարի թարգմանութիւնը, պահեցին «Յերկիրն Արարադայ» եւ «Ի Հայս» բառերուն տարբերութիւնը:

նակի ընթացքին երեւելի անձնաւորութիւններ եղան Հայոց նախարարներուն մէջ: Աղրամելէքէն կը սերին Արծրունեաց եւ Գնունեաց երկու նախարարութիւնները, իսկ Սարասարէն կը սերին՝ Սանասունք, այլ խօսքով՝ Սասունք (Մովսէս Խորենացի, Գիրք Ա., Գլ. ԻԳ.):

7.- Բ.Ա. 587 թուին, Բաբելոնի Նաբոզոդոնոսոր թագաւորը մեծ բանակով յարձակեցաւ Յուդայի թագաւորութեան վրայ եւ կործանեց անոր մայրաքաղաքը՝ Նոբուսադէմը, եւ քանդեց տաճարը (Եր 52): Այս հանգրուանին տեղի ունեցաւ երկրորդ գերեզմարութիւնը Յուդայի բնակիչներուն: Բ.Ա. 539 թուին, Մարերու եւ Պարսիկներու Կիւրոս թագաւորը, հետը ունենալով այլ երկիրներէ գանազան ցեղախումբեր, որոնց շարքին էին մեր նախահայրերէն՝ «Արարատի... ու Սսֆանգի թագաւորութիւնները»⁶, յարձակեցաւ ու գրաւեց Բաբելոնը (տե՛ս Երեմիայի 51-րդ գլուխը, յատկապէս 27-րդ համարը):

8.- Եզեկիէլի 27-րդ գլուխին մէջ կը կարդանք Տիւրոսի մասին, որ վաճառականութեամբ իր ժամանակի ամէնէն հարուստ քաղաքներէն էր: Քաղաքը վաճառականական կեդրոն դարձնելու իմաստով, իրենց լայն նպաստը բերին Լիբանանը, Բասանը, Կիտացիներուն կղզիները, Եգիպտոսը եւ Յունաստանը իր շրջակայ կղզիներով: Տիւրոսի մէջ կային նշանաւոր վաճառանոցներ: Եզ 27.14-ին մէջ կը կարդանք թէ Տիւրոսի վաճառանոցները Թորգոմի տունէն ձիեր, կառաձիեր եւ ջորիներ բերել կու տային: Սա կը պարզէ որ անցեալին, Հայաստանը, գոնէ իր արեւմտեան բաժինով բնակուած էր պատերազմասէր ու մարտունակ ժողովուրդով, եւ պա-

⁶ Կարելոր է գիտնալ, որ հին ժամանակ թագաւոր կը կոչուէին տոհմապետները, ցեղապետները:

տահական չէր որ երբ Մարերու ու Պարսիկներու Կիւրոս թագաւորը պիտի արշաւէր Բաբելոնի վրայ, Հայաստանէն հետը առաւ Թորգոմեան ցեղին պատկանող կռուող Հայեր:

9.- Ղուկաս խօսելով Հոգեգալուստի մասին, որ տեղի ունեցաւ Հրէաստանի Երուսաղէմ քաղաքին մէջ, կը յիշէ գանձաւորներէ եկող մարդիկը, որոնց կարգին նաեւ Հրէաստանցիները (Գրծ 2.9): Տերտուղիանոս Ափրիկեցի (150-222) եւ Օգոստինոս Հիպպոնացի (354-430) կը հաստատեն որ տուեալ համարին մէջ յիշուած «Հրէաստանցիներ» բառին փոխարէն պէտք է ըլլայ՝ «Հայաստանցիներ», եւ ասիկա բնական է, որովհետեւ անտրամաբանական պիտի ըլլար Ղու-

կասին կողմէ կատարուած այն հաստատումը, թէ՛ Հրէաստանցիներ ալ եկած էին Երուսաղէմ: Երուսաղէմի բնակիչները արդէն Հրէաստանցի էին, ուստի չէր կրնար ըսուիլ որ Հրէաստանցիներ ալ եկած էին Երուսաղէմ:

10.- Աստուածաշունչի Կանոնին մէջ վերջին ակնարկութիւն կը գտնենք Հայաստանին «Թորգոմի տուն» անուան տակ (Եզ 38.6):

11.- Վերջապէս, յիշենք նաեւ որ Երկրորդականոն գիրքերէն ⁷ Տորիթի 1.24-ին մէջ եւս ունինք ակնարկութիւն Հայաստանին: Հոն կը կարդանք. «Փախեան նոքա ի լերինս Հայոց»:

ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

⁷ Հետաքրքրական է գիտնալ որ Ս. Գրիգոր Տաթևացի Երկրորդականոն գիրքերը կը բնորոշէ որպէս «Աստուածաշունչ գիրքեր». իսկ մեր գործածած Աստուածաշունչի Կանոնին համար կը գործածէ «Աստուածակերտ գիրքեր» բացատրութիւնը:

ՀԻՆ ՄԱՐԳՆ ՈՒ ՆՈՐ ՄԱՐԴԸ¹

Խաւարի թագաւորութեան, այսինքն՝ մեղքի թագաւորութեան մասին: Աստուած ինք միայն կարող է մեզմէ դուրս շարտել մեղքը եւ մեզ փրկել չար իշխանին ծառայութենէն:

Խաւարի թագաւորութիւնը, այսինքն՝ չար իշխանը, երբ առաջին անգամ գերի դարձուց մարդը, անոր ամբողջ միտքը խաւարի գորութեամբ ծածկեց ու ողողեց: Ճիշդ այնպէս՝ ինչպէս մարդ ուրիշը կը զգեստաւորէ, որպէսզի թագաւոր կարգեն զայն, գլուխէն մինչեւ ոտքերը թագաւորական զգեստներ կը հագցնեն անոր, ճիշդ նոյն ձեւով ալ չար իշխանը մարդուն ողջ էութիւնը մեղքով զգեստաւորեց եւ զայն ամբողջութեամբ պղծելով՝ գերի տարաւ դէպի իր թագաւորութիւնը եւ ո՛չ մէկ անգամ անոր անդամներէն ուէ մէկը ազատ ձգեց (ո՛չ միտք, ո՛չ սիրտ եւ ոչ ալ մարմին), այլ ամբողջապէս խաւարի, ծիրանիով զգեստաւորեց:

Այնպէս ինչպէս մարմինին պարագային, երբ որեւէ անգամ հիւանդանայ եւ ցաւի ամբողջ մարմինը միասին կը ցաւի, նոյնպէս ալ հոգին ամբողջութեամբ կը ցաւի մեղքի ու թշուառութեան ցաւերով: Չարը իր սեփական թշուառութեամբ, այսինքն՝ մեղքով զգեստաւորեց հոգին, որ մարդուն մարմինին մէկ գլխաւոր անդամն է, եւ այդ պատճառով ալ մարմինը տառապանքի,

ցաւի եւ ապականութեան ընդունակ դարձաւ:

ՀԻՆ ՄԱՐԴԸ

Երբ առաքեալը կ'ըսէ՝ մէկդի դռէք Հին մարդը «այսինքն՝ մոռցէ՛ք ձեր հին կեանքն ու նախկին գործերը» (Կղ 3.9), ըսել կ'ուզէ, որ մարդը իր ամբողջութեամբ պէտք է փոխուի. այսինքն՝ աչքերուն դիմաց նոր աչքեր պէտք է ունենայ, ականջներուն դիմաց՝ նոր ականջներ, ձեռքերուն դիմաց՝ նոր ձեռքեր, ոտքերուն դիմաց՝ նոր ոտքեր, սիրտին դիմաց՝ նոր սիրտ, եւ այլն, որովհետեւ չարը ամբողջականօրէն (հոգեպէս եւ մարմնապէս) ապականեց մարդը, զայն զգեստեց եւ Հին մարդով զգեստաւորեց, այլ խօսքով՝ պիղծ եւ Աստուծոյ հետ թշնամացած մարդով: Ամբողջութեամբ մեղքերով կլանեց զայն այն աստիճան, որ մարդ չի նայիր այնպէս՝ ինչպէս ինք կ'ուզէ, այլ չարին աչքով կը նայի, անոր ականջներով կը լսէ, չար գործեր կատարելու արտօրացող ոտքեր ունի, մեղք գործող ձեռքեր, ինչպէս նաեւ՝ չարիք հնարող սիրտ:

Այս պատճառով ալ աղաչենք Աստուծոյ, որ մեզմէ դուրս շարտէ Հին մարդը, որովհետեւ ինք միայն կարող է մեզմէ դուրս վանել մեղքը. որովհետեւ մեզ գերեզարդները տակաւին մեզ իրենց թագաւորութեան մէջ կը պահեն. եւ անոնք մեզմէ գորաւոր են (երբ մեղքի ենթակայ ենք): Բայց Տէրը մեզի խոստացաւ ազատագրել այդ ցաւալի ստրկութենէն: Երբ կիզող արեւ կ'ունենանք

¹ Անապատական հայրերէն՝ Ս. Մակար մեծ Բզնաւորի երկրորդ քարոզը: *عظات القديس مقاريوس الكبير، نصوص أبائية ٨٥* صفحة ٤٣-٣٨

եւ անոր կողքին նաեւ տաք հով կը փչէ, թէ՛ մէկը եւ թէ՛ ալ միւսը իր սեփական բնութիւնը ունի, բայց ո՛չ ոք կրնայ արեւին եւ հովին միջեւ բաժանում դնել, բացի Աստուծմէ, որ ինք կրնայ միայն արգիլել հովին, որ փչէ: Նոյն օրինակով ալ մեղքը միախառնուած է հոգիին հետ, հակառակ անոր, որ իւրաքանչիւրը իրեն բնութիւնն ունի:

Անկարելի է հոգին մեղքէն բաժնել, եթէ Աստուած չղաղբեցնէ ու չլռեցնէ չար հովը, որ հոգիին ու մարմինին մէջ կը բնակի: Եւ այնպէս ինչպէս մարդ երբ կը տեսնէ, որ թռչունը կը թռչի՝ ինք ալ կը ցանկայ թռչել, բայց չի՛ կրնար, որովհետեւ թռչելու համար թեւեր չունի, նոյն ձեւով ալ մարդուն ներկայ կամքը կը ցանկայ ըլլալ մաքուր, անմեղադրելի, չարութենէ ամբողջապէս զերծ եւ միշտ Աստուծոյ հետ. սակայն եւ այնպէս, ան այդպէս ըլլալու զօրութիւնը չունի: Կրնայ ըլլալ, որ ան փափաքի աստուածային երկինքն ի վեր թռչել, դէպի Սուրբ Հոգիին բերած ազատութիւնը, սակայն չի՛ կրնար ատիկա ընել, բացի այն պարագայէն, երբ այդ նպատակը յաջողցնելու համար անոր թեւեր կը տրուի: Ուստի խնդրենք, որ Աստուած մեզի թեւեր տայ (Մղ 55.6) եւ մեր հոգիներէն ու մարմիններէն անջատէ ու դուրս վանէ չարին հովը, որ մեր մէջ բոյն դրած մեղքն է: Սուրբ Հոգիէն բացի ո՛չ ոք կրնայ ատիկա ընել: Աստուածաշունչը կ'ըսէ. «Ահաւասիկ Աստուծոյ Գառնուկը, որ աշխարհի մեղքը կը վերցնէ» (ՅՀ 1.29): Ի՛նք միայն այդ ողորմութիւնը ցոյց տուաւ իրեն հաւատացողներուն եւ որու միջոցաւ նաեւ կ'ազատագրէ զանոնք մեղքի ստրկութենէն եւ փրկութիւն կը բերէ բոլոր անոնց, որոնք իրենց յոյսը Անոր վրայ կը դնեն եւ անդադար զինք կը կանչեն:

Այնպէս՝ ինչպէս մուկ գիշերուան մէջ, երբ սաստիկ քամին փչելով՝ կը

խռովէ, կը շարժէ ու կը ցնցէ բոլոր բոյներն ու ցանքերը, նոյնպէս ալ երբ մարդը ուշ գիշերուան խաւարի իշխանութեան տակ կ'իջնայ եւ գիշերուան ու խաւարին մէջ կ'ըլլայ ապա այդ սարսափազդու քամիին պատճառով ան կը խռովի, եւ քամին, որ իր վրայ կը փչէ՝ կը ցնցէ զինք, կը տապալէ եւ անոր հոգեւոր խորքը քննելով՝ հոգին, միտքը, սիրտը եւ մարմինին բոլոր անդամները կը շարժէ, եւ այն ատեն ո՛չ մէկ անդամ կ'ազատի եւ ապահով կը զգայ՝ մեր մէջ բոյն դրած մեղքին պատճառով: Նոյնպէս, կայ նաեւ լոյսի առաւօտը եւ Աստուծոյ հովը, այսինքն՝ Սուրբ Հոգիին հովը, որ կը փչէ ու կը թարմացնէ հոգիներն ու սիրտերը, որոնք աստուածային լոյսի օրուան մէջ կ'ըլլան: Սուրբ Հոգին կը թափանցէ ու կը գործէ անձին ողջ հոգեւոր ու մտածումներուն մէջ, եւ այդպիսով կը կազդուրէ եւ աստուածային աննկարագրելի հանգստութեամբ կը խաղաղեցնէ ու կը հանգստացնէ մարմինի բոլոր անդամները: Ահաւասիկ, ասիկա այն է՝ ինչ որ Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Գիշերին չեմք պատկանիր, ո՛չ ալ խաւարին, որովհետեւ մեմք բոլորս լոյսի որդիներ ենք, ցերեկի որդիներ» (Ա.Թս 5.5): Նոր մարդը այնպէս՝ ինչպէս առաջինին պարագային, այսինքն՝ մեղքի ու անկման վիճակին մէջ հին մարդը ամբողջապէս ապականցաւ, այսինքն՝ խաւարի թագաւորութեան զգեստը հագաւ, ինչպէս օրինակ՝ հայհոյութիւն, անհաւատութիւն, անտարբերութիւն, սին փառք ու պատիւ, հպարտութիւն, կծծիութիւն, պիղծ ցանկութիւններ եւ միւս բոլոր պիղծ եւ ապականեալ թակարդները, որոնք խաւարի թագաւորութեան յատուկ են, հիմա ալ նոյնը կը պատահին: Բոլոր անոնք՝ որոնք հին մարդը մէկ կողմ դրին (որ երկրէն է), ինչպէս նաեւ բոլոր անոնք որոնց վրայէն Յիսուս խաւարի

իշխանութեան զգեստը հանելով՝ երկնաւոր նոր մարդը հագան, այսինքն՝ Յիսուս Քրիստոսը (իր ամբողջ անդամներով միասին), հինին փոխարէն նորով զգեստաւորուեցան: Այսինքն՝ հին աչքերու փոխարէն անոնք նոր աչքեր ունեցան, ականջներու փոխարէն՝ նոր ականջներ, գլխու փոխարէն նոր գլուխ եւայլն, որպէսզի մարդը երկնաւոր Նոր Մարդուն (Քրիստոսի) պատկերը հազուելով՝ ամբողջովին անարատ ըլլայ:

Քրիստոս՝ մեր Տէրը, անոնց անճառելի լոյսին զգեստները հագցուց, պարզ ըսած՝ հաւատքի, յոյսի, սիրոյ, ուրախութեան, խաղաղութեան, բարութեան եւ ազատութեան հանդերձ եւ կենդանի աստուածութեան բոլոր միւս հագուստները, որոնք կեանքի լոյսն են, որպէսզի, ինչպէս որ Աստուած ինք սէր է, խնդութիւն, խաղաղութիւն, բարութիւն եւ ազնուութիւն է, նոյնպէս ալ նոր մարդը ըլլայ՝ շնորհքի միջոցաւ: Այնպէս՝ ինչպէս որ մեղքի ու խաւարի թագաւորութիւնը հոգիին մէջ ծածուկ կը մնայ մինչեւ յարութեան օրը, երբ մեղաւորներուն մարմիններն ու հոգիները խաւարին մէջ պիտի կորսուին, նոյնպէս

ալ, հիմա, լոյսի թագաւորութիւնը՝ երկնաւոր պատկերը եղող Յիսուս Քրիստոսը, ծածկաբար կը փայլի հոգիին մէջ եւ կը թագաւորէ սուրբերու հոգիներուն, սակայն մարդոց աչքերէն ծածուկ: Միայն հոգիին աչքերն են, որ ճշմարտապէս կը տեսնեն Քրիստոսը, մինչեւ որ Յարութեան օրը գայ, երբ մարմիններն ալ հոգիներուն հետ միասին պիտի ողորդուին Տիրոջ լոյսով եւ անով ալ փառաւորուին: Այդ ծածուկ լոյսը ներկայիս հոգիին մէջն է, որպէսզի հոգիին հետ մարմինն ալ թագաւորէ, որ այժմէն իսկ կը ստանայ Քրիստոսի թագաւորութիւնը եւ յաւիտենական լոյսով լուսաւորուած՝ կը հանգչի: Փառք Աստուծոյ անսահման ողորմութեան, գութին եւ սիրոյն, որովհետեւ այս ձեւով ան կը զթայ իր ծառաներուն, կը լուսաւորէ գանոնք, կը փրկէ խաւարին թագաւորութենէն եւ անոնց կ'ընծայէ իր սեփական լոյսն ու թագաւորութիւնը:

Աստուծոյ փառք յաւիտեանէ մինչեւ յաւիտեան: Ամէն:

Հայացուց՝
ՄԱԿԱՐ ՎՐԴ. ԱՇԳԱՐԵԱՆ



ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Զ. ՄԱՍ

ՍԿՈՎՏԻԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Գլուխ 10

16-րդ դարու սկիզբը Սկովտիան աղքատ, յետամնաց եւ աւատապետական համակարգ ունեցող երկիր էր: Թագաւորները տկար էին, իսկ ազնուականները՝ անկարող: Եկեղեցին կալուածատէր էր եւ գրեթէ երկիրին կէսը իրեն կը պատկանէր, սակայն եկեղեցական պաշտօնները ընդհանրապէս ազնուական գերդաստաններու երիտասարդներուն կը վերապահուէին եւ այսպիսով եկեղեցապատկան կալուածներուն մեծամասնութիւնը աշխարհական ազնուականներուն ձեռքն էր: Տկար թագաւորութիւնը Եկեղեցոյ կ'ապաւինէր ընդդէմ աշխարհիկ ազնուականութեան: Թէեւ 15-րդ դարուն համալսարաններ կը հիմնուէին Սէյնթ Անտրուզի, Կլասկոյի եւ Ապրրտինի մէջ, բայց Եւրոպայի այլ համալսարաններուն հետ համեմատած ազդեցիկ չէին: Վանքերը եւս անկումի մէջ էին եւ ծխական եկեղեցիները անտեսուած էին՝ տգէտ եւ անբաւարարօրէն վճարուող քահանաներուն ձեռքը գտնուելով: Բարեկարգութեան մեծ փափաք կար ամէնուր: Երբ

1560-ին Բարեկարգութիւնը կը հաստատուէր Սկովտոյ մէջ, առաջնահերթութիւն կը ստանար եկեղեցական կառավարման բնագաւառը եւ աստուածաբանական ու ծխական հարցերը երկրորդական կը նկատուէին:

Սկովտիացիներ վախնալով որ Անգլիան Սկովտիան իրեն կը կցէր, քաղաքականօրէն Ֆրանսայի կողմը կը հակէին: Ֆրտէնի (1513), Սոլվէյ Մոսի (1542) եւ Փինքիի (1547) մէջ Անգլիոյ կողմէ կրած պարտութիւններէն ետք, Սկովտիա աւելի կը հակադրուէր Անգլիոյ եւ կը համոզուէր որ անգլիական գերհզօրութիւնն անգամ չէր կրնար Սկովտիան գրաւել: Միւս կողմէ, Սկովտոյ Ֆրանսայի հետ դաշնակցիւր Անգլիոյ համար լուրջ վտանգ էր, նոյնիսկ աւելի լուրջ քան Անգլիոյ պապականութենէն խզումը: Հետեւաբար, Անգլիա եւ Ֆրանսա կը ջանային իրենց համակիր տարրեր ունենալ Սկովտոյ մէջ: Տիրական Տակլըս գերդաստանը Անգլիոյ կողմն էր, իսկ Համիլթըն գերդաստանը՝ Ֆրանսայի: Ֆրանսայի ուժեղ

նեցուկներ էին նաեւ Սկովտիոյ առաջնորդը՝ Սէյնթ Անտրուզի ձէյմզ Պիթըն եպիսկոպոսը (?-1539) եւ անոր զարմիկն ու յաջորդը՝ կարտինալ Տէյվիտ Պիթընը (1494?-1546): Թէեւ 1513-1542-ին գահակալող ձէյմզ Ե. Թագաւորը Հենրի Ը-ի հետ արեւակցական կապ ունէր եւ անոր թողը՝ ձէյմզ Զ. 1603-ին, էլիզապէթի մահէն ետք, Անգլիոյ ձէյմզ Ա.-ը պիտի դառնար եւ միացնէր Անգլիոյ ու Սկովտիոյ թագաւորութիւնները, ան Ֆրանսայի կողմը կը հակէր եւ նախ կ'ամուսնանար Ֆրանսիս Ա.-ի աղջկան հետ ու անոր մահէն ետք՝ Ֆրանսացի կաթողիկ ազդեցիկ Կիզ գերդաստանի լորենցի Մէյրի աղջկան հետ: Այս ամուսնութեամբ Մէյրին կը դառնար «Սկովտիացիներուն Թագուհին» (1542-1587):

Բողոքականութիւնը Սկովտիա կը ներթափանցէր Բարեկարգութեան առաջին տարիներէն: Ուիթընպըրկի մէջ ուսանած Փատրիք Համիլթըն (1504?-1528) լուսերականութիւն քարոզելու յանցանքով խարոյկի մահուան կը դատապարտուէր 29 Փետրուար 1528-ին: Բողոքականութիւնը ղանդաղօրէն կը տարածուէր եւ 1534-ին ու 1540ին այլ դատապարտութիւններ եւս տեղի կ'ունենային: Թէեւ 1543-ին խորհրդարանը կ'արտօնէր Աստուածաշունչի ընթերցումն ու թարգմանութիւնը, սակայն այս որոշումը ժամանակաւոր հանգամանք կ'ունենար որպէս հետեւանք անգլիական ազդեցութեան, մինչ կարտինալ Պիթըն եւ Ֆրանսայի կողմնակիցներ ուժեղ ճնշում կը բանեցնէին: Այս ժամանակաշրջանի ամէնէն ազդեցիկ քարոզիչը ձորճ Ուիչարթն էր (1513?-1546), որ 2 Մարտ 1546-ին կարտինալ Պիթընի հրամանով խարոյկի մահուան կը դատապարտուէր: 29 Մարտին կարտինալ Պիթըն կը սպաննուէր թէ՛ որպէս փոխ-վրէժ Ուիչարթի մահուան եւ թէ՛ իր

Ֆրանսական քաղաքականութեան համար: Ընդդիմադիրներ կը գրաւէին կարտինալ Պիթընի Սէյնթ Անտրուզ դղեակը: 1547-ին Ուիչարթի բարեկամ բողոքական քարոզիչ՝ Ճան Նաքս, կ'ապաստանէր դղեակին մէջ եւ կը դառնար ընդդիմադիրներուն հոգեւոր ուսուցիչն ու սկովտիական Բարեկարգութեան հետընդդէմ:

1505-1515-ի միջոցին Հատինկթըն ծնած Նաքսի մասին կենսագրական բաւարար տեղեկութիւններ չկան: Ան թէեւ քահանայ կը ձեռնադրուէր, սակայն երբ Ուիչարթ կը ձերբակալուէր անոր պաշտպան կը դառնար: Ֆրանսական բանակը կը գրաւէր Սէյնթ Անտրուզ դղեակը եւ Նաքս որպէս բանտարկեալ 19 ամիսներ Ֆրանսա կը փոխադրուէր: 1549-ին, երբ էտուրրտ Զ-ի օրով բողոքական կառավարութիւնը կ'իշխէր, Անգլիա կ'անցնէր եւ կայսերական հովիւներէն մին կը դառնար ու 1552-ին Ռոչեսթըրի եպիսկոպոսութիւնը կը մերժէր: Երբ Մէյրի թուորը գահ կը բարձրանար, 1554-ին Ֆրանքֆուրթ կ'երթար, սակայն էտուրրտի Աղօթագիրքը քննադատած ըլլալով անգլիացի ապաստանեալներուն մօտ չէր կրնար մնալ եւ ժընեւ կ'անցնէր, ուր Կալվինի հաւատարիմ աշակերտը կը դառնար եւ ժընեւի Անգլերէն Աստուածաշունչին պատրաստութեան կ'օժանդակէր: Աքսորի այս շրջանին Նաքս անաստուած իշխողներուն դէմ գինեալ պայքարի զաղափարականը կը մշակէր, որուն դէմ կ'ըլլար Կալվին:

Մինչ այդ, 1547-ին, անգլիացիներ Փինքիի յաղթանակով աւելի կը թշնամանային սկովտիացիներուն հետ: Մէյրին, «Սկովտիացիներուն Թագուհին», Ֆրանսայի գահաժառանգին հետ կ'ամուսնանար եւ 1548-ին ապահովական պատճառներով Ֆրանսա կ'երթար: 1554-ին անոր մայրը՝ լորենցի Մէյրին

Սկովտիոյ փոխ-իշխանուհին կը դառնար:

Սկովտիոյ ազնուականներուն եւ ժողովուրդին մեծամասնութեան համար Ֆրանսայի կողմնակից ըլլալը կը համահաւասարէր Անգլիոյ ենթակայ ըլլալուն: Բողոքականութիւնն ու ազգային անկախութիւնը իրարու կ'ընդերուզուէին եւ Նաքս այս գոյգ պայքարներուն դեկավարը կը դառնար: 1555-ին ան Սկովտիա կու գար եւ վեց ամիսներ կը քարոզէր. սակայն, որովհետեւ տակաւին յեղափոխութեան հողը պատրաստ չէր, ան ժընեւ կը վերադառնար եւ անգլիախօս ապաստանեալներու եկեղեցւոյ հովիւր կ'ըլլար: Սակայն, ան Սկովտիոյ մէջ արդիւնաբեր սերմեր ցանած էր արդէն: 3 Դեկտեմբեր 1557-ին մի քանի բողոքականներ եւ հակա-Ֆրանսական ազնուականներ իրարու հետ կը դաշնակցէին «Աստուծոյ ամենասուրբ Խօսքն ու անոր համայնքը ստեղծելու» եւ կը ճանչցուէին որպէս «Համայնքին Տէրերը»: Այս ընդդիմութիւնը առաւել կը գրգռուէր, երբ 24 Ապրիլ 1558-ին Մէյրի Սթիւարթ կ'ամուսնանար Ֆրանսայի գահաժառանգին հետ: Սկովտիան Ֆրանսայի պատկանող նահանգի կը վերածուէր, որովհետեւ եթէ այս ամուսնութենէն տղայ ծնէր ան Սկովտիոյ եւ Ֆրանսայի թագաւորը պիտի դառնար: Իսկ Ֆրանսական իշխանութիւնը առաւել կ'ամրապնդուէր, որովհետեւ Մէյրի գաղտնաբար կը համաձայնէր որ եթէ ժառանգորդներու ծնունդ չտար, Սկովտիան Ֆրանսայի պիտի պատկանէր: 1558-ին էլիզաբէթ Անգլիոյ թագուհին կը դառնար, սակայն Մէյրի, «Սկովտիացիներուն Թագուհին», գայն անօրինական գաւթիչ կը համարէր եւ ինքզինք անգլիական գահին օրինական ժառանգորդ ցոյց կու տար:

Այս պայմաններուն մէջ, սկովտիական անկախութեան եւ բողոքականու-

թեան ախոյեանները կ'աճէին եւ միացեալ ճակատ կը կազմէին: Էլիզաբէթ տրամադիր էր օժանդակելու բարեկարգիչներուն իր պաշտպանութեան իսկ սիրոյն: Նաքս պահը յարմար կը նկատէր, 2 Մայիս 1559-ին Սկովտիա կը վերադառնար եւ ինը օրեր ետք Փրէթի մէջ կը քարոզէր: Ամբոխը քաղաքին վանական հաստատութիւնները կը կործանէր: Մէյրի փոխ-իշխանուհին այս քայլը ապստամբութիւն կը համարէր: Անոր տրամադրութեան տակ գտնուող Ֆրանսական բանակն ու ընդդիմադիրները փութով կը զինուէին: Երկու ուժերը գրեթէ հաւասար էին եւ արդիւնքը անորոշ էր: Հակառակ Նաքսի սկզբունքին, եկեղեցիներ կը քանդուէին եւ վանական ինչքեր կը կողոպտուէին Սկովտիոյ բազմաթիւ շրջաններուն մէջ: 10 Յուլիս 1559-ին Ֆրանսայի Հենրի Բ-ը կը մահանար եւ Մէյրիին ամուսինը՝ Ֆրանսիս Բ-ը կը յաջորդէր անոր: Ֆրանսական նոր զօրքեր կը հասնէին Սկովտիա եւ բարեկարգիչներուն վիճակը կը վատթարանար: Ի վերջոյ, 1560-ի Յունուարին անգլիական օժանդակութիւնը կը հասնէր: 11 Յունիս 1560-ին Մէյրի կը մահանար եւ իր դատը իրմով կ'աւարտէր: 6 Յուլիսին Ֆրանսա եւ Անգլիա դաշինք կը կնքէին ու Ֆրանսական զօրքերը կը հեռանային Սկովտիայէն եւ Ֆրանսացիներ կը դադրէին կառավարութեան մէջ կարեւոր պաշտօններ ստանձնելէ: Յեղափոխութիւնը անգլիական օժանդակութեամբ կը յաղթանակէր, միաժամանակ Նաքսի ներշնչած սկովտիական ազգային անկախութենէն առանց զիջելու:

Բարեկարգիչներ սկովտիական խորհրդարանին մէջ ազդեցիկ կը դառնային: 17 Օգոստոս 1560-ին մեծ մասամբ Նաքսի կողմէ խմբագրուած կայլվինական հաւատոյ հանգանակ որպէս Սկովտիոյ հաւատամքը կ'որոգեգրուէր:

մէկ շարաթ ետք, պապական հեղինակութիւնը կը ջնջուէր եւ Սուրբ Պատարագը կ'արգիլուէր՝ երեք անգամներ այս արգելքը չգործադրողը մահուան դատապարտող վճիռով: Թէեւ Ֆրանսան ստող թագաւորն ու թագուհին կը մերժէին այս որոշումները վաւերացնել, սակայն ժողովուրդը իր կամքը արտայայտած էր:

Նաքս եւ իր համախոհները կը ձգտէին իրենց աշխատանքը յաջողութեամբ պսակել: 1560-ի Դեկտեմբերին տեղի կ'ունենար ժողով, որ սկստիական «ընդհանուր ժողով» կը համարուէր: 1561-ի Յունուարին խորհրդարանին կը ներկայացուէր Կարգապահութեան Առաջին Գիրքը, որ Կալվինի կողմէ մշակուած դրութիւնը կը փորձէր ամբողջ թագաւորութեան մէջ ի գործ դնել՝ «երիցականութիւն»ը առաւել յղկուած կերպով արտայայտելով: Ան կ'առաջադրէր որ իւրաքանչիւր ծուխ իր հովիւն ու պաշտօնեաները ունենար, որոնք իրենց պաշտօնները պիտի վարէին հաւատացեալ ժողովուրդին համամտութեամբ: Հովիւն ու պաշտօնեաները միաժամանակ կարգապահական խորհուրդը պիտի կազմէին՝ մինչեւ իսկ հաղորդագրկման վճիռ արձակելու իրաւունք ունենալով: Մեծ քաղաքներուն մէջ հովուութիւններ պիտի հաստատուէին, հովիւներն ու հաւատացեալները սինոտներով պիտի կառավարուէին, իսկ բոլորին վրայ պիտի հսկէր ընդհանուր ժողովը: Ժամանակի կարիքներէն մեկնելով, նաեւ «ընթերցողներ» պիտի նշանակուէին այն վայրերուն համար ուր հովիւներ չկային եւ կամ ծառայութեան դաշտը ընդարձակ էր, առաւել՝ «վերահսկիչներ», որոնք առանց հոգեւոր հեղինակութեան վարչականօրէն ծուխերը պիտի կազմակերպէին եւ հովուութեան թեկնածուներ յանձնարարէին: Այս եկեղեցական տնօրինութիւններուն կողքին, Կարգա-

պահութեան Առաջին Գիրքը ազգային դաստիարակութեան եւ աղքատներու օժանդակութեան օրէնքներ կը սահմանէր: Նաքս կ'ուզէր որ եկեղեցի, դաստիարակութիւն եւ աղքատներ հին եկեղեցւոյ ստացուածքներէն օգտուէին, սակայն խորհրդարանը կ'ընդդիմանար: Եկեղեցական կանոնադրութիւնը աստիճանաբար օրինական կը դառնար, սակայն ազնուականներ չէին ուզեր եկեղեցւոյ պատկան կալուածները փոխանցել եւ եկեղեցին աղքատութեան կը մատնուէր: Այս աղքատութեան պատճառաւ Սկստիոյ Եկեղեցին ժողովրդավար նկարագիր կ'ունենար, որովհետեւ ժողովուրդին տնտեսական մասնակցութեան կ'ապաւինէր եւ ո՛չ թէ ազնուականութեան կամ թագաւորութեան նըպաստին:

Աստուածաշնչական հիմնաւորումէ գուրկ բոլոր եկեղեցական սովորութիւնները կը ջնջուէին: Կիրակին կը հանդիսանար միակ սուրբ օրը: Հասարակաց պաշտամունքի համար Նաքս կը պատրաստէր Գիրք Հասարակաց Կարգինը, յաճախ ծանօթ որպէս «Նաքսի Պաշտամունքի Գիրքը», որ 1564-ին կը վաւերացուէր ընդհանուր ժողովին կողմէ: Ան մեծ մասամբ հիմնուած էր Ժրնեւի անգլիական համայնքին պաշտամունքի գիրքին վրայ, որ իր հերթին Կալվինի պաշտամունքի գիրքէն ներշնչուած էր: Ընդհանուր ժողովը կ'արտօնէր որ Նաքսի խմբագրած պաշտամունքի գիրքին կողքին նաեւ ազատ աղօթքներ կատարուէին:

Իր գիրքը ամրացնելու համար, Նաքս կը պարտաւորուէր պաշտպանողական քայլերու դիմել: Ֆրանսայի Ֆրանսիս Բ. թագաւորը կը մահանար 5 Դեկտեմբեր 1560-ին եւ 1561-ի Օգոստոսին Մէյրի Սկստիա կը վերադառնար ու որպէս երիտասարդ այրի համակրանքի կ'արժանանար: Ան այլեւս Ֆրան-

սայի թագուհին չէր եւ անոնք որոնք Բողոքականութիւնը պաշտպանած էին ազգային գեանի վրայ եւ ո՛չ թէ կրօնական համոզումով, Փրանսական տիրապետութեան վտանգը անցած կը նկատէին: Մէյրի մեծ շրջահայեցութեամբ կը շարժէր: Ան իր կրօնական համոզումները չէր ծածկեր եւ հակառակ էտինպլըրկի Մէյնթ Կիլէսի հովիւը դարձած Նաքսի դժգոհութեան, իր մատրան մէջ ամէն օր Սուրբ Պատարագի կը մասնակցէր: սակայն, 1560-ին ներմուծուած կրօնական փոփոխութիւններուն միջամուխ չէր դառնար: Ան կը ջանար Անգլիոյ գահին էլիզապէթի յաջորդը դառնալ, սակայն էլիզապէթ անտարբեր կը գտնուէր: Մէյրի կը հետեւէր իր եղբօր եւ «Համայնքին Տէրեր»ու դեկավար ու ապագայի Սորէի իշխան՝ ձէյմզ Սթիուրթի խրատներուն: Մէյրի կը փորձէր Նաքսը սիրաշահիլ, սակայն ան տեղի չէր տար եւ կը շարունակէր Բողոքական հոսանքին ոգին մարմնաւորել: Սակայն, Մէյրի կը յաջողէր բողոքական ազնուականներ իրեն ենթարկել եւ Նաքսը նեղ կացութեան մատնել: Սուրբ Պատարագի մատուցումը կը սկսէր ածիլ: Նաքս կը մտահոգուէր որ Մէյրի օտար իշխանի հետ ամուսնանալով կրնար կաթոլիկ թագաւորի փոխանցել Սկոտլոյ գահը: Սպանիոյ Ֆիլիպ Բ-ի տղուն հետ ամուսնութեան հաւանականութեան խօսք կ'ըլլար: Սակայն, Սկոտլոյ Բողոքականութեան համար առաւել աղիտարբեր կը դառնար 29 Յուլիս 1565-ին Մէյրիի ամուսնութիւնը իր գարմիկին՝ Տարնլի լորտ Հենրի Սթիուրթի հետ: Հենրի Մէյրիէ ետք թագաւոր դառնալու իրաւունքը ունէր: Ան Անգլիոյ կաթոլիկներուն մօտ մեծ ժողովրդականութիւն կը վայելէր եւ հակառակ այն իրողութեան որ Անգլիոյ մէջ բողոքական նկատուած էր, հիմա ինքզինք կաթոլիկ կը դաւանէր:

Այս ամուսնութիւնը էլիզապէթի համար վտանգ էր Անգլիոյ մէջ եւ կաթոլիկ կողմը կը զօրացնէր Սկոտլոյ մէջ: ձէյմզ կը հակառակէր այս ամուսնութեան եւ աքսորի կը դատապարտուէր: Մէյրի աստիճանաբար կը չէզոքացնէր ձէյմզի համակրող բողոքական իշխանները, սակայն կը գրկուէր իր իմաստնագոյն խորհրդականէն:

Յարդ Մէյրի խորամանկօրէն կը գործէր, սակայն իր սխալները պատճառ կը դառնային որ սկոտլիական բողոքականութիւնը վերակազմակերպուէր: Հենրի կը հակառակէր Մէյրիի, իսկ Մէյրի այս հակառակութեան առաւել սրման պատճառ կը դառնար երբ կը սկսէր համակրիլ իտալացի Տէյվիտ Ռիգոյին, որ իր արտաքին գործերու քարտուղարն էր եւ բողոքականներուն կողմէ թշնամի կը համարուէր: 9 Մարտ 1566-ին Հենրի եւ մի քանի բողոքական ազնուականներ Տէյվիտը դաւադրաբար կը սպաննէին Հոլիուտի պալատին մէջ: Մէյրի ճկունութեամբ վրէժ կը լուծէր, երբ Հենրիէն դաւադիրներուն ինքնութիւնը կ'իմանար եւ զանոնք պաշտօնանկ կ'ընէր, իսկ նուազ յանցանք ունեցողները կը պահէր: 19 Յունիս 1566-ին Մէյրիի եւ Հենրիի գաւակը՝ Սկոտլոյ ձէյմզ Ե-ը եւ Անգլիոյ ձէյմզ Ա-ը կը ծնէր: Մէյրի ուրախ էր որ Սկոտլոյ գահը կ'ապահովէր:

Մէյրի իր ամուսինէն վրէժ լուծելու համար կը դիմէր բողոքական ազնուական եւ Պոթոլեյի իշխանագուն ձէյմզ Հեփպըրնի (1536?-1578), որ քաջ եւ մարտունակ անձ էր ի հակադրութիւն Հենրիի: ձէյմզ, Մէյրիի գործակցութեամբ, կը փորձէր Հենրին չէզոքացնել: Մէյրի հարսանէթ ունեցող Հենրին Կլասկոյէն էտինպլըրկի ծայրամասը կ'ուղարկէր: 10 Փետրուար 1567-ին Հենրիի բնակած տունը կը ուժբահարուէր եւ ան կը մահանար: Ժողովուրդը ձէյմզը կը դատա-

պարտէր այս ոճիւրին համար, սակայն Մէյրի կեղծ դատով գայն ազատ կ'արձակէր: 3 Մայիսին ձէյմգին կինը կ'ամուսնալուծուէր իր ամուսինէն գայն անբարոյ համարելով եւ 15 Մայիսին ձէյմգ եւ Մէյրի բողոքական ծէսով իրարու հետ կ'ամուսնանային:

Այս անամօթ արարքները Սկովտիոյ մէջ եւ Անգլիոյ ու ամբողջ Եւրոպայի կաթոլիկ հասարակութեան մօտ ընդհանուր ատելութիւն կ'արթնցնէին Մէյրիին հանդէպ: Սկովտիոյ բողոքականներն ու կաթոլիկները միասնաբար Մէյրիին դէմ կ'ելլէին: 24 Յուլիս 1567-ին ան կը պարտաւորուէր գահը փոխանցել իր մէկ տարեկան տղուն եւ Մորէի ձէյմգ Սթրուրթ իշխանը փոխանորդ կարգելով Լոչլըվըն ղդեակին մէջ բանտարկելու: 29 Յուլիսին Նաքս կը քարոզէր ձէյմգ Ե-ի գահակալութեան հանդէսին: Մէյրիի անկումին կը յաջորդէր Բողոքականութեան յաղթանակը եւ Դեկտեմբերին խորհրդարանին կողմէ Բողոքականութիւնը որպէս երկրին ղաւանանքը կը հաստատուէր: 1568-ի Մայիսին Մէյրի Լոչլըվընէն փախչելով Անգլիա կ'ապաստանէր ու 1587-ի Փետրուարին էլիզապէթի կեանքին սպառնացած ըլլալու

յանցանքով մահուան կը դատապարտուէր:

Նաքսի առաքելութիւնը աւարտին հասած էր: 24 Նոյեմբեր 1572-ին ան կը մահանար՝ հանդիսանալով Սկովտիոյ պատմութեան կրօնական եւ ազգային դիմագիծը ընդգծած ամէնէն ազդեցիկ անձը: Նաքսի աշխատանքը կը շարունակէր Անտրու Մելլիլ (1545-1623), որ 1568-էն մինչեւ 1574-ին իր Սկովտիա վերադարձը ժընեւի մէջ կ'ուսուցանէր: Ան Կլասկոյի եւ Մէյնթ Անտրուզի համալսարաններուն բարեկարգիչը կ'ըլլար, կը կատարելագործէր Սկովտիոյ երիցական Բողոքականութիւնը եւ գայն անտեղիտայիօրէն կը պաշտպանէր ձէյմգ Ե-ի օրով երեւան եկած կայսերական եւ եպիսկոպոսական ոտնձգութիւններուն դէմ ու այս իսկ պատճառաւ իր կեանքին վերջին 16 տարին իր երկրէն աքսորուած կը մնար:

"A History of The Christian Church"

N. Y. (1985) - Williston Walker

Թրգմ.՝ ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՔՍԷՅԵԱՆ

(Շար. 87)



ՀՈԳԵՒՈՐ ԳԵՂԱՐՈՒԵՍ

ՔԱՌՈՒՂԻ

*Իմաստուն արարից զՖեզ եւ
 խելամուտ ի մանապարհ յոր
 եւ գնասցես, եւ հաստատեցից
 ի վերայ Քո գաչս իմ:*

Սաղմոս 32. 8

Օր մը գարնան, ինկայ վայր մը անծանօթ,
 Հետեւելով՝
 Երագի մը հոգեգուարն հմայքին:
 Ժամեր ամբողջ թափառելէ ա՛լ յոգնած,
 Երբ կանգ առի ֆառուղիի մը դիմաց,
 Մտածելով թէ ո՞ր մամբով ընթանայի,
 Որ հասնէի ապահով՝
 Հանգրուանն իմ ցանկալի:

«Ես կասկածն եմ», ըսաւ յանկարծ,
 Դէպի հիւսիս թեփուող մամբան առաջին,
 Կռահելով յայտնապէս
 Երկբայական կացութեան մը մատնուած
 Մտավիճակն իմ կարծես.
 Եւ ժպտագին յարեց մեղմիւ.

«Ով դուն անցորդ,
 Քալէ մամբէս անվարան.
 Եւ մի՛ երբեք սրդողիր,
 Երբ ողջունեն քեզ նայուածքով դառնախոհ,
 Մշտամորմո՛ք նոնիներով ցանկապատուած՝
 Ծիրմա՛ֆարեր հինաւուրց
 Եւ դարերու կնիւններով դրոշմուած՝
 Բերդեր խարխուլ
 Եւ ամբոցներ մամոնապատ:

Տարակոյսն է, որ բնոյթով իր խոհական,
 Ջերժ կը պահէ ողջ ներաշխարհի իմացական՝
 Ստապատիր խոհերէ,
 Կը թելադրէ,
 Որ մօտենաս խորագնին հայեացքով՝
 Քեզ տարօրէն մտալկոյ հարցերուն.
 Եւ փարատես ամէն կեղծիք՝
 Դատողութեամբ անկաշառ...:

«Արդարութեան խորհրդանիշն եմ», ըսաւ,
 Դէպի հարաւ ընթացող ճամբան երկրորդ.

«Տե՛ս, շնորհիւ իմ բարեբար աջակցութեան,
 Եւ ջանքերու ուղղամիտ,
 Ի յայտ կու գան
 Խորհրդաւոր պայմաններու տակ գործուած,
 Այլ անպատիժ մնացած՝
 Բռնարարքներ ռերապարտ,
 Որ դատական օրէնքիս տակ կը ստանան
 Մահավնիւն իրենց արդար...»:

«Խղմտանքի ուղեգիծն եմ», ըսաւ ինծի,
 Արեւմտեան կողմ ընթացող ճամբան երրորդ,
 Որ տարօրէն տխուր շեշտով յարեց այսպէս.

«Մի՛ երկմտիր, ով անձանօթ ուղեւոր,
 Քալէ՛ ճամբէս աներկիւղ,
 Որ ցոյց տամ քեզ դալար դաշտերն իմ գետափնեայ,
 Ուր շուքին տակ ուռիներու,
 Խոստումնադրուժ ջրահարսեր կ'արտասունն՝
 Իրենց ցաւոտ խղմտանքէն հալածուած...
 Մի՛ թափառիր աջ ու ահեակ
 Եւ մի՛ երթար ճանապարհներ անորոշ՝
 Հոգեւորոգ երջանկութիւն փնտոելու,
 Ջի դուն կրնաս գտնել ճամբուս վրայ միայն,
 Քու հոգեխանն տառապանքը ամոքող՝
 Կենդանարար բալասանը խղճախայթի...»:

«Օրհնակարկաչ կանչն եմ յոյսի»,
 Ըսաւ ինծի ճամբան չորրորդ,
 Որ դարձդարձիկ գալարումով
 Կ'ուղղուէր դէպի Արեւելք.

Եւ յարգալիր ընկալչութեամբ յարեց կրկին .

«Յոյսն է միակ նախադրեալը կենսական
 Եւ էատարրը ծնուցիչ՝
 Լինելութեան եւ պայքարի... :
 Ով դուն, անցորդ, քալէ՛ քամբէս յարատեւ,
 Ուր ծածկատես Աչքն Աստուծոյ
 Քեզ կը դիտէ խանդաղագեղ ժպիտով :
 Յոյսն է միայն գօրեղ Ունկը Աստուծոյ,
 Որ կ'իմանայ աղաչանքը անմիտիթար՝
 Տառապակոծ մարդկութեան... :
 Յոյսն է միակ սնունդը մեր ոգեկան,
 Որ կը վանէ մեր սիրտերէն՝
 Մահուան երկիւղն առյաւէտ...» :

Ես չեմ յիշեր թէ ինչպէս
 Երթեւեկի պաշտօնեան
 Քառուղիի խաժամուժին յանդիման,
 Ընդհատելով մտախոռով խոհերն իմ
 Իր նայուածքով բարեմիտ՝
 Ձեռքի անշեղ ուղղութեամբ՝
 Յոյսի քամբան ցոյց տուաւ... :

ՅԱԿՈՒՔ ՄՍՆՈՒԿԵՍՆ



ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԸ ՀԱԻԱՏԱՄ*

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Եւ միշտ պատրաստ եղէք հեզուութեամբ եւ երկիւղածութեամբ պատասխան տալու անոնց՝ որոնք բացատրութիւն կ'ուզեն ձեր ունեցած յոյսին մասին» (Ա.Պտ 3.15): Այս մէկը սովորական յորդոր չէ, այլ՝ Աստուծոյ պատուիրանն է:

Զայնասփիւռի հաղորդումի ժամանակ, որուն հիւրը, հաւանաբար, աթէխտ էր, իր տեսակէտները կը մեկնաբանէր: Անհամբեր կը սպասէի, թէ անոր ընդդիմախօս տասնեակէ աւելի քրիստոնեաները ինչպէս պիտի հակադարձեն, սակայն այդ խօսակցութիւնները անպտուղ եւ յուսալքող էին: Սարսափեցայ՝ համոզուելով, թէ աթէխտը ինչ դիւրութեամբ կրնար հակաճառել ու ծաղրել զանոնք: Պարզ դարձաւ ինծի համար, որ հրաւիրուած բոլոր քրիստոնեաներն ալ, կարողութիւն չունէին խելացիութեամբ պատասխանելու, թէ իրենք ինչո՞ւ Աստուծոյ կը հաւատան: Անոնք, երկմտելով շարունակ կը փորձէին Աստուածաշունչի այս կամ այն խօսքը բացատրել եւ իրենց համոզումը

հիմնաւորել: Իսկ աթէխտը, կը հերքէր անոնց ըսածները: Ի վերջոյ, ան հարցուց. «Ինչո՞ւ Աստուածաշունչին կը հաւատամ»: Քրիստոնեաներուն պատասխանը կցկտուր էր եւ ո՛չ համոզիչ. «Սիրտիս խորքն է հաւատքս»: Բնականաբար, այսպիսի պատասխանին աթէխտը պատասխանեց. «Իսկ ես, բարեկամ, սիրտիս խորքը այդ մէկը չունիմ, հետեւաբար ես չեմ հաւատար»:

Տեսայ, թէ այսօրուան քրիստոնեաներուն համար որքան կարեւոր է, որ անոնք ճիշդ եւ փաստացի կերպով պատասխանեն բոլոր անոնց, որոնք կը հարցնեն իրենց, իրենց ունեցած յոյսին ու հաւատքին մասին: Որոշեցի քրիստոնեաներուն գործնականապէս օգնել: Անհաւատները, քրիստոնեաներուն միշտ մարտահրաւէրներ կը կարդան, իսկ միւս կրօնքները կը փորձեն անոնց հարկադրուիլ: Հեռատեսիլը, գրականութիւնը, մամուլը եւ տեսաերիզները, հազար ու մէկ ձեւով կը փորձեն հարցականի տակ դնել մեր հաւատքը: Մենք, քրիստոնեաներս, որ մարմին առած Բանը կամ Աստուծոյ իմաստութիւնը՝ զՔրիստոս կը պաշտենք, պէտք է միշտ պատրաստ ըլլանք պատասխանելու բոլոր անոնց, որոնք մեր ճշմարիտ հաւատքին ու անոր արմատներուն հանդէպ թշնամաբար կը վերաբերին: Աստուծոյ առջեւ մեղաւոր կը սեպուինք, եթէ լուռ մնանք եւ չկարողանանք մեր հաւատքը պաշտպանել:

* “Ինչո՞ւ եմ ՀԱԻԱՏՈՒՄ ԱՍՏՈՒՆ” Թեմարան (2009) — ձեռնարկ ԳԵՆԵՏԻ: Անգլերէնէ հայերէնի (արեւելահայերէն) թարգմանեց՝ Սուրբ Ա. Սարգսեան: Արեւելահայերէնէ արեւմտահայերէնի վերածեց՝ ՎԱՐԱՆԻ ՎՐԴ. ՔՈՐԹՄՈՍԵԱՆ

Տակաւին, երբ պատրաստ չենք պաշտպանելու մեր ունեցած յոյսը եւ չենք գիտեր, թէ ինչո՞ւ եւ ինչի՞ն կը հաւատանք, այն տպաւորութիւնը կը ձգենք, թէ քրիստոնէութիւնը կոյր հաւատքի եւ զգացական նախապաշարումներու վրայ հիմնուած է: Սակայն, քրիստոնէութիւնը ճշմարտութիւն է եւ ճշմարտութենէն փախչիլ կարելի չէ: Մենք յաճախ կը մեղադրենք բոլոր անոնք, որոնք քրիստոնէութիւնը կը մերժեն, առանց նոյնիսկ քննելու, որ իրենց նախապաշարումներուն համար փաստեր ունին, թէ՛ ոչ:

Աստուածաշունչը կ'ըսէ մեզի, որ ամէն բան քննենք եւ բարիին կառչած մնանք: Յաճախ, չենք ուզեր այս մէկը գործադրել, որովհետեւ այդ մէկը մտաւոր աշխատանք կը պահանջէ, հաւատքի՝ ամչնալու պատճառ չունեցող մշակ-

ներ դառնալու համար: Եթէ աստուածաշնչական ճշմարտութիւնները չքննենք, չհասկնանք, թէ ինչն է մեր հաւատքի արմատը, սատանան, մեր տգիտութիւնը օգտագործելով մեր հաւատքին վրայ կը յարձակի, եւ երբ փորձութիւններու հանդիպինք մեր միտքերուն մէջ կասկածի սերմեր կը ցանէ:

Այս գիրքին մէջ հաւատքս հիմնաւորող փաստերը ներկայացնելով, կը յուսամ, որ քրիստոնեայ ընթերցողներու կ'օգնեմ իրենց միտքը յստակեցնելու եւ աւելիով ատակ դարձնելու խօսելու եւ պաշտպանելու իրենց հաւատքը:

Յոյսով եմ, որ անոնք եւս, որոնք տակաւին որոշում չեն առած Յիսուսին հետեւելու, ներկայացուցած փաստերու շնորհիւ, դէպի Յիսուս Քրիստոս քայլ առնելու կը համոզուին:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԻՆՉՈ՞Ւ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻՆ ԿԸ ՀԱԻԱՏԱՄ

«Քեզի պէս մարգարէ մը պիտի հանեմ անոնց իրենց եղբայրներուն մէջէն եւ իմ խօսքերս անոր բերանը պիտի դնեմ ու ինչ որ անոր պատուիրեմ, անոնց պիտի ըսէ» (Բ.Օր 18.18):

Աստուածաշունչին հաւատալու բազմաթիւ պատճառներ ունիմ: Առաջին պատճառը նոյնինքն Աստուած ի՞նք կու տայ. «Անոնց համար մարգարէ մը պիտի հանեմ եւ իմ խօսքերս անոր բերանը պիտի դնեմ» (Բ.Օր 18.18):

Մարդիկ եղած են, որոնք պնդած են, թէ իրենք Աստուծոյ անունով կը խօսին: Իրօ՞ք Աստուծոյ անունով խօսած են, թէ անոնք կեղծ մարգարէներ են:

Աստուած կ'ըսէ, թէ մարգարէանալու միջոցը մէկ է միայն. «Եթէ մարգարէ մը Տիրոջ անունով բան մը ըսէ ու երբ այն բանը իրօք չկատարուի, ըսել է Տիրոջը խօսքը չէր, այլ մարգարէն յանդրգնութեամբ ըսեր է: Անկէ մի՛ վախճար» (Բ.Օր 18.22):

«Քանզի ե՛ս եմ Աստուած եւ ինձմէ ուրիշը՝ չկայ. ե՛ս եմ Աստուած եւ ինձի պէս մէ՛կը չկայ, որ վերջինը՝ սկիզբէն ու դեռ չեղածը առաջուրնէ պատմէ, ու կ'ըսեմ թէ իմ խորհուրդս պիտի հաստատուի» (Ես 46.9-10): «Ասկէ պիտի գիտնաք...»: Այս է ճշմարիտ մարգարէութիւնը:

Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Մարգարեութիւնները մի՛ աքիաւարիւմ, ամէն ինչ փորձեցէ՛ք, բարիին կառչած մնացէ՛ք»: **Շատեր, Աստուծոյ մարգարէութիւնները արհամարհած են, առանց երբեք փաստերը քննելու, եւ թէ ինչո՛ւ ատոնք հաւաստի են ու յիշատակութեան արժանի: Թերեւս, ասոր գլխաւոր պատճառը այն է, որ մարդիկ կը կարծեն, թէ մարգարէութիւնը իրական եւ ստոյգ չէ կամ այլ այնքան պարզ բան է, որ դիւրութեամբ կարելի է մեկնել զայն: Սակայն, Աստուածաշունչի մարգարէութիւնները իւրայատուկ են, իրական եւ ճշմարիտ, ատոնք եզակի են, որովհետեւ ուրիշ տեղ գոյութիւն չունին:**

Պուտտայի, Կոնֆիցիւսի եւ Լաուցէի բոլոր գրութիւններուն մէջ մարգարէական կանխատեսումի որեւէ օրինակ չես գտներ: Իսկ Քուրանին (Մուհամմէտին գրութիւնները) մէջ եղած միակ մարգարէութիւնը (որ ինքնաիրականացումով կատարուած է), նոյնինքն Մուհամմէտին կը վերաբերի: Այդ մարգարէութեան համաձայն, Մուհամմէտը Մէքքէ պիտի վերադառնայ: Այս մարգարէութիւնը Քրիստոսի բրած մարգարէութենէն տարբեր է, թէ ինք՝ գերեզմանէն յարութիւն պիտի առնէ: Առաջին մարգարէութիւնը, նոյնինքն Մուհամմէտի կողմէն իրականացաւ, իսկ երկրորդ մարգարէութիւնը, ոեւէ մարդ արարածի կողմէ իրականացնելը անկարելի է:

Ճաննի Տիբսոնը, Ամերիկայի մէջ, այսպէս ըսած մարգարէական համարում ունեցող ամէնէն նշանաւոր անձնաւորութիւնն է: Արդեօք ան կրնա՞յ ապագան կանխատեսել: Ան, մի քանի իմաստուն գուշակութիւններ կատարած է, սակայն, կարելի՞ է ատոնք Սուրբ Գիրքի մարգարէութիւններուն հետ բաղդատել: Միթէ ատոնք կատարուեցա՞ն, ինչպէս օրինակ, Սուրբ Գիրքին

մարգարէութիւնները կատարուեցան:

1952, 1956 եւ 1960 թուականներուն, նախագահական ընտրութիւններուն ժամանակ, **Ճ. Տիբսոնը** «մարգարէաբար» գուշակած է, թէ այդ երեք ընտրութիւններուն ընթացքին յայտնի կուսակցութիւններէն ո՛վ թեկնածու պիտի ըլլայ, ինչպէս նաեւ, ով պիտի յաղթէ այդ ընտրութիւններուն: Ինչպէ՞ս կանխագուշակեց. բոլոր կուսակցութիւններուն թեկնածուները եւ ընտրութիւններուն յաղթողները սխալ գուշակեց:

Տիկինս, տարիներ առաջ National enquires-ի (Ազգային տեղեկատու) մէջ հրատարակուած յօդուած պահած է, ուր ներկայացուած են ներկայիս աշխարհի ամէնէն նշանաւոր կանխատեսներուն եւ գուշակներուն կանխատեսումները, այդ տարուան վերջին վեց ամիսներու ընթացքին տեղի ունենալիք իրադարձութիւններուն մասին: Ուշադրութեամբ քննեցի այդ ճէ «մարգարէութիւն»ները: Գիտէ՞ք, թէ ատոնցմէ քանի հատը իրականացան: Ո՛չ մէկը: Եթէ մէկը ճէ կանխագուշակութիւն կ'ընէ, կը կարծեմ, թէ ան նուազագոյնը մէկ հատին իրականացման համար պէտք է ուրախ ըլլայ: Թերեւս, Աստուած մարդոց կ'ուզէր ցոյց տալ, թէ իրենք որքան անընդունակ են ապագան գուշակելու մէջ:

Մեծ պատմաբան Տոքթ. Ճոն Հ. Ճերսթինը ըսած է, որ պատմաբանները լաւ գիտեն, թէ ինչքա՛ն դժուար բան է ապագան գուշակելը, որովհետեւ ապագային անիւները բազմաթիւ «եթէրներ» կը դարձնեն: Սուրբ Գիրքին մասին ի՛նչ կ'ըսէք: Հին Կտակարանին մէջ միայն, երկու հազար կանխատեսուած մարգարէութիւններ կան, եւ ոչ թէ մի քանի ենթադրութիւններ: Թերեւս մէկը ըսէ. «ատոնք պարզապէս աղօտ, սովորական ենթադրութիւններ են, ինչպիսին են տէլիֆիկեան կամ սիպիլեան գուշակնե-

րուն ըսածները»: Հետեւեալ պատմութիւնը, նմանօրինակ գուշակութիւններուն կը վերաբերի:

Կ'ըսեն, թէ Մաքսէնտիոսը, Հռոմի կայսրը, պատահաբար սիպիւեան պատգամախօսներէն մէկուն հանդիպած է եւ հարցուցած, թէ ի՞նչ կը պատահի եթէ ինք Կոստանդինի բանակին վրայ յարձակի, որ Տիրբեր գետին միւս ափին վրայով Հռոմի կը մօտենար: Պատգամախօսը պատասխանած է. «Այդ օրը Հռոմի քշնամի կը կործանուի»: Յաղթանակի վստահութեամբ տոգորուած, կայսրը Կոստանդինի բանակին վրայ յարձակած է, սակայն խորտակուած է: Պատգամախօսը չէր կրցած ճշգրիտ որոշել, թէ ո՞վ էր Հռոմի իսկական թշնամին, իսկ մարգարէութիւնը արդէն տեսաք թէ ինչպէս իրականացած է: Այս բոլորին ի տարբերութիւն, Սուրբ Գիրքին մարգարէութիւնները իւրապատուկ եւ մանրակրկիտ կերպով կատարուած են: Այդ բոլորը ճշգրտութեամբ իրականացած են: Մարգարէութիւնները, պարզապէս բարի գուշակութիւններ չեն, որոնք կարելի է որ չիրականանան (չնայած, որ ատոնք յաճախ մարդ արարածի երեւակայութեան մէջ տեղ չեն գտներ, որովհետեւ ատոնք երբեք չեն պատահած):

Մարգարէութիւնները կատարուած իրողարձութիւններէն ետք չեն կրնար գրուած ըլլալ եւ ապա՝ որպէս այդպիսիները երաշխաւորուի:

Մարգարէութիւններու բազմաթիւ օրինակներ կան, որոնք մարգարէի մահէն հարիւրաւոր տարիներ ետք կատարուած են, յաճախ Հին Կտակարանի ժամանակաշրջանէն ետք եւ նոյնիսկ Հին Կտակարանի թարգմանութենէն ետք, որ Ն.Ք. 150-ին կատարուած է:

Այս անհաւատալի, իւրապատուկ եւ զարմանալի մարգարէութիւններէն զրեթէ երկու հազարը, արդէն իսկ իրականացած են: Ատոնցմէ շատերը այն

քաղաքներուն ու ազգերուն կը վերաբերին, որոնց հետ Իսրայէլը կապ ունեցած է: Հին Կտակարանին մէջ, ճշգրիտ ձեւով այդ քաղաքներուն եւ ազգերուն ապագան նկարագրուած է: Իսկ ատոնց ճշմարտութեան կարելի է ոեւէ մարդ համոզուիլ, որ համապատասխան հանրագիտարան ունի:

Հին Կտակարանը ի՞նչ կ'ըսէ Տիրոսու եւ Սիդոն քաղաքներուն մասին, որոնք Միջերկրականի ափին գտնուող երկու մեծ քաղաքներ էին: Տիրոսը, ծովափնեայ քաղաքներուն մէջ նոյն իմաստը ունէր, ինչ Բաբելոնը ցամաքայիններուն մէջ. ան նշանաւոր Կարթագէնի քոյր քաղաքներէն մէկը կը համարուէր:

Հին Կտակարանին մէջ մարգարէն կը յայտարարէ, որ Տիրոս քաղաքը պիտի կործանուի եւ երբեք պիտի չվերաշինուի եւ պիտի չբնակուի (Եգ 26:19-21): Իսկ Սիդոն քաղաքի բնակիչները կը զգուշացնէ, որ անոնցմէ շատերը պիտի ոչնչանան, սակայն քաղաքը պիտի շարունակէ գոյութիւն ունենալ (28:21-23): Փաստօրէն, Սիդոն քաղաքը յարձակումի ենթարկուեցաւ, թագաւորը իր սեփական երկրին դաւաճանեց, քառասուն հազար բնակիչներ սպանուեցան, սակայն քաղաքը իր գոյութիւնը շարունակեց մինչեւ մեր օրերը:

Տիրոս քաղաքին ի՞նչ պատահեցաւ: Տիրոս երբ իր զարգացման գագաթնակէտին (հասած) էր, անոր մասին հետեւեալ մարգարէութիւնները եղան.-

«Եւ անոնք Տիրոսի պարիսպները պիտի աւերեն ու անոր աշտարակները պիտի փլցնեն (Եգ 26:4): «...Քու քաղաքը, փայտերդ ու հողը ջուրերուն մէջ պիտի ձգեն» (26:12): «Եւ քեզ չոր ապտաժի պիտի վերածես, ուղկաններ փոխու տեղ պիտի ըլլաս, անգամ մըն ալ պիտի չշինուի» (26:14):

Այս մարգարէութենէն մի քանի տարի ետք, Բաբելոնի Նաբուգոդոնոսոր

մեծ թագաւորին բանակը Տիւրոս քաղաքին վրայ արշաւած է: Քաղաքը տասներեք տարիներ դիմադրած է Բաբելոնի թագաւորին: Սակայն, ի վերջոյ, քաղաքին պարիսպները քանդուած են եւ բաբելոնի բանակին հորդանները քաղաքին վրայ խուժած են ու ողջ մնացած բնակիչները սրէ անցուցած են: Երբեմնի շէն Տիւրոսի հազարաւոր բնակիչները դէպի ծով փախած են եւ իրենց նաւակներով Միջերկրականէն կէս մղոն հեռու եղող կղզին հասած են, այնտեղ իրենց նոր Տիւրոսը շինելու համար: Մարգարէութիւնը մասամբ իրականացած է:

Շատեր կրնան ըսել, թէ Եզեկիէլը այս մարգարէութիւնը իրադարձութիւնները պատահելէ ետք գրած է: Այս մէկը անկարելի է, որովհետեւ մարգարէութենէն երկու հարիւր յիսուն տարի անցած էր եւ Եզեկիէլն այլ շատոնց արդէն փոշիացած էր իր գերեզմանին մէջ: սակայն, Տիւրոսի դէպի երկինք խոյացող պարիսպներէն շատերը կանգուն էին տակաւին, որպէս լուռ վկաներ այն իրադարձութեան, թէ մարգարէութիւնը ամբողջութեամբ չէր կատարուած, այսինքն՝ տակաւին միլիոնաւոր թոնով քար եւ փայտ կար: Մարգարէութեան համաձայն, քաղաքը չոր ապառափի պիտի վերածուէր, քարերը, փայտն ու նոյնիսկ փոշին ծով պիտի նետուէին: Ինչպիսի՞ յանդուգն մարդ պիտի կարողանար 250 տարի ետք գար եւ ամբողջացնէր մարգարէութիւնը: Կը թուի, թէ Աստուած սխալ է, մինչ Աստուածաշունչը վստահաբար կ'ըսէ. «Նս, Տէրս, ըսի»:

Շուտով շեփորի կանչին նման, հիւսիսէն ահաւոր ձայն կը լսուի, որ հորիզոնին վրայ նուաճողին երեւնալը կ'ազդարարէր: Մեծն Աղեքսանդրը Տարտանէյի նեղուց կը ներխուժէր, Պարսկաստանի գերհզօր պետութեան վրայ

յարձակելու պատրաստուելով: Նեղուցը անցնելով, Պարսկաստանի շահը Ջախսիչ պարտութեան մատնած է: Պարսկաստանի հզօր բանակը վերադարձած եւ դէպի հարաւ փախչած է, իսկ յետոյ ցամաքով դէպի Արեւելք յառաջացած է: Մինչ բանակը փախուստի ճամբան բռնած էր, մեծ ռազմագէտ Աղեքսանդրը որոշած է նախ պարսկական վիթխարի նաւատորմը ոչնչացրնել: Ան, Միջերկրականի արեւելեան բաժինի բոլոր նաւահանգիստները փակած է: Քաղաքները, մէկը միւսին ետեւէն անձնատուր եղած են: Ապա, Աղեքսանդրը դէպի նոր Տիւրոս քաղաքը ուղղուած է: Ան պատրաստ էր, եւ Միջերկրականէն կէս մղոն հեռաւորութեան վրայ եղող կղզիի վրայ շինուած էր: Աղեքսանդրը հրամայած է, որ քաղաքը յանձնուի: Երբ բնակիչները անոր հրամանին վրայ ծիծաղած են, ղեկավարը միտք յղացած է: Ան, իր գլխաւոր խորհրդական Տիատեսին հետ միասին, ռազմավարութեան մէջ ամենահամարձակ եւ ամենախիզախ քայլին դիմել որոշած է:

Անոնք որոշած են փայտէ կամուրջ՝ ճանապարհ շինել, որ կէս մղոն երկարութիւն պիտի ունենար, Միջերկրականէն պիտի անցնէր հասնելու մինչեւ նոր Տիւրոս քաղաքը: Այդպիսի կամուրջ շինելու համար, ուրկէ՞ արդեօք այդքան շինանիւթ: Մեծ արքան հրամայած է. «Տիւրոսի պարիսպները քանդել, ծովը նետել փայտն ու քարերը, որմնաքարերն ու գերանները»: Այսպիսով, Աղեքսանդրի հզօր բանակը, հնազանդութեամբ Աստուծոյ խօսքը իրականացուց:

Մի քանի տարի առաջ Մեծն Աղեքսանդրի մասին պատմող գիրք գնեցի: Գիրքին հեղինակներն էին, Չարլզ Մերսէրը եւ անոր խորհրդատու՝ Կուռնելիոս Ք. Վերմէուլ Յրդը: Վերջինս, Պոսթրնի գեղարուեստի թանգարանին դասական արուեստի բաժինին վարիչն

էր: Այս գիրքը ապշեցուցիչ կերպով Տիւրոս քաղաքի կործանումին վերաբերող մարգարէութիւնը կը հաստատէ: Տիւրոսի տարածութիւնը ճշդուած է: Ինչ կը վերաբերի կամուրջ-ճանապարհ շինելուն, կ'ըսէ, թէ Լիբանանի անտառներէն գերաններ քաշած բերած են եւ բլուրներուն մէջ քարահանգեր բացած են: Ինք՝ Աղեքսանդրը, մէջքով քարեր տարած է: Որմնաքարեր, գերաններ, քարեր...: Եղեկիէլ մարգարէն արդեօք այս բոլորի մասին չէ՞ր որ խօսած էր հարիւրաւոր տարիներ առաջ: Պատմութիւնը կը հաստատէ, որ իրօք, նոր Տիւրոս տանող ճանապարհ-կամուրջը պատրաստելու համար, քերած ու աւլած են ամբողջ քաղաքը: Ի վերջոյ, Տիւրոսը աւերուեցաւ, հողին հաւասարուեցաւ:

Սակայն, այս բոլորով հանդերձ, մարգարէութիւնը տակաւին ամբողջութեամբ չէր իրագործուած: Աստուած ըսած էր, որ ուռկաններ փռելու վայր պիտի դառնար: Վերջերս, մեր եկեղեցւոյ անդամներէն մէկը Տիւրոս քաղաքը այցելած էր եւ լուսանկարներով վերադարձած էր: Հարթ փայլի վրայ, ուր փամանակին հպարտ քաղաքը եղած էր, ուռկաններ փռուած էին: Ոեւէ անհաւատ թող բացատրէ այս մարգարէութիւնը:

Խօսինք երկու քաղաքներու մասին եւս, Սամարիային եւ Երուսաղէմին վերաբերող մարգարէութիւններուն մասին: Սամարիան Իսրայէլի հիւսիսային թագաւորութեան մայրաքաղաքն էր. Երուսաղէմը՝ Հարաւային թագաւորութեան: Երբ այդ երկու քաղաքներն ալ իրենց ծաղկումի շրջանին մէջ էին, մարգարէները յայտնած են, որ Երուսաղէմը ոչ միայն պիտի կործանուի եւ անոր բնակիչները գերութեան պիտի տարուին, այլ՝ անոր պարիսպներն ալ պիտի քանդուին (Եր 4.29, 29.21, 35.17): Մարգարէները նաեւ ըսած են, որ յետա-

գային քաղաքը եւ անոր պարիսպները պիտի վերակառուցուին, իսկ մարդիկը քաղաք պիտի վերադառնան (Ես 4.36):

Իսկ Սամարիայի համար մարգարէները ըսած են, թէ «Սամարիան դաշտի քարակոյտի ու այգի տնկելու տեղի պիտի վերածեմ, անոր քարերը ձորին մէջ պիտի գլորեմ ու անոր հիմերը պիտի բանամ» (Մք 1.5):

Երուսաղէմին հետ ի՞նչ պատահեցաւ: Անոր պարիսպները քանդուեցան եւ յետագային վերակառուցուեցան: Անձամբ քալած եմ Երուսաղէմի պարիսպներուն վրայէն:

Սամարիա կատարած այցելութենէս երեք կարեւոր բաներ կը յիշեմ, որոնք, ինչպէս յետագային իմացայ, Սուրբ Գիրքին մէջ յիշատակուած երեք մարգարէութիւններուն հետ առնչուած են: Երբ յիշեցուցին ինծի Բարձր լեռան ուղղաձիգ պարիսպէն վար նայիլ եւ ուշադրութիւն դարձնել հովիտին վիթխարի քարերուն, հասկցայ, որ ատոնք Սամարիայի աւերուած պարիսպներուն քարերն են: Տեսայ նաեւ խաղողի այգիները, տեսայ ձիթենիներ եւ ուրիշ ծառեր: 30-40 ոտնաչափ խորութեամբ պեղումները կը յիշեցնէին Սամարիայի անցեալի մեծ ամրութիւններուն ու շինութիւններուն մասին:

«Սամարիան դաշտի քարակոյտի ու այգի տնկելու տեղի պիտի վերածեմ, անոր քարերը ձորին մէջ պիտի գլորեմ ու անոր հիմերը պիտի բանամ», կ'ըսէ Սուրբ Գիրքը (Մք 1.6):

Ի՞նչ կը պատահէր, եթէ այսօր Երուսաղէմի պարիսպները աւերուած ըլլային: Ի՞նչ կը պատահէր, եթէ Սամարիայի պատերը վերակառուցուած ըլլային: Մարգարէութիւնը կեղծ կ'ըլլար:

Ի՞նչ մարգարէութիւններ կան Եդոմի քաղաքներուն վերաբերեալ: Եդոմը, ազգ էր, որ Մեռեալ ծովու շրջանին մէջ

կ'ապրէր: Այդ ազգը Աստուծոյ ժողովուրդին դէմ կանգնեցաւ եւ Աստուած անհծեց զայն: Աստուած ըսաւ. «Ահա ես քեզի դէմ եմ, ո՛վ Սէրը լեռ ու իմ ձեռքս քեզ վրայ պիտի երկնցնեմ ու քեզ բոլորովին պիտի ամառացնեմ: Քու քաղաքներդ պիտի աւերեմ եւ դուն ամայի պիտի ըլլաս ու պիտի գիտնաս թէ ես եմ Տէրը» (Եգ 35.3-4). «Քեզ յաւիտեան պիտի ամառացնեմ եւ քու քաղաքներդ մէջ անգամ մըն ալ մարդ պիտի չընակի ու պիտի գիտնա՞մ թէ ես եմ Տէրը» (Եգ 35.9):

Աղեքսանդր Կէյթը, այդ մարգարէութիւններուն վերաբերող թերահաւատներուն տարբեր յայտարարութիւնները հաւաքած է, (որոնք որեւէ առնչութիւն չունին մարգարէութիւններու հոլթեան հետ, որովհետեւ մարգարէներէն ոչ մէկ մէջըբերում կատարած են), որոնք սոսկ անուններ ու վայրեր կը մատնանշեն: Թերահաւատ Կոստանդին Վոլինին, որ Լինքոլնի թերահաւատութեան պատճառն է, Եղոմի վերաբերեալ կ'ըսէր. «Բազմաթիւ քաղաքներու հետեւում կը հանդիպինք: Ներկայիս, այս ամբողջ երկիրը անապատ է»: Շուէցարիացի յայտնի հետախոյզ եւ ճանապարհորդ ձոն Լ. Պարխարթը կը յայտնէ, որ յայտնի է, թէ անցեալին գոյութիւն ունեցող հարթավայրը աւազուտի փոխաւ է: Քրիստոնեայ Ստեւանը, Եղոմի ամէնէն մեծ քաղաքներէն՝ Փեթրայի աւերակները տեսնելէ ետք, ըսած է. «Թող որ այդ թերահաւատը այս քաղաքի աւերակներուն ու բլուրներուն վրայ կանգնի, ինչպէս որ հիմա ես կանգնած եմ, թող բանա՛ Սուրբ Գիրքը եւ ոգեշնչուած կարգայ մարգարէին այն խօսքերը, որոնք գրուած են, երբ այստեղ աշխարհի մեծագոյն քաղաքներէն մին կանգնած էր: Կ'ուզեմ անոր պահուած ծաղրանքն ու գունատ այտերը տեսնել, պապանձած շրթները եւ վախէն դողացող սիրտը, որովհետեւ նոյնիման այդ աւեր-

ւած քաղաքը՝ մեռելի նման յարութիւն առած կը կանչէ զինք բարձր եւ հօր ձայնով: Ճիշդ է, որ Մովսէսին եւ միւս մարգարէներուն չի հաւատար, սակայն Սուրբ Գիրքը կարդալով եւ իր շուրջը փռուած յաւիտեանական աւերակները տեսնելով՝ կը պապանձի ու գլխիկոր կը մնայ»:

Իսկ ինչ կը վերաբերի Բաբելոնին, անցեալին ամէնէն մեծ քաղաքը եղած է, 196 մղոն քառակուսի տարածք ունեցած է: Բաբելոնը յայտնի եղած է իր 14 կմ. կամ 15 մղոն երկարութիւն ունեցող պարիսպներով, ճարտարապետական գեղեցիկ շինութիւններով, պարտէզներով, պալատներով, տաճարներով ու աշտարակներով: Քաղաքը ինքզինք սնունդամթերքով ապահոված է: Իր այրուբէնը ունեցած է, թուաբանական խնդիրներ լուծած է, ժամանակ չափող գործիքներ ստեղծած է, եւ գիտութեան մէջ նախկին բոլոր ժողովուրդները գերազանցած է:

Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Թագաւորութիւններուն փառքը եւ քաղաքներուն փառաւորութեան պարծանքը եղող Բաբելոնը տակնուվրայ պիտի ըլլայ, ինչպէս որ Աստուած Սողոմն ու Գոմորը կործանեց»: Բաբելոնին վերաբերող նմանօրինակ աւելի քան հարիւր մարգարէութիւններ կան, իսկ Հերոդոտոս պատմիչը կը վկայէ, որ Բաբելոնի 200 ոտնաչափ բարձրութիւն ունեցող պարիսպները 300 ոտնաչափ բարձրութեամբ աշտարակներ ունեցած են: 187 ոտնաչափ հաստութեամբ պարիսպները 196 քառակուսի մղոն տարածք չըջափակած են: Բաբելոնը, իրօք, անառիկ քաղաք էր: Սակայն, Աստուած, այդ քաղաքին մասին ըսած է. «Բաբելոնին լայն պարիսպները ամբողջութեամբ կը խորտակուին»: «Յաւիտեանական ամայութիւն պիտի ըլլայ» (Եր 51.62): Այս մարգարէութիւնը միթէ անորո՞չ է կամ

կասկածելի:

Չինաստանի մեծ պատր Բաբելոնի պարիսպներուն նման զօրաւոր եւ լայն չէ, եւ չնայած որ աւելի հին ժամանակներու մէջ շինուած է, այսօր տակաւին կանգուն է: Երուսաղէմի պարիսպներն ալ տակաւին կանգնած են: Իսկ Բաբելոնի պարիսպներուն մասին ի՞նչ գիտենք: Մէյճըր Քէփէլը, «Ճանապարհորդութիւններու պատմութեան» մէջ կ'ըսէ. «Չլաշոյեցանք քաղաքի պարիսպներէն որքան մէկ հետք գտնել»: Բաբելոնի պարիսպները աստիճանաբար աւերուած են: Մարգարէն իր կանխատեսումները չէր կրնար գրել ղէպքերը պատահելէն ետք, որովհետեւ այդ բոլորը Քրիստոսի գալուստէն ետք բոլորովին իրականացան: Հին Կտակարանը հինգ դար առաջ արդէն ամբողջացած ու թարգմանուած էր:

Քրիստոսէ ետք 4-րդ դարուն, Հռոմի մէջ գահ բարձրացած է Յուլիանոս Ուրացողը: Անոր անդիմադրելի փափաքն էր քրիստոնէութիւնը կործանել եւ Հռոմի հեթանոսական կրօնքը վերականգնել: Բաբելոնի պարիսպներուն մօտ ան պարսիկներուն հետ կռուի բռնուած է: Կայսրը վճռած է ամբողջութեամբ աւերել պարիսպներուն մնացորդները, որպէսզի անոնք պարսկական բանակին համար բնաւ պաշտպանութեան միջոց չդառնան: Այսպիսով, մարգարէութիւնը ամբողջութեամբ իրականացած է, բոլոր ժամանակներուն ամէնաանհաւատ մարդուն ձեռքով:

Աստուած, այս քաղաքին մասին ըսած է. «Տիրոջ բարկութեան պատճառով հոն մարդ պիտի չբնակի, բոլորովին ամայի պիտի ըլլայ» (Եր 50.13). «...Հոն վայրենի կատուներ ու բորենիներ պիտի բնակին» (Եր 50.39):

Ասկէ աւելի յստակ բան կ'ա՞յ: Այս մարգարէութիւնները այսօր իրականութիւն են: Ես, Բաբելոնի նկարները

տեսած եմ: Ատոնք աղբակոյտի բլուրներ են, շնագայլերով, օձերով եւ կարիճներով բնակուած: Թերահաւատ գիտնականները եւս այս իրողութիւնը կը հաստատեն:

Բաբելոնին շրջակայ դաշտերը անցեալին այնքա՛ն բերրի եղած են, որ Հերոդոտոսը այդ մասին գրել հրաժարած է՝ մտածելով, թէ ժողովուրդը զինք խելագար կը կարծէ, որովհետեւ ատոնք ամայացած էին եւ աղբակոյտերով լեցւած էին: Աստուծոյ կամբով ներկայիս այնտեղ ոչինչ կրնայ աճիլ: Իսկ անցեալի չէն քաղաքին միակ առհաւատչեան՝ աւերակներն են:

Բաբելոնին վերաբերող երկու հակասական մարգարէութիւններ կան: Ատոնցմէ մէկը կ'ըսէ. «Մովբէ Բաբելոնի վրայ ելաւ, անոր ալիքներուն շատութեանն օձերով քան անոնց առաջ» (Եր 51.42): Միւս մարգարէութեան համաձայն, Բաբելոնը պէտք է չոր ու ամայի անապատ ըլլայ: Հակասական երեւցող այս երկու մարգարէութիւնները, զարմանալիօրէն իրականութիւն դարձած են: Գրատիրոս Չէյմս Րիչը, իր պտոյտ ղէպի Բաբելոն գիրքին մէջ, 1811-ին գրուած, կը հաւաստէ, թէ տարուան ընթացքին երկու ամիս տեւողութեամբ, Բաբելոնի աւերակները վարած Եփրատի ջուրերով կ'ողողին, որով հետեւանքով գոյացած ճահիճները հովիտը անմատչելի կը դարձնեն: Ջուրերը իջնելէն ետք, տարածքը կրկին անգամ չոր ու ամայի հարթավայրի կը վերածուի: Աստուած ըսած է, որ Բաբելոնը երբեք պիտի չվերականուցուի: Չնայած, որ Միջին Արեւելքի մէջ բազմաթիւ քաղաքներ կործանուելէ ետք կրկին անգամ վերակառուցուած են, Բաբելոնը, սակայն, որ Եփրատի հովիտին ամենաբերրի բաժինին մէջ կը գտնուի, 2500 տարի ետք ալ, տակաւին ամայի ու անբնակելի վայր կը մնայ:

Մարդկութեան պատմութեան ամէնէն նշանաւոր գորավար՝ Մեծն Աղեքսանդրը, պատահաբար Բաբելոնի աւերակները տեսնելով, կ'որոշէ վերակառուցել գայն եւ իր ընդարձակ կայսրութեան մայրաքաղաքը դարձնել: Աստուծոյ խօսքը միթէ պիտի հերքուէ՞ր: Պատմական արձանագրութիւնները կը հաստատեն այն փաստը, որ Բաբելոնի վերակառուցման իր որոշումէն ետք, Աղեքսանդր Մակեդոնացին յանկարծամահ եղած է, իսկ քաղաքին վերակառուցումը չիրականացուեցաւ, որովհետեւ Աստուած այդպէս ըսած էր:

Հին Կտակարանին մէջ միայն աւելի քան երկու հազար այսպիսի մարգարէութիւններ կան: Շատերուն ես ծանօթ չեմ, որոնք կը պնդեն, թէ ատոնք մարդոց կողմէ գրուած են: Անոնք, այսպիսով, պարզապէս իրենց այս խնդիրին մասին անտեղեակ ըլլալը կ'արտայայտեն: Աստուածաշունչին նմանը չկա՛յ ամբողջ համաշխարհային կրօնական եւ ոչ-կրօնական գրականութեան մէջ: Զեռքը, որ այս Սուրբ Գիրքը գրած է, միայն Անորն է, որ կրնայ ըսել. «Ես եմ առաջինը եւ վերջինը, Ես եմ սկիզբը եւ վերջը, Ես եմ, որ ամէն ինչ գիտեմ: Ես եմ


որ կը յայտնեմ այն բաները, որոնք տակաւին չեն պատահած»: Կանխատեսումները եւս խոստումներ են: Ես կը հաւատամ ատոնց: Աստուած, մեզի աւելի քան 2000 մարգարէութիւններ տուած է, որպէսզի մենք իր խոստումներուն հաւատանք: Աստուած խոստացաւ, որ Երուսաղէմի պարիսպները պիտի վերակառուցուին, իսկ Բաբելոնինը՝ ո՛չ, որ Տիւրոսը կը կործանուի, իսկ Սիդոնը կը շարունակէ ապրիլ: Մենք պէտք է իր խոստումներուն հաւատանք:

Ան խոստացաւ նաեւ, թէ ով որ իր Որդիին կը հաւատայ, բնաւ չի՛ մեռնիր, այլ յաւիտենական կեանք կ'ունենայ. իսկ ան, ով որ չի հաւատար Որդիին՝ Յիսուս Քրիստոսին, կեանք պիտի չունենայ: Այս խօսքերուն ճշմարիտ եւ վստահելի ըլլալը փաստուած է արդէն իսկ իրականացած աւելի քան 2000 մարգարէութիւններով: Անոնք որոնք այս մարգարէութիւնները արհամարհեն, թող ոչ մէկը մեղադրեն իրենց կործանումին համար, այլ՝ միայն իրենք գիտենք:

(Շար. 1)



ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՒԻՒՆՆԵՐ




«ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆԻԼ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ»

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հրատարակած անգլերէն նոր գիրքը՝ (Taking the Church to the People) խորագիրը:

225 էջերու վրայ տարածուած այս հրատարակութեան նախաձեռնած է Վեհափառ Հայրապետը նկատի ունենալով յառաջիկայ Հոկտեմբերին Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմին եւ ապա յաջորդող տարի Արեւելեան Թեմին տալիք իր հովուապետական այցելութիւնները: Յիշեալ գիրքին առաջին բաժինին մէջ քննարկուած են մեր եկեղեցւոյ ներքին դրուածքին, ծուխ-առաջնորդարան յարաբերութեան, ծխային եկեղեցիներու կեանքին ու առաքելութեան, եկեղեցի-ժողովուրդ փոխ-յարաբերութեան հետ կապ ունեցող հարցեր: Երկրորդ բաժինը կ'ընդգրկէ ընտանիքի, կրօնական ու հայեցի դաստիարակութեան, հայ լեզուի, հայ դպրոցի, կնոջ դերակատարութեան, երիտասարդութեան կարեւորութեան առնչուած խնդիրներ ու մտահոգութիւններ: Իսկ երրորդ բաժինը կը բաղկանայ երիտասարդութեան ուղղուած մտածումներէ:

Ինչպէս գիրքի ներածական բաժինին մէջ Վեհափառ Հայրապետը կ'ըսէ՝ «Անհրաժեշտ է եկեղեցին տանիլ ժողովուրդին, որովհետեւ եկեղեցին ժողովուրդն իսկ է, մանաւանդ հայ եկեղեցին, իր ազգային նկարագիրով ու իր հաւատքի առաքելութեան առնթեր իր ազգային ծառայութեամբ»: Վեհափառ Հայրապետին համաձայն «եկեղեցւոյ դիմագրաւած խնդիրներն ու մարտահրաւերները նաեւ կը պատկանին ժողովուրդին, եւ փոխադարձաբար»: Յիշեալ գիրքին մէջ մեր եկեղեցին ու ազգը դիմագրաւող լուրջ հարցերու գծով իր յստակ դիրքորոշումը պարզելու կողքին, Վեհափառ Հայրապետը նաեւ կը հրաւիրէ մեր ժողովուրդին գաւազները մասնակից դառնալու այդ հարցերու քննարկման, նկատի ունենալով Սփիւռքի ու յատկապէս Հիւսիսային Ամերիկայի մեր ժողովուրդի կեանքին պայմանները:




ARMENIA and THE NEAR EAST

FRIDTJOF NANSEN

328 էջ լաթակազմ եւ քղթակազմ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարանէն լոյս տեսաւ՝ «Հայաստանը եւ Մերձաւոր Արեւելքը» անգլերէն լեզուով հրատարակուած Ֆրիտճոֆ Նանսենին գիրքը: Նանսեն, որ շատերու կողմէ որակուած է որպէս «Աշխարհի խիղճը» իր այս գիրքին մէջ կը խօսի, Հայաստան տուած իր այցելութեան տպաւորութիւններուն մասին, ուր կը նկարագրէ Հայ ժողովուրդի ապրելակերպը խեղճ պայմաններու մէջ եւ իր ընդվզումը կը յայտնէ անոնց կրած անարդարութեան համար:

Հատորը հրատարակուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Խ. Պապիկեան հրատարակչական Ֆոնտ»ին մեկենասութեամբ:



ԱՐՈՒԵՍՏԻ ՈՐՂԻՆԵՐՈՎ

ԱԼԵՔՍԱՆ ՊԵՐԵՃԻՔԼԵԱՆ

704 էջ լաթակազմ եւ քղթակազմ

«Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ»ի մեկենասութեամբ լոյս տեսաւ սոյն հատորը, որուն հեղինակն է Փարիզարնակ Ալեքսան Պերէճիքլեան: Գիրքի նախաբանին մէջ հեղինակը արուեստի նկատմամբ իր ժամանակի հետաքրքրութեան մասին կ'արտայայտուի, իր յօդուածաշարքերու գրութեան նպատակը յայտնելով. «Այս հատորին մէջ մէկտեղուած յօդուածներու շարքերը չորս տասնամեակի երկայնքին հրատարակուածներէն գտումի ենթարկուած համախմբում են: Բոլորն ալ գրուած են արուեստին հանդէպ հայ հասարակութեան հետաքրքրութիւնը սրելու միտումով: Փորձած եմ պակաս մը լրացնել»: Խմբագիր՝ Ժիրայր Դանիէլեան:



ԲԵՍԱՀԱՐԹԱԿ

ՊԵՐՃՈՒՅԻ ԱԲԵՏԵԱՆ

288 էջ լաթակազմ եւ քղթակազմ

«Գէորգ Մելիտինեցի Գրական Մրցանակ»ի մեկենասութեամբ լոյս տեսաւ սոյն հատորը, որ գրական պատմուածքներու հաւաքածոյ է: Անոր ներկայացուցած նիւթերը կը շօշափեն առօրեայ կեանքէն վերցուած պատկերներ, որոնք հեղինակին նկարագրողական ոճին ներքեւ պատկերաւոր շունչ զգեցած են: Պերճուհի Աւետեան հալէպահայ հեղինակ է, եւ իր պատմուածքներէն շատեր արդէն լոյս տեսած են պարբերութիւններու մէջ: Խմբագրուած է Ժիրայր Դանիէլեանի կողմէ:




ՀԱՅՈՒՆՅԻ ՄԸ ՕՐԱԳՐԷՆ

ՍԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

206 էջ լաթակազմ եւ թղթակազմ

«Ռիչրտ եւ Թինա Գարոլան» հիմնադրամի մեկենասութեամբ Անթիլիասի մէջ լոյս տեսաւ սոյն հատորը, որ հիմնադրամի ցարդ հրատարակած գիրքերուն 9-րդը կը հանդիսանայ: Լիբանանահայ մտաւորական Սեղա Գրիգորեանի սոյն հատորը, կուռ լեզուով ու գրական բարձրորակ ճաշակով հրատարակութիւն է, որ կը բաղկանայ երկու մասերէ: պատմուածքներ եւ հրապարագրական էջեր, ուր հեղինակը կ'ապրի իր անձնական կեանքէն փրցուած հանգրուաններ, հայրենական տպաւորութիւններով, սփիւռքեան փորձառութիւններով եւ անհատական խորհրդածութիւններով: Խմբագիր՝ Պարոյր Աղպաշեան:



ԵՐԳԵՐ ՈՍԿԵԼԱՐ ԶՆԱՐԻՍ

ՍԱՐԳԻՍ Զ. ԽԱՉԵՐԵԱՆ

160 էջ լաթակազմ եւ թղթակազմ

Բանաստեղծ Սարգիս Ք. Խաչերեան, իր այս ժողովածուով, ցոյց կու տայ իր բանաստեղծական արուեստին ինքնատպուլթիւնն ու արդիապաշտութիւնը: Հեղինակը նրբագագ հպումներով, ներշնչման բուխ զգացումներով ու չափածոյական յղացքով կը ստեղծէ իր ուրոյն աշխարհը, թուիչք տալով իր խոկումներուն ու մտորումներուն, սակայն, նորարար բանաստեղծի մը դրոշմելի հետեքերով: Խմբագրեց՝ Պարոյր Աղպաշեան:



ՀԱՅ ԴԱՏ

Ն.Ա.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ Կ՛ՈՂՁՈՒՆԷ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՔՈՆԿՐԵՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ՝ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՁ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՎԵՐԱԳԱՐՁԻՆ ԳԾՈՎ

Չորեքշաբթի 14 Դեկտեմբեր 2011-ին, Հայաստանի «Երկիր Մետիա» հեռատեսիլին հետ ունեցած իր հարցազրույցին ընթացքին Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ողջունեց Միացեալ Նահանգներու Քոնկրէսի որոշումը՝ Արեւմտեան Հայաստանի հայկական եկեղեցիներու վերադարձին գծով:

Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ Քոնկրէսի այս որոշումը դրական ու գնահատելի քայլ է գոր պէտք է օգտագործել ճիշդ կերպով: Խօսելով քոնկրէսի թիւ 306 որոշումին մասին, Վեհափառը ըսաւ, թէ ճիշդ է որ հոն Յեղասպանութիւն բառը չէ յիշուած, դարձեալ ճիշդ է, որ յիշեալ բանաձեւին մէջ կը խօսուի բոլոր փոքրամասնութիւններուն մասին, սակայն Վեհափառ Հայրապետին համաձայն, երկու կարեւոր կէտերու հարկ է յատուկ ուշադրութիւն ընծայել՝ առաջին, հոն կը խօսուի թէ՛ շարժուն եւ թէ՛ անշարժ ինչքերու մասին, ինչպէս նաեւ ձեռագիրներուն եւ ծխական սպասներուն մասին, եւ երկրորդ՝ վերոյիշեալ կալուածները կամ ինչքերը հարկ է վերադարձնել անոնց իրաւատիրոջ:

Վեհափառ Հայրապետը վերջերս Քալիֆորնիա այցելութեան ընթացքին քոնկրէսէն ներս վերոյիշեալ յօդուածի յաղորդութեան գծով աշխատանք տարած

քոնկրէսմաններուն հետ հանդիպում ունեցած էր, ինչպէս նաեւ այս ուղղութեամբ յատուկ նամակ գրած Միացեալ Նահանգներու Արտաքին Գործոց Նախարարուհի Տիկին Հիլըրի Բլինթընին:

«Երկիր Մետիա»-ի հետ ունեցած իր հարցազրույցին ընթացքին, Վեհափառ Հայրապետը կրկին անգամ յիշեցուց, թէ հայ դատի աշխատանքներուն ծիրէն ներս յատուկ շեշտ պէտք է դրուի հատուցման վրայ: Այս ծիրէն ներս ան յայտնեց, որ հատուցման գաղափարը գանազան բառերով կամ բացատրութիւններով յաճախ կ'արտայայտուի, օրինակ, հատուցում, իրաւունքներու վերատիրացում, իրաւունքներու վերհաստատում կամ Յեղասպանութեան հետեւանքներու վերացում: Յիշեալ բառերը կամ արտայայտութիւնները օտար լեզուներով միջազգային օրէնքի սահմաններէն ներս տարբեր սահմանում ու իմաստ ունին: Հետեւաբար, հարկ է զգոյշ ըլլալ այս ուղղութեամբ եւ հետեւաբար, անհրաժեշտ է որ մեր բոլորին կողմէ նոյն մօտեցումը որդեգրուի, նոյնիսկ նոյն բառի գործածութեամբ, յատկապէս օտար լեզուներով: Վեհափառը յայտնեց, որ Փետրուարի վերջաւորութեան միջազգային համագումար տեղի պիտի ունենայ Անթիլիասի Մայրավանքէն ներս, հատուցման հարցը

քննելու միջազգային օրէնքի ու ուխտերու ծիրէն ներս:

Այս առիթով, Վեհափառ Հայրապետը իր ջերմ գնահատանքը յայտնեց Միացեալ Նահանգներու Հայ Դատի Մարմինին, որ անցնող տասնամեակներուն ընթացքին, սերտ գործակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկո-

սութեան Թեմակալ Առաջնորդներուն ու ազգային իշխանութեանց հետ, իր հետեւողական ու տքնաջան աշխատանքով կրցած էր հայ դատին գծով մեծ գորակցութիւն ապահովել ամերիկեան քաղաքական շրջանակներէն ներս եւ թիւ 306 բանաձեւի յաջողութիւնը ապահովել:

«ԹՈՒՐՔԻԱՆ ԻՆՔՉԻՆՔԻՆ ՄԻԱՅՆ ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԱՍ ՊԷՏՔ Է ՏԱՅ»

Ն.Ա.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ուրբաթ օր լիբանանեան OTV եւ Հայաստանի «Երկիր Մետրա» հեռատեսիլներու կայաններուն հետ ունեցած իր հարցազրոյցի ընթացքին, Ն.Ա.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս խստիւ քննադատեց Թուրքիոյ ժառողական ոգին ու սպառնական կեցուածքը թէ՛ Միջին Արեւելքը յուզող հարցերուն եւ թէ՛ հայոց Ցեղասպանութեան գծով վերջերս Միացեալ Նահանգներու ու Ֆրանսայի կողմէ առնուած դրական քայլերուն նկատմամբ:

Նախ անդրադառնալով Միջին Արեւելքէն ներս տեղի ունեցող իրադարձութիւններուն, Վեհափառ Հայրապետը յիշեցուց թէ Թուրքիան փոխանակ արար դրացի որեւէ երկրի սպառնական ոճով թեյազրելու թէ՛ «որեւէ ազգի պատմութիւնը արիւնի ու ջարդի վրայ չի կերտուիր, ան պէտք է նայի իր պատմութեան որ եղած է արիւնի, հալածանքի, կեղեքումի ու ջարդի պատմութիւն»:

Վեհափառ Հայրապետը Միջին Արեւելքէն ներս քրիստոնեայ համայնքնե-

րուն դիմագրաւած մարտահրաւէրներուն գծով հարցումի մը պատասխանելով յիշեց վերջերս Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարութեան մէկ յայտարարութիւնը, որուն համաձայն Թուրքիան կը պատրաստուի միջազգային համագումար կազմակերպել՝ ի նպաստ Միջին Արեւելքի քրիստոնեայ փոքրամասնութիւններուն պաշտպանութեան: «Ցաւալի, ծիծաղելի ու վտանգալից նախաձեռնութիւն է այս պետութեան կողմէ, որ կը շարունակէ բռնաբարել իր սահմաններէն ներս ապրող ու համաբաղաբացի փոքրամասնութիւններուն իրաւունքները: Որեւէ պետութիւն, որ տակաւին բռնագրաւուած կը պահէ փոքրամասնութիւններուն շարժուն եւ անշարժ կալուածները, ներառեալ Ցեղասպանութեան գոհ հայ ժողովուրդի պատկանող բազմաթիւ ազգապատկան, եկեղեցապատկան կամ անհատական շարժուն ու անշարժ կալուածներ» ըսաւ Վեհափառ Հայրապետը, յիշեցնելով որ «Թուրքիան նման քարոզչական քայլերու

կը դիմէ այսօր ցոյց տալու համար ֆրիստոնեայ Արեւմուտֆին թէ ինք նախանձախնդիր ու պաշտպան է ֆրիստոնեայ համայնքներուն»։ **Հետեւաբար, Վեհափառ Հայրապետը թերադրեց** «զգոյշ ըլլալ նման նախաձեռնութեան դիմաց։ Բնականաբար, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը, հասկնալի պատճառներով պէտք է մասնակցի նման համագումարի։ Սակայն, բացարձակօրէն ֆիշը չենք տեսներ, որ Թուրքիայէն դուրս ռեւէ հայ, հոգեւորական կամ աշխարհական, իր մասնակցութիւնը բերէ նման ձեռնարկներուն»։ **Այս առիթով, Վեհափառը նաեւ յիշեցուց, որ Յունուար 26-28 Անթիլիասի Մայրավանքին մէջ քրիստոնեայ-իսլամ համագումար տեղի պիտի ունենայ կազմակերպութեամբ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդին ու Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին, որուն նպատակը պիտի ըլլայ ընդհանուր քննարկումի ենթարկել քրիստոնեայ համայնքներուն ներկայ վիճակը Միջին Արեւելքէն ներս, ու քրիստոնեայ-իսլամ գործակցութիւնը աւելի ծաւալելու կարելիութիւնները։**

Իր հարցազրոյցի վերջին բաժինին

մէջ, Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ վերջերս Ֆրանսայի Խորհրդարանին կողմէ հայոց Յեղասպանութեան ժխտումը քննարկող օրինագիծի որդեգրման։ Ան ջերմօրէն ողջունեց այս քաջ քայլը Ֆրանսայի Խորհրդարանին կողմէ, որպէս շօշափելի արտայայտութիւն մարդկային իրաւունքներու նկատմամբ Ֆրանսայի ունեցած յանձնառութեան։ Վեհափառ Հայրապետը դատապարտեց Թուրքիոյ «տակաւ ահող ժխտողական ու սպառնական ոգին»։ **Ան ըսաւ «Թուրքիան փոխանակ ժողովրդավարութեան դասեր տալու Ֆրանսային, թող ի՛նք յարգէ մարդկային իրաւունքները իր սահմաններէն ներս»։ **Վեհափառը նաեւ յայտնեց, որ գնահատանքի ու շնորհակալութեան նամակ յղած է Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզիին։****

Արամ Ա. Կաթողիկոս այս առիթով իր խոր գնահատանքը յայտնեց նաեւ Ֆրանսայի Հայ Դատի Մարմինին, թերադրելով որ վերանորոգ հաւատքով ու նուիրումով Հայ Դատի Մարմինները շարունակեն իրենց աշխատանքը ամէն տեղ։

«ՖՐԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱԿԱՍԷ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԾՈՎ ՖՐԱՆՍԱՅԻ ԿԵՑՈՒԱԾՔԻՆ»

**Յայտնեց՝ ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
ՖՐԱՆՍԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉԻՆ**

Երկուշաբթի 5 Դեկտեմբեր 2011-ի առաւօտուն, աւելի քան մէկ ժամ տեւող հանդիպում տեղի ունեցաւ Վեհափառ Հայրապետին եւ Ֆրանսայի վարչապետի ներկայացուցիչ՝ Ատրիէն Կուլթէյրոնի միջեւ։ Վարչապետին ներկայացուցիչը Եզիպտոսէն ետք այցելած էր Լիբանան, աւելի մօտէն ծանօթանալու

չրջանէն ներս տեղի ունեցող անցուղարձերուն եւ այդ ծիրէն ներս՝ քրիստոնեայ համայնքներու տեսակէտներուն։

Արամ Ա. Կաթողիկոս լայնօրէն բացատրեց իր տեսակէտը Միջին Արեւելքէն ներս տեղի ունեցող շարժումներուն ու փոփոխութիւններուն նկատմամբ՝ յատկապէս ծանրանալով քրիստոնեայ հա-



ՎԵՓԱՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՈՒ ՖՐԱՆՍԱՍԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ
ՀԱՆԳԻՊՈՒՄԻ ԸՆԹԱՅՔԻՆ

մայրքներու դիմագրաւած մարտահրաւէրներուն: Վեհափառ ըսաւ թէ «ոէժիմի փոփոխութիւնը պէտք է նկատել որպէս վախճանական նպատակ, այլ՝ շօշափելի քայլ դէպի ժողովրդավարութիւն առաջնորդող: Սակայն, երբ ժողովրդավարութիւնը պիտի հիմնուի իսլամական բացարձակ սկզբունքներու վրայ, ան կրնայ լուրջ դժուարութիւններու դիմաց դնել քրիստոնեայ համայնքները: Յարգելով հանդերձ իսլամ մեծամասնութեան կրօնական սկզբունքները, Վեհափառ յայտնեց թէ անոնք պէտք է ըլլան ի հեճուկս քրիստոնեայ համայնքներու քաղաքական կեանքին ամբողջական մասնակցութեան: Այլ խօսքով, ժողովրդավարական սկզբունքները ու անոնց վրայ հիմնուած քաղաքական սիստեմը պէտք է համահաւասար մօտեցում որդեգրէ բոլոր քաղաքացիներու պարտաւորութիւններուն ու իրաւունքներուն նկատմամբ», շեշտեց Վեհափառ Հայրապետը:

Շարունակելով իր խօսքը, Վեհափա-

ռը այս հանգրուանին կարեւոր նկատեց Եւրոպայի գօրակցութիւնը քրիստոնեայ համայնքներուն նկատմամբ: Ան ըսաւ, որ «պատմական, մշակութային ու կրօնական խորունկ կապեր գոյութիւն ունին Միջին Արեւելքի եկեղեցիներուն եւ Եւրոպայի միջեւ: Ժամանակն է, որ առանց միջամտելու շրջանի երկիրներու ներքին կեանքին, Եւրոպան լրջօրէն յիշեցնէ որ ժողովրդավարութեան ընթացքին մէջ գտնուող Միջին Արեւելքը կարեւորութեամբ պէտք է նկատի ունենայ քրիստոնեայ համայնքներու իրաւունքները»:

Անդրադառնալով քրիստոնեայ համայնքներու ներքին կեանքին, Վեհափառ Հայրապետը շեշտեց քրիստոնէական միասնականութեան շօշափելի արտայայտութիւն տալու հրամայականը: Վեհափառ Հայրապետին համաձայն, կարելի է այս նպատակին հասնիլ տարբեր բնագաւառներէ ներս գործակցութիւն յառաջացնելով եկեղեցիներուն միջեւ, շրջանի եկեղեցիներուն եւ անոնց

սփիւռքին միջեւ յարաբերութիւնը դարձնելով աւելի կազմակերպ, ինչպէս նաեւ միջ-եկեղեցական գործակցութիւնը աւելի ծաւալելով Միջին Արեւելքի եկեղեցիներուն եւ Եւրոպական եկեղեցիներուն միջեւ:

Վեհափառ Հայրապետը նաեւ անդրադարձաւ անցեալ շաբաթ Կիպրոսի մէջ տեղի ունեցած Միջին Արեւելքի Եկեղեցիներու խորհուրդի համաժողովին ու անոր ձեռք ձգած արդիւնքներուն: Բնականաբար, Վեհափառ Հայրապետը նաեւ պատասխանեց Ֆրանսայի Վարչապետին արժարժած մի քանի հարցերուն:

Ապա Վեհափառ Հայրապետը կարեւորութեամբ անդրադարձաւ Ֆրանսայի Արտաքին Գործոց Նախարարին վերջերս Թուրքիոյ մէջ կատարած յայտարարութեան, ուր կ'ըսէր որ «Ֆրանսան պատրաստ է հայերէ ու թուրքերէ բաղկացած յանձնախումբ հիւրընկալելու՝ քննելու համար 1915-ին պատահած ցաւալի դէպքերը»: Վեհափառը յտակօրէն յայտնեց Վարչապետի ներկայացուցիչին թէ նախարարին այս յայտարարութիւնը մեծ վրդովուժ յառաջացուցած է մեր ժողովուրդին մօտ. «ինչպէ՞ս կ'ըլլայ երբ Ֆրանսայի խորհրդարանը եւ վերջին երեք մախաբահները պաշտօնապէս քննեցած են

հայկական Յեղասպանութիւնը, երբ Ֆրանսայի նախագահը վերջերս Հայաստանի մէջ իր գորակցութիւնը կը յայտնէ հայկական Յեղասպանութեան գծով, նոյն երկրին նախարարը բոլորովին հակառակ յայտարարութիւն կը կատարէ Թուրքիոյ մէջ», ըսաւ Արամ Ա. Կաթողիկոս:

Վարչապետին ներկայացուցիչը պատասխանելով Վեհափառ Հայրապետին, յիշեցուց թէ ինք կը սպասէր այս հարցին արժարժումը Վեհափառին կողմէ, եւ իր ամբողջական համակրանքը արտայայտելով հայ ժողովուրդին նկատմամբ, յայտնեց թէ «նիշդ է, Ֆրանսան Յեղասպանութիւնը ընդունած է, սակայն միւս կողմէ չենք կրնար անտեսել Թուրքիոյ դերը շրջանէն ներս եւ անոր յարաբերութիւնը Եւրոպայի հետ»: Այս նիւթին գծով Վեհափառ Հայրապետին եւ վարչապետի ներկայացուցիչին խօսակցութիւնը շարունակուեցաւ որով ընթացքին Վեհափառը դարձեալ շեշտեց Յեղասպանութեան ճանաչման ու հատուցման անհրաժեշտութիւնը:

Հանդիպումէն ետք Պրն. Կուլթէյրոն այցելեց Նահատակաց Յուշարձան-Մատուռը եւ իր յարգանքը մատուցեց հայկական Յեղասպանութեան զոհ զացած մէկուկէս միլիոն մեր նահատակներուն:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻՆ ՆԱՍԱԿԸ ՈՒՂՈՒՄԾ ՆՈՐՎԵԿԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Նորին Վսեմութիւն
Տիար Եանս Սթոլթնպըրկ
Վարչապետ Նորվեկիոյ
Օսլո

Ձերդ Վսեմութիւն,
Ինչպէս գիտէք, պատմաբան, արեւելագետ,
գիտնական, ազգերու լիկայի

Գաղթականաց Յանձնակատար եւ Խաղաղութեան Նոպելեան մրցանակակիր Ֆրիտ-նոֆ Նանսէն յատկանշական դերակատարութիւն ունեցած է 1915-ի Յեղասպանութեանէն հետոյ պարտաւ հայ ժողովուրդին մարդասիրական օժանդակութեան ծիրէն ներս:

Անոր ծննդեան 150-ամեակին առի-

թով, հրապարակային հանդիսութիւն կազմակերպուած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն ներս, Լիբանան, յիշատակելու Ֆրիտնոֆ Նանսէնի բերած ներդրումը հայ ժողովուրդին՝ անոր արդի պատմութեան ամէնէն քակտագրական հանգրուանին, ինչպէս նաեւ արտայայտելու մեր երախտագիտութիւնը հանդէպ Նորվեկիոյ ժողովուրդին: Դեսպաններու եւ քաղաքական անձնաւորութիւններու կողմէն, Լիբանանի մէջ Նորվեկիոյ դեսպանը Տիար Սվէյն Ասսը ներկայ էր սոյն հանդիսութեան, որպէս գլխաւոր բանախօսներէն մէկը:

Մեր փակման խօսքին մէջ, Ֆրիտնոֆ Նանսէնի ներկայ ժամանակներու պատգամը ներկայացուցինք, հետեւեալ ձեւով.՝ Ա) Ազգերու, կրօններու եւ մշակոյթներու միջեւ կամուրջներ հաստատելը պէտք է լուրջ ուշադրութեան արժանանայ: Բ) Մարդկային Իրաւանց պաշտպանութիւնը պէտք է դառնայ առաջնահերթութիւնը բոլոր անոնց, որոնք կը հաւատան մարդկային արժանապատուութեան, արդարութեան վրայ հիմնուած խաղաղութեան: Գ) Բոլոր անոնք որոնք Ցեղասպանութիւն գործած են պէտք է հաշուետու ըլլան մարդկութեան դէմ իրենց գործած ոճիրին համար:

Արդարեւ, Հայոց Ցեղասպանութեան

քննաչումը եւ հայ ժողովուրդի արդար իրաւունքներու վերահաստատումը լուրջ մտահոգութիւն էր Ֆրիտնոֆ Նանսէնի համար: Իր *Հայաստան եւ Մերձաւոր Արեւելք* հատորին հետեւեալ եզրափակիչ բառերը իրապէս մարգարէական են.՝ *«Բայց հայ ժողովուրդը երբեք չյուսալուեցաւ. ան քաջաբար շարունակեց իր կեանքը աշխատելով եւ սպասելով. սպասելով տարուէ տարի. ան տակաւին կը սպասէ»:*

Պրն. Վարչապետ,

Նորվեկիոյ խոր յանձնառութիւնը մարդկային իրաւանց հարցին գծով հանրածանօթ է: Ֆրիտնոֆ Նանսէնի ծննդեան 150-ամեակը մարտահրաւէր է նորվեկիացի եւ հայ ժողովուրդներուն նոր որակ եւ շեշտ տալու իրենց հասարակաց ցիւղին՝ հետապնդելու Մարդկային Իրաւանց Միջազգային Հռչակագրի գործադրութիւնը բոլոր ազգերուն կողմէ:

Լաւագոյն մաղթանքներով՝

Աղօթարար՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

10 Նոյեմբեր 2011
Անթիլիաս, Լիբանան

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՈՒՂՈՒԾՑ
ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐՔՈՋԻՆ, ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԽՏՈՒՄԸ
ՔՐԷԱԿԱՆԱՑՆՈՂ ՕՐԻՆԱԳԻԾԻՆ ՎԱԷՐԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ**

Նորին Վսեմութիւն
Նիֆոլա Սարգոզի
Նախագահ
Ֆրանսայի Հանրապետութեան
Փարիզ

Սիրելի՛ Պրն. Նախագահ,
Որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկ-

իոյ, յատուկ ուրախութեամբ կ'ողջունեմ Ֆրանսայի Խորհրդարանին առած վերջին որոշումը՝ Հայոց Ցեղասպանութեան ժըխտումը քրէականացնող օրինագիծը վաւերացնող: Կ'ողջունեմ նաեւ Ձեր վերջին յայտարարութիւնը Երեւանի մէջ, ուր դուք կրկին անգամ արտայայտեցիք ֆրանսացի ժողովուրդին յստակ ու ամուր

կեցուածքը Հայոց Յեղասպանութեան պատմական իրողութեան մասին:

Կիլիկիոյ հայերը յատկապէս գոհ դարձան Յեղասպանութեան եւ որուն հետեւանքով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պարտադրուեցաւ ձգել իր դարաւոր վայրը Կիլիկիոյ մէջ եւ հաստատուիլ Անթիլիասի մէջ, Լիբանան:

Արդարեւ, Ֆրանսան մարդկային արժէքներու եւ մարդկային իրաւանց եւ արդարութեան նկատմամբ իր ունեցած հաւատարմութեամբ ու յանձնառութեամբ կը մնայ տիպար այն բոլոր երկիրներուն համար, որոնք տակաւին կը փորձեն ուրանալ Հայոց Յեղասպանութիւնը: Ժրիստողական վերաբերումը այս պատմական իրողութեան նկատմամբ, պատճառ կրնայ հանդիսանալ նոր ցեղասպանութիւններու: Հետեւաբար, միջազգային համայնքը

աւելի լուրջ մօտեցում պէտք է որդեգրէ Հայոց Յեղասպանութեան գծով, որ կը շարունակէ մնալ անպատիժ:

Ջեր եւ Ֆրանսային դիրքը, Պրն. Նախագահ, Հայոց Յեղասպանութեան նկատմամբ կը մարմնացնէ Ֆրանսայի եզակի դերը միջազգային համայնքէն ներս՝ ի պաշտպանութիւն մարդկային իրաւունքներու:

Հանեցէք, Պրն. Նախագահ, ընդունիլ հայ ժողովուրդին եւ անձնապէս Մեր խոր շնորհակալութիւնը Ֆրանսայի ժողովուրդին ու ֆրանսական պետութեան որդեգրած այս քաջ կեցուածքին համար:

Աղօթքով եւ օրհնութեամբ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



ՏՕՆԱԿԱՆ

**ՍՈՒՐԲ ԱՏԵՓԱՆՈՍԻ ՏՕՆԸ
ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՁ**

Ս. Ստեփանոս նախասարկալազի տօնը տօնն է Հայ եկեղեցւոյ սարկալազներուն եւ վանական ականդութեան համաձայն՝ այդ օրը սարկալազներ կը տնօրինեն պարտն ու պատշաճը:

Դպրեվանքին մէջ, Շաբաթ 24 Դեկտեմբեր 2011-ը նուիրուեցաւ Ս. Ստեփանոսի տօնին եւ սարկալազներուն հսկողութեամբ, ամբողջ օրը դպրեվանեցիներ անցուցին մեծ սուրբին յիշատակով:

Երեկոյեան ժամը 5-ին, տեղի ունեցաւ ժամերգութիւն եւ նախատօնակ: Ժամերգութեան ընթացքին Տեսուչ Սրբբազան Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեան ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին սրբատառ Կոնդակը, որով Նորին Սրբութիւնը լանջախաչ կրելու իրաւունք կը շնորհէր Դպրեվանքի հսկիչներէն՝ Հոգշ. Տ. Ստեփանոս Վրդ. Փաշայեանին:

Ապա, սաներ խմբուեցան ընթրիքի սեղանին շուրջ եւ վայելեցին իրենց սարկալազ եւ կիսասարկալազ եղբայրներուն հիւրասիրութիւնն ու սպասարութիւնը:

Տեսուչ Սրբբազանը շնորհաւորեց Հայր Ստեփանոսը՝ անոր անուան տօնին եւ լանջախաչ կրելու պատիւին արժանանալուն առթիւ: Ան Դպրեվանքի սարկալազներու դասին մաղթեց, որ Ս. Ստեփանոս սարկալազապետի օրինակով լեցուին, ծառայեն եւ զՔրիստոս

տանին մեր ժողովուրդին:

Կիրակի 25 Դեկտեմբեր 2011-ին, առաւօտեան ժամերգութեամբ, Սուրբ Պատարագով եւ դասախօսական ու գեղարուեստական ձեռնարկով, հանդիսապետութեամբ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, նախասարկալազ եւ նախավկայ Ս. Ստեփանոսի տօնը ոգեկոչուեցաւ Անթիլիասի մէջ:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Քէրքէզեան (ուսուցիչ Դպրեվանքի) եւ քարոզեց Դպրեվանքի Տեսուչ՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէմէզեան: Երգեցողութիւնը կատարեց Դպրեվանքի «Արմաշ» երգչախումբը, ղեկավարութեամբ՝ Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Տօնոյեանին:

Քարոզիչ սրբազանը պատարագամատոյցին «Տէ՛ր, փրկութեան սաղաւարտ դիր գլխուս, որպէսզի կարենամ Թշնամիին գօրութեան դէմ պատերազմիլ» խնդրողական աղօթքը բնաբան առաւ եւ ուրուագծեց Ս. Ստեփանոսի քրիստոսակեղրոն կեանքը, սարկալազական ծառայութիւնը, համարձակախօս քարոզութիւնն ու արեան նահատակութիւնը, եւ յորդորեց Դպրեվանքի 16 սարկալազներն ու կիսասարկալազները ընթանալու սարկալազապետ սուրբին ուղիով:

Եկեղեցական արարողութիւններէն ետք, վեհարանի դահլիճին մէջ Դպրեվանքի սարկալազները ներկայացուցին



ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՇՐՋԱՊԱՏՈՒԱԾ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՍԱՐԿԱԼԱԳԱՅ ՂԱՍՈՎ

Ս. Ստեփաննոսի նուիրուած յայտագիրը:
 Բացման խօսքը կատարեց Բարշ-Չօհրայ Սրկ. Աշրգեան, Գործք առաքելոցէն (7.51-60) հատուածը կարդաց Բարշ. Անդրանիկ Սրկ. Տայլըճեան, դպրեվանեցիներ երգեցին «Նախասարկաւագ» մանկունք շարականը, «Ս. Ստեփաննոս եւ սարկաւագութեան ըմբռնումը» նիւթով դասախօսեց Բարշ. Սամուէլ Սրկ. Լախոյեան եւ Թորգոմ Արք. Գուշակեանի «Զարթուցեալքս»-ը ասմունքեց Բարշ. Սերաստիա Սրկ. Ղարախանեան:

Հանդիսութեան օրհնութեան խօսքը կատարեց Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետը, որ Ս. Ստեփաննոսի տօնին ծառայական իմաստին հետ առնչուած տեսաւ բոլոր հայ հոգեւորականները, ինչ հանգամանք ալ ունենան անոնք: Վեհափառ Հայրապետը այս տօնը առիթ նկատեց բոլոր հայ հոգեւորականներուն, ինքնաճանաչման ու իրենց առաքելութիւնը վերատեսութեան ենթարկելու: Նորին Սրբութիւնը յատկապէս կոչ ուղղեց հոգեւորականութեան, ըսելով. «Պէտք է նայինք Սուրբ Ստեփանոսին: Ինք ալ Քրիստոսի նայեցաւ ու այդպէս

իրագործեց իր կոչումը: Ան գՔրիստոս ժողովուրդին տարաւ ծառայութեան ցամբով: Հոգեւորականներ պէտք է նային Սուրբ Ստեփանոսին, ինքնաճանաչման ցամբով տեսնելու իրենց կեանքն ու կոչումը: Այսօր արեան նահատակութիւն չի պահանջուիր մեզմէ: Սակայն հայ հոգեւորականէն կը պահանջուի կենդանի նահատակութիւն՝ ծառայութեամբ: Այս բառը խոր իմաստ եւ նուիրական հանգամանք ունի, որովհետեւ Աստուած Ինք ծառայեց մարդոց՝ իր Որդիին միջոցաւ: Հայ հոգեւորականը ինքզինք ծառայ պէտք է ըմբռնէ, հեռու ամէն տեսակ նիւթական ու վաղանցուկ արժէքներէ եւ կառչելով մնայուն արժէքներու: Այն ատեն եկեղեցին կը դադրի կառոյց ըլլալէ ու կը դառնայ ծառայութիւն՝ բառին բովանդակ իմաստով» շեշտեց Վեհափառը:

Ապա, Նորին Սրբութիւնը «Պահպանիչ»ով օրհնեց սարկաւագներու դասն ու հաւատացեալ ժողովուրդը:

Ոգեկոչման պահը իր լրումին հասաւ «Կիլիկիա» եւ «Ի վեհ բարձանց» մաղթերգներու հաւաքական երգեցողութեամբ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ


«ՖՐԻՏՃՈՖ ՆԱՆՍԷՆ ՍԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱԴՈՒՆՔՆԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԻՆՔՁԻՆՔ ՆՈՒԻՐԵԼՈՎ ՊԱՏՍՈՒԹԻՒՆ ԿԵՐՏԵՑ, ԵՒ ԻՐ ԱՆՁՈՎ ՊԱՏԳԱՍ ԴԱՐՁԱԲ ԱՇԽԱՐՀԻՆ ԴԻՄԱՑ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հովանավորութեամբ ու նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, իր տեսակին մէջ եզակի հանդիսութիւն տեղի ունեցաւ Երկուշաբթի 7 Նոյեմբեր 2011-ին, երեկոյեան ժամը 7-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մայրավանքի «Կիլիկիա» թանգարանի «Կիւլպէնկեան» սրահին մէջ, նուիրուած մեծանուն հայասէր Ֆրիտճոֆ Նանսէնի, անոր ծննդեան 150-ամեակին առիթով: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Խ. Պապիկեան Հրատարակչական Հիմնադրամ»ը այս առիթով հրատարակած էր նաեւ մեծ հայասէրին «Հայաստանն ու Միջին Արեւելքը» խորագիրով անգլերէն գիրքը:

Վեհափառ Հայրապետին կողքին հանդիսութեան ներկայ էին Միաբանութեան անդամներ, նախարարներ ու երեսփոխաններ, Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեան, Նորվեկիոյ դեսպան Սվէյն Աաս, գանազան երկիրներու դեսպաններ, որոնց շարքին պապական նուիրակը, ազգային ժողովականութեան, կազմակերպութիւններու ու միութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ մշակութասէր հրաւիրեալներ:

Բացման խօսքը կատարեց Տիկ.



Աստղիկ Գանտահարեան, ներկայացնելով մեծ հայասէրին ի յարգանս կազմակերպուած երեկոյին իմաստն ու խորհուրդը: Ան անդրադարձաւ նաեւ հրատարակուած գիրքին բովանդակութեան, իբրեւ Ֆ. Նանսէնի դէպի Կոստանդնուպոլիս ճանապարհորդութեան ուղեգիր:

Գեղարուեստական յայտագիրին մասնակցեցան Շողիկ Թորոսեան (երգ), Յասմիկ Գասպարեան (նուագ), եւ Տաթևիկ Արթինեան (նուագ):

Ֆրիտճոֆ Նանսէնի կեանքին ու յատկապէս հայութեան բեկորներուն նկատմամբ տածած հոգածութեան անդ-

րադարձաւ Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեան: Ան յիշեց հայուի թեան ու Հայաստանին յարգալից վերաբերումը հանդէպ հայուի թեան մեծ բարեկամին: Խօսեցաւ հայրենի պետութեան իրագործած թէ իրագործելիք բոլոր ծրագիրներուն, որոնք երախտագիտութեան արտայայտութիւններ են հանդէպ անոր, որուն շնորհիւ բազմաթիւ հայեր ինքնութիւն ստացան, ու կրցան հաստատուիլ տարբեր երկիրներու մէջ, հայոց Յեղասպանութենէն ետք: Դեսպան Քոչարեան վկայակոչեց նաեւ Նանսէնի աղջկան խօսքերը, թէ հայրը իր մահուան անկողինին մէջ վերջին բառը գոր արտասանած է, եղած է՝ «Հայաստան» անունը:

Ապա, երախտագիտական ջերմ խօսքերով հանդէս եկաւ Լիբանանի մէջ Նորվեկիոյ դեսպան Սվէյն Աաս: Իր երկրին ու պետութեան անունով շնորհակալութիւն յայտնելով յատկապէս Նորին Սուրբ Օծութեան, դեսպանը համառօտ անդրադարձաւ Նանսէնի գործունէութեան մարդասիրական երեսին, ու իրաւագրկեալ ժողովուրդի մնացորդացին նկատմամբ ցուցաբերած հոգածութեան: Ան շեշտեց նաեւ գովասանքէ հեռու եւ գնահատանքի լուսարձակներէն դուրս ինքզինք պահած Նանսէն պարզ մարդը, որ իր միւս բոլոր մասնագիտութիւններուն ու վարած պաշտօններուն առնթեր, պարզ մարդիկ էր եւ ցարդ օրինակելի տիպար՝ նորվեկացի նոր սերունդներուն դիմաց: Եւ Այսօր «Նանսէնի փամբով Հայաստանն ու հայ ժողովուրդը իրայատուկ տեղ ունին Նորվեկիոյ եւ անոր ժողովուրդին սիրտին մէջ» ըսաւ դեսպանը:

Եզրափակիչ իր պատգամով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս առաջին հերթին իր բարձր գնահատանքը յայտնեց Նորվեկիոյ եւ Հայաստանի դեսպաններուն, յարգանքի այս երեկոյին կազմակերպման համար: Նորին Սուրբ Օծութիւնը վեր առաւ, հայ ժողովուրդի

պատմութեան մէկ տխուր էջին վրայ փայլող անունը Ֆրիտճոֆ Նանսէնին, որոնց նմաններուն ներկայութիւնը արդարութեան սպասող ժողովուրդներու տարեգրութեանց մէջ, թէ միջազգային հանրութեան քաղաքական բեմահարթակին վրայ ունի իւրայատուկ նշանակութիւն եւ արժէք: «Մարդկային իրաւունքներու պաշտպանութեան նուիրւած այս անձը պատմութիւն կերտեց: Ինք պատգամ եղաւ իր անձով»: Վեհափառ Հայրապետը այնուհետեւ հետեւեալ կէտերուն մէջ ամփոփեց Նանսէնի անձէն բխող պատգամը, ուղղուած համայն աշխարհին, յատկապէս ներկայ յեղաշրջուող ժամանակներուն մէջ: Ա) Ազգերու, կրօններու, մշակոյթներու միջեւ կամուրջները կարեւորութեամբ պէտք է նկատի առնուին: Նանսէնի նման անձերու կարիքն ունի այսօր աշխարհը, որոնք հանդուրժողութեան ոգին տարածեն ժողովուրդներու միջեւ: Բ) Մարդկային իրաւունքները մարդիկ չեն հաստատած աշխարհի մէջ, այլ անոնք երկնատուր են՝ Աստուծոյ կողմէ շնորհուած: Ուստի, մարդկային իրաւանց կայուածէն ներս նուազագոյն խախտումը կամ սխալը՝ մեղք է ուղղուած Աստուծոյ: Նանսէնի նման անձերու պէտք ունինք այսօր, որոնք շեշտեն մարդկային իրաւունքներուն կարեւորութիւնը մեր կեանքէն ներս: Գ) Անկախութիւնը կարեւոր հանգրվան է ժողովուրդներու կեանքին մէջ: Սակայն կան ժողովուրդներ այսօր, որոնց կը պակսի այդ մենաշնորհը: Աշխարհը պէտք ունի Նանսէնի նման անձերու, որպէսզի նման ժողովուրդներու անկախութեան իրաւունքը պաշտպանուի: Դ) Նանսէնի «Հայաստան եւ Միջին Արեւելքը» գիրքին մէջ կարեւորութեամբ կը շեշտուի հայոց Յեղասպանութիւնը, ուր ան ականատեսի վկայութեամբ եւս արդարութիւն կը հետապնդէ: Նանսէն մարտահրաւէր կը կարդայ թէ՛ Թուրքիոյ եւ թէ՛ միջազ-

գային ընտանիքին, հայույթեան դէմ ծրագրուած ու գործադրուած Յեղասպանութիւնը ճանչնալու:

Վեհափառ Հայրապետը իր պատգամը եզրափակեց, յիշելով Նանսէնի գիրքին վերջին բառերը, որոնք «մարգարէաշունչ են» ըստ ան. «Հայերը իրենց յոյսը չեն կորսնցուցած, տարուէ տարի կը սպասեն արդարութեան»: Արամ Ա. Կաթողիկոս աւելցուց, ըսելով թէ՛ «Հայերը կը սպասեն ո՛չ թէ կրաւորական սպասումով, այլ պայքարով, մարտնչումով, մինչեւ

արդարութեան յայտնուիլը»: «Ոչ ոք կըրնայ քանդել հայու ոգին», Նանսէնի խօսքը, Վեհափառ Հայրապետը մէջբերեց, օրուան խորհուրդին իսկական նշանակութիւնը փոխանցելով ներկաներուն:

Թանգարանի մշակութային հանդիսութիւններու սրահ բերուած ու հանդիսութեան յատուկ շուք տուած էր Նանսէնի պրոնգեայ կիսանդրին, որ «Կիլիկիա» Թանգարանին նուիրաբերուած է Տէր եւ Տիկին Յակոբ եւ Մարիլին Արշակունիներուն կողմէ:

ՎԵՐԱՓՈՒՐ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԻՏՃՈՖ ՆԱՆՍԵՆԻ ՅՈՒՇ-ԵՐԵԿՈՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ

Երկուշաբթի 7 Նոյեմբեր 2011-ի գիշեր, Վեհափառ Հայրապետը Վեհարանի իր գրասենեակին մէջ ընդունեց Վատիկանի, Ռուսիոյ, Հայաստանի, Ուքրանիոյ, Նորվեկիոյ եւ Կիպրոսի դեսպանները: Յիշեալ դեսպանները ներկայ գտնուեցան Կաթողիկոսարանի մէջ կազմակերպուած Ֆրիտճոֆ Նանսէնի ծննդեան 150-ամեակին նուիրուած հանդիսութեան:

Յիշեալ հանդիպումը առիթ եղաւ Վեհափառ Հայրապետին եւ դեսպաններուն միջեւ կարծիքներու լայն փոխանակման ընդհանրապէս Միջին Արե-

ւելքը յուզող ու յատկապէս Միջին Արեւելքէն ներս քրիստոնեայ համայնքներուն դիմագրաւած մարտահրաւէրներուն շուրջ: Այս առիթով, Վեհափառ Հայրապետը նաեւ իր ջերմ գնահատանքը յայտնեց Հայաստանի եւ յիշեալ երկիրներուն միջեւ հետզհետէ ծաւալող քաղաքական դիւանագիտական ու տնտեսական գործակցութեան: Վեհափառ Հայրապետը նաեւ յիշեցուց թէ հայ ժողովուրդին դէմ կատարուած Յեղասպանութեան ճանաչման ու հատուցման գծով միջազգային համայնքը կարեւոր դերակատարութիւն ունի կատարելիք:

ՀԱՅ ԳԻՐՔԻ 33-ՐԴ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՁ

Կիրակի 13 Նոյեմբեր 2011-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. Եւ անմահ Պատարագէն անմիջապէս ետք, Միաբան Հայրերէ եւ Դպրեմանքի սաներէ կազմուած թափօրը յառաջացաւ Կաթողիկոսարանի շրջափակը, ուր Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ձեռամբ կատարուեցաւ պաշտօնական բացման հանդիսութիւնը, Կաթողիկոսարանին կողմէ կազմակերպուած հայ գիրքի 33-րդ ցուցահանդէսին:

Մայրավանքէն ներս, ներկայ ժողովուրդը մօտեցաւ այն հսկայ տաղաւարին, որուն մէջ բացումը պիտի կատարուէր ցուցահանդէսին: Ներկայ

մշակութասէր բազմութեան իր հայրապետական պատգամը փոխանցելով, Արամ Ա. Կաթողիկոս վեր առաւ մեր հաւաքական կեանքէն ներս հայ գիրքին դրական ներկայութիւնը եւ կարեւորութիւնը: Նորին Սուրբ Օծութիւնը հայ գիրքին իսկական տեղը նկատեց հայ ընտանիքը, որ «կոչուած է պահպանել ու տարածիչը ըլլալու հայ գիրքին» ըսաւ ան: Արամ Ա. Կաթողիկոս լայնօրէն անդրադառնալով հայ ընտանիքին առողջ պահպանման, յիշեց թէ այլ առիթներով բազմիցս շեշտած է անոր կարեւորութիւնը մեր ազգի գոյատեւման իմաստով: Այսօր, սակայն, նշեց թէ հայ ընտանիքը եւս ունի կարեւոր դերակատարութիւնը



www.aztagdaily.com
photo by Ashnag©

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԸ ԿՈՒՂՈՒՄԸ ՄԵՆԱԿՈՒԹԱՄԵՐ ԲԱԶՄՈՒԹԵԱՆ

հայ գիրքին նկատմամբ: Ան ըսաւ «հայ գիրքին տեղը հայ ընտանիքն է»:

Վեհափառ Հայրապետը խօսելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ հաստատուած հայ գիրքի ցուցահանդէսներու շղթային մասին, ըսաւ, թէ անոր «ՅՅ-րդը կու գայ հաստատելու մեր Ս. Աթոռին նախանձախնդրութիւնը հայ գիրքին ու գիրքին նկատմամբ: Սիրտս ուրախութեամբ կը լեցուի երբ կը լսեմ կամ կը տեսնեմ, երբ հայ ծնողներ իրենց զաւակներուն ձեռքէն բռնած Մայրավանք կու գան, ու հայ գիրք կ'առնեն: Կուրախանամ երբ կը լսեմ կամ կը տեսնեմ, երբ հայ դպրոցներու աշակերտներ խմբովին այստեղ կու գան ու իրենց փոքրիկ լումաները տալով հայ գիրք կը գնեն, ու իրենց ծնողներուն կը տանին» ըսաւ Նորին Սրբութիւնը:

Կարեւոր երեւոյթներէն մէկն ալ զոր Վեհափառ Հայրապետը իր պատգամին ճամբով շեշտեց, հայ տուններէն ներս գրադարան ունենալու երեւոյթն է: Ան մաղթեց որ ամէն տուն ունենայ իր գրադարանը, եւ նոյնիսկ երբ հայերէնի իմացումը կը գտնուի տկար աստիճանի վրայ «հայ գիրքը տեսնելով կշտանան անոնք» ըսաւ Վեհափառը:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսու-

թեան անցնող տասնամեակներուն ու յատկապէս վերջին շրջանին ցուցաբերած բծախնդրութեան անդրադառնալով հայերէն լեզուի ու մանաւանդ արեւմտահայերէնի նկատմամբ, Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ մի քանի ամիսներ առաջ այս առաջադրանքով տեղի ունեցած համագումարին իբրեւ բնական հետեւութիւն, որոշած է կազմել «Արեւմտահայերէնի պաշտպան Խորհուրդ» հովանաւորութեամբ Ս. Աթոռին ու մասնակցութեամբ սփիւռքահայ մասնագէտներու:

Ի վերջոյ, Արամ Ա. Կաթողիկոս նշելով թէ Երեւեքօն որոշած է 2012-ին հայ գիրքի քաղաք կոչել Հայաստանի մայրաքաղաք Երեւանը, ըսաւ թէ Հայրապետական Գիրով 2012 տարին կը հռչակէ «Հայ Գիրքի Տարի»:

Իր պատգամի աւարտին, Նորին Սուրբ Օծութիւնը բացուած յայտարարեց Հայ Գիրքի համասփիւռքեան ցուցահանդէսը: Ապա, ներկայ մշակութասէր բազմութիւնը մօտեցաւ հին թէ նոր հրատարակութիւններուն, որոնք սփիւռքի զանազան թեմերու մէջ հրատարակուած հատորներ են, ինչպէս նաեւ անհատ հեղինակներու լոյս ընծայած գիրքեր:



**«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՒ ԴՊՐԵՎԱՆՔԻ «ԱՐՄԱՇ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԵՐԸ
ՍՐԲԱԶԱՆ ՀԱՄԵՐԳՈՎ ՀՄԱՅԵՑԻՆ
ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ ԲԱԶՄՈՒԹԻՒՆԸ**

Երեքշաբթի 29 Նոյեմբեր 2011-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Շնորհալի» եւ Դպրեվանքի Սանուց բազմաձայն գոյգ երգչախումբերը, Անթրիլիասի «Մար Իլիաս» եկեղեցւոյ հանդիսասրահին մէջ ուշադրաւ սրբազան համերգով ելոյթ ունեցան:

Համաշխարհային Կաթողիկ Լրատուական Միութեան կազմակերպութեամբ Լիբանանի տարածքին գտնուող գանազան հուշակաւոր երգչախումբեր յատուկ հրաւերով անհատական ելոյթներ կու տան, որոնց շարքին հրաւեր ստացած էր նաեւ «Շնորհալի» երգչախումբն ու Դպրեվանքի «Արմաշ» երգչախումբը:

Ելոյթը սկսաւ երեկոյեան ժամը 8-ին, հայ եւ օտար հոգեւորականներու, միաբան հայրերու, եւ հայ թէ օտար բազմութեան ներկայութեան: Վերոյիշեալ Միութեան լիբանանեան բաժանմունքին պատասխանատուն Հայր Թոնի Խատրա, բացման խօսքով անդրադարձաւ հայ եկեղեցւոյ ու յատկապէս հայութեան հարազատ ներկայութեան Լիբանանի եկեղեցական, քաղաքական ու ընկերային կեանքէն ներս. «Երբ որեւէ հաւաքոյթ կամ ձեռնարկ ունինք եւ հայեր ներկայ չեն, անպայման կը զգանք անոնց բացակայութիւնը: Հայութիւնը անբաժան մասն է այս երկրի ընկերութեան» ըսաւ Հայր Խատրա:

Երգացանկը բաղկացած էր Կոմիտասի, Եկմալեանի, Զարեհ Արք. Ազնաւորեանի, Վ. Պէտէրեանի ստեղծագործութիւններէն: Շարականներ եւ հո-

գեւոր երգեր կատարուեցան գոյգ երգչախումբերու միացեալ երգեցողութեամբ, խմբավարութեամբ Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Տօնոյեանի: Դպրեվանքի սանուց երգչախումբին կատարողութեամբ Կոմիտասեան հոգեւոր երգերու երգեցողութիւնը, ինչպէս նաեւ «Շնորհալի»ի կատարումով Եկմալեանի ստեղծագործութեանց երգեցողութիւնը այնքան տպաւորիչ ու առինքնող էին, որ հայ եկեղեցական երաժշտութեան այս երկու հսկաներուն հոգեւոր երաժշտութեան ապրումները գիրար ամբողջացուցին, դեկավարին ճարտար ճպտտին ներքոյ:

Աւելի քան վաթսուն հաշուող միացեալ երգչախումբը, հոգեւորական ու աշխարհական երփներանգ ներկայութեամբ, յատկապէս Վ. Պէտէրեանի «Եկեղեցին Հայկական» երգի կատարումով, որ երկու երգչախումբերուն միացեալ կատարած երգերէն մին էր, սրբազան համերգը հասցուց հոգեւոր ապրումներու գագաթնակէտին: Անոր կրկնեցաւ անմիջապէս արական ձայներով կատարուած «Եկեալքս»ը, Կիրակնամուտի յաղթական շեշտով, Լոյսին փառաբանութեամբ:

«Կիլիկիա» մաղթերգով իր լրումին հասած հոգեւոր համերգը, որ մէկ ժամ տեւողութեամբ լեցուց ներկաներուն սիրտերը, յատկապէս օտար բազմութեան վկայութեամբ պատիւ բերաւ ո՛չ միայն լիբանանահայութեան, այլ նաեւ Լիբանանին, անոր արուեստի գանձանակին մէջ իր կարեւոր ներդրումը կատարելով:

ԼՈՒՐԵՐ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

- Ուրբաթ 4 Նոյեմբեր 2011-ին Դպրեվանքէն ներս տեղի ունեցաւ աւանդական «Աղօթքի մրցում»ը, որուն մասնակցեցան Ա. Ժառանգաւորաց դասարանի հինգ նորեկ սաները:

- Կիրակի 11 Դեկտեմբեր 2011-ին Դպրեվանքը հիւրընկալեց Միջին Արեւելքի Աստուածաբանական Հիմնարկներու երրորդ ժողովը: Յայտնենք նաեւ, թէ Կիրակի 23 Հոկտեմբեր 2011-ին եւ Կիրակի 13 Նոյեմբեր 2011-ին Դպրեվանքի ներկայացուցիչները՝ Գէորգ Սրկ. Սապունճեանն ու Սարգիս Կարապետեանը մասնակցած էին առաջին եւ երկրորդ ժողովներուն:

- Երկուշաբթի 7 Նոյեմբեր 2011-ին, Դպրեվանքի Գ. եւ Դ. Ընծայարանի սարկաւազները Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա» թանգարանին մէջ ներկայ գտնուեցան Ֆրիտճոֆ Նանսէնի յօրեյինական հանդիսութեան:

- Ուրբաթ 18 Նոյեմբեր 2011-ին դպրեվանքիները ունեցան իրենց աւանդական «գուարթ երեկոյ»ն:

- Կիրակի 20 Նոյեմբեր 2011-ին, դպրեվանքիները Սուրբ եւ անմահ Պատարագէն ետք աւելի քան մէկ ժամ առիթ ունեցան այցելելու հայ գիրքի 33-րդ ցուցահանդէսը:

- Հինգշաբթի 24 Նոյեմբեր 2011-ին, Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչա-

խումբը Դպրեվանք այցելեց եւ Դպրեվանքի երգչախումբին հետ երգեցողութեան փորձեր կատարեցին, իրենց միատեղ ելոյթին պատրաստուելով:

- Ուրբաթ 25 Նոյեմբեր 2011-ին, դպրեվանքիները առիթը ունեցան ունկընդրելու երկու տիպար հայ մանուկներ՝ Մեղեղի Տէր Յարութիւնեանն ու Լիա Գէորգեանը, որոնք դպրեվանքիներուն հրամցուցին գրաբարով եւ աշխարհաբարով Սաղմոսներ, աղօթքներ եւ մէկ փունջ ոտանաւորներ հայ դասական բանաստեղծներէն:

- Շաբաթ 26 Նոյեմբեր 2011-ին, ընթրիքի ընթացքին դպրեվանքիները Հոկտեմբեր, Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներուն ծնած եօթ սաներու տարեդարձը նշեցին:

- Կիրակի 4 Դեկտեմբեր 2011-ին, Սուրբ եւ անմահ Պատարագէն ետք դպրեվանքիները «Նոյեան Տապան» արուեստի ցուցասրահի կազմակերպած հայրենաբնակ Վահան Ռումէլեանի նրկարչական ցուցահանդէսը այցելեցին:

- Ուրբաթ 9 Դեկտեմբեր 2011-ին, Դ. Ընծայարանի երկու սարկաւազներու մտայղացումով, ներկայացուեցաւ Կոմիտաս Վարդապետի կեանքին վերջին հանգրուանը պակերացնող կենդանի պատկեր:

- Շաբաթ 10 Դեկտեմբեր 2011-ին, Դպրեվանքը Հարիսայի «Բեթանիա» հա-

մագուժումները կեղրոնին մէջ, մասնակցեցաւ հաշմանդամներուն նուիրւած համագումարին:

- Նոյեմբեր ամիսէն սկսեալ դպրեւանեցիները շաբաթական դրութեամբ Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Տօնոյեանի դեկավարութեամբ, ամէն Չորեքշաբթի օր երգչախումբի փորձեր կը կատարեն: Իսկ Դեկտեմբեր ամիսէն սկսեալ, Տիկին Իրմա Տէտէյեանի ուսուցումով ասմունքի փորձեր սկսած են:

- Ուրբաթ 23 Դեկտեմբեր 2011-ին,

Դպրեւանքի 2011-2012 տարեշրջանի երկրորդ ուսուցչական ժողովը գումարուեցաւ: Իսկ, Շաբաթ 24 Դեկտեմբեր 2011-ին, տեղի ունեցաւ վիճակացոյցներու բաշխում:

- Ուրբաթ 23 Դեկտեմբեր 2011-ին, սեղանատան մէջ, դպրեւանեցիները հաւաքուեցան ամանորեան ուրախութեան սեղանին շուրջ եւ Կաղանդ Պապան դիմաւորեցին: Երեկոյին ներկայ էր նաեւ Քուէյթի եւ Ծոցի երկիրներու Կաթողիկոսական փոխանորդ՝ Գերշ. Տ. Շահէ Եպս. Փանոսեան:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ

- Շաբաթ 3 Դեկտեմբեր 2011-ին, Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանը, դպրեւանեցիներուն ներկայացուց՝ «Նկեղեցիներուն դիմագրաւած մարտահրաւերները այսօր Միջին Արեւելի եւ Հիւսիսային Ափրիկէի մէջ» շահեկան նիւթը:

- Ուրբաթ 2 Դեկտեմբեր 2011-ին, Դպրեւանքի Դ. Ժառանգաւորացի սաները Հայ Եկեղեցու առաջին լուսաւորիչներուն՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթոլոմէոս առաքելներուն կեանքն ու գործունէութիւնը ներկայացուցին դպրեւանեցիներուն:

- Ուրբաթ 9 Դեկտեմբեր 2011-ին, Դպրեւանքին մէջ տեղի ունեցաւ դասա-

խօսական երեկոյ՝ նախաձեռնութեամբ Բարշ. Միքայէլ Սրկ. Սարգիսեանի (Դ. Ընծ.) եւ Բարշ. Սերաստիա Սրկ. Ղարախանեանի (Գ. Ընծ.), որոնք իրենց այցելութիւններուն լոյսին տակ ներկայացուցին Կոստանդնուպոլսոյ եւ Իրանի հայութեան վիճակը այսօր:

- Շաբաթ 17 Դեկտեմբեր 2011-ին, Յարութիւն Սրկ. Շէրնէզեան (Դ. Ընծ.) ներկայացուց Հայաստան կատարած իր ճամբորդութեան տպաւորութիւնները:

- Հինգշաբթի 22 Դեկտեմբեր 2011-ին, հայասէր Լինչի ծննդեան 150-ամեակը նշուեցաւ Դպրեւանքէն ներս: Օրուան բանախօսն էր՝ Դոկտ. Անդրանիկ Տագէսեան:

2011 ՏԱՐՈՒԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԻՐԵՐԸ

Յուլիսին Դեկտեմբեր 2011-ին Դրպ-րեվանք այցելեցին հոգեւորական եւ աշխարհական հետեւեալ հիւրերը, որոնք հանդիպում ունեցան տեսուչ սրբազան՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Այեմէմէգեանին հետ եւ ուրախութեամբ վերահասու դարձան դպրեվանեցիներու կեանքին եւ արձանագրած յաջողութիւններուն:

1. 30 Յուլիս, Տիար Գարրիէլ Չէմպէրճեան, «Փիւնիկ» մարդկային պաշարներու հիմնադրամի նախագահ (Դամասկոս, Սուրիա):

2. 3 Օգոստոս, Հրաչ Սրկ. Չիլինկիրեան եւ տիկինը՝ Տոբթ. Շաքէ (Լոնտոն, Անգլիա):

3. 8 Օգոստոս, Տիկին Թենի Սիմոնեան (ժընեւ, Զուիցերիա):

4. 11 Օգոստոս, Նոր Սիսի Լ.Օ.Խ.ի «Արշալոյս Ազիրեան» մասնաձիւղ (Պէյրուսթ, Լիբանան):

5. 11 Օգոստոս, «Ազդակ»ի անձնակազմ՝ տեսուչ սրբազանին հետ հարցազրոյցի համար (Պէյրուսթ, Լիբանան):

6. 15 Օգոստոս, նախկին դպրեվանեցի՝ Տիար Նիկոլ Սալիանեան եւ տիկինը՝ Ռուզան (Պէյրուսթ, Լիբանան):

7. 7 Սեպտեմբեր, Ռուբէն, Մարի եւ Շողիկ Բարիբեաններ (Պէյրուսթ, Լիբանան):

8. 18 Սեպտեմբեր, Արժ. Տ. Մարտիրոս Քհնյ. Պէրպէրեան (Հոգեւոր Հովիւ Մոսկուայի հայոց):

9. 20 Սեպտեմբեր, արուեստագէտ Յովսէփ Գասպարեան (Պէյրուսթ, Լիբանան):

10. 1 Հոկտեմբեր, Երուսաղէմի տաճարականներու Յունաստանի հրամանատար Տիար Պօղոս Չոլաքեան, տիկինը եւ օգնականը (Աթէնք, Յունաստան):

11. 10 Հոկտեմբեր, Արժ. Տ. Խաչիկ Աւ. Քհնյ. Միսիրեան (Հոգեւոր Հովիւ

Ճոնիի Ս. Յարութիւն եկեղեցւոյ) եւ նախկին դպրեվանեցի Տիար Գառնիկ Քէօսէյեան (Պէյրուսթ, Լիբանան):

12. 2 Նոյեմբեր, բանաստեղծ Յովհաննէս Մանուկեան [Ալագեազ] (Լոս Անճելըս, Ա.Մ.Ն.) եւ Տիար Պաղտասար Կէօվճեան (Պէյրուսթ, Լիբանան):

13. 7 Նոյեմբեր, Ֆիլմարտադրիչ Տիգրան Պասկելիչեան եւ օգնականը (Երեւան, Հայաստան) եւ Տիկին Անուշ Թուռանց (Պէյրուսթ, Լիբանան):

14. 30 Նոյեմբեր, Արժ. Տ. Աւետիս Աւ. Քհնյ. Պալրգեան (Հոգեւոր Հովիւ Փարիզի Իսի Լէ Մուլինոյի ծուխին), երէցիկինը, աղջիկը եւ անոր նշանածը:

15. 30 Նոյեմբեր, նախկին դպրեվանեցի (1948-1955) Տիար Ասատուր Կիւզէյեան (Լոնտոն, Անգլիա) եւ Տիար Արմէն Յարութիւնեան (Պէյրուսթ, Լիբանան):

16. 8 Դեկտեմբեր, Արժ. Տ. Օշին Աւ. Քհնյ. Գէորգեան (Հոգեւոր Հովիւ Պուրճ Համուտի Ս. Աստուածածին եկեղեցւոյ) եւ Տիար Գարրիէլ Թէրգեան (Պէյրուսթ, Լիբանան):

17. 10 Դեկտեմբեր, Տէր եւ Տիկին Յարութ եւ Թենի Արսլանեան (Պէյրուսթ, Լիբանան):

18. 11 Դեկտեմբեր, Հայր Փոլ Ռուհանա, նորընտիր ընդհանուր քարտուղար Միջին Արեւելքի եկեղեցիներու խորհուրդին (Պէյրուսթ, Լիբանան):

19. 15 Դեկտեմբեր, Տիար Մանուէլ Մանոնէլ (Տնօրէն Խաղաղութեան մշակոյթի հիմնարկի, Պարսերոնա, Սպանիա) եւ Տիկին Թենի Սիմոնեան (ժընեւ, Զուիցերիա):

20. Երեքշաբթի, 20 Դեկտեմբեր, նախկին դպրեվանեցի Տիար Գէորգ Հաճեան (Երեւան, Հայաստան) եւ եղբայրը՝ Վրէժ Հաճեան (Պէյրուսթ, Լիբանան):

ՀԵՀՈՄ

«ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԻՐԵՆՑ ՄԷՋ ՊԻՏԻ ԿԱԶՄԱԴՈՐԵՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՒՄ ՈՒ ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԻՒՆ»

Պատգամեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կազմակերպութեամբ ու հրաւերով Կաթողիկոսարանի Երիտասարդական Բաժանմունքին, Հայաստանեայց Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (ՀԵՀՈՄ) նախկին անդամ-անդամուհիներու հաւաք տեղի ունեցաւ Չորեքշաբթի 28 Դեկտեմբեր 2011-ի գիշերը, Անթիլիասի Մայրավանքին մէջ: Արդարեւ, շուրջ հարիւր ՀԵՀՈՄականներ, որոնք այսօր զանազան մասնագիտական ասպարէզներու ճամբով ներկայութիւն են մեր կեանքէն ներս, մասնակից դարձան հաւաքին, որուն յաջորդեց ընթրիք՝ ներկայութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին:

Ընթրիքի ընթացքին յաջորդաբար խօսք առին Կաթողիկոսարանի Երիտասարդական Բաժանմունքի Յանձնախումբի Ատենապետ՝ Յակոբ Հանտեան եւ նոյն Բաժանմունքի Վարիչ՝ Մեսրոպ Վրդ. Սարգիսեան: Անոնք շեշտեցին երիտասարդութեան աւելի կարեւորութիւն տալու հրամայականը մեր եկեղեցւոյ ու համայնքի կեանքէն ներս եւ այս ուղղութեամբ ՀԵՀՈՄի կարեւոր դերը:

Իր հայրական պատգամին մէջ, Վեհափառ Հայրապետը լայնօրէն անդրադարձաւ ներկայ աշխարհի հրամայականներուն ու անոնց դրական թէ՛ բացասական անդրադարձին հայ կեանքէն

ներս: «Յարատեւ ու արմատական փոփոխութեան մէջ եղող ներկայ աշխարհին մաս կը կազմէ նաեւ մեր ազգը: Հետեւաբար, մենք չենք կրնար անտարբեր մնալ այն շարժումներուն, փոփոխութիւններուն ու մարտահրաւերներուն նկատմամբ, որոնք կը շրջապատեն մեզ ամէն տեղ ու մեր կեանքի բոլոր մարզերէն ներս: Կոյր կերպով հետեւիլ անոնց, վնասաբեր է. իսկ անտարբեր մնալը՝ նոյնքան վնասաբեր: Պէտք է գիտնանք ի՛նչը առնել եւ ինչ՝ ձեռով օգտակար դարձնել մեր կառոյցներուն թէ՛ ընդհանրապէս մեր հաւաքական կեանքին, եւ ի՛նչը մերժել: Հո՛ս կը կայանայ մեր հիմնական դերը եւ այս ուղղութեամբ երիտասարդութիւնը կոչուած է յոյժ կարեւոր դերակատարութեան», ըսաւ Վեհափառ Հայրապետը: Շարունակելով իր խօսքը, ան ըսաւ, թէ՛ «ընդհանրապէս մեր երիտասարդութիւնը մեր կեանքի յուսանցքին վրայ կը գտնուի: Երբեմն իրե՛նք են յանցաւորը, իսկ շատ յաճախ՝ մե՛նք, մեր հոգեւոր, ազգային, մշակութային թէ՛ կրթական պատասխանատուները: Մենք պիտի գիտնանք ինչ՝ ձեռով խօսիլ երիտասարդութեան հետ, ինչպէս ներգրաւել զանոնք մեր կեանքէն ներս: Մենք քաջութիւնը պիտի ունենանք պատասխանատուութիւն յանձնելու մեր երիտասարդներուն: Արդարեւ, մեր համայնական կեանքին մաս-

նակցութեամբ է, որ անոնք իրենց մէջ պիտի կազմաւորեն պատասխանատուութեան զգացում ու համարատուութեան գիտակցութիւն»:

Իր խօսքի երկրորդ բաժինին մէջ, Վեհափառ Հայրապետը խօսելով մարդոյժի մասին, շեշտեց անոր առանցքային կարեւորութիւնը որեւէ ընկերութեան կեանքէն ներս: «Կառոյցներ, պետութիւններ, ազգեր, կրօնքներ կամ մշակոյթներ մարդո՛վ կը ծաղկին, մարդո՛վ կը հօգօրանան, եւ մարդո՛վ կը յառաջդիմեն: Կրնա՞ք երեւակայել, որ Աստուած մարդո՛ւն վստահեցաւ իր գործը շարունակելու ու տիեզերքը ծաղկեցնելու պատասխանատուութիւնը: Որքան ալ մենք շրջապատուած ըլլանք նիւթական լայն կարելիութիւններով, մարդն է, որ այդ կարելիութիւնները պիտի հունաւորէ նիշդ կերպով ու իր ընկերութեան որակ ու տեսիլք պիտի տայ: Այսօր մեր ազգը պէտք ունի այնպիսի մարդոց, որոնք ո՛չ միայն մասնագիտութեամբ գինուած ըլլան, այլ նաեւ ծառայական ոգիով եւ ունեւան հաւատք, կամ

ու տեսիլք, մեր կառոյցները, մեր համայնքները, մեր ազգն ու հայրենիքը վերանորոգելու եւ վերակազմակերպելու ներկայ աշխարհի հրամայականներուն ու մարտահրաւերներուն դիմաց: Այս պէտք է ըլլայ կոչումը մեր երիտասարդութեան»:

Իր խօսքի աւարտին, Վեհափառ Հայրապետը ըսաւ. «Եղածը պահելը, մեր ունեցածով գոհանալը, նոյն մարդոցմով շրջապատուած մնալը, նոյն կադապարուած մտածումները լսելը, այլ խօսքով՝ նոյնը կրկնելը երբեք յառաջդիմութեան չի՛ նպաստեր, այլ մեզ կ'առաջնորդէ դէպի մահանջ: Մենք պէտք ունինք վերանորոգ մտածողութեան, վերանորոգ նուիրումի, հաւատքի ու տեսիլքի: Այս կը սպասենք մեր երիտասարդութենէն»:

Վեհափառ Հայրապետին մեկնումէն ետք, ՀԵՀՈՄականներ շարունակեցին իրենց հանդիպումը: Որոշուեցաւ աւանդութեան վերածել նման հանդիպումները Կաթողիկոսարանէն ներս եւ առաւելագոյն չափով մասնակից դառնալ Կաթողիկոսարանի առաքելութեան:



ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա., Ն.Ս. ՇՆՈՒՏԱ Գ.,
Ն.Ս. ԶԱԳԳԱ Ա. ԵՒ Ն.Ս. ՓԱԼԼՈՍ
ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ՄԻՋԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳԱՅԻՐԻԻ ՄԵՋ**

Կիրակի 13 Նոյեմբեր 2011-ի գիշեր, ընդառաջելով Շնուտա Պատրիարքի հրաւերին, Արամ Ա. Կաթողիկոս մեկնեցաւ Գահիրէ ընկերակցութեամբ Տ. Սեպուհ Արք. Սարգիսեանի եւ Տ. Նարեկ Արք. Ալեմէզգեանի: Վեհափառ Հայրապետին Գահիրէ այցելութեան նպատակն էր խորհրդակցութիւն ունենալ Շնուտա եւ Զաքար Պատրիարքներուն հետ, ինչպէս նաեւ ներկայ գտնուել Շնուտա

Պատրիարքի գահակալութեան 40-ամեակի հանդիսութեան:

Երկուշաբթի առաւօտ, Ղպտի եկեղեցոյ պատրիարքարանին մէջ տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում Շնուտա եւ Զագգա Պատրիարքներուն ու Արամ Կաթողիկոսին միջեւ՝ Միջին Արեւելքէն ներս քրիստոնէութիւնը յուզող, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի եկեղեցիներու խորհուրդին առնչուած հար-



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ ԻՐ ՊԱՏԳԱՍԸ ՓՈԽԱՆՑԱԾ ՊԱՅՈՒՆ:
Զախէն.- Ն.Ս. ՓԱԼԼՈՍ ՊԱՏՐԻԱՐԷ, Ն.Ս. ԶԱԳԳԱ Ա. ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ Ն.Ս. ՇՆՈՒՏԱ Գ. ՊԱՏՐԻԱՐԷ

ցերու գծով: Ապա, հանդիպման միացաւ Եթովպիոյ եկեղեցւոյ հոգեւոր պետ Փաւլոս Պատրիարք:

Յիշեալ հանդիպումէն ետք ընդլայնուած հանդիպում տեղի ունեցաւ չորս հոգեւոր պետերուն ընկերակցող եպիսկոպոսներուն մասնակցութեամբ:

Նոյն օրը երեկոյեան, Գահիրէի Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ Շնուտա Պատրիարքի գահակալութեան 40-ամեակի ժողովրդային հանդիսութիւնը, որու ընթացքին յաջորդաբար խօսք առին Զագգա Պատրիարք, Վեհափառ Հայրապետը, Փաւլոս Պատրիարք, Եգիպտոսի նախկին վարչապետը եւ այլ քրիստոնեայ ու իսլամ հոգեւոր թէ՛ աշխարհական պատասխանատուներ: Հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Շնուտա Պատրիարքը: Յաջորդ օրը, Երեքշաբթի, տեղի ունեցաւ Միջին Արեւելքի երեք Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու գործակցութեան յանձնախումբի հանդիպումը, որուն մասնակցեցան Սեպուհ ու Նարեկ Սրբազանները:

Յիշեալ հանդիպման ընթացքին քննարկուեցան առաւելաբար Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի յառաջիկայ համաժողովին հետ աղերս ունեցող նիւթեր:

Գահիրէ իր կարծատեւ այցելութեան ընթացքին Վեհափառ Հայրապետը երկար հարցազրոյց ունեցաւ հեռատեսիլի հետ, որու ընթացքին արծարծուեցան Հայ եկեղեցւոյ, Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու, Միջին Արեւելքէն ներս քրիստոնեաներու դիմագրաւած մարտահրաւէրներուն, հայկական Յեղասպանութեան ու հայ ժողովուրդի իրաւունքներուն առնչուած նիւթեր: Նոյն գիշերը Վեհափառ Հայրապետը վերադարձաւ Անթիլիաս:

Իրենց հանդիպման աւարտին չորս հոգեւոր պետերը հրապարակեցին Միացեալ Յայտարարութիւն, ուր կարեւորութեամբ շեշտեցին շրջանէն ներս Քրիստոնեայ եկեղեցիներու միութիւնը ամրացնելու եւ արեւելեան եկեղեցիներու ընտանիքէն ներս գործունէութիւնը ծաւալելու անհրաժեշտութիւնը:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒՆ

Երկուշաբթի օր, 14 Նոյեմբեր 2011, երկօրեայ այցելութեամբ Լիբանան այցելեց Ռուսիոյ հոգեւոր պետ Քիրիլ Պատրիարք: Վեհափառ Հայրապետին բացակայութեան Ռուսիոյ Պատրիարքին այցելութեան առիթով տեղի ունեցող ձեռնարկներուն իր մասնակցութիւնը բերաւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան: Առաջնորդ Սրբազանը Պատ-

րիարքին փոխանցեց Վեհափառ Հայրապետին բարեմաղթութիւնները:

Երկար տարիներու բարեկամութիւն ու գործակցութիւն գոյութիւն ունի Վեհափառ Հայրապետին ու Քիրիլ Պատրիարքին միջեւ, երբ անոնք տակաւին որպէս վարդապետներ միատեղ իրենց մասնակցութիւնը կը բերէին Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ժողովներուն:

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ ՈՒՂՂԱՓԱՌ ՄԻՋ-ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

Ուղղափառ Երեսփոխաններու Միջ-խորհրդարանական Համախմբումի համագումարը տեղի ունեցաւ Ամման, Յորդանանի մէջ: Երեք տարին մէկ անգամ գումարտուող յիշեալ համագումարին մաս կը կազմեն բոլոր երկիրներու խորհրդարաններու Ուղղափառ եկեղեցիներու պատկանող երեսփոխանները: Յիշեալ համագումարներուն նպատակն է որեւէ այժմէական նիւթ քննարկել, որ աղերս ունենայ յատկապէս Ուղղափառ եկեղեցիներու ու համայնքներու հետ, ինչպէս նաեւ՝ գործակցութիւն յառաջացնել Ուղղափառ համայնքներ ունեցող երկիրներու միջեւ:

Ամմանի մէջ տեղի ունեցած համագումարին գլխաւոր նիւթը Միջին Արեւելքէն ներս քրիստոնեայ եկեղեցիներուն դիմադրաւած մարտահրաւէրներն էին: Այս նիւթին մասին հրաւիրուած էին իրենց պատգամները փոխանցելու Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը եւ Ամենապատիւ Տ. Թէոֆիլոս Գ. Երուսա-

ղէմի Յունաց Պատրիարքը:

Յանուն Վեհափառ Հայրապետին, համագումարին ներկայ գտնուեցաւ Կոմիտաս Արք. Օհանեան: Սրբազանը համագումարի բացման նիստին կարգաց Վեհափառ Հայրապետին պատգամը: Յիշեալ պատգամին մէջ Արամ Ա. Կաթողիկոս խօսելով Միջին Արեւելքի քրիստոնէութեան մասին, կարեւորութեամբ կը շեշտէր գործակցութեան ճամբով քրիստոնէական միութիւնը ամրապնդելու հրամայականը: Ան նաեւ կ'ընդգծէր քրիստոնեայ-իսլամ գոյակցութեան նոր որակ տարու կարիքը, միաժամանակ կոչ ուղղելով, որ քրիստոնեայ համայնքներուն լայն տեղ տրուի շրջանի երկիրներու քաղաքական կեանքէն ներս:

Կոմիտաս Սրբազանը նաեւ այլ առիթներով Հայ եկեղեցւոյ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու նաեւ մեր ազգային պահանջատիրութեան գրծով ակնարկութիւններ կատարեց համագումարի քննարկումներուն ընթացքին:

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵՋ

Շաբաթ 26 Նոյեմբեր 2011-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին տեղի ունեցաւ միջ-եկեղեցական հանդիպում: Սոյն հանդիպման մասնակցեցան Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի Ընդհ. Քարտուղար Դոկտ. Կրկէս Սալեհ, Ասորի Եկեղեցւոյ ներկայացուցիչ Մետրոպոլիտ Ճորճ Սալիպա, իսկ Հայ Եկեղեցիէն՝ Գերշ. Տ.

Նարեկ Արք. Ալեքմէզեան՝ Վարիչ Կաթողիկոսարանի Միջ-Եկեղեցական Բաժանմունքին: Հանդիպման ընթացքին քննարկուեցան յառաջիկայ շաբաթ Կիպրոսի մէջ տեղի ունենալիք Խորհուրդի Համաժողովին օրակարգին նիւթերը: Միջ-եկեղեցական սոյն հանդիպումը առիթ հանդիսացաւ նաեւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու միջեւ գործակցութեան նոր ուղիներ որոնելու:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՎԵՐԸՆՏՐՈՒՑՆԱԿ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՆԱԽԱԳԱՀ

Կիրակի 27 Նոյեմբեր երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս մեկնեցաւ Կիպրոս, նախագահելու Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի համաժողովին: Սոյն համաժողովին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը մասնակցի հինգանդամ պատուիրակութեամբ, որուն մաս կը կազմեն Կիպրոսի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեան, Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան, Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Սարգիսեան, Կաթողիկոսարանի Երիտասարդական Բաժանմունքի Վարիչ, եւ Ազգ. Նարեկ վարժարանի հոգաբարձութեան ատենապետ՝ Տիար Վարդան Թաշճեան:

Կիպրոսի մէջ գումարուող Միջին

Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին համաժողովին առաջին օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս երկրորդ շրջանի համար վերընտրուեցաւ նոյն Խորհուրդի նախագահ՝ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու ընտանիքը ներկայացնող:

Չորս տարին մէկ անգամ գումարուող Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի համաժողովին կը մասնակցի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը պատուիրակութեամբ, որուն մաս կը կազմեն Կիպրոսի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեան, Թեհրանի Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան, Լիբանանի Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, Նարեկ վարժարանի խնամակալութեան Ատենապետ՝ Պրն. Վարդան Թաշճեան եւ Գաւազանակիր՝ Հոգշ. Տ. Մեսրոպ



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Մ.Ա.Ե.Ի ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Վրդ. Սարգիսեան:

Համաժողովին բացումը տեղի ունեցաւ երեքշաբթի առաւօտ, յոյն եկեղեցիներու կողմէ կատարուած Պատարագով: Ապա, Համաժողովի առաջին նիստին, Վեհափառ Հայրապետը խօսք առնելով ներկայացուց անցնող չորս տարիներուն Խորհուրդին դիմագրաւած դժուարութիւններն ու մարտահրաւէրները, յատկապէս ծանրանալով տնտեսական ու վարչակազմակերպչական մարզերուն: Վեհափառ Հայրապետը լայնօրէն անդրադարձաւ Միջին Արեւելքէն ներս տեղի ունեցող քաղաքական վերիվայրումներուն եւ անոնց ժխտական անդրադարձներուն՝ Խորհուրդի կեանքին ու առաքելութեան: Վեհափառը շեշտեց, թէ հակառակ բոլոր դժուարութիւններուն, Խորհուրդը շարունակեց իր առաքելութիւնը եւ առաւել կենսունակութեամբ ան կոչուած է դառնալու Միջին Արեւելքի եկեղեցիներուն ձայնը ու միակամ կեցուածքը:

Ապա, խօսք առին Արեւելեան Ուղղափառ, Կաթողիկ ու Բողոքական եկեղեցիներու ներկայացուցիչները ու ընդգծեցին Խորհուրդի կարեւորութիւնը՝ որպէս շրջանի եկեղեցիները համախմբող կառույց: Նոյն օրը Համաժողովին իր գեկոյցը ներկայացուց Խորհուրդի ընդհանուր Քարտուղար՝ Դոկտ. Կրկէս Սալեհ: Լայնօրէն ներկայացուեցաւ նաեւ Խորհուրդի տնտեսական կացութիւնը, որմէ ետք տեղի ունեցաւ քննարկում:

Երեկոյեան տեղի ունեցաւ նոր Գործադիր Վարչութեան ընտրութիւնը, որուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ անդամ ընտրուեցաւ Կաթողիկոսարանի Միջ-եկեղեցական յանձնախումբի անդամ՝ Դոկտ. Ժան Սալմանեան: Յայտնենք, որ Համաժողովին ընտրական յանձնախումբի անդամ ընտրուեցաւ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան եւ ստուգիչ մարմինի անդամ՝

Պրն. Վարդան Թաշճեան: Համաժողովը կը շարունակէ իր աշխատանքները:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ատենապետութեամբ տեղի ունեցած Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի Համաժողովին վերջին նիստին ընթացքին, լայն քննարկումէ ետք հրապարակուեցաւ կոչ մը՝ ուղղուած քրիստոնեայ համայնքներուն:

Յիշեալ կոչին մէջ ընդհանուր գիծերով ներկայացնելէ ետք Համաժողովին աշխատանքներուն արդիւնքը, Միջին Արեւելքի Եկեղեցիներու բարձրաստիճան ներկայացուցիչները հաւաքական կոչ ուղղեցին Միջին Արեւելքի քրիստոնեաներուն՝ կառչած մնալու իրենց պարտաւորութիւններուն ու իրաւունքներուն: Քրիստոնեաները եկուոր չեն շրջանէն ներս. անոնք կը պատկանին Միջին Արեւելքի պատմութեան ու մշակոյթին. անոնք մասնակից դարձած են շրջանէն ներս պատմական իրադորժումներուն. որպէս համահաւասար քաղաքացիներ, անոնք իրենց պատաւորութիւններուն կողքին պէտք է տէր կանգնին իրենց իրաւունքներուն: Նոյն կոչին մէջ նաեւ կարեւորութեամբ շեշտուեցաւ քրիստոնեայ-իսլամ գոյակցութիւնը, որ հիմնուած է հասարակաց արժէքներու ու պարտաւորութիւններու վրայ: Համաժողովին կոչը նաեւ կը դատապարտէ ամէն տեսակի բռնութիւն ունէ մէկու կողմէ ու կը թերադրէ փոխադարձ հասկացողութեամբ հարցերը լուծելու հրամայականը, շեշտելով արդարութեան, խաղաղութեան ու միասնականութեան կարեւորութիւնը ընկերութեան կեանքին մէջ:

Կիպրոսի Փախոս քաղաքին մէջ գումարուող Միջին Արեւելքի Եկեղեցիներու Համաժողովը լայնօրէն քննարկեց Խորհուրդի վերակառուցման ծրագիրը: Արդարեւ, նկատի ունենալով շրջանէն ներս փոխուած պայմանները, ինչպէս նաեւ

եկեղեցիներու կարիքները, համաժողովը ճշդեց այնպիսի ծրագիրներ եւ աշխատեցածեւեր, որոնք համահունչ են եկեղեցիները շրջապատող ներկայ պայմաններուն ու մարտահրաւէրներուն: Ընդհանուր քննարկումի ենթարկուեցաւ նաեւ Խորհուրդին վերջին չորս տարիներու տնտեսական կացութիւնը:

Համաժողովին ներկայ էին նաեւ Վատիկանի ու Եւրոպական Եկեղեցիներու Խորհուրդին, Միացեալ Նահանգներու Եկեղեցական Խորուրդին, Անկլիքան եկեղեցւոյ, Տիեզերական Պատրիարքութեան ու Կիպրոսի պետութեան ներկայացուցիչները, որոնք համաժողովին փոխանցեցին իրենց ողջոյնները:

Համաժողովը ընտրեց նոր Գործադիր Վարչութիւն, բաղկացած 24 անձերէ: Նորընտիր Գործադիր Վարչութեան առաջին ժողովը տեղի պիտի ունենայ ԱՆԹիլիասի Մայրավանքին մէջ, 28-30 Մարտ 2012-ին:

Տասներորդ տարին ըլլալով, Մերձաւոր Արեւելքի աստուածաբանական ճեմարանի գանազան երկիրներէ ժամանած քսան ուսանողներ, իրենց պատասխանատու Դոկտ. Ճորճ Սապրայի գլխաւորութեամբ, Երկուշաբթի 5 Դեկտեմբեր 2011-ին Մեծի Տանն Կիլիկիոյ Կա-

թողիկոսութեան Մայրավանք այցելեցին եւ լսեցին Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքսանդրեանի «Հայ եկեղեցին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Միջին Արեւելի քրիստոնէական վկայութեան շրջագիծին մէջ» դասախօսութիւնը:

Նարեկ Սրբազան ներկայացուց Հայ եկեղեցւոյ առաքելական ծննդոցը, պատմութեան գլխաւոր հանգրուաններն ու դէմքերը եւ հայ դաւանանքին հիմնական երեսները: Ապա, ան ծանրացաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Սուրբ Աթոռին բազմերես առաքելութեան վրայ, յատկապէս ընդգծելով անոր միջեկեղեցական, միջ-կրօնական եւ միջազգային յարաբերութիւնները՝ Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետին անձնական օրինակին դրոշմով:

Հարց-պատասխանի ընթացքին, ուսանողներ հետաքրքրուեցան Հայ եկեղեցւոյ ժողովրդավար կառոյցով ու ազգապահպանման առաքելութեամբ, հայկական Յեղասպանութեան զծով Կաթողիկոսութեան ունեցած դերակատարութեամբ եւ իսլամ-քրիստոնեայ համակեցութեամբ:

Ուսանողներ այցելեցին Մայր Տաճար, ապրիլեան նահատակներու մատուռ եւ «Կիլիկիա» թանգարան:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻՊՐՈՍԻ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

Ուրբաթ երեկոյեան, նախագահելով Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հիմնադրութեան 30-ամեակի հանդիսութեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս իր պատգամին մէջ կարեւորութեամբ շեշտեց համայնքի կեանքէն ներս եկեղեցւոյ առանցքային դերը ու կեդրոնական տեղը: Ան ըսաւ. «Եկեղեցին մեր ժողովուրդին համար սոսկ կրօնական կառոյց չէ, այլ իր հաւատքի հաւաքական տունն է: Այս տան հայրը Աստուած է եւ մենք՝ զաւակները այս մեծ ընտանիքին: Հետեւաբար, պէտք է հաւաքուիմք մեր եկեղեցւոյ շուրջ: Եկեղեցին կը պայծառանայ մեր մասնակցութեամբ անոր կեանքին ու առաքելութեան: Ու մենք որպէս համայնք, հոգեպէս կը վերանորոգուիմք մեր անհատական թէ հաւաքական կեանքէն ներս եկեղեցւոյ ներկայութեամբ: Այս եկեղեցին դուք շինեցիք, որպէս ձեր հաւատքի տունը: 30-ամեակը յիշեցում է վերանորոգ նուիրումով շարունակելու ձեր մասնակցութիւնը Ս. Աստուածածին եկեղեցւոյ կեանքին»:

Շարունակելով իր խօսքը, Վեհափառ Հայրապետը նաեւ կոչ ուղղեց Կիպրոսի հայուկեան իր ներքին միասնականութիւնը ամրապնդելու: Վեհափառը ըսաւ. «անցնող ամիսներուն ներկայացուցիչի ընտրութեան առիթով ներքին զգայութիւններ ու լարուածութիւններ յառաջացան գաղութէն ներս: Սա թերեւս բնական երեւոյթ է ժողովրդավարական սկզբունքներով կատարուող ընտրութիւններու ընթացքին: Սակայն, այս վատառողջ երեւոյթին շարունակումը համայնքէն ներս անբնական է ու վնասաբեր: Անհրաժեշտ է հեռու մնալ նման

կացութիւններէ ու երեւոյթներէ ու ամրապնդել համայնքի ներքին միութիւնը, որպէս աղբիւր մեր հաւաքական հօգորութեան»:

Իր պատգամի վերջին բաժինին մէջ, Վեհափառ Հայրապետը գնահատեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ նորակազմ երգչախումբը՝ իր կատարած սրբազան համերգին առիթով: Վեհափառը նաեւ իր գնահատանքի խօսքը ուղղեց Կիպրոսի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Վարուժան Արք. Հերկելեանին, ըսելով, թէ Սրբազանը գաղութէն ներս յատկապէս նախաձեռնեց նոր շինութիւններու ու միաժամանակ ծաղկեցողց գաղութի մշակութային կեանքը՝ գանազան ձեռնարկներ կազմակերպելով: Այս առիթով, Վեհափառ Հայրապետը պանակէ նուիրեց Կաթ. Փոխանորդ Սրբազանին:

Ս. Աստուածածին եկեղեցւոյ 30-ամեակին առիթով նախ տեղի ունեցաւ սրբազան համերգ, ապա անոր յաջորդեց երեսնամեակին առիթով Վեհափառ Հայրապետին սրբատառ Կոնդակի ընթերցումը՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գեղամ Արք. Խաչերեանի կողմէ: Ապա խօսք առաւ Կիպրոսի Կաթ. Փոխանորդ՝ Վարուժան Արք. Հերկելեան: Ան յիշեցուց ներկայ ժողովուրդին, թէ անցնող 30 տարիներու ընթացքին Ս. Աստուածածին եկեղեցին իր հաւատքի վկայութեամբ դարձաւ ծառայական ներկայութիւն ժողովուրդի կեանքէն ներս:

Հանդիսութեան ներկայ էին Վեհափառ Հայրապետին կողքին, Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի Ընդ-

հանուր Համաժողովին մասնակցելու համար Կիպրոս գտնուող Թեհրանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Սեպուհ Արք. Սարգիսեան, Լիբանանի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Արք. Խաչերեան, Կաթողիկոսարանի Երիտասարդական Բաժանմունքի Վարիչ՝ Հոգշ. Տ. Մեսրոպ Վրդ, Սարգիսեան: Ներկայ էին նաև Կիպրոսի մէջ համայնքի պետական ներկայացուցիչ՝ Տիար Վարդգէս Մահտեսեան, Ազգ. Իշխանութեան ներկայացուցիչները, համայնքէն ներս գործող կազմակերպութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչներ:

Հանդիսութենէն ետք Ազգ. Իշխանութիւնը ի պատիւ Վեհափառ Հայրապետին ընթրիք սարքեց, որու ընթացքին հաւաքական քննարկումի նիւթ դարձան Թեմին առնչուած կարեւոր հարցեր: Հոս եւս Վեհափառ Հայրապետը յիշեցուց ներքին գործակցութեան ու միասնականութեան անհրաժեշտութիւնը՝ տեսակէտներու ու մտեցումներու փոխադարձ յարգանքով:

Յաջորդ օր առաւօտեան, Անթիլիասի Մայրավանք վերադառնալէ առաջ, Արամ Ա. Կաթողիկոս իր շքախումբով այցելեց Նիկոսիոյ Ազգ. Նարեկ Վարժարանը: Վարժարանի մուտքին Վեհափառ Հայրապետը դիմաւորուեցաւ Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Սրբազանի, Պետական Ներկայացուցիչին, վարժարանի հոգաբարձութեան ու անօրէնին կողմէ: Ապա Վեհափառ Հայրապետը աշակերտներու ծափողջոյններով մուտք գործեց դպրոցի սրահ, ուր աշակերտութեան կողմէ ներկայացուեցաւ զեղարուեստական

կոկիկ յայտագիր: Յաջորդաբար խօսք առին Հոգաբարձութեան ատենապետ՝ Տիար Վարդան Թաշճեան եւ Տնօրէնուհի՝ Տիկ. Վերա Թահմազեան, որոնք ողջունելով Վեհափառ Հայրապետին այցելութիւնը, իրենց շնորհակալութիւնը յայտնեցին հայ դպրոցին նկատմամբ Վեհափառին ու Մեծի Տանն Կիլիկիոյ Ընթրիկոսութեան ցուցաբերած յատուկ հոգածութեան համար:

Իր հայրական խօսքին մէջ, Վեհափառ Հայրապետը աշակերտներուն յիշեցուց թէ որքան ինք ուրախ է հայ մանուկները ու պատանիները տեսնելով հայ դպրոցէն ներս: Ան ըսաւ՝ «հայ դպրոցը բոլոր հայ մանուկներուն ու պատանիներուն տունն է: Այս տունը մեզի համար հիմնեց Ս. Մեսրոպ Մաշտոց. այս տունը մեզի համար նուիրակն է, որովհետեւ հոս մենք մեր լեզուն ու պատմութիւնը կը սորվինք, մշմարտութեն հայ կը դառնանք»: Վեհափառ Հայրապետը ըսաւ աշակերտներուն, թէ իրենք ուրախ պէտք է զգան թէ այսպէս լաւագոյն պայմաններու մէջ կը դաստիարակուին: Այս առիթով Վեհափառը իր գնահատանքը յայտնեց Կիպրոսի պետութեան, որ իր նիւթարարական աջակցութեամբ մեծապէս սատար կը հանդիսանայ Նիկոսիոյ, Լառնազայի ու Լիմասոյի մէջ Ազգ. Նարեկ վարժարաններու առաքելութեան: Վեհափառը իր գնահատանքը փոխանցեց Սրբազանին, Պետական ներկայացուցիչին, հոգաբարձութեան, անօրէնութեան եւ ուսուցչական կազմին, որոնք կը շարունակեն սատար հանդիսանալ դպրոցի յառաջդիմութեան ու ծաղկումին:

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆՆԵՆ

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՀԱՅՐ ԳՐԻԳՈՐԸ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴ
ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄԻՆ ԵՒ
ՀԱՅՐ ՊԱՐԹԵԻԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՈՒՉ
ՎԵՆԵՉՈՒԵԼԼԱՅԻ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս
Հայրապետական գիրով Գերապատիւ Տ.
Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեանը նշանակեց
Ատրպատականի Հայոց Թեմի Կաթողի-
կոսական Փոխանորդ, իսկ Հոգեշնորհ Տ.
Պարթեւ Վրդ. Կիլիմեանը Վեներուել-
յայի Հայոց Հոգեւոր Տեսուչ:



Հայր Գրիգորը ծնած է Պէյրութ,
1969-ին, արեղայ ձեռնադրուած է
1990-ին, եւ իր հոգեւոր ծառայութեան
անցնող տարիներուն եղած է Վեհափառ
Հայրապետի Գաւազանակիր, Դպրե-
վանքի ուսուցիչ ու Տեսուչ, ՀԱՍԿ-ի
խմբագիր, Արեւմտեան Թեմէն ներս
Քրիստոնէական Դաստիարակութեան
պատասխանատու, ՀԵՀՈՄ-ի Հոգեւոր
խորհրդատու եւ Կաթողիկոսական Տեղե-
կատուութեան Բաժանմունքի վարիչ ու

Թռչնոց Բոյնի Հոգեւոր Տեսուչ: Հայր
Սուրբը նաեւ ունի առաւելաբար բարո-
յագիտական բնոյթ ունեցող հատորներ
ու յօդուածներ:

Հայր Պարթեւը ծնած է 1976-ին Հա-
լէպ, արեղայ ձեռնադրուած է 1995-ին:
Եղած է Դպրեվանքի հսկիչ ու ապա
տեսուչ, Ծնորհայի Երգչախումբի խմբա-
վար, դպրապետ Սայր Տաճարի, Արեւ-
մրտեան Թեմէն ներս՝ Քրիստոնէական
Դաստիարակութեան պատասխանատու:
Հրատարակած է ծիսական հատորներ
ու յօդուածներ:



Հայր Գրիգոր եւ Հայր Պարթեւ
իրենց նոր պատասխանատուութիւնը
պիտի ստանձնեն 3 Յունուար 2012-ին:

**ԳԵՍՊԱՆ ՔՈՉԱՐԵԱՆ ԱՅՑԵԼԵՑ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ**

Հինգշաբթի 3 Նոյեմբեր 2011-ին,
Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան
Աշոտ Քոչարեան, այցելութիւն տուաւ



Անթիլիասի Մայրավանք եւ հանդիպում ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հետ:

Վեհափառ Հայրապետը Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմէն նոր վերադարձած ըլլալով, դեսպան Քոչարեան բարի վերադարձ մաղթեց Նորին Սրբութեան, միաժամանակ լայն տեղեկութիւններ ստանալով Վեհափառ Հայրապետէն, Արեւմտեան ասիոյ վրայ ապրող մեծաթիւ հայ գաղութի կեանքին ու անոր դիմագրաւած դժուարութիւններուն մասին:

Հանդիպման առանցքը կազմեց Հայաստան-Սփիւռք յարաբերութեանց ներկայ հանգրուանը եւ զայն զարգացնելու կարելիութիւնները:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄՕՏ

Ուրբաթ 4 Նոյեմբեր 2011-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Անթիլիասի Մայրավանքին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Յունաստանի դեսպան՝ Փանոս Բալթիսը:

Նախապէս բազմաթիւ առիթներով դեսպանը Անթիլիաս այցելած ըլլալով, մտերմիկ շեշտ ստացաւ հանդիպումը եւ առիթ հանդիսացաւ անդրադառնալու հայ ու յոյն ժողովուրդներու անցեալի պատմութեան դարաւոր փոխ-յարաբերութեանց, ինչպէս նաեւ հայ եւ յոյն Ուղղափառ Եկեղեցիներու աստուածաբանական երկխօսութեան:

Հանդիպման ընթացքին խօսակցութիւնները կեդրոնացան յատկապէս Լիբանանի այժմու կացութեան, Միջին Արեւելքէն ներս քրիստոնէութեան ներկայութեան, Յունաստանի հայ համայնքի կեանքին, միջազգային տնտեսական տագնապին, Եւրոպական Միութեան ներքին հարցերուն, ինչպէս նաեւ անոր անմիջական ազդեցութիւնը կրող Յունաստանի տնտեսական ճգնաժամի վերիվայրումներուն:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԶՈՒՅՑԵՐԻԱՅԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՆԵՐ

Ձուկցերիացի աստուածաբաններ եւ հոգեւորականներ, Ծաբաթ 5 Նոյեմբեր 2011-ին այցելելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքը, հանդիպում ունեցան Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին հետ:

Պատուիրակութեան նպատակն է, իսլամ-քրիստոնեայ երկխօսութեան ծիրէն ներս յանձնախումբ յառաջացնել, որու գործնական տարբեր երեսներու մասին ուզեցին ունենալ Վեհափառ Հայրապետին տեսակէտը:

Նորին Սուրբ Օծութիւնը, աշխատանքի այս բնագաւառէն ներս իր ունեցած փորձառութիւնը վկայակոչելով, պատուիրակութեան անդամներուն թելադրեց շեշտը դնել երկխօսութեան վրայ միայն, հեռու մնալով աստուածաբանական բնոյթի հարցերուն միջամուխ ըլլալէ:

Արամ Ա. Կաթողիկոս իր տեսակէտները ամփոփեց նաեւ հետեւեալ երկու մտածումներուն շուրջ. ա) Յատակացնել իսլամական ու քրիստոնէական տարբեր շրջագիծերուն՝ Եւրոպայի ու Միջին Արեւելքի ունեցած տարբեր փորձառութիւնները՝ անոնց նմանութիւններն ու տարբերութիւնները: բ) Զօրակցիլ քրիստոնեայ-իսլամ համակեցութեան Միջին

Արեւելքէն ներս, յատկապէս շրջանի պատմութեան այս դժուար հանգրուանին:

Աշխատանքային այս գործընթացը պիտի շարունակուի, յառաջիկային նոր հանդիպումներու կազմակերպումով, որոնք տեղի պիտի ունենան թէ՛ Եւրոպայի եւ թէ՛ Միջին Արեւելքի տարբեր շրջաններէն ներս: Այս գծով, այցելու պատուիրակութիւնը խնդրեց Վեհափառ Հայրապետին աջակցութիւնը:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԳՈՒՆԵՑ
ՋԱԳԳԱ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻՉԸ**

Շաբաթ 5 Նոյեմբեր 2011-ին, Պէյրութի եւ լեռնալիբանանի Ասորիներու առաջնորդ Մեթրոպոլիտ Ճորճ Սալիպա, նոր վերադարձած ըլլալով Դամասկոսէն, այցելեց Անթիլիասի Մայրավանքը, ու Նորին Սրբութիւն Զազգա Ա. Իուսա Պատրիարքէն յատուկ պատգամ փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին:

Խօսակցութեան առանցքը դարձաւ ամսոյս վերջաւորութեան Կիպրոսի մէջ տեղի ունենալիք Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի համաժողովը, որուն գործնական տարբեր աշխատանքներուն մասին տեղի ունեցաւ կարծիքներու փոխանակում:

**Հ.Մ.Ը.Մ-Ի ԿԵԳՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՅՑԵԼԵՑ
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Շաբաթ 5 Նոյեմբեր 2011-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական նորընտիր Վարչութիւնը, գլխաւորութեամբ ատենապետ Գառնիկ Մկրտիչեանի:

Արամ Ա. Կաթողիկոս շնորհաւորեց նորընտիր վարչութիւնը, թելադրելով միշտ շարունակել մարմնակրթական սոյն կազմակերպութեան առաքելութիւնը:

Նորին Սուրբ Օծութիւնը խօսելով Հ.Մ.Ը.Մ-ի մասին, գայն նկատեց մեծ դպրոց՝ լծուած նոր սերունդներու բարոյական ու ազգային դաստիարակութեան: Ան բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի կատարած աշխատանքը, Հայաստանէն մինչեւ Արցախ եւ Սփիւռքի բոլոր գաղութներէն ներս:

Վեհափառ Հայրապետը նաեւ յիշեցուց, որ մեր կեանքէն ներս գործող բոլոր կառոյցները պէտք է ծրագրեն ու գործեն համահայկական հայեցակէտով, ժողովուրդին ծառայութիւնը ունենալով իրենց կեանքին ու գործին կիզակէտը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԳՈՒՆԵՑ ԳԱՐԱԿԷՕՉԵԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՏՆՕՐԷՆՆԵՐԸ**

Վեհաբանի իր գրասենեակին մէջ Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Գարակէօզեան հաստատութեան հին եւ նոր տնօրէններու՝ Վեր. Ռոպեր Սարգիսեանի եւ Տիար Սերոբ Օհանեանի: Վեր. Սարգիսեան պաշտօնապէս ներկայացուց Վեհափառ Հայրապետին Գարակէօզեանի նոր նշանակեալ տնօրէնը, որ արդէն իսկ սկսած է իր աշխատանքին: Պրն. Օհանեան Վեհափառ Հայրապետին լայն կերպով բացատրեց Գարակէօզեանի գործունէութիւնը՝ ընկերային, առողջապահական, կրթական եւ այլ մարզերէ ներս: Վեհափառ Հայրապետը գոհունակութեամբ իմացաւ, որ շուրջ վաթսուն պաշտօնեաներ հաշուող Գարակէօզեան հաստատութիւնը նուիրումով լծուած է մեր ժողովուրդի ծառայութեան: Նաեւ Վեհա-



փառ Հայրապետը իր գնահատանքը յայտնեց, որ հակառակ տնտեսական միջազգային տագնապին, Գարակեօզեան հաստատութեան տարեկան պիւնճէն կը մնայ նոյնը: Գնահատելով Գարակեօզեանի կողմէ կատարուած աշխատանքներուն առընթեր, Վեհափառ Հայրապետը կրկին անգամ գնահատեց Վեր. Սարգիսեանը Գարակեօզեան հաստատութեան ճամբով աւելի քան քառասուն տարիներու իր ծառայութեան համար: Միաժամանակ թելադրեց նոր տնօրէնին որ իր առաւելագոյնը կատարէ օգտակար հանդիսանալու մեր դպրոցներու աշակերտութեան, ինչպէս նաեւ կարիքաւոր ընտանիքներուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ
ՆԱԽԱԶԵՆՆԷ «ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ»Ի
ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԻՆ**

Երեքշաբթի 8 Նոյեմբեր 2011-ի երեկոյեան, Անթիլիասի Մայրավանքին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի հրաւերով ու նախագահութեամբ տեղի ունեցաւ «Արեւմտահայերէնի Պաշտպանութեան Խորհուրդ»ի կազմութեան գործընթացքը ճշդող խորհրդակցութիւն:

Յիշեալ հանդիպումին իրենց մասնակցութիւնը բերին հայ երեք յարանուանութեանց, ինչպէս նաեւ Համազգայինի, Թէքէյեան Մշակութային Միութեան եւ Նոր Սերունդ Մշակութային Միութեան ներկայացուցիչները:

Վեհափառ Հայրապետը յետադարձ ակնարկով պարզեց Օգոստոսին Պիքֆայայի Մայրավանքին մէջ տեղի ունեցած Արեւմտահայերէնին նուիրուած համագումարին ընդհանուր արդիւնքները, յատկապէս շեշտելով Արեւմտահայերէնին դիմագրաւած լուրջ դժուարութիւնները: Ան ըսաւ, թէ փաստօրէն Արեւմտահայերէնը լուրջ տագնապ կը դիմագրաւէ, որուն դիմաց չենք կրնար անտարբեր մնալ: Սակայն չի բաւեր, ըսաւ ան, տագնապը նկարագրել. անհրաժեշտ է գործնական քայլերու դիմել եւ ճիշդ այս պատասխանատուութենէն մեկնելով, անհրաժեշտ է, ինչպէս համագումարը շեշտեց, Արեւմտահայերէնի պաշտպանութեան ազդու միջոցներու մասին մտածել՝ յատուկ գործընթացներու ճամբով, ըսաւ Վեհափառ Հայրապետը: Ան նաեւ շեշտեց, որ նման աշխատանք պէտք է համահայկական ու համասփիւղքեան տարողութեամբ կատարուի եւ ճիշդ ատոր համար, ըսաւ ան, համագումարէն ետք մենք յատուկ հրաւերներ ուղղեցինք մեր յարանուանութիւններու պետերուն, ինչպէս նաեւ կրթական ու մշակութային առաքելութեան լծուած մեր կառոյցներուն, որպէսզի կարենանք մեր ճիգերը համախմբելով մեր ոսկեղնիկ լեզուն պաշտպանել աղաւաղումէ ու նահանջէ:

Վեհափառ Հայրապետին խօսքէն ետք, բոլոր ներկաներու մասնակցութեամբ տեղի ունեցաւ լայն խորհրդակցութիւն՝ յատկապէս կազմուելիք Մարմինին կատարելիք աշխատանքներուն շուրջ:

Խորհրդակցական այս հանդիպու-

մին պիտի յաջորդէ Արեւմտահայերէնի Պաշտպանութեան Խորհուրդի կորիզի կազմութիւնը, որուն առաջնահերթ նըպատակը պիտի ըլլայ յիշեալ Խորհուրդի աշխատանքին ուղեցոյցի պատրաստութիւնը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿՈՉ
Կ՛ՈՒՂՂԷ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՈԳԻՈՎ, ԻՄԱՍՏՈՒՆ
ՈՒ ՀԱՆԳԱՐՏ ՄՕՏԵՑՈՒՄՈՎ
ԳԻՄԱԳՐԱԻՆՆԵՐԸ
ԳԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Նոյեմբեր ամսուն, Անթիլիասի Մայրավանքին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի նախագահութեամբ հանդիպում տեղի ունեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական Կարչութեան ու Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Սրբազանին ու Զաղապական ժողովին միջեւ:

Առաջնորդ Սրբազանը եւ Զաղապական ժողովի անդամները լայնօրէն զեկուցեցին Սուրիոյ ներքին կացութեան մասին, յատկապէս ծանրանալով հայ համայնքին վրայ: Զեկույցներու ընթացքին անդրադարձ եղաւ Ազգ. Առաջնորդարանի եւ հայ համայնքէն ներս գործող կազմակերպութիւններուն ցարդ կատարած աշխատանքներուն:

Հանդիպման աւարտին, Վեհափառ Հայրապետը նախ իր գոհունակութիւնը յայտնեց սուրիական հայրենիքէն ներս յառաջացած դժուարութիւններուն դիմաց եւ մեր ազգային-եկեղեցական կեանքը միակամ ու արթուն պահելու ուղղութեամբ կատարուած աշխատանքներուն համար: Ան նաեւ յիշեցուց, թէ ջարդերէն ետք Սուրիան մեզ ընդունող առաջին երկիրը եղաւ եւ սուրիացի ժողովուրդը իր հացը ու հայրենիքը մեզի հետ բաժնեց, եւ մենք միշտ հաւատարիմ ու երախտապարտ գտնուեցանք այդ

հայրենիքին: Նոյն նուիրումով ու բարեկամական ամուր կապերով մենք պէտք է կառչինք Սուրիոյ, մեր պարտաւորութիւններուն ու իրաւունքներուն: Վեհափառ Հայրապետը նաեւ կարեւորութեամբ շեշտեց մեր ժողովուրդի ազգային ներքին միասնականութեան ամրապնդումը. ան ըսաւ, թէ մեր ժողովուրդի բոլոր զաւակները պէտք է համախմբուին Ազգ. Առաջնորդարանին ու մեր կառոյցներուն շուրջ, իրենց մօտեցումներուն ու քայլերուն մէջ միշտ ըլլան արթուն, հեռատես ու խոհեմ, հեռու մնալով զգացական ու պարագայական մօտեցումներէ կամ յայտարարութիւններէ: Վեհափառ Հայրապետը նաեւ յիշեցուց մեր ժողովուրդի կարիքաւոր ընտանիքներուն աջակցելու անհրաժեշտութիւնը այս դժուար օրերուն:

Այս առիթով նաեւ Վեհափառ Հայրապետը եւ Ազգ. Կեդր. Կարչութիւնը ուրախութեամբ ողջունեցին Գամիշլիի մէջ շինարարութեան ընթացքին մէջ եղող եկեղեցին իր յարակից բաժիններով. միաժամանակ անոնք իրենց ուրախութիւնը յայտնեցին շուրջ մէկ ամիս առաջ Դամասկոսի մէջ բացուող կատարուած Ազգ. Կարժարանի նոր շէնքին ու համայնքային կեդրոնին գծով:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԳՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԱՅԻ
ԵՐԵՍՓՈՒԽԱՆ ՔՐԻՍԹԻԱՆ ՎԱՆԷՍԸ**

Կիրակի 20 Նոյեմբեր 2011-ին, Սուրբ եւ անմահ Պատարագէն ետք, Վեհարանի իր գրասենեակին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելութիւնը Ֆրանսայի խորհրդարանի անդամ Զրիստիան Վանէսը, որուն կ'ընկերանար Տիար Սէմ Ռագուպեան: Երեսփոխանը մօտէն ծանօթ է Ֆրանսայի հայութեան, հայկական Յեղասպանութեան ու այդ ուղղութեամբ կատարուող աշխատանքներուն եւ միշտ եղած է



պաշտպան հայ ժողովուրդի արդար դատին:

Շուրջ մէկ ժամ տեւող հանդիպման ընթացքին, առաջին հերթին, ընդառաջելով երեսփոխանի փափաքին, Վեհափառ Հայրապետը ներկայացուց իր պատկերացումը Միջին Արեւելքէն ներս քրիստոնէայ համայնքներու ներկայ կացութեան՝ շրջանէն ներս շարունակուող քաղաքական վերիվայրումներու լուսին տակ: Ապա խօսակցութիւնը կեդրոնացաւ հայկական Յեղասպանութեան ճանաչման աշխատանքներուն եւ այս ուղղութեամբ Ֆրանսայի դերակատարութեան: Այս ծիրէն ներս, Վեհափառ Հայրապետը գնահատեց Ֆրանսայի նախագահ Սարքոզիի յստակ կեցուածքը Յեղասպանութեան ճանաչման գծով, միաժամանակ յայտնելով, որ Յեղասպանութեան 100-ամեակի սեմին անհրաժեշտ է, որ մեր բոլորին աշխատանքներուն կիզակէտը դառնայ ճանաչումէն անդին հատուցման հարցը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԳՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱՐԱՐԸ**

Լիբանան կատարած պաշտօնական այցելութեան ծիրին մէջ, կրթութեան եւ գիտութեան նախարար՝ Արմէն Աշոտ-

եանի գլխաւորած պատուիրակութիւնը Ուրբաթ 25 Նոյեմբեր 2011-ին այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարան: Ողջունելով հայկական պատուիրակութեան այցելութիւնը Լիբանան, Արամ Ա. Կաթողիկոս յաջողութիւն մաղթած է եւ ներկայացուցած հայկական գաղթօճախի կրթական հաստատութիւններուն հիմնախնդիրներն ու իրականացուող ծրագիրները:

Վեհափառ Հայրապետին ներկայացնելով իր այցելութեան նպատակը, նախարար Արմէն Աշոտեան տեղեկացուցած է Հայաստանի կրթութեան ոլորտին մէջ իրականացուող բարեփոխումներու ընթացքին, Սփիւռքի կրթօճախներու զարգացման հետ կապուած Հայաստանի կառավարութեան կողմէ իրականացուող ծրագիրներուն մասին, միեւնոյն ժամանակ պատրաստակամութիւն յայտնելով աջակցելու հայկական կրթօճախներու հիմնախնդիրներուն լուծման ու զարգացման ծրագիրներուն: Հանդիպման ընթացքին քննարկուած են նաեւ սփիւռքահայ ուսուցիչներու վերապատրաստման, նոր ուսումնական գրականութեան ստեղծման, նորագոյն տեղեկատուական ճարտարագիտութիւններու ներդրման, համացանցի վրայ հայերէնի միջոցներու ընդլայնման, հայկական դպրոցներուն մէջ կրթութեան որակի բարձրացման հետ կապուած հարցեր:

Նախարարը մէկ օր առաջ Անթիլիասի մէջ այցելած էր Հայ Գիրքի ցուցահանդէս, որ հայ գրատպութեան 500 ամեակին նուիրուած է: Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարը ծանօթացած է տարբեր տարիներուն Լիբանանի եւ Սփիւռքի այլ գաղթօճախներու մէջ հրատարակուած հայկական գրատպութեան նմուշներուն:

Նախարար Արմէն Աշոտեանի ղեկավարած պատուիրակութիւնը այցելած է նաեւ Հայոց մեծ Եղեռնի զոհերու յուշարձան-մատուռը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԴՈՒՆԵՑ ՊԱՊԱԿԱՆ
ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ**

Երկուշաբթի 5 Դեկտեմբեր 2011-ի երեկոյեան, իր գրասենեակին մէջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելութիւնը Պապական Մարդասիրական Կազմակերպութեան նորընտիր նախագահ Ճոն Գոզար Եպիսկոպոսին, որուն կ'ընկերանար իր գործակիցը եւ Լիբանանի, Սուրիոյ, Եգիպտոսի ու Յորդանանի յիշեալ Կազմակերպութեան գործունէութեան Ընդհանուր Տնօրէնը: Նիւ Եորքի մէջ իր կեդրոնատեղին ունեցող, սակայն Վատիկանի առնչուած յիշեալ մարդասիրական կազմակերպութիւնը լայն գործունէութիւն ունի աշխարհի զանազան կողմերը, ներառեալ Միջին Արեւելքը: Վերափառ Հայրապետին հետ Գոզար Եպիսկոպոսի խօսակցութեան գլխաւոր առանցքը դարձաւ Միջին Արեւելքի եկեղեցիներուն դիմագրասած ներկայ մարտահրաւերները ու անոնց աջակցելու անհրաժեշտութիւնը: Ընդհանուր ակնարկ նետելով ներկայ կացութեան ու մասնաւորաբար եկեղեցիներու կարիքներուն, Վերափառ Հայրապետը շեշտեց դաստիարակութեան եւ ընկերային ծառայութեան բնագաւառներու առաջնահերթութիւնը եւ կոչ ուղղեց յիշեալ կազմակերպութեան իրենց մարդասիրական աշխատանքները կեդրոնացնել այս մարզերուն վրայ:

Հանդիպման աւարտին Գոզար Եպիսկոպոս Վերափառ Հայրապետը հրաւիրեց օրհնելու կազմակերպութեան նոր կեդրոնատեղին Նիւ Եորքի մէջ:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ, ՏԱՐԵՑՆԵՐՈՒՆ
ԵՒ ՀԻՒԱՆԳՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Երկուշաբթի 26 Դեկտեմբեր 2011-ին, Նոր Տարուան ու Ս. Ծննդեան տօներուն

առիթով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, ընկերակցութեամբ հաստատութեան Հոգեւոր Տեսուչ՝ Գերայ. Տ. Գրիգոր Ծ. Կրդ. Չիֆթեանին, այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութիւնը վայելող «Թռչնոց Բոյն», նախքան աշակերտութեան արձակուրդի մեկնումը, անոնց հետ տօնելու Նոր Տարին ու համայն աշխարհի Փրկիչին Սուրբ Ծննդեան Տօնը:

Նորին Սրբութիւնը հաստատութեան մուտքին դիմաւորուեցաւ խնամակալութեան, տնօրէնութեան, Գայիանեան Հոգեւոր Զոյրերուն, պաշտօնէութեան ու աշակերտութեան կողմէ: Ապա, պատասխանատուներուն հետ հանդիպում ունեցաւ, մօտէն հետաքրքրուելով դպրոցի կրթական, մարդասիրական ու կենցաղային պայմաններով: Նորին Սրբութիւնը նաեւ այցելեց կառուցման ընթացքի մէջ գտնուող «Յեղասպանութիւն եւ Վերապրում» թանգարանը, որ Դանիացի մեծանուն որբախնամ ու հայասեր Մարիա Ճագոպսընին պատկանած հնադարեան բնակարանին ներքնայարկը կը գտնուի:

Խնամակալութեան ու տնօրէնութեան իր հայրական թելադրութիւնները կատարելէ ետք, Վերափառ Հայրապետը մուտք գործեց սեղանատուն, ուր մանուկները ակնդէտ կը սպասէին, սկսելու համար խրախճանքը: Թատերական ներկայացումով, երգերով, պարերով ու արտասանութեամբ հանդէս եկան մանկամտրի, մանկապարտէզի, նախակրթարանի ու միջնակարգի աշակերտ-



ները, իրենց աստուածատուր տաղանդը ցուցաբերելով: Նոյն առիթով, Կիրակնօրեայ Դպրոցի «Ծիածան» խումբը ելույթ ունեցավ իր ծաղրածուին ընկերակցությամբ, զուարճացնելով մեծ թէ փոքր մանուկները:

Նոյն օրը երեկոյեան, «Թռչնոց Բոյն»ի մէջ տեղի ունեցավ ամանորի հաւաքը, ներկայութեամբ բարերարներու եւ Տիկնանց Յանձնախումբին: Խանդավառ մթնոլորտը առաւել ճոխացուցին յատուկ այդ առիթին համար ժամանած «Տոլանտ Տաք»ը, «Միքի Մաուս»ը, եւ անոնց ընկերակիցները: Պարի խանդավառութեան մէջ մուտք գործեց նաեւ Կաղանդ Պապան, դարձեալ նուէրներ բաշխելով ամէնուն:

Դարձեալ, Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան տօներու մթնոլորտին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս որբերուն, ծերերուն, հիւանդներուն, բանտարկեալներուն ու աշակերտներուն հետ եղաւ: «Ժողովուրդին հետ ըլլալը, ժողովուրդի բոլոր խաւերուն մօտեմալը, անոնց մտահոգութիւնները, կարիքները, սպասումները իմանալը եւ այս բոլորէն անդին՝ ծառայութեան ճամբով եկեղեցին ժողովուրդին տանիլը հարագատ էութիւնը ու կոչումը կը կազմեն եկեղեցւոյ», ըսաւ Վեհափառ Հայրապետը Ազունիէի հիւանդանոց իր այցելութեան ընթացքին:

Արդարեւ, Վեհափառ Հայրապետը ոչ միայն տօներուն առիթով նուէրներ բաժնեց բոլորին այլ նաեւ այցելութիւններու, հանդիպումներու եւ իր հայրական խօսքին ճամբով մխիթարեց բոլորը, մեր եկեղեցւոյ հոգածութիւնը արտայայտեց ու մանաւանդ վստահեցուց բոլորին, թէ հայ եկեղեցին իր ժողովուրդին հետն է ու առաւելագոյն չափով կը փորձէ օգտակար ըլլալ անոր կարիքներուն:

Համալսարանական ուսանողներուն հետ իր ունեցած հայրական գրոյցին ընթացքին, Վեհափառը շեշտեց մեր համայնքին ու եկեղեցւոյ կեանքին

անոնց մասնակցութեան հրամայականը՝ եզրակացնելով որ «երիտասարդութիւնը սիրտը կը կազմէ մեր հաւաքական կեանքին»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՅՅԵԼԵՑ Մ.Ա.Ե. ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՆՈՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

Հինգշաբթի 22 Դեկտեմբեր 2011-ի առաւօտուն, իր գրասենեակին մէջ Վեհափառ Հայրապետը ընդունեց այցելութիւնը Դոկտ. Փոլ Ռուհանային, որ վերջերս ընտրուեցաւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի նոր ընդհանուր քարտուղար: Դոկտ. Ռուհանային կ'ընկերանար Խորհուրդի Ընկերային Ծառայութեան բաժնմունքի տնօրէնուհի Տիկ. Սեդա Խտրջեանը:

Ընդհ. քարտուղարը Վեհափառ Հայրապետը տեղեակ պահեց վերջին ամսըւան ընթացքին իր եւ Խորհուրդի գանազան բաժնմունքներուն կողմէ կատարուած աշխատանքներուն եւ որոշ մտահոգութիւններու մասին՝ իմանալու համար Վեհափառ Հայրապետին տեսակէտը: Վեհափառ Հայրապետը որպէս նախագահ Մ.Ա.Ե.Խ.ին, շեշտեց եկեղեցի-Խորհուրդ գործակցութեան առաջնահերթութիւն տալու կարեւորութիւնը եւ այդ ծիրէն ներս՝ միջ-եկեղեցական միասնականութիւնը աւելի խորացնող ծրագիրներու մշակումը: Վեհափառ Հայրապետը նաեւ թելադրեց ընդհ. քարտուղարին այցելութիւններ տալու շրջանի եկեղեցիներու պետներուն՝ իմանալու համար եկեղեցիներու դիմագրուած մտահոգութիւնները ու մարտահրավերները:

Աշխատանքային այս հանդիպումը նաեւ առիթ եղաւ, որ Վեհափառ Հայրապետը նաեւ պարզէ իր տեսակէտները Խորհուրդի վարչակազմակերպչական մարզին առնչուած որոշ խնդիրներուն գծով:

Նոր ընտրուած Գործադիր Վարչութիւնը առաջին լիակատար հանդիպումը պիտի ունենայ Անթիլիասի Մայրավանքին մէջ Մարտ ամսուան աւարտին:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԳՈՒՆԵՑ ՄԻԱՑԵԱԼ
ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԳԵՍՊԱՆԸ**

Երեքշաբթի 6 Դեկտեմբեր 2011-ի երեկոյեան, աւելի քան մէկ ժամ տևող հանդիպում տեղի ունեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի եւ Լիբանանի մօտ Միացեալ Նահանգներու դեսպան՝ Մորա Գոնելլիի միջեւ:



Հանդիպման ընթացքին քննարկուեցան Լիբանանի այժմու կացութեան, ընդհանրապէս Միջին Արեւելքին ու յատկապէս Սուրիոյ դէպքերուն, ինչպէս նաեւ հայկական Յեղասպանութեան գծով Միացեալ Նահանգներու մօտեցման առնչուած հարցեր:

**«ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՅԹ
ՀԻՄՆԱՐԿ»Ի ՏՆՕՐԷՆԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

Ուրբաթ առաւօտ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելութիւնը Խաղաղութեան Մշակոյթ Հիմնարկի Տնօրէն Տոքթ. Մանուէլ Մանոնէլը, ընկերակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միջ-եկեղեցական յանձնախումբի փոխ-ատենապետուհի Տիկին Թեմի Սիմոնեանի: Վերոյիշեալ

կազմակերպութեան Տնօրէնը Անթիլիաս եկած էր Վեհափառ Հայրապետին հետ խորհրդակցաբար կազմակերպելու միջազգային համագումար Անթիլիասի Մայրավանքին մէջ:

Խաղաղութեան Մշակոյթ Հիմնարկը ստեղծուած է շուրջ տասը տարիներ առաջ ԵՈՒՆԵՍԵՔՕ-ի նախկին Տնօրէն Տոքթ. Ֆետերիքօ Մայրոյի կողմէ եւ կեդրոնը կը գտնուի Սպանիոյ Պարսելոնա քաղաքին մէջ: Որպէս ոչ-կառավարական կազմակերպութիւն, Հիմնարկը կը մասնակցի Միացեալ Ազգերու Կազմակերպութեան ժողովներուն: 2009 թուականին Պարսելոնայի մէջ Հիմնարկը միջազգային հանդիպում կազմակերպած էր, մասնակցութեամբ երեք միաստուածեան կրօնքներու բարձրաստիճան ներկայացուցիչներուն: Յիշեալ հանդիպման նաեւ իր մասնակցութիւնը բերած է Վեհափառ Հայրապետը եւ նպաստած անոր յայտարարութեան խմբագրումին:

Վեհափառ Հայրապետին հետ Տոքթ. Մանուէլի եւ Տիկին Սիմոնեանի երկրորդ հանդիպումը տեղի ունեցաւ Ծաբաթ առաւօտ, որուն իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդի նորընտիր Ընդհանուր Զարտուղար Տոքթ. Փոլ Րուհանա եւ Զրիստոնեայ-իսլամ Տիալոյի Յանձնախումբի Ընդհանուր Զարտուղար Տոքթ. Մոհամմատ Սամմաբ: Հանդիպման ընթացքին քննարկուեցան Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի ունեցալիք համագումարին օրակարգի հարցերը ինչպէս նաեւ ճշդուեցաւ մասնակիցներուն ցանկը:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԳՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԳԵՍՊԱՆԸ**

Երկուշաբթի 19 Դեկտեմբեր 2011-ի առաւօտ, Վեհափառ Հայրապետին այցելեց Լիբանանի մէջ Իրանի դեսպան՝ Ղատանֆար Ռուքն Ապատի, ընկերակ-

ցույցերում դեսպանատան քաղաքական ու մշակութային կցորդներում:

Այցելութեան հիմնական նպատակը Վեհափառ Հայրապետին փոխանցել էր Իրանի Իսլամական Հանրապետության պատասխանատուներուն շնորհալորությունը Նոր Տարուան ու Ս. Ծննդեան առիթով: Այցելությունը նաև առիթ եղաւ քննարկումի ենթարկելու ընդհանրապէս Միջին Արեւելքէն ներս տեղի ունեցող իրադարձութիւնները ու յատկապէս Լիբանանի այժմու կացութիւնը:

«ԲԱՐԵՐԱՐՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԸ ԿԸ ՀԶՕՐԱՆԱՅ ՈՒ ԱԶԳՈՎ ԲԱՐԵՐԱՐԸ ԿԸ ՄԵԾՆԱՅ»
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կիրակի 18 Դեկտեմբեր 2011-ին, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ Սուրբ եւ անմահ Պատարագի ընթացքին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի նախագահութեամբ տեղի ունեցաւ հանդիսաւոր հոգեհանգիստ ազգային բարերարներ Մելանքթոն եւ Հայկ Արսլանեաններուն:



Հոգեհանգստեան արարողութենէն ետք, Վեհարանի դահլիճին մէջ հանգուցեալ բարերարներու ընտանեկան պարագաներուն, Համազգայինի ու յարակից կառոյցներու պատասխանատուներու ներկայութեան, Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ազգային բարերարներու ազգանուէր, հայրենանուէր ու մշակութամուէր գործունէութեան: Վե-

հափառ Հայրապետը յատկապէս ըսաւ, թէ «Արսլանեան ընտանիքը իրենց կեանքով ու գործով ցոյց տուին բարերարութեան մեծութիւնը ու ազնուութիւնը: Վստահ ենք, որ իրենց զաւակները պիտի շարունակեն իրենց նուիրումը մեր ազգին ու եկեղեցւոյ»: Անդրադարձաւ ըսելով քառասուն օրեր առաջ իր մահկանացուն կնքած Հայկ Արսլանեանին, Վեհափառ Հայրապետը զինք նկարագրեց երեք բառերով՝ «պարզասէր, ազգասէր, հայրենասէր»: Ան ըսաւ, որ այսպէս եղաւ Հայկ Արսլանեան իր կեանքի բոլոր օրերուն: Ազգն ու հայրենիքը մնայուն ներկայութիւն եղան իր կեանքին մէջ: Ան եղաւ պարզ մարդ, հեռու ամէն տեսակ փառքէ ու պատիւէ: Վեհափառ Հայրապետը յայտնեց, թէ ինք ճանջցած է թէ՛ Մելանքթոնը ու թէ՛ Հայկը եւ անոնց մէջ տեսած ազգին ու հայրենիքին տալու պարտաւորութեան գիտակցութիւնը: Իր խօսքը եզրակացնելով, Վեհափառ Հայրապետը ըսաւ՝ «երբ ազգին կու տանք, մեր տուածով ազգը կը հօրանայ, ու ազգով մենք կը մեծանանք»:

Խօսք առաւ նաև Ճեմարանի տնօրէն տիար Տիգրան Ճինպաշեան, որ անդրադարձաւ Մելանքթոնին ու Հայկին կողմէ Ճեմարանին կատարած բարերարութեան:

Արսլանեան եղբայրները երկար տարիներու վրայ տարածուած բարերարութիւններ կատարած են մեր կրթական, մշակութային ու ազգային այլ բնագաւառներէն ներս: Անոնք արժանացած են Երջանկայիշատակ Տ.Տ. Գարեգին Բ. Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսին կողմէ շնորհուած «Կիլիկեան Իշխան»ի շքանշանին:

ԴԵՍՊԱՆ ՔՈՉԱՐԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ուրբաթ 30 Դեկտեմբեր 2011-ի երեկոյեան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելությունը Հայաստանի դեսպան Աշոտ Զոչարեանին: Դես-

պան Քոչարեան Վեհափառ Հայրապետին փոխանցեց անձնապես իր շնորհաւորութիւնները, ինչպէս նաեւ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարին շնորհաւորական գիրը՝ Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով:

Հանդիպումը առիթ եղաւ ընդհանրապէս խօսելու Լիբանանի կացութեան ու Սփիւռքի հայութեան առնչուած հարցերու ու յատկապէս վերջերս Լիբանանի Հանրապետութեան Նախագահին Հայաստան տուած այցելութեան մասին:

Նոյն օրը Վեհափառ Հայրապետը հեռաձայնային խօսակցութիւն ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահ՝ Նորին Վսեմութիւն Սերժ Սարգսեանի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Նորին Ս. Օծութիւն Տ.Տ. Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետին հետ, եւ անոնց փոխանցեց իր եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան շնորհաւորութիւնները Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով:

Տօներու առիթով Վեհափառ Հայրապետը շնորհաւորական նամակներ ու հեռաձայններ ստացաւ հոգեւոր, պետական ու ազգային պատասխանատուներէն:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԸՆԴՈՒՆԵՑ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ
ՄԱՆՈՒԿՆԵՐԸ**

Նկատի ունենալով, որ կիրակնօրեայ դպրոցները սկսան իրենց բնական աշխատանքին եւ քաջալերելու համար հայ մանուկներու մասնակցութիւնը կիրակնօրեայ դպրոցներուն, Կիրակի Սուրբ Պատարագէն ետք, Վեհափառ Հայրապետը Վեհարանի դահլիճին մէջ ընդունեց կիրակնօրեայ դպրոցներէն մէկ խումբ մանուկներ, ընկերակցութեամբ իրենց ուսուցիչ-ուսուցչուհիներուն:

Վեհափառ Հայրապետը մեծապէս գնահատեց նախ ծնողները, որոնք իրենց

զաւակները կը յանձնեն կիրակնօրեայ դպրոցին: Ապա, ան կարեւորութեամբ անդրադարձաւ կիրակնօրեայ դպրոցին ջամբած քրիստոնէական դաստիարակութեան:

Հայ եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներուն հիմը դրուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ 81 տարիներ առաջ:

Կիրակնօրեայ դպրոցներու լայն ցանց կը գործէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր թեմերէն ներս: Կիրակնօրեայ դպրոցներուն վարիչ տնօրէնութեան գրասենեակը կը գտնուի Կաթողիկոսարանէն ներս:

**ՎԱՐՉԱՊԵՏ ՄԻՔԱԹԻ ԸՆԴՈՒՆԵՑ
«ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ»Ի ՄԱՆՈՒԿՆԵՐԸ**

Վարչապետ Նէժիպ Միքաթի, Նոր Տարուան ու Ս. Ծննդեան տօներուն առիթով, վարչապետարանին մէջ կազմակերպեց իւրայատուկ խրախմանք եւ ընդունելութիւն, Լիբանանի տարածքին գործող բոլոր որբանոցներուն ու մարդասիրական հիմնարկներուն համար:

Այս ծիրէն ներս, երեքշաբթի 20 Դեկտեմբեր 2011-ին, «Թոջնոց Բոյն»ի մանուկներէն կազմուած տաս հոգինոց խումբը, գլխաւորութեամբ իրենց պատասխանատու Օրդ. Թալին Պարտագճեանին, իր մասնակցութիւնը բերաւ սոյն ընդունելութեան, վայելելով սէրն ու գուրգուրանքը Լիբանանի կառավարութեան պետին:

Վարչապետը յատուկ ուշադրութեան արժանացնելով հայ մանուկները, իր գնահատանքը յայտնեց «Թոջնոց Բոյն»ի ճամբով իրականացուող մարդասիրական աշխատանքին, որ կը վայելէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութիւնը: Այս առիթով ան նաեւ նուէրներ բաշխեց մանուկներուն, անոնց ուրախութիւնը կրկնապատկելով:

ՄÀÖ¼ÖÜ°ð §Î ÆÆÎ Æ² | Â² Ü¶² ð² ÜÆÜ
(ՄÀÖ¼ÖÜ°ð - , °Î î °Ø´ °ð 2011)

2011 տարուան ընթացքին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ԿԻԼԻԿԻԱ թանգարանին եղած են հետեւեալ նուէրները: Մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք բոլոր անոնց, որոնք արուեստի գործերով ճոխացուցին մեր թանգարանի մշակութային արժէքները:

1. Շարակնոց, ձեռագիր ժԱ. դար, նուէր՝ Չարեհ Շահինեանէն:

2. Պատկեր իւղաներկ, նուէր՝ Հրայրին կողմէ:

3. Ձեռագիր մագաղաթ, նուէր՝ Յարութիւն Անմահունիի կողմէ:

4. Արծաթեայ կոնք, Մարաշի գործ 1760 թ. նուէր՝ Տիար Ժան Մըքճեանի կողմէ՝ Պրն. Համբարձում Ալէքսանեանի ձեռամբ:

5. Կտաւ ձեռագործ, 19-րդ դար, նուէր՝ Վարդուհի Քէչիչեանէն, յանձնուած՝ Կիպրոսի Հայոց Թեմի Կաթողի-

կոսական Փոխանորդ՝ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկէլեանի կողմէ:

6. Չորս բնանկար, իւղաներկ, նրւէր՝ Տէր եւ Տիկ. Ռուբէն Նահապետեաններուն կողմէ:

7. Նոյեան Տապանէն մասունք, նուէր՝ Իտալացի Թիթօ Տէ Լուքայիէն:

8. Կիլիկիա դրօշակ, նուիրուած՝ Արմենիա առաքաստանաւի նաւապետ՝ Չորի Բալայեանի կողմէ:

9. Պատկեր, գործ եւ նուէր՝ Ժանսէմի:

ՏԵՍԱԶՈՒԹԻՒՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ



ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՋ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ԿԻՐԱԿԻ, 6 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2011: Թ.
ԶԿՆԻ ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Հրանդ Աբղ. Թաճանեան:

ԿԻՐԱԿԻ, 13 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2011: Ժ.
ԶԿՆԻ ԽԱԶԻ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Շնորհք Աբղ. Աշղղեան:

ԿԻՐԱԿԻ, 20 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2011: ԺԱ.
ԶԿՆԻ ԽԱԶԻ: ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՅԻՄՆԱ-
ԿԻ ՊԱՀՈՑՆ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Պօղոս Աբղ. Թինքեան:

ԿԻՐԱԿԻ, 27 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2011: Ա.
ՅԻՄՆԱԿԻ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Զիֆթեան:

ԿԻՐԱԿԻ, 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011: Բ.
ՅԻՄՆԱԿԻ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Յովհաննէս Աբղ. Սաղարճեան:

ԿԻՐԱԿԻ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011: Գ.
ՅԻՄՆԱԿԻ: ԲԱՐԵԿԵՆԴԱՆ Ս. ՅԱԿՈ-
ԲԱՅ ՊԱՀՈՑՆ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Պետրոս Աբղ. Մանուէլեան:

ԿԻՐԱԿԻ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011: Դ.
ՅԻՄՆԱԿԻ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգչ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան:

ԿԻՐԱԿԻ, 25 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011: Ե.
ՅԻՄՆԱԿԻ:

Կաթողիկոսարանիս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց Արժ. Տ. Մեսրոպ Քհնյ. Քէրքէզեան եւ քարոզեց՝ Գերչ. Տ. Նարեկ Արք. Այեմէմէզեան:

**ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՍԿ ԱՄՍԱԳԻՐԻ
(ՀԹ. ՏԱՐԻ - 2010)**

16910. **ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՅՈՎԻԿ** (Հայաստանի Խորհրդարանի Նախագահ) Անթիլիասի Մէջ, Տեղեկատուութիւն, էջ 379-380
16911. **ԱԶՆԱԻՈՐԵԱՆ ԶԱՐԵՀ ԱՐՔ.**, Սերտողութիւն Մատթէոսի Աւետարանին – Ժ. Գլուխ, (Խմբագիր՝ Գառնիկ Քհնյ. Գոյունեան) [Շար. թիւ 16595-ի], էջ 65-69
16912. **ԱԶՆԱԻՈՐԵԱՆ ԶԱՐԵՀ ԱՐՔ.**, Սերտողութիւն Մատթէոսի Աւետարանին – Ժ. Գլուխ, (Խմբագիր՝ Գառնիկ Քհնյ. Գոյունեան) [Շար. թիւ 16911-ի], էջ 202-213
16913. **ԱԶՆԱԻՈՐԵԱՆ ԶԱՐԵՀ ԱՐՔ.**, Սերտողութիւն Մատթէոսի Աւետարանին – ԺԱ. Գլուխ, (Խմբագիր՝ Գառնիկ Քհնյ. Գոյունեան) [Շար. թիւ 16912-ի], էջ 307-314
16914. **ԱԶՆԱԻՈՐԵԱՆ ԶԱՐԵՀ ԱՐՔ.**, Սերտողութիւն Մատթէոսի Աւետարանին – ԺԱ. Գլուխ, (Խմբագիր՝ Գառնիկ Քհնյ. Գոյունեան) [Շար. թիւ 16913-ի], էջ 432-437
16915. **ԱԶՆԱԻՈՐԵԱՆ ԶԱՐԵՀ ԱՐՔ.**, Սերտողութիւն Մատթէոսի Աւետարանին – ԺԲ. Գլուխ, (Խմբագիր՝ Գառնիկ Քհնյ. Գոյունեան) [Շար. թիւ 16914-ի], էջ 580-583
16916. **ԱԶՆԱԻՈՐԵԱՆ ԶԱՐԵՀ ԱՐՔ.**, Սերտողութիւն Մատթէոսի Աւետարանին – ԺԲ. Գլուխ, (Խմբագիր՝ Գառնիկ Քհնյ. Գոյունեան) [Շար. թիւ 16915-ի], էջ 689-693
16917. **ԱԶՆԱԻՈՐԵԱՆ ԶԱՐԵՀ ԱՐՔ.**, Սերտողութիւն Մատթէոսի Աւետարանին – ԺԲ. Գլուխ, (Խմբագիր՝ Գառնիկ Քհնյ. Գոյունեան) [Շար. թիւ 16916-ի], էջ 789-798
16918. **ԱԶՆԱԻՈՐԵԱՆ ԶԱՐԵՀ ԱՐՔ.**, Սերտողութիւն Մատթէոսի Աւետարանին – ԺԳ. Գլուխ, (Խմբագիր՝ Գառնիկ Քհնյ. Գոյունեան) [Շար. թիւ 16917-ի], էջ 891-898
16919. **ԱԶՆԱԻՈՐԵԱՆ ԶԱՐԵՀ ԱՐՔ.**, Սերտողութիւն Մատթէոսի Աւետարանին – ԺԴ. Գլուխ, (Խմբագիր՝ Գառնիկ Քհնյ. Գոյունեան) [Շար. թիւ 16918-ի], էջ 1006-1013
16920. **ԱԶՆԻԿԵԱՆ ՄԻՒՌՈՆ Ծ. ՎՐԴ.**, «Ս. Ներսէս Շնորհալի Եւ Եկեղեցական Միութիւն» (Հեղինակ՝ Արամ Ա. Կթղ., Անթիլիաս, 2010, 256 էջ) [Գրախօսական], էջ 929-935
16921. **ԱԼԵԿՍԷՉԵԱՆ ՆԱՐԵԿ ԵՊՍ.**, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Միջ-Եկեղեցական Գործակցութեան Նոր Հորիզոններու Դիմաց [Խմբ.], էջ 145-147
16922. **ԱԼԵԿՍԷՉԵԱՆ ՆԱՐԵԿ ԵՊՍ.** Միջ-Եկեղեցական Առաքելութեամբ Կիպրոսի Մէջ, Տեղկութեան, էջ 505-507
16923. **ԱԼԵԿՍԷՉԵԱՆ ՆԱՐԵԿ ԵՊՍ.** Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետին Հաւատով Խոստովանիմ Աղօթքը 33 Լեզուներով, էջ 817-819
16924. **ԱԼԵԿՍԷՉԵԱՆ ՆԱՐԵԿ ԵՊՍ.**, Տուարովնիք՝ Ս. Վլաս Հայրապետին Պաշտպանութեան Ներքեւ (Տուարովնիք Այցելած Առաջին

- Հայ Առաքելական Եպիսկոպոսին Վկայութիւնը), *էջ* 708-722
16925. **ԱԼԵԿՍԷՉԵԱՆ ՆԱՐԵԿ ԵՊՍ.** Միջ-Եկեղեցական Յարաբերութիւնները Ֆրեզնոյի Մէջ, Տեղեկատուութիւն, *էջ* 645
16926. Ամանորի Ա. Պատարագ Եւ Շնորհաւորութիւն Անթիլիասի Մէջ, Տեղկութն., *էջ* 135-136
16927. Անգլերէն Լեզուի Կատարելագործման Դասընթացք, Տեղեկատուութիւն, *էջ* 390
16928. Անթիլիասի Ձեռագրատունը Կը Հարստանայ Նոր Ձեռագիրով, Տեղկութն., *էջ* 1083
16929. **ԱՆԿԼՍՏ (ՌՔԹ.)**, Ներածութիւն Սուրբ Գիրքի Սերտողութեան – Սուրբ Գիրքին Աստուածային Հեղինակութիւնը [*Շար. թիւ 16612-ի*], *էջ* 70-74
16930. **ԱՆԿԼՍՏ (ՌՔԹ.)**, Ներածութիւն Սուրբ Գիրքի Սերտողութեան – Սուրբ Գիրքին Աստուածային Հեղինակութիւնը [*Շար. թիւ 16929-ի*], *էջ* 214-219
16931. **ԱՆԿԼՍՏ (ՌՔԹ.)**, Ներածութիւն Սուրբ Գիրքի Սերտողութեան – Սուրբ Գիրքին Աստուածային Ներշնչականութիւնը [*Շար. թիւ 16930-ի*], *էջ* 315-318
16932. **ԱՆԿԼՍՏ (ՌՔԹ.)**, Ներածութիւն Սուրբ Գիրքի Սերտողութեան – Սուրբ Գիրքին Սեփական Յատկութիւնները [*Շար. թիւ 16931-ի*], *էջ* 438-442
16933. **ԱՆԿԼՍՏ (ՌՔԹ.)**, Ներածութիւն Սուրբ Գիրքի Սերտողութեան – Սուրբ Գիրքին Սեփական Յատկութիւնները [*Շար. թիւ 16932-ի*], *էջ* 584-587
16934. **ԱՆԿԼՍՏ (ՌՔԹ.)**, Ներածութիւն Սուրբ Գիրքի Սերտողութեան – Գլուխ 8 – Սուրբ Գիրքին Սեփական Յատկութիւնները [*Շար. թիւ 16933-ի*], *էջ* 694-698
16935. **ԱՆԿԼՍՏ (ՌՔԹ.)**, Ներածութիւն Սուրբ Գիրքի Սերտողութեան – Գլուխ 8 – Սուրբ Գիրքին Սեփական Յատկութիւնները [*Շար. թիւ 16934-ի*], *էջ* 799-802
16936. **ԱՆԿԼՍՏ (ՌՔԹ.)**, Ներածութիւն Սուրբ Գիրքի Սերտողութեան – Գլուխ 9 – Անկանոն Գիրքերը [*Շար. թիւ 16935-ի*], *էջ* 899-905
16937. **ԱՆԿԼՍՏ (ՌՔԹ.)**, Ներածութիւն Սուրբ Գիրքի Սերտողութեան – Գլուխ 10 – Սուրբ Գիրքը Սորվելու Մասին Ընդհանուր Դիտողութիւններ [*Շար. թիւ 16936-ի*], *էջ* 1014-1020
16938. **ԱՆՄԱՀՈՒՆԻ ՅԱՐՈՒԹԻՒՆ**, 24 Ապրիլ... Յեղասպանութիւնը [*Գրարական*], *էջ* 340
16939. Ապրիլեան Նահատակաց Տօնը Անթիլիասի Մէջ, Տեղեկատուութիւն, *էջ* 367-369
16940. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Ապու Տապիի Եւ Տուպայի Մէջ, Տեղեկատուութիւն, *էջ* 168-169
16941. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Առանց Կնոջ Լիարժէք Դերակատարութեան «Մեր Հաւաքական Կեանքը Շատ Բան Պիտի Կորսնցնէ Իր Կենսունակութեանն Ու Որակէն» [*Խմբ.*], *էջ* 865-868
16942. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Արքունիքեան Պատիւ Ու Տիրոջ Կը Շնորհէ Տիրայր Եւ Նարեկ Սրբազաններուն, Տեղկութն., *էջ* 859
16943. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Գանատայի Հայոց Թեմին Մէջ, Տեղեկատուութիւն, *էջ* 541-562
16944. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** «Ինքնակեդրոն Ու Ինքնաբաւ Մտածելակերպը, Գործելակերպը Եւ Կենցաղակերպը Կը Դառնան Զարիքի Աղբիւր»

- [Միացեալ հարցազրոյց «Ազդակ»-ի եւ «Ֆրանս-Արմենի»-ի Հետ], էջ 100-109*
16945. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'այցելէ Ն.Ս. Զագագ Ա. Իուաս Պատրիարքին, Տեղկութն., էջ 649-650
16946. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կառչիլ Մնայոն Արժեքներուն *[Ս. Մննդեան Պատգամ]*, էջ 15-17
16947. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ատենապետէ Աշխարհի Մեծ Ութեակի Միջ-Արօնական Համագումարի Կենտրոն-տային Հարցերու Բաժնիին, Տեղեկատուութիւն, էջ 563-564
16948. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կը Գնահատէ Հ.Օ.Մ.ի 100 Ամեայ Ծառայութիւնը, Տեղկութն., էջ 393-395
16949. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կը Հովանաւորէ Հայոց Ցեղասպանութեան Նուիրւած Արուեստի Ցուցահանդէսը, Տեղկութն., էջ 372-373
16950. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կը Մասնակցի Պարսելոնայի Միջ-Արօնական Համագումարին, Տեղեկատուութիւն, էջ 838-840
16951. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կը Նախագահէ Թեմակալ Առաջնորդներու Եւ Թեմական Իշխանութեանց Ժողովին Մայրավանքին Մէջ, Տեղեկատուութիւն, էջ 846-847
16952. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կը Նախագահէ Միջին Արեւելի Եկեղեցիներու Խորհուրդի Դիւանի Հանդիպումին Կիպրոսի Մէջ, Տեղեկատուութիւն, էջ 852
16953. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Անգլիոյ Եկեղեցիները Ներկայացնող Պատուիրակութիւնը, Տեղեկատուութիւն, էջ 660-661
16954. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Աւրստրալիոյ Դեսպանը, Տեղեկատուութիւն, էջ 1084
16955. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Գարակէօզեան Հաստատութեան Ընդհ. Տնօրէնը, Տեղկութն., էջ 513
16956. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Երուսաղէմի Լատին Նախկին Պատրիարք Սապահը, Տեղեկատուութիւն, էջ 262-263
16957. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Զագագ Ա. Պարք.ին Ներկայացուցիչը, Տեղկութն., էջ 390-391
16958. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Զագագ Ա. Պարք.ին Ներկայացուցիչը, Տեղկութն., էջ 511
16959. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Զագագ Ա. Պարք.ին Ներկայացուցիչը, Տեղկութն., էջ 979-980
16960. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Զահլէի Երեսփոխանական Պոֆը, Տեղեկատուութիւն, էջ 392
16961. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Իտալիոյ Դեսպանը, Տեղկութն., էջ 393
16962. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Իտալիոյ Դեսպանը, Տեղկութն., էջ 861
16963. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Իրանի Դեսպանը, Տեղեկատուութիւն, էջ 138-139
16964. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Իրանի Դեսպանը, Տեղեկատուութիւն, էջ 661
16965. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Իրանի Դեսպանը, Տեղեկատուութիւն, էջ 512-513
16966. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Իրանի Մշակութային Կցորդը, Տեղեկատուութիւն, էջ 662
16967. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Լիբանանեան Երիտասարդական Համախմբումի Կեդրոնական Վարչութիւնը, Տեղկութն., էջ 140
16968. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդունի Խորհրդարանի Նախագահին Ներկայացուցիչները, Տեղկութն., էջ 649

16969. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Խորհրդարանի Նախագահին Ներկայացուցիչները, Տեղկութեան., էջ 763
16970. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Կաթոլիկ եկեղեցւոյ Մարդասիրական Կազմակերպութեան Նախագահը, Տեղկութեան., էջ 137-138
16971. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Կարտինալ Գասպարը, Տեղեկատուութիւն, էջ 128-129
16972. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Կիպրոսի Դեսպանը, Տեղկութեան., էջ 140
16973. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Global Christian Forum-ի Ընդհանուր Քարտուղարը, Տեղկութեան., էջ 389
16974. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Համագալիմի Նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը, Տեղեկատուութիւն, էջ 663
16975. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Հայաստանի Հանրապետութեան Դեսպանը, Տեղկութեան., էջ 860-861
16976. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Հայաստանի Հանրապետութեան Դեսպանը, Տեղկութեան., էջ 979
16977. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Հայաստանի Հանրապետութեան Դեսպանը, Տեղեկատուութիւն, էջ 1084-1085
16978. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Հայաստանի Հանրապետութեան Դեսպանը, Տեղեկատուութիւն, էջ 139
16979. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Հայաստանի Հանրապետութեան Դեսպանը, Տեղեկատուութիւն, էջ 392-393
16980. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Հայ Համալսարանականները, Տեղեկատուութիւն, էջ 1091-1092
16981. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Հ.Մ.Ը.Մ.ի Բ. Խորհրդաժողովին Մասնակիցները, Տեղկութեան., էջ 396
16982. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Հ.Յ.Դ. Բիւրոյին Անդամները, Տեղեկատուութիւն, էջ 393
16983. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Հ.Օ.Միութեան Ատենապետուհին, Տեղեկատուութիւն, էջ 395
16984. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Հունգարիոյ Դեսպանը, Տեղեկատուութիւն, էջ 139-140
16985. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Մարոնի եկեղեցւոյ Պատրիարքական Փոխանորդ Ռոլան Ապու Ժաուտէ Եպս.ը, Տեղկութեան., էջ 263
16986. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Միացեալ Նահանգներու Դեսպանը, Տեղկութեան., էջ 1084
16987. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Մ.Ա.Ե. Խորհուրդի Ընդհ. Քարտուղարը, Տեղկութեան., էջ 391
16988. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Նախագահ Էմիլ Ժըմալէլը, Տեղեկատուութիւն, էջ 649
16989. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Նախարար Ատնան Հիւսէյնին, Տեղեկատուութիւն, էջ 861
16990. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի World Vision-ի Ներկայացուցիչները, Տեղկութեան., էջ 979
16991. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի World Vision-ի Պատասխանատուները, Տեղկութեան., էջ 391
16992. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի «Պայպըլ Լեմտգ»ի Պատասխանատուները, Տեղկութեան., էջ 978-979
16993. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Պրագիլի Օրթոտոքս Առաջնորդը, Տեղեկատուութիւն, էջ 510-511
16994. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի ՌԱԿի Շրջանային Վարչութիւնը, Տեղեկատուութիւն, էջ 862
16995. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կրնդունի Սուրբիոյ Հայ Համալսարանականներու Միութիւնը, Տեղկութեան., էջ 663

16996. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդուննի Սփիւտֆի Նախարարուհին, Տեղեկատուութիւն, *էջ* 378-379
16997. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդուննի Վերապատուելի Իվ Կընէլը, Տեղեկատուութիւն, *էջ* 263
16998. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդուննի Տիւրզի Համայնֆայետին Ներկայացուցիչը, Տեղկութն., *էջ* 764
16999. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդուննի Յեղասպանութեան Ոգեկոչման Կեդրոնական Յանձնախումբը, Տեղեկատուութիւն, *էջ* 389-390
17000. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդուննի Քրիստոնեայ-Իսլամ Երկխօսութեան Միջազգային Յանձնաժողովը, Տեղկութն., *էջ* 662-663
17001. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդուննի Ֆրանսահայ Գեղանկարիչ Կարօ Կարոյեանը, Տեղկութն., *էջ* 264
17002. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդուննի Ֆրանսայէն Ու Լիբանանէն Մէկ Խումբ Մտաւորականներ, Տեղեկատուութիւն, *էջ* 860
17003. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'ընդուննի Ֆրանսայի Բողոքական Եկեղեցիներուն Նախագահը, Տեղեկատուութիւն, *էջ* 1083-1084
17004. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կը Շնորհաւորէ Սերպիոյ Նորընտիր Պատրիարքը, Տեղկութն., *էջ* 128
17005. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կը Ստանայ Քրիստոսի Փշապսակէն Մատունք, Տեղկութն., *էջ* 858-859
17006. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** «Կրօնի Դերը Առանցքային է Միջին Արեւելի Աշխարհաբաղադական Դրուածքին Մէջ», *էջ* 848-851
17007. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կ'օրհնէ ՀեզՈՄ-ի Նորընտիր Վարչութիւնը, Տեղեկատուութիւն, *էջ* 395-396
17008. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Հայ Գիրը՝ Դպրոցը Հայուն *[Փոխան Խմբ.ի]*, *էջ* 769-772
17009. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Հայրապետական Կոնդակ *[Գեղամ Եպս. Խաչերեանի Արժուութեան պատիւ եւ տիտղոս]*, *էջ* 404-405
17010. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Հայրապետական Պատգամ՝ Գրողներու Համահայկական 5-րդ Համագումարին (Երեւան, 28 Յունիս – 2 Յուլիս 2010), *[Փոխան Խմբ.ի]*, *էջ* 517-519
17011. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Հանդիպում Կ'ունենայ Հնդկաստանի Ուղղափառ Եկեղեցւոյ Կաթողիկոսի Ներկայացուցիչներուն Հետ, Տեղեկատուութիւն, *էջ* 129
17012. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** «Ձեր Զաւակները Եկեղեցւոյ Շունչով Պէտք է Դաստիարակուին Ու Աստուծոյ Շնորհքով Կազմաւորուին», *էջ* 254-255
17013. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** «Ղեկնողեանք Եւ Վարդանանք Համահայկական Կեցուածք Ճշդեցին Թշնամիին Դէմ», *էջ* 251-253
17014. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Մայիս 28-ը Յանրժառանգ Պատգամ է *[Փոխան Խմբ.ի]*, *էջ* 401-403
17015. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Միջ-Եկեղեցական Ժողովի Մասնակիցներով Կ'այցելէ Լիբանանի Հանրապետութեան Նախագահ՝ Զօր. Միշէլ Սլէյմանը, Տեղկութն., *էջ* 126-128
17016. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Յատուկ Պատգամ Կը Յղէ Հիւսիսային Ամերիկայի Թեմերու Հոգեւորականաց Համագումարին, Տեղեկատուութիւն, *էջ* 261-262
17017. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Յունաստանի Մէջ Յոյն Եկեղեցւոյ Հրաւերով, Տեղկութն., *էջ* 18-26
17018. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Պաշտօնական Այցելութեամբ Կը Մեկնի Հնդկաստան, Տեղկութն., *էջ* 148-167

17019. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**, Սուրբ Մարիամ Աստուածածին՝ Գերագոյն Տիպարը Հայ Կնոջ *[Փոխան Խմբ.ի]*, էջ 669-673
17020. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** «Ս. Մեարոպ Մաշտոց»ի Շփանշանով Կը Պարգեւատրէ Վեր. Ահարոն Սափարգեւանը, Տեղկութեւն., էջ 374-375
17021. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ Մէջ, Տեղեկատուութիւն, էջ 353-354
17022. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Յաւակցագիր Կը Յղէ Եթովպիոյ Պատրիարքին, Տեղկութեւն., էջ 130
17023. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Յաւակցութիւն Կը Յայտնէ Էլ-Ազհարի Իմամին Մահուան Առիթով, Տեղեկատուութիւն, էջ 378
17024. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**, Յեղասպանութեան Ճանաչում Ու Հատուցում Կը Պահանջենք *[Փոխան Խմբ.ի]*, էջ 269-272
17025. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**, «Քրիստոնեայ-Իսլամ Երկխօսութիւնը Ու Գործակցութիւնը Հրամայական Է Առաջքը Առնելու Համար Պաղատի Եկեղեցւոյ Դեմ Գործուած Ահաբեկչական Արարքներուն», էջ 978
17026. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**, Քրիստոնէութեան Դիմագրաւած Մարտահրաւերը Միջին Արեւելքի Մէջ (Հարցազրոյց Օտար Թղթակիցներու Հետ), էջ 974-977
17027. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**, Քրիստոսի Յարութիւնը՝ Աղբիւր Յաւիտեանական Կեանքի *[Ս. Զատկուան Պատգամ]*, էջ 273-276
17028. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**, 2010՝ Հայ Կնոջ Տարի *[Փոխան Խմբ.ի]*, էջ 1-14
17029. **(ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.)** 2010 Տարին Մեր Ժողովուրդին Համար «Հայ Կնոջ Տարի» Կը Յայտարարէ, Տեղկութեւն., էջ 136-137
17030. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Իր Պատգամը Կ'ուղղէ Աւելի Քան 200 Աղօթանքներ Տիկիներու, Տեղեկատուութիւն, էջ 482-483
17031. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Կը Պարգեւատրէ Միշէլ Կոկիկեանը «Կոկիկեան» Համալսարանական Հիմնադրամ Հաստատելուն Առիթով, Տեղեկատուութիւն, էջ 488-489
17032. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Ի Եւ **ԶԱԳԳԱ Ա. ՊՏՐՔ.** Ի Հանդիպումը Դամասկոսի Մէջ, Տեղկութեւն., էջ 508-509
17033. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Ի Եւ **ՄԻԻՃԹԻ ԳԱՊՊԱՆԻ** Ի Միջեւ Հեռաձայնային Հաղորդակցութիւն, Տեղեկատուութիւն, էջ 1082
17034. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Ի Հայրապետական Տնօրինութեամբ Տէր Զօրը Կ'ունենայ Իր Կեդրոնական Յանձնախումբը, Տեղկութեւն., էջ 132
17035. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Ի Ներկայացուցիչ Նարեկ Սրբազան Տուարովիքի Մէջ, Տեղկութեւն., էջ 256-257
17036. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Ի Յարդ Հրապարակած Կոնդակներուն Եւ Օրհնութեան Գիրքուն Հաւաքածոն, էջ 27-44
17037. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Ի Յարդ Հրապարակած Կոնդակներուն Եւ Օրհնութեան Գիրքուն Հաւաքածոն *[Մար. թիւ 17036-ի]*, էջ 170-191
17038. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Ի Յարդ Հրապարակած Կոնդակներուն Եւ Օրհնութեան Գիրքուն Հաւաքածոն *[Մար. թիւ 17037-ի]*, էջ 277-289
17039. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Ի Յարդ Հրապարակած Կոնդակներուն Եւ Օրհնութեան Գիրքուն Հաւաքածոն *[Մար. թիւ 17038-ի]*, էջ 406-414
17040. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.** Ի Յարդ Հրապարակած Կոնդակներուն Եւ Օրհնութեան Գիրքուն Հաւաքածոն *[Մար. թիւ 17039-ի]*, էջ 520-531

17041. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**-ի Ցարդ Հրապարակած Կոնդակներուն Եւ Օրհնութեան Գիրքերուն Հաւաքածոն [Շար. թիւ 17040-ի], էջ 674-683
17042. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**-ի Ցարդ Հրապարակած Կոնդակներուն Եւ Օրհնութեան Գիրքերուն Հաւաքածոն [Շար. թիւ 17041-ի], էջ 773-784
17043. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**-ի Ցարդ Հրապարակած Կոնդակներուն Եւ Օրհնութեան Գիրքերուն Հաւաքածոն [Շար. թիւ 17042-ի], էջ 869-880
17044. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**-ի Ցարդ Հրապարակած Կոնդակներուն Եւ Օրհնութեան Գիրքերուն Հաւաքածոն [Շար. թիւ 17043-ի], էջ 988-999
17045. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**-ին Կը Հանդիպի Ե.Հ. Խորհուրդի Ընդհ. Քարտուղարը, Տեղկութեան., էջ 388
17046. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**-ին Կը Հանդիպին Իրանցի Թղթակիցներ, Տեղեկատուութիւն, էջ 1090-1091
17047. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**-ին Կը Հանդիպին Օտար Թղթակիցներ, Տեղեկատուութիւն, էջ 1088-1090
17048. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**-ին Ձեռամբ Բացումը Կը Կատարուի Լիբանանի Ազգային Առաջնորդարանի Նոր Շէնքին, Պուրն Համուտի Մէջ, Տեղկութեան., էջ 484-487
17049. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**-ին Պատգամը Լուտերական Եկեղեցիներու Համաժողովին, Տեղկութեան., էջ 644
17050. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**-ին Տօնական Օրերու Այցելութիւնները, Տեղեկատուութիւն, էջ 133-135
17051. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**-ին Տօնական Օրերու Այցելութիւնները, Տեղեկատուութիւն, էջ 1085-1088
17052. **ԱՐԱՄ Ա. ԿԹՂ.**-ին Ցաւակցագիրը Սմբատ Սրբազանի Վախճանման Առիթով, Տեղկութեան., էջ 654-655
17053. **ԱՐԱՊԵԱՆ ԱՐՏԱԿ ԱԲՂ.**, Այլակերպութեան Խորհուրդը [Քարոզակոսական], էջ 535-536
17054. Արմենօփասի Յանճանխումբի Հանդիպում Աթէնքի Մէջ, Տեղեկատուութիւն, էջ 512
17055. «Արցախեան Օրագիր Կանաչ Ու Սեւ» Գիրքին Շնորհահանդէսը, Տեղկութեան., էջ 641-642
17056. Աւագ Շաբաթը Անթիլիասի Մէջ, Տեղկութեան., էջ 358-364
17057. **ԱԲՉԱՄ ԹԱՆԷՐ** (Թուրք Պատմաբան) Անթիլիասի Մէջ, Տեղեկատուութիւն, էջ 113-119
17058. Բովանդակութիւն, էջ 142-143
17059. Բովանդակութիւն, էջ 266
17060. Բովանդակութիւն, էջ 399-400
17061. Բովանդակութիւն, էջ 515-516
17062. Բովանդակութիւն, էջ 665-666
17063. Բովանդակութիւն, էջ 766
17064. Բովանդակութիւն, էջ 864
17065. [Բովանդակութիւն], էջ 982
17066. Բովանդակութիւն, էջ 1094
17067. **ԳՈՅՈՒՆԵԱՆ ԳԱՌՆԻԿ ՔՀՆՅ.**, Աստուած Կը Լսէ... , էջ 927-928
17068. **ԳՈՅՈՒՆԵԱՆ ԳԱՌՆԻԿ ՔՀՆՅ.**, «Աստուծոյ Սուրբ Օրը», էջ 735-737
17069. **ԳՈՅՈՒՆԵԱՆ ԳԱՌՆԻԿ ՔՀՆՅ.**, Ծուրութեան Մասին, էջ 616-617
17070. **ԳՈՅՈՒՆԵԱՆ ԳԱՌՆԻԿ ՔՀՆՅ.**, Հեղինակութեան Մասին, էջ 830-831
17071. **ԳՈՅՈՒՆԵԱՆ ԳԱՌՆԻԿ ՔՀՆՅ.**, «Ո՞վ է Մեծը», էջ 1065-1066
17072. **ԳՌՈՒՉԵԱՆ ԽԱՉԻԿ ՔՀՆՅ.**, Ա. Հոգիին Զօրութիւնը [Շար. թիւ 16714-ի], էջ 83-89
17073. **ԳՌՈՒՉԵԱՆ ԽԱՉԻԿ ՔՀՆՅ.**, Ոյժի Տիրապետութիւնը [Շար. թիւ 17072-ի], էջ 230-240

17074. **ԳՌՈՒԶԵԱՆ ԽԱԶԻԿ ՔՀՆՅ.**, Անճնասպանները [Շար. թիւ 17073-ի], էջ 341-342
17075. **ԳՌՈՒԶԵԱՆ ԽԱԶԻԿ ՔՀՆՅ.**, Օրէնք եւ Շնորհք [Շար. թիւ 17074-ի], էջ 460-461
17076. **ԳՌՈՒԶԵԱՆ ԽԱԶԻԿ ՔՀՆՅ.**, Ընկերային Անօրէնութիւն [Շար. թիւ 17075-ի], էջ 606-608
17077. **ԳՌՈՒԶԵԱՆ ԽԱԶԻԿ ՔՀՆՅ.**, Գրադարանը [Շար. թիւ 17076-ի], էջ 723-727
17078. **ԳՌՈՒԶԵԱՆ ԽԱԶԻԿ ՔՀՆՅ.**, Միութեան Օրէնքը [Շար. թիւ 17077-ի], էջ 820-823
17079. **ԳՌՈՒԶԵԱՆ ԽԱԶԻԿ ՔՀՆՅ.**, Ազատութեան Գործածութիւնը [Շար. թիւ 17078-ի], էջ 913-919
17080. **ԳՌՈՒԶԵԱՆ ԽԱԶԻԿ ՔՀՆՅ.**, Ուաշինկթըն [Շար. թիւ 17079-ի], էջ 1056-1061
17081. **ԴԱՆԻԷԼԵԱՆ ՄԵԹՐ ԱՐՍԷՆ**, Հայ Կնոջ Քաղաքական-Հասարակական Իրավիճակի Հոլովոյթը Պատմութեան Ընթացքում [«Հայ Կնոջ Տարուան» առթիւ], էջ 325-337
17082. Դպրեվանքի Ամսվերջի Հանդէսը, Տեղկութեւն, էջ 623-624
17083. Դպրեվանքի Տիկնանց Օժանդակ Մարմինի Կազմակերպութեամբ 80 Ամեակի Հանդիսութիւն Սան Ֆրանսիսկոյի Մէջ, Տեղեկատուութիւն, էջ 834
17084. Դպրեվանքի 81-րդ Կրթական-Ուսումնական Տարեշրջանի Վերաբացում, Տեղկութեւն, էջ 832-833
17085. Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Պատուիրակութեան Այցելութիւնը Դպրեվանք, Տեղեկատուութիւն, էջ 859-860
17086. Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Պատուիրակութիւնը Անթիլիասի Մէջ, Տեղեկատուութիւն, էջ 855-856
17087. Եկեղեցիներու Միութեան Աղօթք Անթիլիասի Մայր Տանարին Մէջ, Տեղկութեւն, էջ 125
17088. Եւրոպայի Բողոքական Եկեղեցիները Ներկայացնող Պատուիրակութիւնը Անթիլիասի Մէջ, Տեղեկատուութիւն, էջ 138
17089. **ԶԱԳԳԱ Ա. ՊՏՐՔ.** (Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ պետ) Անթիլիասի Մէջ, Տեղկութեւն, էջ 857
17090. **ԶԱԳԳԱ Ա. ՊՏՐՔ.** ին Ներկայացուցիչը Արամ Ա. Կթղ.ին Մօտ, Տեղկութեւն, էջ 860
17091. **ԶԱՔԱՐԻԱ (Ա.) ԿԹՂ.**, Խօսք Տիրոջ Երուսաղէմ Գալուն Մասին [Սշխարհաբարի վերածեց' Վարանդ Վրդ. Բորթմոսեան], էջ 297-306
17092. **ԶԻՆՏԱԶՐԵԱՆ ԱՆՆԻԿ**, Խորհուրդ Խորին [Նրաժշտական], էջ 738-740
17093. **ԷԹԻՒՄԷԶԵԱՆ ԳԵՂԱՆԻ**, Ի՞նչ Մնաց [Տպաւորապաշտ էջեր], էջ 966-967
17094. **ԹԱՀԱՆԵԱՆ ՀՐԱՆԴ ԱԲՂ.**, Յիսուսի Այլակերպութիւնը [Քարոզախօսական], էջ 539-540
17095. **ԹԱՇՃԵԱՆ ՎԱՐԴԱՆ ԱԲՂ.**, Լըսենք Ընտրեալ Որդիին Խօսքը [Քարոզախօսական], էջ 537-538
17096. **ԹԷՈՓԻԼՈՍ ԵՐԱՆԵԼԻ**, Տասներկու Առաքեալներուն Նուիրուած Ներբողեան [Սշխարհաբարի վերածեց' Վարանդ Վրդ. Բորթմոսեան], էջ 571-579
17097. **ԹՈՐՈՍԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ**, «Գրելու Կախարդամբք», էջ 456-457
17098. «Թոչնոց Բոյն»ի Աշակերտները Կը

- Մասնակցին Ամերիկեան Համալսարանի Պարի Տարեկան Համոյթին, Տեղկութեան., էջ 503
17099. «Թոնչոց Բոյն»ի Նախկին Սաներու Երախտագիտական Այցելութիւնը Իրենց Մանկութեան Տունը, Տեղկութեան., էջ 844-845
17100. **ԹՕՓՃԵԱՆ ԲԱԲԳԷՆ**, «Աման» եւ «Զմեռան» Հատորներէն Քաղուած Աստուածամօր Քարոզներ (Հեղինակ՝ Ա. Գրիգոր Տաթեւացի, Թարգմանեց՝ Թամար Տաւնապետեան, Անթիլիաս, 2010, 256 էջ) [*Գրախօսական*], էջ 951-952
17101. **ԹՕՓՃԵԱՆ ԲԱԲԳԷՆ**, Արշակ Տէր-Միքէլեան (Մահուան 190-Ամեակին Առթիւ), էջ 1031-1035
17102. **ԹՕՓՃԵԱՆ ԲԱԲԳԷՆ**, Սահակ-դուխտ Սիւնեցի (675? – 736?), էջ 453-455
17103. **ԹՕՓՈՒՋԵԱՆ ՆՇԱՆ ԵՊՍ**.ի (1966-2010) Մահագրութիւն եւ Կենսագրական Ամփոփ Գիծեր, Տեղկութեան., էջ 381-384
17104. **ՀԱՓԱՃԵԱՆ ՍՄԲԱՏ ԱՐՔ**.ի (1927-2010) Մահագրութիւն եւ Կենսագրական Գիծեր, Տղկութեան., էջ 651-653
17105. **ԽԱՋԷՆ ՏՈՔԹ. ՖԱՐԻՏ** (Երեսփոխան) Կայցելէ Արամ Ա. Կթղ.ին, Տեղկութեան., էջ 392
17106. «**ԽԱՋԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ**» Հայ Լեզուի եւ Գրականութեան Մրցանքին Շուրջ 60 Աշակերտներ Կը Մասնակցին, Տղկութեան., էջ 120-121
17107. «**ԽԱՋԻԿ ՊԱՊԻԿԵԱՆ**» Հիմնադրութեան Նախաձեռնութեամբ Աշակերտական եւ Երիտասարդական Մրցանքները Կը Շարունակուին, Տեղկութեան., էջ 370-371
17108. **ԽՄԲ.**, Ի՞նչ Ըրինք, էջ 985-987
17109. Կաթողիկոսարանիս Ուխտի Օրը, Տեղկութեան., էջ 355-357
17110. Կիրակնօրեայ Դպրոցներու 80 Ամեակին Նուիրուած Հայրապետական Կոնդակի Ընթերցում, Տեղկութեան., էջ 659-660
17111. **ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ՍԱՐԳԻՍ**, Պատմական Գիտաժողովի Բացառիկ Վկայարանը («ՀԱՍԿ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ»ի Նորագոյն Հատորին Առիթով), էջ 96-97
17112. **ԿՈՄԻՏԱՍ ԿԹՂ**.ի եւ **ՊԻՌՈՍ ԱՌՇԻԱ ՊՏՐՔ**.ի Հարցաքննութիւնն Ու Վիճարանութիւնը Հաւատքի, Եկեղեցւոյ Կարգերուն եւ Բանին Տնօրէնութեան Մասին [*Աշխարհաբարի վերածեց՝ Վարանդ Վրդ.Քորթմոսեան*], էջ 53-64
17113. Հաղորդագրութիւն (Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կանոնական Յանձնախումբի ժողովին), Տեղկութեան., էջ 761
17114. Հաղորդագրութիւն (Հայ Եկեղեցւոյ Ծիսական Յանձնախումբի), Տեղկութեան., էջ 762
17115. Հայագիտական Ու Ազգային Մըտահոգութիւններու Քննարկում Մտաւորականներու Կողմէ Անթիլիասի Մէջ, Տեղեկատուութիւն., էջ 1074-1076
17116. Հայ Առաքելական Եկեղեցւոյ Քոյրերը Ծառայական Առաքելութեան Մէջ, Տեղկութեան., էջ 258-259
17117. Հայաստանի Հանրապետութեան Տէր Զօրի Առաջին Պատուոյ Հիւպատոսը Անթիլիասի Մէջ, Տեղեկատուութիւն, էջ 264
17118. Հայ Գիրքի 32-րդ Ցուցահանդէսը Անթիլիասի Մայրավանքին Մէջ, Տեղկութեան., էջ 835-837
17119. Հայ Եկեղեցւոյ Մասնակցութիւնը Միջ-Եկեղեցական Յարաբերութեան Վարիչներու ժողովին, Տե-

- ղեկատուութիւն **էջ 504**
17120. Հայ Եկեղեցւոյ Մասնակցութիւնը Քրիստոնեայ-Իսլամ Երկխօսութեան Համագումարին Ժընեւի Մէջ, Տեղկութեւ., **էջ 972-973**
17121. Հայ Կնոջ Կեցուածքը, Սպասումը Ու Յանձնառութիւնը (Անթիլիասի Մայրավանք, 25-27 Նոյեմբեր 2010) [*Յայտարարութիւն*], **էջ 961-962**
17122. Հայ Տիկնանց Համագումար Անթիլիասի Մայրավանքին Մէջ, Տեղկութեւ., **էջ 953-960**
17123. Հայոց Յեղասպանութեան Նուիրած Արաբերէն Գիրքին Ծնորհահանդէսը Անթիլիասի Մէջ, Տեղեկատուութիւն, **էջ 639-640**
17124. Հայրապետական Օրհնութեան Գիր Վան-Վասպուրականի Ինքնապաշտպանութեան 95 Ամեակին Առթիւ, Տեղկութեւ., **էջ 661-662**
17125. **ՀԱՐԻՐԻ ՍԱԱՏ** (Լիբանանի վարչապետ) Կայցելէ Արամ Ա. Կթղ-ին [*Վեհափառ Հայրապետին հօր մահուան ցաւակցելու*], Տեղեկատուութիւն, **էջ 648**
17126. Հոգեհանգիստ Երանաշնորհ Հայրապետներու Եւ Բարեյիշատակ Միաբաններու Անթիլիասի Մէջ, Տեղկութեւ., **էջ 261**
17127. Հոռմէական Կաթողիկ Եկեղեցւոյ Եւ Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Աստուածաբանական Երկխօսութեան Հանդիպումը Անթիլիասի Մէջ, Տեղեկատուութիւն, **էջ 124-125**
17128. Ձեռնադրութիւն (Արեղայական), [*Գէորգ Արկ. Արապեանի (Արտակ Արդ.), Միքայէլ Արկ. Թաշնեանի (Վարդան Արդ.) եւ Յովհաննէս Արկ. Թահանեանի (Հրանդ Արդ.)*] Տեղկութեւ., **էջ 620-622**
17129. Ձեռնադրութիւն (Դպրաց եւ Կիւսասարկաւագաց), Տեղեկատուութիւն, **էջ 478-479**
17130. Ձեռնադրութիւն (Սարկաւագական), Տեղկութեւ., **էջ 480-481**
17131. Ձեռնադրութիւն (Վարդապետական Գաւազանի Տուչութիւն), [*Անանիա Արդ. Գունանեանի, Սահակ Արդ. Եմիշեանի, Մեսրոպ Արդ. Սարգիսեանի, Թորգոմ Արդ. Տօնոյեանի եւ Ղեւոնդ Արդ. Բէնդէգեանի*], Տեղկութեւ., **էջ 1069-1071**
17132. **«ՃԻՆԻՇԵԱՆ»** Հիմնադրամի Ընդհանուր Տնօրէնուհին Անթիլիասի Մէջ, Տեղկութեւ., **էջ 388-389**
17133. Մայիս 28-ի Տօնակատարութիւն Անթիլիասի Մէջ, Տեղեկատուութիւն, **էջ 475-477**
17134. **ՄԱՆՈՒԿԵԱՆ ՅԱԿՈՒՐ**, Համբերանքին Անիծապարտ [*Գրական*], **էջ 458-459**
17135. **ՄԱՆՈՒԿԵԱՆ ՅԱԿՈՒՐ**, «Յիշատակարան Ատանայի Աղէտի» - Ա. Հատոր - 344 էջ, Տպ. Անթիլիաս, 2009 [*Գրախօսական*], **էջ 249-250**
17136. **ՄԱՆՈՒԿԵԱՆ ՅԱԿՈՒՐ**, Որ Փափաքելի Տենչմամբ... Հայու Անկէզ Տառապանք [*Գրական*], **էջ 338-339**
17137. **ՄԱՆՈՒԿԵԱՆ ՅԱԿՈՒՐ**, Վկաներուն Աւարայրի [*Գրական*], **էջ 228-229**
17138. **ՄԱՆՈՒԿԵԱՆ ՅԱԿՈՒՐ**, Օրհներգ Ծննդեան [*Գրական*], **էջ 81-82**
17139. **ՄԱՏԹԷՈՍԵԱՆ ՎԱՐԴԱՆ**, «Գիր Կեանքի» (Հեղինակ՝ Խորէն Ա. Քիւնյ. Հապէշեան, Քալիֆորնիա, 2009, 441 էջ) [*Գրախօսական*], **էջ 947-950**
17140. **ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՄՈՒՇԵՂԱՐՔ.** Եղէֆ Եկեղեցւոյ Հաւատարիմ Ծառաները [*Քարոզախօսական*], **էջ 532-534**
17141. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Եւ Իրանի Իսլամական

- Հանրապետության Միջ-Կրօնական Դ. Համագումարը Անթիլիասի Մէջ, Տեղկութեւ., *էջ* 494-497
17142. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կազմակերպութեամբ Համասփիւոճեան Համագումար Արեւմտահայերէնը Այսօր Նիւթին Շուրջ, Տեղկութեւ., *էջ* 510
17143. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայագիտական Նիւթերու եւ Երգի Մրցանքներուն Արդիւնքները, Տեղկութեւ., *էջ* 634-635
17144. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մասնակցութիւնը Բարեկարգեալ Եկեղեցիներու Համաժողովին, Տեղկութեւ., *էջ* 644-645
17145. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մասնակցութիւնը Եկեղեցական Ընտանիքներու Քարտուղարներու Տարեկան Ժողովին, Տեղկութեւ., *էջ* 972
17146. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մասնակցութիւնը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Երիտասարդական Համագումարին, Տեղեկատուութիւն, *էջ* 1080
17147. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մասնակցութիւնը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Խաղաղութեան Նշխարուած Համագումարին, Տեղեկատուութիւն, *էջ* 855
17148. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մասնակցութիւնը Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Միջազգային Հարցերու Յանձնաժողովի Ժողովին, Տեղկութեւ., *էջ* 854-855
17149. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մասնակցութիւնը Լեռնալիբանանի Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Օծման, Տեղեկատուութիւն, *էջ* 764
17150. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մասնակցութիւնը «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Հոգաբարձուներու Խորհուրդի Նիստին, Տեղեկատուութիւն, *էջ* 511-512
17151. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մասնակցութիւնը Միջ-Եկեղեցական Ժողովներու Ժընեւի Մէջ, Տեղկութեւ., *էջ* 505
17152. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մասնակցութիւնը Միջին Արեւելի Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիներու Մնայուն Յանձնախումբի Ժողովին, Տեղեկատուութիւն, *էջ* 1079
17153. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մասնակցութիւնը Միջին Արեւելի Կաթողիկ Եկեղեցիներուն Յատուկ Սինոտին, Տեղեկատուութիւն, *էջ* 852-854
17154. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ներկայացուցիչը Կը Հանդիպի Իրանի Նախագահին, Տեղկութեւ., *էջ* 862
17155. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Նորագոյն Յաջողութիւնը՝ Հայագիտական Նիւթերու Ու Հայ Երգի Մրցանքներ, Տեղեկատուութիւն, *էջ* 631-633
17156. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Իբրեւ Անդամ Կը Մասնակցի Ասիոյ Եկեղեցիներու 13-րդ Համաժողովին Քուալա-Լամպուրի Մէջ, Տեղկութեւ., *էջ* 376
17157. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Կը Դատապարտէ Քուրանի Հրկիզման Որոշումը, Տեղեկատուութիւն, *էջ* 858
17158. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Կը Մասնակցի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Միա-

- բանական Հաւաքին, Տեղեկատրուութիւն, 52 660
17159. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Կը Մերժէ Մասնակցիլ Աղթամարի Ա. Խաչ Եկեղեցւոյ Բացման Հանդիսութեան, Տեղեկատրուութիւն, 52 760
17160. Միջ-Եկեղեցական Հանդիպում Անթիլիասի Մէջ, Տեղկութեան, 52 763
17161. Միջին Արեւելի Աստուածաբանական շեմարանի Ուսանողութեան Այցելութիւնը Անթիլիասի Մայրավանք, Տեղկութեան, 52 1081
17162. Միջին Արեւելի Եկեղեցիներու Խորհուրդի Գործադիր Վարչութեան Ժողով Ամմանի Մէջ, Տեղեկատրուութիւն, 52 377
17163. Միջին Արեւելի Եկեղեցիներու Խորհուրդին Առնչուած Հանդիպում Արամ Ա. Կթղիւն Մօտ, Տեղկութեան, 52 643
17164. Մուսա Լեւրան Հերոսամարտի 95, Եւ Այննարի Հիմնադրութեան 70 Ամեակները Նշուեցան Լիբանանի Մէջ, Տեղկութեան, 52 748-752
17165. «ՆԱՐԵԿ»ի Հնագոյն Ձեռագիրի Կրկնօրինակին Ծնորհահանդէսը Անթիլիասի Մէջ, Տեղեկատրուութիւն, 52 490-493
17166. Նոր Հրատարակութիւններ, Տեղեկատրուութիւն [*"A Journey Of Faith, Hope And Vision" (Հաւատքի, Յոյսի եւ Տեսիլի Ճամբորդութիւն Մը)*, "Խաւարին Ընդմէջէն", "Կենաց Ծառ"], 52 1067-1068
17167. Նոր Հրատարակութիւններ, Տեղեկատրուութիւն [*"Կեանքը Արժէքներով Իմաստաւորել"*, "Աւագ Շաբթուան Եւ Ա. Զատիկի Հոգեթով Շարականները Զայնասկաւատակներով", "Հաղորդուիմք Եկեղեցւոյ Հայրերու Հոգեւոր Հարստութեամբ" Նոր Մատենաշար], 52 350-352
17168. Նոր Հրատարակութիւններ, Տեղեկատրուութիւն [*"Կրօնական Գիտելիքներ"*, "Ս. Գրիգոր Տաթեւացի, «Ամառան» եւ «Զմեռան» Հատորներէն Քաղուած Աստուածավոր Քարոզները", "Զոյջումի Կորմնացոյցը", "Լսեմք Աստուծոյ Խօսքը Աստուածաշունչի Ճամբով", "Տօն Վերափոխման Ա. Աստուածածինի եւ Ուխտի Օր Պիֆֆայայի Վանքին"], 52 741-744
17169. Նոր Հրատարակութիւններ, Տեղեկատրուութիւն, [*"Հաւատով Խոստովանիմ"*, "Աստուածպաշտութիւն Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ", "Լի"], 52 473-474
17170. Նոր Հրատարակութիւններ, Տեղեկատրուութիւն, [*"Հոգեկան Սնունդ Աւետարանի Ու Քրիստոնէական Վարքի Միջոցաւ"*, "Յուշեր Տ. Յակոբ Աւագ Քահանայ Արսլանեանի Սրբակրօն Կեանքէն", "Էջեր եւ Նիւթեր Գրականութեան" (Բ. Հատոր)], 52 122-123
17171. Նոր Հրատարակութիւններ, Տեղեկատրուութիւն, [*"Յիշատակարան Ատանայի Աղէտի"* (Բ. Հատոր), "Հասկ Հայագիտական Տարեգիրք", "Մատենագիրք Հայոց" (Ժ. Դար – Ժ. Հատոր)], 52 970-971
17172. Նոր Հրատարակութիւններ, Տեղեկատրուութիւն, [*"Saint Nerses The Gracious And Church Unity"*, "The Confiscation Of Armenian Properties By The Turkish Government Said To Be Abandoned", "Պոլիս եւ Իր Դերը" (Ա. եւ Բ. Հատորներ)], 52 618-619
17173. NOUWEN HENRI, (BREAD FOR THE JOURNEY), Թրգմ.՝ Մակար Վրդ. Աշգարեան, Ճանա-

- պարհորդութեան Հացը [Շար. թիւ 16821-ի], էջ 93-95
17174. NOUWEN HENRI, (BREAD FOR THE JOURNEY), Թրգմ.՝ Մակար Վրդ. Աշգարեան, ճանապարհորդութեան Հացը [Շար. թիւ 17173-ի], էջ 244-248
17175. NOUWEN HENRI, (BREAD FOR THE JOURNEY), Թրգմ.՝ Մակար Վրդ. Աշգարեան, ճանապարհորդութեան Հացը [Շար. թիւ 17174-ի], էջ 346-349
17176. NOUWEN HENRI, (BREAD FOR THE JOURNEY), Թրգմ.՝ Մակար Վրդ. Աշգարեան, ճանապարհորդութեան Հացը [Շար. թիւ 17175-ի], էջ 468-472
17177. NOUWEN HENRI, (BREAD FOR THE JOURNEY), Թրգմ.՝ Մակար Վրդ. Աշգարեան, ճանապարհորդութեան Հացը [Շար. թիւ 17176-ի], էջ 612-615
17178. NOUWEN HENRI, (BREAD FOR THE JOURNEY), Թրգմ.՝ Մակար Վրդ. Աշգարեան, ճանապարհորդութեան Հացը [Շար. թիւ 17177-ի], էջ 731-734
17179. NOUWEN HENRI, (BREAD FOR THE JOURNEY), Թրգմ.՝ Մակար Վրդ. Աշգարեան, ճանապարհորդութեան Հացը [Շար. թիւ 17178-ի], էջ 824-829
17180. **ՇԷՆՈՒԿԵԱՆ ՆԵՐՍԵՀ ԱԲՂ.** Կը Կարգազրկուի, Տղկտթն., էջ 396
17181. Ուղղափառ Եկեղեցիներու Աստուածաշունչի Սերտողութեան Նըւիրուած Համագումար Սոփիայի Մէջ, Տեղկտթն., էջ 973
17182. WALKER WILLISTON (A HISTORY OF A CHRISTIAN CHURCH), Թրգմ.՝ Նարեկ Եսս. Ալեմէգեան, Եկեղեցւոյ Պատմութիւն [Ն. Մաս - Յետագայ Միջին Դարեր - Գլուխ 14, Բարեկարգող ժողովները, շար. թիւ 16838-ի], էջ 75-80
17183. WALKER WILLISTON (A HISTORY OF A CHRISTIAN CHURCH), Թրգմ.՝ Նարեկ Եսս. Ալեմէգեան, Եկեղեցւոյ Պատմութիւն [Ն. Մաս - Յետագայ Միջին Դարեր - Գլուխ 15, Իտալական Վերածնունդն Ու Պապերը Եւ Ժողովրդական Կրօնական Առաջնորդները, շար. թիւ 17182-ի], էջ 220-227
17184. WALKER WILLISTON (A HISTORY OF A CHRISTIAN CHURCH), Թրգմ.՝ Նարեկ Եսս. Ալեմէգեան, Եկեղեցւոյ Պատմութիւն [Ն. Մաս - Յետագայ Միջին Դարեր - Գլուխ 16, Ազգային Նոր Ոյժերը, շար. թիւ 17183-ի], էջ 319-324
17185. WALKER WILLISTON (A HISTORY OF A CHRISTIAN CHURCH), Թրգմ.՝ Նարեկ Եսս. Ալեմէգեան, Եկեղեցւոյ Պատմութիւն [Ն. Մաս - Յետագայ Միջին Դարեր - Գլուխ 17, Այպեաններէն Հիւսիսակողմ Թափանցած Մարդկայնութիւնը Եւ Բարեկարգութիւնը Կանխող Բարեպաշտութիւնը, շար. թիւ 17184-ի], էջ 443-452
17186. WALKER WILLISTON (A HISTORY OF A CHRISTIAN CHURCH), Թրգմ.՝ Նարեկ Եսս. Ալեմէգեան, Եկեղեցւոյ Պատմութիւն [Զ. Մաս - Բարեկարգութիւնը - Գլուխ 1, Լուտեր Եւ Բարեկարգութեան Սկզբնաւորութիւնը, շար. թիւ 17185-ի], էջ 588-601
